



ՀԱՅԿ ՍԱՄՍՈՆՅԱՆ

**ԲԱՆԱԿԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱՅԻ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ.  
ՈՒՉՄԱԿԱՆ ՆԵՂԱՇՐՋՈՒՄՆԵՐԻ  
ՖԵՆՈՄԵՆԸ**



NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE  
REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

*Արթուր*

HAYK KHACHIK SAMSONYAN

**THE ROLE OF ARMY IN THE  
POLITICAL LIFE OF SYRIA.  
THE PHENOMENON OF  
MILITARY OVERTURNS**



YEREVAN  
"GITUTYUN" PUBLISHING HOUSE OF THE NAS RA  
2013

معهد الدراسات الشرقية التابع لمجمع العلوم الوطنية  
في جمهورية أرمينيا

هايك بن خاجيك سامسوتيان

دور الجيش في الحياة السياسية في سورية.  
ظاهرة الانقلابات العسكرية



يريفان ٢٠١٣



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԿ ԽԱՉԻԿԻ ՍԱՄՍՈՆՅԱՆ

**ԲԱՆԱԿԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱՅԻ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ.  
ՌԱԶՄԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄՆԵՐԻ  
ՖԵՆՈՄԵՆԸ**



ԵՐԵՎԱՆ  
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2013

ՀՏԴ 93/99  
ԳՄԴ 63.3  
Ս 177

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության  
ինստիտուտի գիտական խոյրերդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝  
Արշակ Պողոսի Փոլադյան  
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մամուռյան Հ. Ն.

Ս 177 Բանակի դերը Սիրիայի քաղաքական կյանքում, ռազմական  
հեղաշրջումների ֆենոմենը/Հ. Մամուռյան, ՀՀ ԳԱԱ արևելագի-  
տության ինստիտուտ. – Եր.: «Գիտություն» հրատ., 2013. 270 էջ:

Աշխատության մեջ քննարկվում են մորանկախ Սիրիայի բանակի  
կազմավորման, այդ թվում՝ սպայական վերնախափի ձևավորման գործըն-  
թացը, բանակի աջիալական հենքը, դրանում էրմիկ և դավանական  
գործոնի նշանակությունը, 1949-1970 թթ. Սիրիայում տեղի ունեցած ռազ-  
մական հեղաշրջումները և դրան հաջորդած փուլում տեղ գտած հեղա-  
շրջման փորձերը, ինչպես նաև զինված ուժերի ղերակատարությունը երկրի  
հասարակական-քաղաքական կյանքում: Մենագրության մեջ առաջին  
անգամ լուսարանվում է Սիրիայի հայ ռազմական գործիչների և հայ  
ռազմիկ տարրի՝ սիրիական բանակում ունեցած դերակատարումը: Անդ-  
րադարձ է կատարվում նաև 2011 թ. սկիզբ առած սիրիական ճգնաժամին և  
դրա շուրջ ընթացող զարգացումներին:

Նախատեսվում է արևելագետների, միջազգայնագետների, դիվանա-  
գետների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 93/99  
ԳՄԴ 63.3

ISBN 978-5-8080-1019-2  
© Մամուռյան Հայկ, 2013

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ.....7

### ԳԼՈՒԽ ԱՈՍԱԶԻՆ

ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ ՍԻՐԻԱՅԻ ԶԱՂԱԶԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ (1946-1958 թթ.).....21

1.1 Ձխնված ուժերի կարգավիճակը մանդատային Միրիայում.....21

1.2 Ազգային բանակի տեղիծումն ամկախ Միրիայում.....34

1.3. Ռազմական հեղաշրջումների ֆեմտենը Միրիայում.....56

### ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՆԱԿԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԵՏ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1958-1961 թթ.) .....81

2.1 Նոր վերադասավորումներ սիրիական բանակում Արաբական Միացյալ Հանրապետության կազմավորման ընթացքում.....81

2.2 Բանակի դերն Արաբական Միացյալ Հանրապետության վերազմման գործում.....98

### ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԲԱՆԱԿԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱՅԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱԶԻՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ (1961-1970 թթ.) .....116

3.1 Բանակի դերը Միրիայում տեղի ունեցող ռազմական հեղաշրջումներում (1961-1963 թթ.).....116

3.2 Բանակի դերը Միրիայում «Բաաս» կուսակցության կառավարման շրջանում (1963-1970 թթ.).....128

3.3 Հայ ազգմական գործիչների դերը սիրիական բանակում.....	154
ԵԶՐԱՓԱԿՈՒՄ.....	165
ՎԵՐՁՄՔԱՆ.....	170
ԱՄՓՈՓՈՒՄ (ախարհքն, անգլիքն, ռուսքն).....	207
ՕԳՏԱԿՈՐԾՎԱԾ ԱՂՅՈՒՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	249

Համրածեսայտ իրողություն է, որ ենթամամուլատային կարգավիճակ ունեցող Մերձավոր Արևելքի արաբական երկրների անկախություն ձեռք բերելու և անկախ պետականության կայացման գործում չափազանց մեծ է եղել քանակի դերը: Անտարակույս, Սիրիայի Արաբական Հանրապետությունում քանակի դերի ուսումնասիրությունն ունի գլխական և քաղաքական կարևոր նշանակություն: Հիրավի, ստանց քանակի դերակատարության համակողմանի ուսումնասիրության՝ գրեթե անհնար է խորությամբ ընկալել Սիրիայի նորագույն շրջանի քաղաքական պատմության շատ ու շատ իրողություններ: Առաքական ոչ մի երկրում զինված ուժերը քաղաքական կյանքում բերև աչնքան գերիշխող դեր չեն ունեցել, որքան Սիրիայում: Այդ հանգամանքը մեկ անգամ ևս հաստատվում է մեր օրերում Սիրիայում ընթացող մեղրադարական բարդ իրադարձությունների օրինակով, երբ քանակը կրկին հանդես է գալիս որպես լուրջ քաղաքական գործոն:

Սիրիայի ներքին և արտաքին քաղաքական կյանքի ամենակարևոր գործոններից մեկը եղել և մնում է քանակը, որը, կարելի է ասել, սերտաճած է պետությանը, իսկ զինվորականությունը բացառիկ դեր է ունեցել և ունի ոչ միայն ռազմական, այլև մեղրադարական և արտաքին քաղաքական խնդիրների կարգավորման ու մշված ոլորտներին վերաբերող հայեցակարգային խնդիրների մշակման հարցում: Արաբական երկրների, մասնավորապես Սիրիայի նորագույն շրջանի պատմության տարբեր փուլերում պետության դեկավարներ են դարձել և քաղաքական քարձի պաշտոններ ձեռք բերել հենց զինվորականները, ովքեր կարողացել են քանակը՝ որպես գործոն, օգտագործել իշխանության գալու և այն պահելու համար: Էական է մասնավորապես, սպայական կազմի ուսումնասիրությունը, ինչը հնարավորություն է տալիս ավելի խորքային ընկալել թե՛ միմյան 1970 թ., թե՛ դրանից հետո Սիրիայի հասարակական-քաղաքա-

կան գործընթացներն ու դրանցում էրմիկ և դավանական տարրի որոշակիությունն ազդեցիկ դերակատարությանն առանձնահատկությունները:

ԱՄՀ նոր պատմության ամենահանգուցային ժամանակահատվածներից մեկը 1946-1970 թթ. ընդգրկող շրջանն է՝ 1946 թ. ապրիլի 17-ին Միդիայի տարածքից անգլո-ֆրանսիական գործերի վերջնական դուրս բերումից և Միդիայի անկախության հռչակումից մինչև 1970 թ. նոյեմբերին Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության գալը, երբ երկրի քաղաքական կյանքում առանձնահատուկ դերակատարություն ձեռք բերեցին զինված ուժերը:

Գրքում նախ ներկայացվում է Միդիայում բանակաշինության գործընթացը մի ժամանակաշրջանում, երբ ֆրանսիական մանդատային համակարգը հասնում էր իր ավարտին, և երկիրը ձեռք էր բերում անկախություն: Ինչպես գաղութատիրությունից ազատություն ձեռք բերած ցանկացած երկրում, այնպես էլ Միդիայում, ազատության ու անկախության կարևորագույն երաշխավոր համդիսացող բանակի ստեղծման ու կայացման գործընթացը տեղի էր ունենում երկուսն էլ գալաթումներով: Եվ միայն կենսունակությամբ օժտված ժողովրդի աջակցությամբ է, որ հնարավոր է լինում ստեղծել հայրենիքն ու հայրենի հողը պաշտպանելու ունակ և այդ ներշնչամբներով տարված խանդավառ ու մարտունակ բանակ:

Հասկանալի է, որ սիրիական բանակը ձևավորման սկզբնական շրջանում հիմնականում համալրվում էր ծայրամասային, առանձին դեպքերում նաև սոցիալապես ոչ զարգացած շրջանների էրմիկ և դավանական փոքրամասնությունների ներկայացուցիչներից (ալափիներ, դրուզներ, խմայիկականներ, քրդեր, չեքոզներ, հայեր և այլք), ուրիշ բանակային ծառայությանը նպատակ էին հետապնդում քարեզավե իրենց սոցիալ-տնտեսական վիճակը, ինչպես նաև, ապահովել զինվորական գործունեության առաջընթացը: Այս միտումն, ընդհանուր առմամբ, շարունակվեց նաև հետագայում՝ մեծացնելով երկրում փոքրամասնությունների կշիռը:

Միդիայի՝ որպես անկախ պետության ձևավորման, սի-

քիակամ բանակի կազմավորման, սպայական վերնախառնի և վերջնական քաղաքական կյանքում բանակի ունեցած դերակատարության պատմության ժամանակահատվածը կարելի է բաժանել հինգ շրջանի՝ անկախության նվաճումից մինչև Եզիպտոսի հետ միավորումը (1946-1958 թթ.), Արաբական Միացյալ Հանրապետության գոյության երեք ու կես տարիները (1958-1961 թթ.), ԱՄՀ փլուզումից մինչև Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության գալը (1961-1970 թթ.) և Ալ-Ասադների կառավարման շրջանը (1970-2000 թթ.)՝ Հաֆեզ Ալ-Ասադի, իսկ 2000 թ.՝ Բաշար Ալ-Ասադի):

Ձիմկած ուժերի ամենագործուն օղակը՝ սպայական վերնախառնը, եղել և մնում է պետական համակարգի անբաժան մասը: Ուստի պատահական չէ, որ սիրիական բանակն ատոհմանաբար վերածվեց այդ երկրի քաղաքական կյանքի լուրջ գործոնի, որի սպացույցը 1949-1970 թթ. Միլիտարյում տեղի ունեցած տասից ավելի հեղաշրջումներն են: Հենց այդ սպայական վերնախառն էր, որ իրար ետևից կազմակերպում էր ռազմական հեղաշրջումներ՝ անողոշության ու անկայունության մատնելով միջերկրածովյան ափագամի ռազմավարական առաջնակարգ նշանակություն ունեցող այդ երկիրը: Միլիտարի ներթափարակյալ կյանքում բանակի գործունի ակտիվ դերակատարությունը, երկրում հաճախակի տեղի ունեցող ռազմական հեղաշրջումներն ու արաբ-իսրայելական պատերազմները, լուրջ դժվարություններ ստեղծեցին երկրի սոցիալ-տնտեսական և պետական կառավարման համակարգի քնակախոն գարգացման համար:

Հատկանշական է, որ բանակն ինչպես նշված ժամանակաշրջանում, այնպես էլ հետագայում կարևոր դերակատարություն է ունեցել ոչ միայն Միլիտարի ներքին կյանքում, այլև նպաստել է մերձավորարևելյան տարածաշրջանում Միլիտարի քաղաքական կշռի մեծացմանը: Հիշյալ թեման գլխավորորեն արդիական է նաև ներկա փուլում Միլիտարյում ընթացող ներքաղաքական բարդ գործընթացները ճիշտ գնահատելու առումով, որտեղ բացառիկ կարևոր դեր է խաղում բանակը:

Միլիտարի քաղաքական հարուստ պատմության բավիղ-

ներում քանակի դերի ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն Միրիայի նշված շրջանի պատմության, տարածաշրջանային ու միջազգային մակարդակներում Միրիայի ունեցած նշանակության, այլև Միրիայում հայ համայնքի առկայության և հայ-սիրիական արդի հայաբնեւոյրյունների տեսանկյունից: Միրիան տարածաշրջանում Հայաստանի անենակարևոր գործընկերներից մեկն է, որի հետ համագործակցությունն ամբողջված է անեմատարբեր ոլորտներում, իսկ մերձավորարևելյան ուղղությունը Հայաստանի արտաքին քաղաքական աստղնահերթություններից է:

Հետազոտության թեմայի կարևորությունը կապված է ևս մեկ այլ, ոչ պակաս կարևոր իրողության՝ Միրիայի բանակում կարևորագույն դերակատարություն ստանձնած հայ ռազմական գործիչների, մասնավորապես՝ սիրիական բանակի գեներալներ Ալամ Գարամանուկյանի, Հրանտ Մալոյանի և Ալեք Քիլիջյանի գործունեության հետ, որն ամբողջապես նորույթ է մեր պատմական գրականության մեջ: Նրանում ցույց է տրվում սիրիական բանակի ստեղծման և նրա կայացման գործում հայ ռազմիկ տարրի ունեցած մեծ երախտիքը, որտեղ հայ գեներալականները ծառայել են հոգուտ Միրիայի ազգային անվտանգության՝ նպաստելով հայ-արաբական, հայ-սիրիական բարեկամության ամրապնդմանը:

Ինչպես նշվեց, աշխատանքի էջերում ուսումնասիրվում է Միրիայի բանակի կազմավորման, սպայական վերնախառնի ձևավորման գործընթացը, հետամկախության շրջանում Միրիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումներն ու դրանց պատճառները, սիրիական բանակի սոցիալական՝ էթնիկ և դավանական կազմը:

Մենագրության էջերում ներկայացվում է նաև Միրիայի՝ Եգիպտոսի հետ միավորման շրջանում կազմավորված գաղտնի Ռազմական կոմիտեի վարած քաղաքականության իրական շարժառիթներն ու սպաների ունեցած դերը, Ալաբական վերածմունդ սոցիալիստական կուսակցության 1963 թ. մարտի 8-ին իրականացրած հեղաշրջման և քառասուկան սպաների իշխանության հաստատման ու հետագա ամրապնդման



գործընթացը, արար-խարայելական պատերազմներում սիրիական քանակի ունեցած դերակատարության առանձնահատկությունները, ինչպես նաև «Բառաս» կուսակցության կառավարման շրջանում քանակի դերակատարությունը և սպայական վերմախավում ծագած տարածայնությունների ու Հաֆեզ Ալ-Ասադի խլիամության գալու պատճառներն ու հետևանքները:

Սիրիայի ներքին և արտաքին քաղաքականության հետ կապված առանձին հիմնախնդիրներ բազմիցս ուսումնասիրության առարկա են դարձել տարբեր հեղինակների, մասնավորապես՝ հայրենական, արևմտյան, ռուսաստանցի, ինչպես նաև խորհրդային հետազոտողների աշխատություններում: Սակայն Սիրիայի քանակի կազմավորման, սպայական կազմի ձևավորման և քանակի դերակատարությունը երկրի քաղաքական կյանքում չեն դարձել ամբողջական գիտական ուսումնասիրության առարկա: Թեման հայրենական արաբագիտության մեջ դեռևս չի արժանացել առանձին և համակողմանի ուսումնասիրության: Փաստագրական և այլալեզու հետազոտությունների հենքի վրա փորձ է արվել ամաչառ վերլուծությամբ նորովի մեկնաբանել տվյալ ժամանակաշրջանի իրողությունները:

Աշխատությունը գրվել է հայերեն, ռուսերեն, արաբերեն, անգլերեն և ֆրանսերեն տարարևույթ աղբյուրների ու հետազոտությունների հիման վրա: Թեմայի վերաբերյալ հիմնական նյութերը վերցված են ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի, Դամասկոսի Հաֆեզ Ալ-Ասադի անվան և Դամասկոսի արաբագիտական հետազոտությունների ֆրանսիական ինստիտուտի, Հալեպի Վիլյետ Ջեքեջյան, ինչպես նաև ՌԳԱ Արևելագիտության ինստիտուտի (РАН ИВ), Հասարակական գիտությունների գիտական տեղեկատվության ինստիտուտի (ИНИОН), Մ. Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի Ասիայի և Աֆրիկայի ինստիտուտի (МГУ им. М. В. Ломоносова ИСАА), Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի (МИМО) գրադարաններից և Ռուսաստանի պետական գրադարանի տեղեկատվո-

թյունների բաժնից (ԲԴԵ): Հետագուտությանը մեծապես նպաստել են պաշտոնական հրապարակումները, քաղաքական գործիչների հայտարարություններն ու ելույթները, պարբերականները, հայ և օտարազգի հետազոտողների՝ վերոհիշյալ քննային նվիրված արժեքավոր աշխատություններն ու հոդվածները:

Մեծագուտության մեջ բննարկվող խնդիրների ուսումնասիրության համար որպես սկզբնաղբյուր են ծառայել Միրիայի ռազմական և քաղաքական գործիչների ելույթների, հարցազրույցների հրապարակումներն ու հուշագրությունները<sup>1</sup>, Միրիայի ընտրական օրենքը<sup>2</sup>, «Բասա» կուսակցության համագումարների որոշումները և ծրագրերը<sup>3</sup>:

Աշխատանքում օգտագործվել են արաբական մի շարք աղբյուրներ, որոնք վերաբերում են Միրիայի բանակի կազմավորմանը, ռազմական հեղաշրջումներին, «Բասա» կուսակցության գործունեության տարբեր ասպեկտներին, Միրիայի

---

١ حديث مع عفيف البزري، سجل الحديث وكتبه سمير رباح، بيروت، آذار ١٩٨٩، حديث مع عفيف البزري، سجله مالك الملقني، دمشق، ٢٢ حزيران، ١٩٩١، بيان الرئيس جمال عبد الناصر، القاهرة، ١٩٦١، الحزب الشيوعي السوري في عهده الخمسين، الزكري الخمسون لتأسيس الحزب الشيوعي السوري ١٩٢٤-١٩٧٤، المجلد الثالث، دمشق، ١٩٧٩، يوميات ووثائق الوحدة المصرية-السورية ١٩٥٨-١٩٦١، المجلد الأول، ١ شباط-٣ نيسان ١٩٥٨، بيروت، ١٩٨٧، مذكرات الأمير عادل أرسلان عن حسبي الزعيم، زاد الانقلابات العسكرية في سورية، بيروت، ١٩٦٢، مذكرات الأمير عادل أرسلان، الجزء الثاني، ١٩٤٦-١٩٥٠، بيروت، ١٩٨٣، أحمد الجندى، زكري الجابري، دمشق، بناء دار المهتمسين، مسلمي مراد بك، أوثاق جميل مراد بك، استقلال سورية ١٩٣٩-١٩٤٥، بيروت، ١٩٩٤، محمد معروف، أيام عشقها ١٩٤٩-١٩٦٩، الانقلابات العسكرية وأسرارها في سورية، بيروت، ٢٠٠٣، خالد المعلم، مذكرات خالد المعلم، بيروت، ١٩٧٢.

Anton Sa'adeh, Leadership and Testimony, Syrian Social Nationalist Party Information Bureau.

<sup>2</sup> The Electoral Law of Syria, Decree No. 17, September 10, 1949.

<sup>3</sup> حزب البعث العربي الاشتراكي، القيادة القومية، دراسة تاريخية تحليلية موجزة لنشاط حزب البعث العربي الاشتراكي ١٩٤٣-١٩٧١، دمشق، ١٩٧٢، حزب البعث العربي الاشتراكي، القيادة القومية، المنهاج الحزبي، ١٩٦٥، تموز ٢٢.

ներքին և արտաքին քաղաքականության առանձին դրսևորումներին: Արաք հնդկականներից հարկ է առանձնացնել սագմական և քաղաքական գործիչներ Մ. Տլասի<sup>5</sup>, Հ. Թուրքմանի<sup>6</sup>, Մ. Ռամանի<sup>7</sup>, Վ. Ալ-Մուսլիմի<sup>8</sup>, Մ. Ալիյակի<sup>9</sup>, Ի. Հինդիի<sup>8</sup>, Մ. Թակա Ալ-Դինի<sup>9</sup>, Ֆ. Շաիրիի<sup>10</sup>, Ա. Արդ Ալ-Ջարիմի<sup>11</sup>, Ն. Ալ-Արմանազիի<sup>12</sup> արժեքավոր աշխատությունները, ինչպես նաև արաք հետազոտողներ Ս. Ալ-Ջունդիի<sup>13</sup>, Ն. Ֆանասիի<sup>14</sup>, Հ. Ալ-Խեյրի<sup>15</sup>, Ն. Արդ Ան-Նասրի Բիզիի<sup>16</sup>, Բ. Ալ-Աուֆի<sup>17</sup>, Մոհամմադ

- 1 مصطفى طلاس، تاريخ الجيش العربي السوري، الجزء الأول، ١٩٥١-١٩٤٨، مركز الدراسات العسكرية، مصطفى طلاس، تاريخ الجيش العربي السوري، الجزء الثاني، ١٩٤٩-١٩٧٠، مركز الدراسات العسكرية، حسن نورحسان، تاريخ الجيش العربي السوري، الجزء الثالث، ١٩٧٠-٢٠٠١، مركز الدراسات الاستراتيجية.
- 2 اللواء محمد عمران، تجریتی فی الثورة، بيروت، ١٩٧٠.
- 3 وائد المعلم، سوريا ١٩١٨-١٩٥٨، دمشق، ١٩٨٥.
- 4 ميشيل علق، فی سبيل البعث، للكتابات السياسية الكاملة، الجزء الأول، بيروت، ١٩٥٩.
- 5 احسان هندي، كفاح الشعب العربي سوري ١٩٠٨-١٩٤٨، دمشق، ١٩٦٤.
- 6 منير نقي الدين، الجلاء، بيروت، ١٩٥٦.
- 7 فوزي شعيب، شاهد من المغابرات السورية ١٩٥٥-١٩٦٧، بيروت، ٢٠٠٨.
- 8 احمد عبد الكريم، أضواء على تجربة الوحدة، الطبعة الثانية، دمشق، ١٩٩١/١.
- 9 نجيب الأرماني، محاضرات عن سوريا من الاحتلال حتى الجلاء، القاهرة، ١٩٤٣.
- 10 ساسي الجولي، البعث، دار النهار للنشر، بيروت، ١٩٦٩، ساسي جولي، عرب ووهود، دار النهار للنشر، بيروت، ١٩٦٨.
- 11 نذير قصصه، أيام حسني الزعيم، ١٣٧ يوماً هزت سوريا، دار الاطلاق لجديدة، بيروت، ١٩٨٢.
- 12 هاني الخوير، أدب، تقيدي، صاحب الانقلاب الثالث في سوريا، البداية والنهاية، دمشق، ١٩٩٤.
- 13 ناجي عبد القاسم زبي، سورية، سراج الاستقلال، دراسة وتحليل لأحداث الشرق الأوسط والتدخلات الدولية في الأحداث السورية ١٩١٧-١٩٧٣، دمشق، ١٩٩٦.
- 14 وشير التعرف، الانقلاب السوري، دمشق، ١٩٤٩.

Ռիդվան Ալ-Աթաֆի<sup>18</sup>, Ա Ռիդայի<sup>19</sup>, Ս Ալ-Մադանի<sup>20</sup>, Ս Արդ Ալ-Մալի<sup>21</sup>, Արդ Ալ-Կադիր Հաթիմի<sup>22</sup>, Մ. Ա. Ղ Ատ-Տաուիլի<sup>23</sup> և այլոց հետազոտությունները:

Հայ արևելագիտությունը չափազույնս ուսումնասիրել է արաբական երկրների, մասնավորապես Սիրիայի նորագույն շրջանի պատմությանն առնչվող հարցերը, որի վկայությունն են Ն. Հովհաննիսյանի, Հ. Մարգարյանի, Ե. Կարամանովյանի, Հ. Գրիգորյանի, Հ. Թովուզյանի, Պ. Սարաֆյանի, Լ. Հարությունյանի, Ա. Փաշայանի, Գ. Գևորգյանի և այլոց մեծագույն ավանդները<sup>24</sup>:

<sup>18</sup> محمد رضوان الأتاسي، علم الأتاسي، حياته وعصره، دمشق.

<sup>19</sup> علي رضا، سنة الكفاح الوطني في سورية، عسكرياً وسياسياً حتى الثورة، حلب، 1979.

<sup>20</sup> سليمان المدني، هناك مناهيل، دولة حكمنا سورية، دمشق، 2009.

<sup>21</sup> سيد عبد القادر، علم دمشق أولاً... الانقلابات العسكرية في سورية 1949-1969، مكتبة مدبولي، 2007.

<sup>22</sup> عبد القادر حاتم، الجمهورية العربية المتحدة، القاهرة، 1988.

<sup>23</sup> محمد أمين طالب الطويل، تاريخ الطويل، دار الأتاسي، 1981.

<sup>24</sup> Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հատոր 4, Երևան, 2007, Հովհաննիսյան Ն. Հ., Մարգարյան Հ. Ս., Սիրիան անկախության համար ճգնված պայքարում (1917-1946 թթ.), Երևան, 1975, Մարգարյան Հ. Ս., Սովետա-ֆրիսկական տնտեսական և տեխնիկական համագործակցությունը (1955-1970 թթ.), Արժույթը և Մշիկ Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատոր 6-րդ, Երևան, 1974, Կարամանովյան Ե. Լ., Արաբական Պետությունների Լեզուի զերը արաբական երկրների եռալեզուի քաղաքական պայքարում, Երևան, 1988, Գրիգորյան Հ. Մ., Սիրիայի մալաթա-սակյան դեկալարության դիքորությունը Մերձավորարևելյան ճգնաժամի նկատմամբ (1967-1970 թթ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատոր 14-րդ, Երևան, 1987, Геворган Г. М., Политика Сирии в советско-арабском союзе, Ереван, 1989, Թովուզյան Հ. Խ., Սիրիայի և Լիբանանի հայրական գաղութախնների պատմություն (1841-1946 թթ.), Երևան, 1986, Մարաջյան Պ. Հ., Արաբական Արևելքի կոմունիստական կուսակցությունների և սոցիալիստական ուժերի պայքարը դեմոկրատիայի և սոցիալ-սոցիալական վերափոխումների համար, Երևան, 1986, Саркисов П. А., Сирийская Коммунистическая партия в социально-политическом характере развития страны (70-е-начало 80-х гг.), Проблемы современной со-

Միջուկային բանակի հայ ռազմական գործիչների վերաբերյալ հետազոտվող խնդիրների ըննությամբ նախատես են Միջուկային բանակի զենքերալ Ա. Գարամամուկեանի, Գ. Մարախեանի, Ե. Տոլպագեանի, Մ. Էպիդարեանի, Պ. Արսամանի, Ա. Քնչիչեանի, Հ. Ազեզեանի և այլոց արժեքավոր աշխատությունները, «Գեղարդ սիրիահայ տարեգրքի» հատորները, ինչպես նաև դաշտային հետազոտություններն ու հարցազրույցները<sup>25</sup>։

Ետսկոյ Արախուտե, Երևան, 1988, Հարությունյան Լ., Լիբանանը 1958-1975 թվականներին, Երևան, 2007, Փաշոյան Ա., Իսրայելյան կոնֆլիկտն և ռազմավարական մարտավարությունը, գործունեությունը, գերբարձրացումը դաշտային հակամարտության նկատմամբ, Երևան, 2003, Գեղարդյան Գ., 1982 թ. իսրայելյան արեւիմային Լիբանանում և Եգիպտոսի գերբարձրացումը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատոր 23-րդ, Երևան, 2004։

<sup>25</sup> Գարամամուկեան Ա., Հայկական Լեզինը պատմական, իրատևան ու բարձրակարգ հարցերու լային տակ և վախճաններ, Հայկական Հարազտական Հանդես, Կ. Ե., Պեքոս, 1974, Karameoukian A., Les Etrangers et le service militaire, Paris, 1978, Գարամամուկեան Ծ., Ջորջիայը Արևմտյան Գարամամուկեանի կեանքն ու գործը, Ֆոքս Լի, Նիք Երզն. ԱՄՆ, 1998, Մարախեան Գ. Ա., Այնթապի հայ տղաներ ստիսական բանակին մեջ, Պատմություն Անրեյի Հայոց, Բ. հատոր, Լոս Անճելես, Գալիֆորնիա, 1953, Տոլպագեան Ե. Հ., Հայքեանական նամակների պատի Ջոր. Գարամամուկեանի, Նոր Այնթապ, թիս 44-56, Լիբանան, 1971-1973, Էպիդարեան Մ., Գարաբաղյանի խոսքերայան, Հայկ, 1998, Azmian P., Histoire de la communauté Arménienne catholique de Damas, Beyrouth, 1964, کشيشيان آ.، إسهامات المواطنین الارمن في العمارة العامة لبلدک السورية منذ أقدم التصور وحتى يومنا، حبیب، ۲۰۰۷، کشيشيان آ.، سفحلت وثائقية من جريدة ( التقدم ) الحلبية عن الأحوال الأرمنية والعربية في النوبة العثمانية وبلدک الشامية، عازميان آ.، نوبة تاريخية موجزة عن الجاليات الأرمنية في بلاد العربية إسرائيلية، لبنان، مصر، فلسطين، الارمن...، تكتليف، ۱۹۹۳.

Գեղարդյան Մուրիսիայ տարեգրք, Ա տարե. Հայկ, 1975, Գեղարդ Մուրիսիայ տարեգրք, Բ. գիրք, Հայկ, 1976-1978, Գեղարդ Մուրիսիայ տարեգրք, Ե. գիրք, Հայեզ, 1996։

Հարցազրույցներ՝ Միջուկային բանակի զենքերալ Ավետիս Աբաբյանի հետ, Դամասկոս, 2009, Միջուկային բանակի զենքերալ Հրախո Մադրանի մտերմ՝ Մազգես Քնչիչեանի հետ, Դամասկոս, 2009, Միջուկային բանակի զենքերալ Ալեքս Գրիգորյանի կնոջ՝ Գարուն Գրիգորյանի հետ, Դամասկոս 2009, Վարդան Մարտիրոսի հետ, Դամասկոս, 2009, Ալեքսանդր Գրիգորյանի

Աշխատությանը մեծապես նպաստել են մաս խորհրդային և արդի շրջանի ուսաստանցի ձեռագրողների արժեքավոր աշխատությունները Սիրիայի, ինչպես նաև Մերձավոր Արևելքի երկրների ներքին և արտաքին քաղաքականությանը, տարածաշրջանային քաղաքական ու ռազմական իրանահարցերին և արաբ-խորայելական հսկամարտությանը նվիրված մեծագույություններն ու հոդվածները, որոնցից արժանի է նշել Գ. Միրսկու, Է. Փիր-Ռուդադուվայի, Է. Ռիսի, Մ. Գատաուլիսի, Օ. Կաջայայի, Վ. Կուչինի, Յ. Լուկոնինի, Վ. Ռամշինսկիի, Վ. Սաստուլի, Վ. Սիմեդուլի, Վ. Յուրչենկոյի<sup>26</sup> և

հետ, Դաննակես, 2009, Լաբանցիայի Թշչին համալսարանի քառախոս, Արաբական աշխարհագրագետների միության փոխնախագահ Լադի Շամսինի հետ, Դաննակես, 2010, պ.գ.ք. Հուրի Աղեզանի հետ, Հարեյ, 2010, Ռ.Գ.Ա Արևելագիտության ինստիտուտի ամսյա գնտաշխատող պ.գ.ք. Վլադիմիր Սիմեդուլի հետ, Մսակվա, 2011, Սիրիայի բանակի զինեղալ Արամ Գարամանուկյանի նորորդի պ.գ.ք. Շահին Կարամանուկյանի հետ, Երևան, 2011:

<sup>26</sup> Мирский Г. Н., Армия и политика в странах Азии и Африки, М., 1970, Мирский Г. Н., Третий мир: общество, власть, армия, М., 1976, Пар-Будагова Э. П., Активизм-революционная и демократическая борьба сирийского народа в 1949-1958 гг., Академия Наук СССР, Институт Народов Азии, Диссертация, Москва, 1967, Пар-Будагова Э. П., Сирия в борьбе за упрочение национальной независимости (1945-1966 гг.), Москва, 1978, Փիր-Ռուդադուվայ Է. Պ., Հանրապետական և սոցիալ-տնտեսական վերափոխումները Սիրիայում (1962-1970 թթ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատոր 9-րդ, Երևան, 1978, -صراع في سورية لتدعيم الاستقلال الوطني، دمشق، ١٩٨٧، ١٩٩٦

Рязь Э. В., Политическая борьба в Сирии в 1946-1963 гг., МИМО МНД СССР, Диссертация, Москва, 1971, Габулдин М., Сирия, Москва, 1956, Каджая О. Ш., Образование Освободившей Аравийской Республканя в некоторые черты ее политики (1958-1960 гг.), Академия Обществанных Наук при ЦК КПСС, Диссертация, Москва, 1961, Кучин В. Д., Сирийская Аравийская Республканя и ее Вооруженные Силы, Военное Издательство Министерства Обороня СССР, М., 1976, Луконин Ю. В., Коммунисты Сирия и Ливана в борьбе за укрепление национальной независимости (1945-1947 гг.), Диссертация, Москва, 1956, Рязинский В. П., Партия Аравийского Социалистического Возрождения и национально-освободительное движение в Сирия (1940-1958 гг.), Университет Дружбы Народов имени Патрися Лумумбы, Диссер-

Մ. Աբոս Գլյունի, Հուսեյն Նալբոյի, Ա. Գամիշի, Ա. Կուշխարիևի, Վ. Ֆեդորինկոյի, Ն. Նեֆեդովայի, Օ. Ռուդկովսկայայի, Ա. Սեմշովի, Վ. Խրուշևի, Ս. Վասարիկովի ուսումնասիրությունները:

Հարկ է նշել նաև սիրիացի հեղինակների ուսերն ուսումնասիրությունները, որտեղ առկա են բազմաթիվ հույժ օգտակար վաստեր, որոնք էսպես նպաստում են Սիրիայի ԶԳ-ում սպայական վերնախաթի ձևափոխման մանրամասների ուսումնասիրմանը և նրանց վարած ներքին ու արտաքին քաղաքականության առանձնահատկությունների պարզաբանմանը: Գրանցից կարելի է առանձնացնել Ադնան իբն Իսմայիլ Մախլուֆի, Մուլեյման Աբո Գիյարի, Կամտար Մուհամմադ

տալև, Մ., 1983, Саутин В. Н., Авантюры в общественно-политической жизни Сирии (40-е-90-е годы 20 в.), РАН ИВ, Диссертация, Москва, 2001, Ахмедов В. М., Армия и Политика в Современной Сирии, Армия и Власть на Ближнем Востоке: от Авторитаризма к Демократии (сборник статей), М., 2002, Ахмедов В. М., Сирия на рубеже столетий, власть и политика, Москва, 2003, Юрчишко В. П., Сирия: Проблемы Национальной Безопасности (Военная Политика и Военная Строительство в Период Правления ПАСВ 1963-2004 гг.), М., 2004.

<sup>27</sup> Абу Гаси М. Т., Отношения США с военными режимами в Сирии, Ученые Записки Центра Арабских Исследований, РАН ИВ, Москва, 2003, Хусейн Халид, Сирия: социально-политическое развитие 1963-1993 гг., Диссертация, РАН ИВ, Москва, 1995, Ганев А. А., Черкомы в Иордания, МГУ ИСАА, Москва, 2007, Кушманов А. В., Черкомы в Сирии, Нальчик, 1993, Федоренко В. М., Идеология и практика Партии Арабского Социалогического Возрождения в Сирии, Диссертация, Академия Наук СССР ИВ, Москва, 1970, Нефедов Н. К., Борьба Коммунистической партии Сирии за единый национальный фронт (1936-1966), Диссертация, Университет дружбы народов им. Патрика Лумумбы, Москва, 1970, Рудковская О. М., Формирование национальной идентичности Сирии во второй половине 20 века, Диссертация, МГУ им. М. В. Ломоносова, ИСАА, Москва, 2005, Мешков А. С., Эволюция военно-технического сотрудничества государств Ближнего Востока во второй половине 20 в., Диссертация, Москва, 2010, Хрушова В. А., Сирия в составе Объединенной Арабской Республики (1958-1961 гг.), Диссертация, Академия Наук СССР ИВ, Москва, 1971, Востриков С. В., Роль армии во внешней и внутренней политике Сирийской Арабской Республики (1970-1990 гг.), Диссертация, Академия Наук СССР, ИВ, Москва, 1991.



Handwritten number 199010 written vertically on the left margin.

Ամինի, Օմար Մահմուդ Շահարի, Սարահ Աղ-Դին Մոմեա Ալիի, Կասեյշ Սիմեյ Ռոնարի, Կամբար Մոխամմադ Կասիմի, Յուսեֆ Ջամիլ Սասարունի և Յուսեֆ Ջեյն Աղ-Դինի հետազոտությունները<sup>28</sup>:

Միջազգի պատմությանն առնչվող տարրեր խնդիրներին նվիրված արևմտյան ուսումնասիրողների աշխատությունների շարքում անհրաժեշտ է նշել Պ. Սիլի, Ա. Կարլխաունի, Ռ. Հիննբրուչի, Դ. Հովվորյի, Ս. Լոնգրիգի, Ա. Պեպլմուտերի, Դ. Էրբերսի, Ա. Ռաբինովի և այլոց մեծագույն գործերը, հոլիանդերն ու հրապարակումները<sup>29</sup>:

<sup>28</sup> Алян ван Исмане Махлуф, Специальные войска Вооруженных Сил Сирийской Аравской Республики, Генеральная Штаб ВС САР, Диссертация, Дамаск, 1990, Алу Диял Сулейман, Паск и опыт организации политического пространства Сирии (1963-1999 гг.), РАН ИВ, Диссертация, Москва, 1995, Катар Мохамед Анис, Сирия в борьбе за укрепление политической независимости в национальном государстве (1946-1967 гг.), Московский ордена Ленина и ордена Трудового Красного Знамени Педагогический Государственный Университет имени В. И. Ленина, Диссертация, Москва, 1991, Омар Махмуд Шаар, Социально-политическое развитие Сирии (1963-1970 гг.), Диссертация, Университет Дружбы Народов имени Патриса Лумумбы, Москва, 1983, Салах ад-Дин Мулла Али, Социально-политическое развитие Сирии (1918-1939 гг.), Диссертация, Университет Дружбы Народов имени Патриса Лумумбы, Москва, 1983, Кувейт Ахмед Унал, Средства массовой информации и их роль в обеспечении управления военной организацией Сирийской Аравской Республики, Диссертация, Военный Университет, Москва, 2001, Катар Мухаммед Кассам, Совершенствование подготовки курсантов вузов к воспитательной деятельности в частях Вооруженных Сил Сирийской Аравской Республики, Диссертация, Военный Университет, Москва, 1997, Юсеф Джамиль Салун, Социально-политическое развитие Сирии в 1954-1963 гг., Диссертация, Университет Дружбы Народов имени Патриса Лумумбы, Москва, 1984, Юсеф Зейн Ад-Дин, Совершенствование процесса воспитания дисциплинированности у курсантов ВЗВов Вооруженных Сил САР, Диссертация, Военный Университет, Москва, 1998.

<sup>29</sup> Seale P., The Struggle for Syria. A Study of Post-War Arab Politics (1945-1958), London, 1965, Seale P., Asad. The Struggle for the Middle East, University of California, Berkeley, Los Angeles, 1989, باتريك سيل، الصراع على سورية، ١٩٥٨-١٩٤٥، مطبوعات، دمشق، ٢٠٠٧.



Առաջ քաշված հիմնախնդիրների, Միջուսյի լատակի կազմավորման, սպայական վերնախառվի ձևավորման, ներքաղաքական զարգացումների, արտաքին ուժերի ազդեցության պատճառների ու հետևանքների համակողմանի ուսումնասիրությանն ու ճիշտ ըմբռնելուն մեծապես նպաստել են Մ. Վան Դամի, Գ. Թորիի, Է. Բեեռիի և Ի. Ռաբինովիչի աշխատությունները<sup>30</sup>:

Պետք է հիշատակել նաև աշխատության համար շատ կարևոր Ն. Վան Դամի, Գ. Մոֆֆեռի, Ա. Դրիսթոլի, Է. Ջիսեռի, Մ. Մառզի, Թ. Վինդեր Բեյլի, Ջ. Լաֆֆինի, Ռ. Օլսոնի, Է. Դաունի, Տ. Պետրասնի, Պ. Ռամբերի, Լ. Բոու-Նախյիի, Ջ. Ա. Արու Ջաքերի, Է. Խուրիի և Գ. Գաուսեղոսի հետազոտությունները<sup>31</sup>:

---

Carlton A., The Syrian Coups d'Etat of 1949, Middle East Journal, Volume 4, N. 1, J., 1950, Hessebusch Raymond A., Authoritarian Power and State Formation in Ba'athist Syria: Army, Party and Peasant, Westview Press, Boulder, San Francisco & Oxford, 1990, Hopwood D., Syria 1945-1986, Politics and Society, St Antony's College, Oxford, London, Unwin Hyman, Boston Sydney Wellington, Longrigg S. H., Syria and Lebanon under French Mandate, London, New York, Toronto, 1958, Perlmutter A., From Obscurity to Rule, The Syrian Army and the Ba'ath Party, The Political Influence of the Military, New Haven and London, Yale University Press, 1980, Roberts D., The Ba'ath and the creation of modern Syria, Croom Helm, London & Sydney, 1987, Rathmell A., Secret War in the Middle East: The covert struggle for Syria 1949-1961, Tauris Academic Studies, I.B. Tauris Publishers, London-New York, 1995, اندرو دالمير،

الحرب الخفية في الشرق الأوسط، الصراع السري على سورية ١٩٤٩-١٩٦١، جميع الحقوق محفوظة، توزيع دار سلمية للتكتاب، ١٩٩٧.

<sup>30</sup> Van Dusen M., Intra- and Inter-Generational Conflict in the Syrian Army, Ph.D., Johns Hopkins University, Baltimore, Maryland, 1971, Torrey G. H., Syrian Politics and the Military 1945-1958, Ohio State University Press, 1964, Be'eri E., Army Officers in Arab Politics and Society, Israel Universities Press, Jerusalem, 1969, Rabinovich I., Syria under the Ba'ath 1963-1966, The Army-party symbiosis, Israel Universities Press, Jerusalem 1972.

<sup>31</sup> Van Dam N., The Struggle for Power in Syria, Sectarianism, Regionalism and Tribalism in Politics (1961-1980), London, 1981, Van Dam N., The Struggle for Power in Syria, Politics and Society under Assad and Ba'ath Party, I. B. Tauris

Ոստանասիրիվող բնմայի վերաբերյալ արժեքավոր նյութեր են պարունակում մաս տարաբնույթ պարբերականներում տեղ գտած լրատվություն ու իրողությունների վերլուծությունները, որոնցից կարելի է նշել արաբական «Ալ-բասսաթ», «Ալ-այամը», «Աս-սաուրան», «Ան-ճուրը», «Ալ-ֆումուհուրիյան», «Ալ-ջարիդան», «Ան-ճահարը», «Ալ-հայարը», «Ալ-ամալը», «Ալ-սիբարը», «Ալ-ջումհին» և այլն:

---

تلاويش فإن دام، الصراع على السلطة في سورية، Publishers, London-New York, 1997.

الثقافة والإقليمية والحزبية في السياسة ١٩١١-١٩١٥، مكتبة مدبولي، القاهرة، ١٩٩٥.

Soffer G., The Role of the Officer Class in Syrian Politics and Society, Ph.D., 1968, Drysdale A. D., Center and Periphery in Syria: A political geographic study, Ph.D., The University of Michigan, 1977, Zisser H., The Syrian Army: Between the Domestic and the External Fronts, Middle East Review of International Affairs, V. 5, N. 1, March, 2001, Ma'oz M., Asad, The Sphinx of Damascus, A Political Biography, London, 1988, Ma'oz M., Syria under Hafiz al-Asad: New Domestic and Foreign Policies, Jerusalem, 1975, Winder Bayly R., Syrian deputies and cabinet ministers 1919-1959, Part 1, Middle East Journal, Volume 16, N. 4, A., 1962, Laffin J., Arab Armies of the Middle East Wars 1948-1973, London, 1982, Olson R. W., The Ba'ith and Syria, 1947 to 1982, The Evolution of Ideology, Party, and State, From The French Mandate to the Era of Hafiz al-Asad, The Kingston Press, Inc., Princeton, N.J., Dawn Ernest C., The Rise of Arabism in Syria, Middle East Journal, Volume 16, N. 2, S., 1962, Petran T., Syria, London, Ernest Benn Limited, 1972, Ramet P., The Soviet-Syrian Relationship since 1955, Westview Press, Boulder, San Francisco & Oxford, 1990, Boss-Nacklie N. E., Les Troupes Spéciales: Religious and ethnic recruitment 1916-1946, International Journal of Middle East Studies, Vol. 25, N. 4, N. 1993, Abu Jaber Kamel S., The Arab Ba'ith Socialist Party, History, Ideology, and Organization, Syracuse University Press, New York, USA, 1966, Khoufy P. S., Syria and the French mandate, The politics of Arab Nationalism 1920-1945, London, 1987, Gautherot G., La France en Syrie et en Cilicie, Librairie Indépendante, 1920.

**ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՏԸ ԵՎ ՆՐԱ  
ԳԵՐԸ ՍԻՐԻԱՅԻ ԶԱՂԱԶԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ  
(1946-1958 թթ.)**

**1.1 Զինված ուժերի կարգավիճակը մամրատային Սիրիայում**

Համաշխարհային երկու պատերազմների միջև ընկած հատվածում՝ ֆրանսիական մամրատի հաստատումից մինչև ամկայսությունն ավաճումը, Սիրիան ապրեց ազգային-ազատագրական պայքարի դժվարին ու ծանր ժամանակաշրջան:

Սիրիայի բանակի կազմավորման բուն գործընթացը սկսվել է երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում, որի հիմքն Արևելյան (Հայկական) լեզնոնի Սիրիական գումարտակն է<sup>32</sup>:

<sup>32</sup> Sh'u Van Dusen M., *Intra-and Inter-Generational Conflict in the Syrian Army*, Ph.D., Johns Hopkins University, Baltimore, Maryland, 1971, p. 40, Zisser E., *The Syrian Army: Between the Domestic and the External Fronts*, Middle East Review of International Affairs, V. 5, N. 1, March, 2001, p. 3, Drysdale A. D., *Center and Periphery in Syria: A political geographic study*, Ph.D., The University of Michigan, 1977, p. 76, Koekenboer P., *A new model army*, Thesis, University of Amsterdam, 2005, p. 49, Attallah A., *President Assad's foreign policy*, Thesis, American University of Beirut, 1990, p. 73, Laffin J., *Arab Armies of the Middle East Wars 1948-1973*, London, 1982, p. 16, Mizrahi Jean-David, *Armée, état et nation au moyen-orient, La naissance des troupes spéciales du Levant à l'époque du mandat français, Syrie, 1919-1930, Guerres mondiales et conflits contemporains*, 2002/3 n. 207, p. 107, Գաբաճանուկյան Ա., Հայկական Լեզնոն պատմական, իրատևան ու քաղաքական հարցերու լռյին տակ և փառերգներ, Հայկազեան Հայագիտական Հանդես, հ. Ե., Պէյրոս, 1974, էջ 39-90: Հայկական լեզնոնի մասին մամրատան տե՛ս Գաբաճանուկյան Ծ., Չորսվար Արամ Գաբաճանուկյանի կեսանը ու գործը. Ֆոթո Լի. Նիի Երրդի, ԱՄՆ., 1998, էջ 206-268, Karame-noukian A., *Les Etrangers et le service militaire*, Paris, 1978, p. 164-187, Պարթևիան Մ., Արաբա, Հայկական լեզնոնը, Իզմիր, 1919, Պոսթեր ժորժ, Նոթեր Սուրբա-Կիլիկիա ռազմական գործողության մասին, Չարթոնը, 1984, էջ 4-19, Թոլուզյան Հ. Խ., Սիրիայի և Լիբանանի իսրայելական գաղթալանների պատմություն (1841-1946 թթ.), Երևան, 1986, էջ 132-140, Թ-

1916 թ. հոկտեմբերի 27-ին Լոնդոնում ֆրանսիական դեսպանատանը հայերի կամավորագրության հարցի շուրջ քանակցություններ սկսվեցին: Կեսպանատան խորհրդակցությանը մասնակցում էին անգլիական կառավարության ներկայացուցիչ Մարկ Մայքսը, ֆրանսիական կառավարության ներկայացուցիչ Ժորժ Պիկոն և Հայ ազգային պատվիրակության մախազահ Պողոս Նուբարը: Նրանք համաձայնության եկան, որ հայ և սիրիացի կամավորները մասնակցելու են Թուրքիայի դեմ մղվող կռիվներին Սիրիայում, Պաղեստինում ու Փոքր Ասիայում, իսկ հաղթանակից հետո Կիլիկիայում հաստատվելու է հայկական ինքնավարություն: Սիրիացիները ևս ցանկանում էին կռվել թուրքերի դեմ, այդ իսկ պատճառով բարձրատիճան զինվորական հրավիրվեց՝ ուսումնասիրելու Եգիպտոսում, Ֆրանսիայում և Ամերիկայում քնակվող սիրիացիների հավանական մասնակցության հարցը:

1916 թ. նոյեմբերի 15-ին մախարաբական որոշումով ստեղծվեց կամավորների գումը<sup>22</sup>: 1916 թ. նոյեմբերի 26-ին ֆրանսիական կառավարությունը 7966-9/11 հրամանագրով հաստատեց պատերազմական մախարաբության կողմից պատրաստված Արևելյան լեզեռնի կառուցարարությունը: Արևելյան լեզեռն կառուց էին կամավորագրվել միայն հայ, սիրիացի և արաբ կամավորներ, որոնք պետք է մարզվեին ու ղեկավարվեին ֆրանսիացի սպաների և ենթասպաների կողմից: Լեզեռնի զինավարժություններն անցկացվելու էին Կիպրոս կղզում<sup>23</sup>: Արևելյան լեզեռնի գումարտակները, որոնք կազմված էին հայերից և սիրիացիներից, մարտական պատրաստակամության քերվեցին Կիպրոսում և պատրաստ էին ուղղմանակատ մեկ-

րության Շ. Թ., Կիլիկիայի հայերի հասարակական-ցարսարական կյանքը 1919-1920 թթ., Առեմախոսություն, ԵՊՀ, Երևան, 1969, էջ 70-86, Պողոսեան Ս., Պոզոս Նուբար Փայա. ազգային գործիչը, Երևան, 2004, էջ 103-124, Հարությունյան Կ., Ֆրանսիական բանակի Հայկական լեզեռնը 1916-1920 թվականներին, «Պատմա-քառասիրական հանդես», 1999, թիվ 2-3, էջ 101-111, . ١٤٨١-١٤٧٢ صفحة . ١٩٨١. در الأناضول، تاريخ الطويل، محمد أمين غلب الطويل،

<sup>22</sup> Գարսամանովեան Ա., Տրվ. աշխ., էջ 41-42:

<sup>23</sup> Պոլյանեան Տ., Հայկական լեզեռնը, Ուոքսհամ, 1965, էջ 9-12:

նելու համար<sup>35</sup>: 1918 թ. սեպտեմբերի 19-ին ռազմաճակատի կենտրոնական երեք հատվածներից միաժամանակ հարձակում սկսվեց<sup>36</sup>: Արևելյան լեզեռնը գրոհեց Ռաֆայի բարձունքը, ավժիրական գումարտակները՝ Քաֆր-Քասիմի, իսկ հնդկականները՝ Արարայի<sup>37</sup>: Արևելյան լեզեռնը փայլուն մասնակցություն ցուցաբերեց այդ գրոհին: Դրանից հետո այն մասնակցեց Սիրիայի բազմաթիվ բաղադրանքի ազատագրմանը, այնուհետև լեզեռնականներին տեղափոխեցին Բեյրութ, հետո՝ Կիլիկիա<sup>38</sup>:

Արևելյան լեզեռնի ծաղկման և մասին Սիրիայի բանակի գեներալ Արամ Գարամանուկյանը գրել է. «Արևելեան Լեզեռնը գրաւեց Արարայի կարեւոր դիրքը Բաֆայի մոտ: Ջօրավար Ալեմսլի,- շարունակում է Արամ Գարամանուկյանը,- իր 20 Սեպտեմբերի 1920 օրակիր օրակարգին մէջ կը յայտարարէր. «Արևելեան կամ Հայկական Լեզեռնը կարեւոր բաժին մը ունեցաւ 19 սեպտեմբերի 1918 թ. Պաղեստինի ճակատին վրայ տեղի ունեցած մեծ ճակատամարտի ընթացքին: Ես ասով հպարտ եմ»<sup>39</sup>:

Ուշագրաւ է Արևելյան լեզեռնի հրամանատար գեղապետ Ռոմիտյի ճառը, որի մասին Մուրեմ Պարթևյանը գրում է. «Յանուն աջակողմեան Եմբա-Հատուածի բոլոր պետերուն, աստիճանատրմերուն եւ զինուորներուն՝ կողջունեմ երկէ կտուին մեր հայ մեռեալները: Այս հողին վրայ, ուր դեռ երէկ ամենափոքրիկ ժեսքը մահ կը հրախիբէր, մենք հպարտ սփռվանքն ունինք բաղելու 21 հերոս Հայեր, ամենքն ալ ինկած առաջին շարքին վրայ, երեսնին թշնամիին, յօրինակ այլոց: Ամենքն ալ արժանի են պատերազմի խաչին, ամենքն ալ պաշտպանները, սուրբերն են այլ նա Արևելեան Լեզեռնին»<sup>40</sup>:

<sup>35</sup> . ١١ صفحة ، ١٩٣٦-١٩١٨ العراب الأهمي لجيوش الشرق

<sup>36</sup> Gautherot G., La France en Syrie et en Cilicie, Librairie Indépendante, 1920, p. 41-42.

<sup>37</sup> Թովուզյան Հ. Խ., նշվ. աշխ., էջ 138:

<sup>38</sup> Դեբեղյան Տ., Հայկական Լեզեռնը, Պաշտպանության նախարարություն, Երևան, 2005, էջ 16:

<sup>39</sup> Տե՛ս Գարամանուկյան Ա., նշվ. աշխ., էջ 43:

<sup>40</sup> Տե՛ս Պարթևիան Ա., նշվ. աշխ., էջ 10-11:

Պոստիեր ժորժը, ով որպես ենթասպա 1920 թ. մասնակցել է Մարաշի պահակազորի ազատմանը, գրում է. «Այս ճակատամարտին է, որ իրենց քաժինը քերած են հայ լեզեռնականները, որոնք անօրինակ խիզախութեամբ կը գրասն Արարայի բանալի բարձունքը ու իրենց այս քայլով մեծապես կը նպաստեն Ալեմպիի բանակին յաղթանակին»<sup>41</sup>:

Արևելյան լեզեռնը, որը բաղկացած էր հինգ գումարտակներից, 1919 թ. հունվարի 18-ին քաժանվեց երկու մասի՝ Հայկական լեզեռնը 4 գումարտակով և Միլիականը՝ 1 գումարտակով: Արևելյան լեզեռնի կաժավորների թիվը հասնում էր շուրջ 5 հազարի՝ հայկական գումարտակներում կար 4124 զինվոր, իսկ սիրիականում՝ 698<sup>42</sup>:

Լեանտուն քրիստանական զորքերի հրամանատար գեներալ Ալեմքին հրահանգ տվեց Արևելքի ֆրանսիական զորամասերի հրամանատարին Արևելյան լեզեռնը Կիլիկիայից տեղափոխել՝ հնդկական գնդով փոխարինելու նպատակով: Այնուհետև նա հրամայեց Հայկական լեզեռնը Մարոկկո ուղարկել, սակայն լեզեռնի կաժնաաղոթությունը դա քույլ չէր տալիս: Չկարողանալով իրականացնել տեղափոխումը՝ Ալեմքին սրահանջեց լեզեռնի զորացրումը: Աստիճանաքար Հայկական լեզեռնի յորս գումարտակները մեկի իջան, և 1920 թ. մայիսի 1-ին Քեյրութից ստացվեց վերջին գումարտակի զորացրժամ հրամանը: Զորացրումն սկսվեց սեպտեմբերի 1-ին: Ամբողջական կերպով այն ալկարովեց նույն ամսվա 27-ին: Անգլիայի և Ֆրանսիայի ղեկավարությունները, որոնք խոստացել էին ֆրանսիական մանդատի ներքո Կիլիկիայում վերականգնել հայկական ինքնավարությունը, մոռացան իրենց խոստումը: Մակայն պատմության մեջ առաջին անգամ չէ, որ քաղաքականությունը հաղթում է իրավունքին<sup>43</sup>:

<sup>41</sup> Տես Պոստիեր ժորժ, նշվ. աշխ., էջ 17:

<sup>42</sup> Bou-Nackle N. E., Les Troupes Spéciales: Religious and ethnic recruitment 1916-1946, International Journal of Middle East Studies, Vol. 25, N. 4, N. 1993, p. 648.

<sup>43</sup> Գարամանուկեան Ա., նշվ. աշխ., էջ 54-60:

1919 թ. սեպտեմբերի 13-ին Անգլիայի և Ֆրանսիայի միջև ձևաք ընդված համաձայնությամբ Արևմտյան Միդիայում և Կիլիկիայում գտնվող քրիստոնեական զորքերը Ֆրանսիական զորքերով փոխարինելու վերաբերյալ դրեց Ֆրանսիական զորքերի կողմից Միդիան գրավելու սկզբը: Ֆրանսիական զորքերն Արևմտյան Միդիայի գրավումն ավարտեցին 1919 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Այստեղ կենտրոնացվեց մոտ 70 հազար ֆրանսիական զինվոր՝ գեներալ Գուրոյի հրամանատարությամբ, ով ստանձնեց նաև Միդիայում Ֆրանսիայի զեղազույց կոմիտեի պաշտոնը<sup>44</sup>: Դա ազդանշան հանդիսացավ ամբողջ Միդիայում ազգային-ազատագրական պայքարի ծավալման համար: Դեռևս 1919 թ. փետրվարին ապստամբեցին Միդիական լեզեռնի արաբ զինվորները, մարտին ապստամբություն բռնկվեց Հալեպում և նրա շրջակայքում: Նույն թվականի մայիսին Լաթաքիայի շրջանում սկսվեց ալավիների<sup>45</sup>

<sup>44</sup> 1918-1946 թթ. Միդիայում և Լիբանանում գերագույն կոմիտեներն էին՝ Շրթո Պիլոն 1918 թ. ապրիլի 19-ից մինչև 1919 թ. հոկտեմբեր, գեներալ Գուրոն 1919 թ. նոյեմբերի 8-ից 1922 թ. նոյեմբեր, գեներալ Վիլյամը 1923 թ. ապրիլի 19-ից 1924 թ. դեկտեմբեր, գեներալ Մարսալը 1925 թ. նոյեմբերից 1925 թ. նոյեմբեր, Հենրի դե ժուվինալը 1925 թ. նոյեմբերի 10-ից 1926 թ. մայիսի 7, Հենրի Ռոնան 1926 թ. սեպտեմբերի 3-ից 1933 թ. նոյեմբերի 12, Գամին դե Մարտիլը 1933 թ. նոյեմբերի 12-ից 1939 թ. հունիս, Գաբրիել Պիոն 1939 թ. նոյեմբերի 5-ից 1940 թ. նոյեմբերի 25, ժան Շիպոյը նշանակվեցուց հետո մահացավ Միդիայի ճամադարիին, գեներալ Դենցը 1940 թ. դեկտեմբերի 10-ից 1941 թ. հուլիսի 15, գեներալ Կուտրոն 1941 թ. հուլիսի 15-ից 1943 թ. նոյեմբեր (նա առաջինն էր գերագույն կոմիտեի անդամ, որ իրեն կոչեց գլխավոր կոմիտե), Իվ ժան Հալոն 1943 թ. հունիսի 7-ից 1943 թ. նոյեմբեր և գեներալ Պիլոն 1944 թ. մարտից 1946 թ. ապրիլի 15: *Lesan Hady*, «*كش الشعب العربي سوري 1918-1946*», دمشق, 1962, ص 234-235

234

<sup>45</sup> Ալավիական ուսմունքը հիմնադրել է 9-րդ դարի աստվածաբան Մուհամադ իբն Նուսայրը, ով իրեն համարում էր շիա տասներկուցորդ իմամ՝ Հաճան իբն Ալի Ալ-Աքբարիի հետևորդը: Հետագայում Մուհամադ իբն Նուսայրի ուսմունքի հետևորդներին անվանել են նուսայրիներ: Կազմելով երկրի բնակչության 11 տոկոսը՝ նրանք համարվում են այդ երկրի ամենամեծ կրոնական փոքրամասնությունը: Ալավիների ուսմունքի համաձայն՝ Ալիմ համարվում է Աստուծո ճարտակերտը: Ալավիների մոտ շահարան

ապտամբությունը Մալիկ Ալ-Ալիի գլխավորությամբ և այլն: Միրիական գլխավոր կոնգրեսը 1919 թ. դիմեց ողջ սիրիական ժողովրդին գավթիչներին դիմադրություն ցույց տալու կոչով: Ստեղծվեց Ազգային պաշտպանության ժողովրդական խորհուրդը, որն իր մասնաճյուղերն ունիր Միրիայի գրեթե բոլոր քաղաքներում և շրջաններում: Նա կամավորներից պարսիկամական քոկատներ էր կազմակերպում և ուղարկում շրջանները, դրան ու զենք հայթայթում և այլն: Խորհուրդը 1919 թ. նոյեմբերի 18-ին որոշեց, որ յուրաքանչյուր սիրիացի պարտավոր է իր ունեցվածքի երկու տոկոսը հատկացնել հայրենիքի պաշտպանության խնդրին: Միդիական կոնգրեսն արար ազգը հայաարարեց «օրինակ պաշտպանության վիճակում», իսկ սիրիական կառավարությունը 1919 թ. դեկտեմբերի 21-ին որոշում ընդունեց ընդհանուր զինապարտության մասին, որով զորակոչման էին ենթարկվում 20-40 տարեկան բոլոր քաղաքացիները<sup>46</sup>:

1920 թ. մայիսի 3-ին Ֆեյսալ<sup>47</sup> քաղաքից նոր կառավարություն կազմելը հանձնարարեց Միրիական ազգային կոնգրեսի նախագահ Հաշիմ Ալ-Աբասիին: Նրա գլխավորած կառավարությունը կոչվեց Ազգային պաշտպանության կառավարություն: Ժողովուրդը պահանջում էր կառավարությունից՝ կտրուկ միջոցների դիմել Միրիայի պաշտպանությունն ամրապնդելու ուղղությամբ: Ի կատարումն այդ պահանջի՝ կառա-

---

(վկայությունը) արտահայտվում է այսպես՝ «Չկա Աստիճություն՝ բացի Ալեքս. չկա մող՝ բացի Մախամմադից, և չկա Կոտ՝ բացի Մարման Ալ-Ֆարիսիից»: Ալավիների մասին մանրամասն տե՛ս Fakhri M. A., *The Alawi Community of Syria: A New Dominant Political Force, Middle Eastern Studies*, Vol. 20, N 2, 1984, Kramer M., *Syria's Alawis and Shi'ism in Shiism, Resistance, and Revolution*, ed. Martin Kramer, Boulder, Colorado: Westview Press, 1987, Pipes D., *The Alawi Capture of Power in Syria, Middle Eastern Studies*, V. 25, N 4, London, 1989, محمد أمين خطاب الطويل، المصدر المذكور، ليرون ماهر، رحلة إلى جبال العلويين، دمشق، ١٩٠١، هاشم عثمان، هل العلويون شيعة؟ بيروت، ١٩٩١.

<sup>46</sup> Հովհաննիսյան Ն. Հ., Մարգարյան Հ. Ս., Միրիան անկախության համար նոված պայքարում (1917-1946 թթ.), Երևան, 1975, էջ 73-76:

<sup>47</sup> Էմիր Ֆեյսալը (1883-1933) Հիջազի շեյխի Հուսեյնի երրորդ որդին էր:



վարությունը որոշեց անհապաղ ձեռնամուխ լինել ազգային բանակի կազմակերպմանը: Հեմվելով 1919 թ. դեկտեմբերին ընդունված զինապարտության մասին օրենքի վրա՝ Հաշիմ Ալ-Աբասիի կառավարությունը սկսեց զորահավաք և ազգային բանակի զորամիավորումների կազմակերպում: Ֆրանսիական կառավարությունը Սիրիային ներկայացրեց վերջնական քննարկող հինգ կետից կազմված իր պահանջները, որը 1920 թ. հուլիսի 14-ին Ֆեյսալին հանձնեց զենքալի Գուրուն: Ֆեյսալը ցրեց Սիրիական զվաճիչ կոմերսը, ձեռնամուխ եղավ ազգային բանակի զինաքափմանը և զորացրմանը, անգամ սկսեց ճնշել ժողովրդական ելույթները: Հուլիսի 21-ին հայտնի դարձավ, որ ֆրանսիական զորքերը շարժվում են դեպի Դամասկոս: Ֆեյսալը երկրի պաշտպանության նրանց արձակեց: Սիրիական կամավորների քիվը հասնում էր 4-5 հազարի: Մայսպետն եկան նաև սիրիական կամավոր բանակի փոքր զորախմբեր Սիրիայի պաշտպանության մախարաթ Յուսեֆ Ազմայի զվաճիչությանը, որոնք չէին հասցրել զորացրվել սիրիական բանակը ցրելու վերաբերյալ Ֆեյսալի արձակած օրենքից հետո: Հուլիսի 26-ին ֆրանսիական զենքալի Գոյբուռը սիրիական կառավարության անդամների հետ հանդիպման ժամանակ Սիրիայում տեղի ունեցած դեպքերի համար մեղադրեց Ֆեյսալին և ֆրանսիական կառավարության անունից պահանջեց զանդնկեց անել նրան, վճարել ոսգմատուգանք, ցրել սիրիական բանակը և այն վերածել ոստիկանության, ֆրանսիական բանակին հանձնել նրա բոլոր զենքերը և զինամթերքը<sup>48</sup>:

Սիրիական լեգեոնի թվակազմն ավելացնելու նպատակով՝ ֆրանսիացիներն այն համալրեցին ազգային, կրոնական փոքրամասնություններով: Սիրիական լեգեոնի Առաջին գնդի հրամանատարը փոխգնդապետ Լանդախան էր<sup>49</sup>: Առաջին գնդի մեջ էր մտնում այլափյնների շրջանը<sup>50</sup>: 1924 թ. լեգեոնը բաղկա-

<sup>48</sup> Հովհաննիսյան Ն. Հ., Մարզպան Հ. Ա., 6շվ. աշխ., էջ 95-106:

<sup>49</sup> Bon-Nacklé N. E., 6շվ. աշխ., էջ 659:

<sup>50</sup> Սիրիայի տարածքի վրա ֆրանսիական մանդատի ներքո ստեղծվեցին հինգ պետություն՝ Լիբանանի, Դամասկոսի, Հալաբի, Ալափիների և Ջարալ

ցած էր 6500 հոգուց՝ 137 ֆրանսիացի և 48 տեղացի սպաներով, ովքեր ռազմական ուսում էին ստանում Գամասկոսի Ռազմական ակադեմիայում<sup>51</sup>, որը ստեղծվել էր 1920 թ.: Միայն 1932 թ. այդ ուսումնարանը տեղափոխվեց Հոմս<sup>52</sup> և պատմագրության մեջ հայտանի է որպես Հոմսի Ռազմական ակադեմիա:

1925 թ. ֆրանսիացիներից հիմնեցին այսպես կոչված «Լրացուցիչ զորքեր» (Troupes Suppléives), որոնք բաղկացած էին գյուղական և շարժական զորքերից, ինչպես նաև ժանդարմերիայից: Մինչ այդ էլ նրանք հիմնել էին նաև «Օժանդակ զորքեր» (Troupes Auxiliaires)<sup>53</sup>, որոնք հիմնականում կազմված էին Ալ-Բաշադիրա ավալիներից (նուսայրիներ), Բուրջան դրուզներից, չերքեսներից<sup>54</sup>, հայերից և քրդերից: Նրանք զին-

---

Դրուզի ու Ալեքսանդրիոսի ինքնավար ժառանգ: Sb'u Hourani A. H., Syria and Lebanon, A Political Essay, Oxford University Press, 1946, p. 172-173. Աղանձների պատկերային ժառանգ մանրամասն տե՛ս: أبو موسى الحريري، الطوائف المسيحية، بيروت، ١٩٨٠، صفحة ٢٢٢-٢٢٢.

حسن أمين الحريري، مرورنا على عهد الانتداب الفرنسي، ١٩٢٠-١٩١٣، دراسة في تاريخهم السياسي، بيروت، ١٩٩٣، صفحة ١١١-١٣١.

<sup>51</sup> Khoury P. S., Syria and the French mandate, The politics of Arab Nationalism 1920-1945, London 1987, p. 80.

<sup>52</sup> Van Dusen M., նշվ. աշխ., էջ 104:

<sup>53</sup> Drcysdale A. D., նշվ. աշխ., էջ 78:

<sup>54</sup> Մերձավար Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում չերքեզ անվանում են նաև Հյուսիսային Կովկասի այլ ժողովուրդներին, օրինակ՝ ադիգեյցիներին, կարադղինացիներին և այլն: Միդիական սպառնական վերամիտավում նրանցից հայտնի են եղել մի շարք բարձրաստիճան գնվորականներ՝ Արագս Վալիդ Հանդին ծնվել է 1945 թ. Ալ-Կոմնեյուրայում, ազգությամբ՝ արիաազ, եղել է դիվիզիոնի գեներալ, Համայն քաղաքաքայտական անվտանգության վարչության պետ:

Արագս Մանդոտ Հանդին ծնվել է 1931 թ., ազգությամբ՝ արխազ, եղել է գեներալական օդաչու, կորպուսային գեներալ, Միդիայի հերոս:

Աբիդին Արա Ալ-Դիմը ծնվել է 1945 թ., ազգությամբ՝ ադիգեյ, եղել է ռազմածովային ուժերի դիվիզիոնի գեներալ, Միդիայի երկակի հերոս:

Սվարի Աբդուլլա Մուհամմադը ծնվել է 1952 թ., ազգությամբ՝ ադաբ, եղել է Միդիայի ռազմածովային ուժերի գեներալ:

վորական ծառայության համար որպես աշխատավարձ սկզբ-  
քան ստանում էին հինգ<sup>55</sup>, իսկ ծառայությունից վեց ամիս անց՝  
13 լիրա<sup>56</sup>:

1925 թ. հուլիսին Մուլբան Ալ-Արբուաշի գլխավորությամբ  
Ջարբալ Դրուզում սկսված ապստամբության ժամանակ ֆրան-  
սիական հրանճանատարությունը 3-4 հազար ժամանակ գործեր

---

Անգլո Ջավաղը ծնվել է 1900 թ. Ուարբայում, ազգությամբ՝ կապարդին,  
մասնակցել է 1948 թ. աթաբ-խապչեղևան պատերազմին, գեղի հրամանա-  
տար, Սիրիայի ազգային ներքո:

Բազ Ավիաղը ծնվել է 1933 թ., ազգությամբ՝ աղիզեյ, դիվիզիոնի գնն-  
բար, Սիրիայի մախսիհն ներքին գործերի մախաբարի տեղակալ:

Մալլադեղար Մոհամմադ Մախդը ծնվել է 1930 թ., ազգությամբ՝ աղիզեյ,  
դիվիզիոնի գեներալ, Սիրիայի մախսիհն բանակային երկրորդ կորպուսի  
հրամանատար:

Քիչմաֆ Արդ Ալ-Խադին ծնվել է 1940 թ., ազգությամբ՝ աղիզեյ, բրիգա-  
դային գննորդ, եղել է Սիրիայի բանակային երկրորդ կորպուսի հրամա-  
նատարի տեղակալ:

Գադառանի Բազալուդին Արդ Առ-Մահմադը ծնվել է Հոնոմ, ազգու-  
թյամբ՝ աֆար, բրիգադային գեներալ, զինվորական օդայու:

Գադառանի Տալթը Մոհամմադը ծնվել է 1914 թ., բրիգադային գեներալ,  
1930 թ. ավարտել է Կամազուտի Ռազմական ակադեմիան, Սիրիայի Սամ-  
մանապահ զորքերի առաջին հրամանատար, Սիրիայի մախազահ Շուրրի  
Ալ-Ջուսարիի օգնականն էր, 1940-1950 թթ. Բաղդադում և Թեհրանում  
ռազմական կցորդ:

Լուստամ Ադնանն ազգությամբ չերքեզ է, 1950 թ. Սիրիայի ռազմածո-  
վային ուժերի հրամանատար:

Օզդեմիր Ջամալ Ադ-Դեմը ծնվել է 1945 թ., ազգությամբ՝ չեխն, բրիգա-  
դային գեներալ:

Օսման Մոհամմադ Ամինը ծնվել է 1945 թ., ազգությամբ՝ աղիզեյ, սա-  
ղեռուխիսիական զորքերի բրիգադային հրամանատար:

Ռամադան Բադը Ադ-Դեմը ծնվել է 1930 թ., ազգությամբ՝ չերքեզ, դիվի-  
զիոնի գեներալ:

Յասիֆ Բասիմը ծնվել է 1940 թ., ազգությամբ՝ աղիզեյ, ռադիոհաճության  
դիվիզիոնի գեներալ, Սիրիայի բանտերի վարչության պետ:

Հասան Ռիտը Խալեղը ծնվել է 1932 թ., ազգությամբ՝ աղիզեյ, եղել է  
գրանատանկային զորքերի բրիգադային գեներալ: Sb'u Annex B. P., Severo-  
kazakskaya diastora: Istorija i sovremennoost, Makhajkala, 2001, c. 253-  
267.

<sup>55</sup> Եռյն տեղում, էջ 129:

<sup>56</sup> Գալուչ Ա. Ա., Черкесы и Иордания, МГУ НСАА, Москва, 2007, с. 89.

ուղարկեց, որոնց մեջ մտնում էին սեմնեզալցիների 2 վաշտ, մադագասկարցիների 2 վաշտ, Մարոկկոյի և Թունիսի արաբների 2 հեծելավաշտ, սիրիացիների 5 վաշտ, որոնք մեծ մասամբ կազմված էին չերքեզներից և քրդերից: Այդ ուժերի մեջ մտնում էին նաև ֆրանսիական 5 հրածոգային վաշտ, զբառնապատ միքեմանների 2 հեծելավաշտ, լիբնային հրետանու 1 մարտկոց, 2 հրետամային դասակ և այլն<sup>57</sup>:

1926 թ. Սիրիական լեզեոնը բաղկացած էր մոտ 10 հազար չերքեզից, 4 հազար ալավիից և խոմայիզականից<sup>58</sup>, 1500 եզդիից, 1500 քեդվիմից<sup>59</sup>, 2 հազար դրուզից<sup>60</sup> և հայից: Այդ զորքերի կողքին ստեղծվեցին մի քանի կազմակերպություններ՝ Հալեպյուն և Տուալեպյուն: Այլ բաղաբաներում նմանատիպ կազմակերպություններ նույնպես ստեղծվեցին տարբեր կոմսական ամվանումներով: Այդ կազմակերպություններին ֆրանսիական «Հակահետախուզական սպաների կոմիտեմ», որը գործում էր Սիրիայում: Հաճախ ընդհարումներ էին տեղի ունենում այդ կազմակերպությունների և հասարակության միջև, որոնք հրահրում էին ֆրանսիացիները: «Հակահետախուզական սպաների կոմիտեմ» այնպիսի մրմուրոտ էր ստեղծում Սիրիայում, իբր հասարակությունը փտանդի մեջ է գտնվում, և առանց ֆրանսիացիների ներկայության՝ այլուժացի բախում-

<sup>57</sup> Луцкий В., Национально-освободительная война в Сирии (1925-1927 гг.), Москва, 1964, с. 159.

<sup>58</sup> Իսմայիլականությունն իրական շրա սպարության արձագանքից է, որն իր անվանումը ստացել է շրա վեցերորդ ինամ Տաֆար Աս-Մադիի անվան հիման վրա: Իսմայիլի անունից, ով մահացել է 760 թ.: Sb'u Dafary P., The Isma'is, Their History and Doctrines, Cambridge University Press, 1990, p. 1-2.

<sup>59</sup> Սիրիայի քեդվիմների մասին մանրամասն տե՛ս Chaaty D., The Bedouin in Contemporary Syria: The Persistence of Tribal Authority and Control, Middle East Journal, Vol. 64, No. 1, Winter, 2010, p. 30-49.

<sup>60</sup> Դրուզների կոմսական ազանդը ծնունդ է ստել Եվրոպայում 10-11-րդ դարերում: Հաճախի անվանումը սերում է 11-րդ դարի բարբալ: Մոհամեմազ իբն Իսմայիլ Աղ-Կարազիի անունից:

ներ տեղի կունենան սիռիացիների միջև<sup>61</sup>: Այսպիսի քաղաքականությունը ազգային, կրոնական թշնամություն առաջ բերելու նպատակով էր արվում, որպեսզի ազգային-ազատագրական ուժերի շարքերում վարկաբեկվեր ու թուլանար ազգային անկախության պայքարը, ազգային ապստամբությունը վերածվեր կրոնական պատերազմի և համաշխարհային հասարակությունը ցույց տրվեր, որ կրոնական հակամարտություններով պատակոված Սիրիան ֆրանսիական իմամականության կախիքն ունի:

Թեև ֆրանսիական իշխանությունները կրճատեցին ալավիների, դամասկոսյան սուննի աղաբների, դրուզների քվակազմը Սիրիական լեզեոնում, այնուամենայնիվ, նրանցից բոլորը ապստամբեցին նրաց դեմ 1920-1927 թթ.: Ընդհանուր առմամբ՝ ալավիների, սուննի աղաբների, դրուզների պատկերը չփոքրացավ զինված ուժերում<sup>62</sup>:

1930 թ. մարտի 20-ին Սիրիական լեզեոնը, որին միացան նաև Լքացուցիչ և Օժանդակ զորքերը, վերածվեց «Լևանտի Հատուկ Ջորամասերի» (Troupes Spéciales du Levant)<sup>63</sup>: Ֆրանսիական մանդատային իշխանությունների ստեղծած «Հատուկ զորամասերը» համալրվում էին հիմնականում ժայթմատային հետամնաց շրջանների, ինչպես նաև ազգային, կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչներից, օրինակ՝ ալավիներ, դրուզներ, իսմայիլականներ, քրդեր<sup>64</sup>, չերքեզներ, հայեր և այլն<sup>65</sup>: Թեպետ 1930-1945 թթ. հայերի քվակազմն ավելացավ

<sup>61</sup> Салех аз-Զևի Мухаммед, Социально-политическое развитие Сирии (1918-1939 гг.), Диссертация, Университет Дружбы Народов имени Патрса Лумумбы, Москва, 1983, с. 93-94.

<sup>62</sup> Bou-Nackle N. E., թվ. աշխ., էջ 647:

<sup>63</sup> Նույն տեղում, էջ 651:

<sup>64</sup> «Հատուկ զորամասերում» քրդերի մասին մանրամասն տե՛ս Yildiz K., The Kurds in Syria, The Forgotten People, London, 2005, p. 28-30.

<sup>65</sup> Be'eri E., Army Officers in Arab Politics and Society, Israel Universities Press, Jerusalem, 1969, p. 334, Van Dam N., Middle Eastern political clichés: «Takriti» and «Sunni rule» in Iraq, «Alawi rule» in Syria, Orient, 21 Jahrgang, Nr. 1, Januar, 1980, German Journal for Politics and Economics of the Middle East, p. 51-52, Филантон А. А., Идолология власти мещишества: Оман Сирии,

«Հատուկ զորամասերում», որոնցից շատերը նշանակվեցին տեխնիկական բաժնում, այնուամենայնիվ, Արևելյան (Հայկական) լեզունը չվերածմով:

«Հատուկ զորամասերը» քաղկացած էին չիբրեզների 8, լիբանանցիների 7, դրուզների 6, քրդերի 3, հաուսանցիների 1 հեծելապաշտերից, ինչպես նաև այլ մերկայացուցիչների 4 հեծելապաշտից: «Հատուկ զորամասերի» հրամանատարն էր կապիտան Կուլը<sup>66</sup>: Չերքեզական գնդի ստացին հրամանատարն Օսման Արևին էր<sup>67</sup>, այնուհետև՝ Թաուֆիկ Անգորը<sup>68</sup>:

1936 թ. սեպտեմբերի 9-ին Միլիայի և Ֆրանսիայի միջև ստորագրվեց «Բարեկամության և օգնության պայմանագիրը»: Ֆրանսիան ճանաչում էր Միլիայի անկախությունը և պարտավորվում էր երեք տարվա ընթացքում՝ մինչև 1939 թ., հրաժարվել մանդատից և օժանդակել Միլիային՝ որպես անկախ պետություն անդամակցելու Ազգերի լիգային: Ֆրանսիան ճանաչում էր նաև Միլիայի միասնությունը, ըստ որի՝ Լաբարիան և Ջարալ Դրուզը միավորվում էին Միլիային: Դրա հետ միասին Ֆրանսիան իրավունք էր ստանում Միլիայի տարածքում ունենալ իր ռազմական բազաները, իսկ Լաբարիայի և Ջարալ Դրուզի շրջաններում ինճ տարի ժամանակով պահելու իր զորքերը: Ֆրանսիական ռազմական ուժերը կարող էին ազատ շարժվել Միլիայի տարածքով, իսկ ռազմանավերը՝ մտնել Միլիայի ցամկացած նավահանգիստը: Ֆրանսիական ռազմական առաքելությունն իրավունք էր ստանում հսկել սիրիական քամակը, որը պետք է քաղկացած լիներ միայն մեկական

---

Проблема Управления, № 2 (31) 2009, Академия Управления при Президенте Республики Беларусь, с. 131-134, Саутов В. Н., Азиатцы в общественно-политической жизни Сирии (40-е-90-е годы 20 в.), РАН ИВ, Диссертация, Москва, 2001, с. 125-126.

<sup>66</sup> Кушхашев А. В., Черкесская диаспора в Аравийских странах (19-20 вв.), Нальчик, 1997, с. 133.

<sup>67</sup> Кушхашев А. В., Генезис черкесской диаспоры в Аравийском мире (на примере Сирии), АН СССР ИА, Автореферат диссертации, Москва, 1991, с. 17.

<sup>68</sup> Балеркая Фасих, Северокавказская диаспора в Турции, Сирии и Иордании, Москва, 2001, с. 75.

հետևակային և հեծելազորային դիվիզիաներից: Պատերազմի դեպքում Յրանսիան կարող էր օգտվել սիրիական քաղաքներից, նավահանգիստներից, հաղորդակցության ճանապարհներից: Միրիան պարտավորվում էր միայն Յրանսիայից հրավիրել ռազմական խորհրդականներ և այլ մասնագետներ: Միրիան՝ համաձայն պայմանագրի պահանջների, ձեռնամուխ եղավ պայմանագրի վավերացմանը: 1936 թ. նոյեմբերի 30-ին կայացան սիրիական խորհրդարանի նոր ընտրություններ, որի ժամանակ հաղթեց «Ազգային դաշինք» կամ «Ալ-Ֆուրաթ Ալ-Ատուանիան»<sup>69</sup>: Նրա ղեկավար Հաշիմ Ալ-Աթաին ընտրվեց Միրիայի նախագահ, իսկ Ջամիլ Մարդանը գլխավորեց սիրիական կառավարությունը: Յրանսիական խորհրդարանը 1939 թ. հունվարին հրաժարվեց վավերացնել 1936 թ. Ֆրանսիական պայմանագիրը: Լարաբիան և Ջաբալ Դրուզը նորից անջատվեցին Միրիայից: Յրանսիական կառավարության 1939 թ. սեպտեմբերի 2-ի որոշմամբ՝ Միրիան հայտարարվեց ռազմական գոտի, և այնտեղ ուղարկվեցին նոր ռազմական միավորումներ: Ոստիկանությունը և անվտանգության ուժերը դրվեցին քանակի հսկողության տակ<sup>70</sup>:

Երկրորդ Համաշխարհային պատերազմի տարիների օրնցօր հզորացող ազգային-ազատագրական շարժման պայմաններում 1943 թ. օգոստոսի 17-ին տեղի ունեցավ Միրիայի Ազգային ժողովի նոր ընտրություններ<sup>71</sup>: Նորընտիր Խորհրդարանը Միրիայի նախագահ ընտրեց «Ալ-Ֆուրաթ Ալ-Ատուանիա» կուսակցության առաջնորդ Շուքրի Ալ-Քուարիյին<sup>72</sup>:

<sup>69</sup> «Ազգային դաշինք» կուսակցության մասին մանրամասն տե՛ս Seale P., The Struggle for Syria. A Study of Post-War Arab Politics (1945-1958), London, 1965, p. 24. «١٩٥٨-١٩٤٥ دراسة للسياسة العربية بعد الحرب» طرابلس، دمشق، صفحة ٤٣-٤٤.

<sup>70</sup> Հովհաննիսյան Ն. Հ., Մարզպան Հ. Ս., Գլխ. աշխ., էջ 177-194:

<sup>71</sup> «سلي مريم بك، أوزلي جميل مريم بك، استكمال سورية ١٩٣٩-١٩٤٥، بيروت، ١٩٤٤، صفحة ٢٣٣».

<sup>72</sup> Winder Bayly R., Syrian deputies and cabinet ministers 1919-1959. Part 1, Middle East Journal, Volume 16, N. 4, A., 1962, p. 414, Winder Bayly R.,

Ֆարիս Ալ-Խուրին<sup>73</sup> քննարկեց Ազգային ժողովի նախագահ, իսկ օգոստոսի 19-ին կազմվեց ազգային առաջին կառավարությունը, որը ղեկավարեց Մաադալլահ Ալ-Ֆարրին<sup>74</sup>:

1944 թ. հունիսին Միրիամ դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Խորհրդային Միության հետ, իսկ սեպտեմբերի 19-ին՝ ԱՄՆ-ի<sup>75</sup>: 1945 թ. սկզբներին Միրիայի անկախությունն արդեն ճանաչել էր 14 պետություն: Միրիայի կառավարությունն ակտիվ մասնակցություն ունեցավ Արաբական պետությունների լիգայի կազմավորման գործընթացին: Միրիայի անդամակցությունը տարածաշրջանային կազմակերպությանը լայն ճանաչում գտավ միջազգային ասպարեզում: 1945 թ. սպրիլի 12-ին Միրիամ և Լիբանանը ստորագրեցին Մրավորված ազգերի կազմակերպության հայտարարությունը՝ դատնալով նրա լիիրավ հիմնադիր անդամներ<sup>76</sup>:

## 1.2. Ազգային քանակի ստեղծումն անկախ Միրիայում

Ֆրանսիան, Միրիային փոխանցելով երկրի կառավարման որոշ պարտականություններ, իր տնօրինության տակ պահեց «Հատուկ զորամասերը»<sup>77</sup>: Միրիական կառավարու-

---

Syrian deputies and cabinet ministers 1919-1959, Part 2, Middle East Journal, Volume 17, N. 1 & 2, Winter-Spring, 1963, p. 35-54. Տարրի Ալ-Ֆարրին ծնվել է 1892 թ. Դանասկաում: Բարձրագույն կրթությունը ստացել է Թուրքիայում:

<sup>73</sup> Ֆարիս Ալ-Խուրին ծնվել է 1877 թ. Լիբանանում: علي سلطان، تاريخ سورية 1918-1920، حكم فيصل بن الحسين، دمشق، 1987، ص 244.

<sup>74</sup> أحمد الجندى، تذكير الجارى، دمشق، بناء دار المهائسين، ص 12-13.

<sup>75</sup> بشار الجعفرى، السياسة الخارجية السورية 1916-1982، دمشق، 1987، ص 81.

<sup>76</sup> Пир-Будагова Э. П., Сирия в борьбе за упрочение автономной независимости (1945-1966 гг.), Москва, 1978, с. 6.

<sup>77</sup> Тарраф Мухаммед, Восемь аспектов борьбы арабского народа против империалистической экспансии в Сирии, Ливане, Палестине и Иордании 1918-1946, Диссертация, Гуьманитариян Орденю Лениня в Октябрьской ре-



բյունը պաշտոնապես Ֆրանսիայի առջև դրեց «Հասուն գործածանք» իրեն համձնելու պահանջը<sup>86</sup>։ Այդ գործածանքը Միրիային փոխանցելու համար բանակցությունները սկսվել էին դեռևս 1943 թ. դեկտեմբերին և ընդմիջումով շարունակվել հաջորդ երկու տարիներին<sup>87</sup>։ Ֆրանսիան համաձայն էր «Հասուն գործածանք» փոխանցել Միրիային, եթե վերջինս ընդառնաջ գնար Փարիզի որոշ ցանկություններին։ Այն պեսք է ապահովեր Ֆրանսիական մշակութային ձեռնարկությունների անկախությունը, Ֆրանսիայի տնտեսական իրավունքները և պահանջում էր, որ իրեն իրավունք տրվի ունենալ ծովային և օդային ռազմական բազաներ։ Մակայն սիրիական կառավարությունը մերժեց այս պահանջները։ Միրիայում լայն շարժում սկսվեց այդ գործածանքի փոխանցման և ազգային բանակի ստեղծման համար<sup>88</sup>։

«Ալ-Ինշա» թերթը նշում էր, որ երկրի անկախությունը պահպանել կարելի է միայն ազգային բանակի առկայության դեպքում, իսկ «Ալ-քիֆահը» կառավարությանն առաջարկում էր՝ անհապաղ ձեռնամուխ լինել ազգային բանակի ստեղծմանը։ Նա միաժամանակ առաջարկում էր մի խումբ երիտասարդների ուղարկել արաբական երկրներ ռազմական կրթություն ստանալու համար։ Բանակի ստեղծման ու ռազմական կադրերի պատրաստման հետ մեկտեղ առաջ էր քաշվում նաև հատուկ ռազմական հարկ մտցնելու պահանջը։ Կառավարությանը ներկայացվեց մի պահանջագիր, որ առաջարկում էր՝ մտցնել ընդհանուր զինապարտություն, ուսուցանել ռազմական զործը բոլոր դպրոցներում, սահմանել հայրենիքի Բանակի օր և նվիրատվություններ հավաքել՝ ի նպաստ բանակի<sup>89</sup>։

Մի շարք պատգամավորներ իրենց ելույթներում կառավարությանն առաջարկում էին սկսել բանակի կազմավորման

волеции Краснознаменная Академия Вооруженных Сил, Москва, 1992, с. 152.

<sup>86</sup> Гатауллин М., Сержа, Москва, 1956, с. 11:

<sup>87</sup> Гир-Булатова Э. П., 624, աշխ., էջ 18:

<sup>88</sup> Հափանճիյան Ն. Հ., Սարգսյան Հ. Ս., 624, աշխ., էջ 262-264:

<sup>89</sup> Նույն տեղում, էջ 264:

գործը: Քանի որ բանակի ստեղծման համար անհրաժեշտ էին ֆինանսական հատկացումներ, ուստի պատգամավոր Յախթի Ալ-Բարտոյին առաջարկում էր քրտուցիչ դրամական արքյուրներ ստեղծելու համար օտարերկրյա ընկերությունների հարկերը, ինչպես նաև երկաթուղային և տրանսպորտային այլ միջոցների տոմսի գները ըստըսացնել 5 տոկոսով<sup>82</sup>:

Միրիական կառավարությունը գործնական բաշխրի դիմեց ազգային բանակ ստեղծելու ուղղությամբ: Այդ նպատակով մի խումբ երիտասարդներ ուղարկվեցին արաբական երկրներ ռազմական կրթություն ստանալու համար: Բանակի ստեղծման և ռազմական կազմերի պատրաստման հետ միասին քննարկվում էր նաև ռազմական հատուկ հարկ մտցնելու պայմանը: Միրիայի կառավարությունը որոշեց բյուջեում անհրաժեշտ ֆինանսական հատկացումներ կատարել նոր բանակ ստեղծելու համար: 1945 թ. մայիսի 19-ին Միրիան օրենք ընդունեց ազգային պաշտպանության մասին, որը կառավարությանն իրավունք էր տալիս զորահավաք կատարել, նախատեսում էր երկրի պաշտպանության միջոցների կազմակերպում և ազգային սպայական կազմի կազմավորում: Օրենքում հաստիկ նշված էր, որ սիրիական բանակի սպայական կազմում ոչ մի օտարերկրյա մասնագետ չպետք է լինի: Անհրաժեշտության դեպքում այդ մասնագետները կարող էին կրավիրվել արաբական մյուս երկրներից: Երկրի պաշտպանումակությունն անրապնդելու ուղղությամբ սիրիական կառավարությունը կամավորների ցուցակագրում թույլատրեց, ինչպես նաև անրապնդեց ուստիկանական ուժերը, որոնք տվյալ պահին երկրում միակ զինված ուժերն էին<sup>83</sup>:

Միրիայում ծայր առան ցույցեր, գործադուլներ, որոնք սկսվեցին մայիսի 19-ի Ղանասկուսում բազմամարդ ցույցից: Ֆրանսիական զորքերը կրակ բացեցին ցուցարարների վրա: Ղանասկուսյան իրադարձությունները և ֆրանսիացիների վայ-

<sup>82</sup> Եռյն տեղում, էջ 264-265:

<sup>83</sup> Եռյն տեղում, էջ 275-276:

րագությունները ցնցեցին ամբողջ Սիրիան<sup>84</sup>: Հաջորդ օրն ամբողջ երկրում ընդհանուր գործադուլ հայտարարվեց, աշյունալի ընդհարում տեղի ունեցավ Հալեպում: Հակաֆրանսիական ելույթը ճնշելու համար ֆրանսիական զինվորական իշխանությունները Հալեպ մտցրին գրահամեքենամեր, որոնք կրակելով փողոցները մաքրում էին ցուցարարներին<sup>85</sup>:

Տարբեր քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների, ինչպես նաև կրոնական համայնքների ներկայացուցիչները համատեղ ժողով գումարեցին և խեցեց ընդհանուր բողոքը հայտնեցին ընդդեմ կատարվող վայրագությունների:

Յույցերն ու հակաֆրանսիական ելույթները 'Դամասկոսից և Հալեպից տարածվեցին Սիրիայի մյուս քաղաքները՝ Հոմս, Համա, Գեյր Ազ-Ջոր և այլն: Մայիսի 27-ին ֆրանսիացիները սմրակոծեցին Համա: Ժամդարմերիան ամեն կերպ դիմադրություն էր ցույց տալիս ֆրանսիական կամոնալոր զորքերին: Հոմսում ևս մեծ ցույց էր սկսվել, որը շուտով վերածվեց ապստամբության, և զինված բնակչությունը հարձակվեց ֆրանսիական մի զուճախտակի վրա<sup>86</sup>:

1945 թ. մայիսի 28-ի երեկոյան՝ ժամը 10-ին, ֆրանսիական ռազմական ուժերը սկսեցին սմրակոծել 'Դամասկոսը: Ինքնաթիռները սմրակոծում էին քաղաքի տարբեր շրջանները: Ֆրանսիական զորքերը շարժվեցին դեպի Ազզային ժողովի շենքը, որտեղ մարտեր տնրի ունեցան սիլեիական ժամդարմերիայի հետ: Արդյունքում ֆրանսիացիները գրավեցին այն: 'Դամասկոսի բնակչությունն ու ժամդարմերիան չընկրվեց

<sup>84</sup> Казимр Мохамед Амин, *Сирья в борьбе за укрепление политической независимости и национальной государственности (1946-1967 гг.)*, Московский орден Ленина и орден Трудового Красного Знамени Педагогический Государственный Университет имени В. И. Ленина, Диссертация, Москва, 1991, с. 27.

<sup>85</sup> Гатулли М., *ibid.*, արձ. էջ 11:

<sup>86</sup> *قذافي زرزور، معركة الحرية في سورية، دمشق، 1992، صفحة 296.*

Ֆրանսիական այս հարձակման ստիճակը հարձակվում էին ֆրանսիական ուժերի վրա և ստիպում անձնատուր լինել<sup>87</sup>։

1945 թ. ֆրանսիական զաղութարարների դեմ պայքարում հատկանշական են Ջաբալ Դրուզում տեղի ունեցած ապստամբությունները, որտեղ Մուլթան Ալ-Աբրաշի<sup>88</sup> գլխավորությամբ բախումներ սկսվեցին ֆրանսիական զորքերի դեմ։ Ապստամբները գերի վերցրին Ջաբալ Դրուզում գտնվող ֆրանսիական բոլոր սպաներին։ Ֆրանսիական բանակում ծառայող մոտ երկու հազար դրուզ զինվորներ իրենց զենքերով, ռազմամթերքով և մի քանի զրահամեքենաներով, անցան ապստամբների կողմը<sup>89</sup>։

1945 թ. մայիսի 31-ին Անգլիայի ԱԳ նախարարը հայտարարեց, որ քրիտանական կառավարությունը որոշել է միջամտել ֆրանս-սիրիական ընդհարմանը։ Ուիմսթոն Չեռչիլն այդ կապակցությամբ մի հուշագիր հղեց Շարլ դը Գոլին, որտեղ ասվում էր, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունը հարկադրված է հրաման տալ Մերձավոր Արևելքում իր ռազմական ուժերին պատերազմական գործողություններին վերջ տալու համար։ Մերձավոր Արևելքում անգլիական ուժերը մի քանի անգամ զերազանցում էին ֆրանսիականը։ Դը Գոլի հրամանով Դամասկոսում դադարեցվեց կրակը<sup>90</sup>։

Սիրիայի և Լիբանանի ԱԳ նախարարների միջև կայացած հանդիպման ժամանակ որոշվեց դիմել ԱՊԼ-ին՝ խորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու պահանջով։ Նրանք ակնկալում էին, որ անկախության համար մղված այդ պայ-

<sup>87</sup> . 125-126 . صفحة 1956، بيروت، الجلاء، مير تقي الدين

<sup>88</sup> Մուլթան Ալ-Աբրաշը ծնվել է 1888 թ. Ջաբալ Դրուզի հայտնի ցնտանիքներից մեկում։ 53/3 . صفحة دمشق، حياك وعصره، دمشق، محمد رضوان الأتاسي، هاشم الأتاسي، حياته وعصره، دمشق، 1954

. 109

<sup>89</sup> . 125 . صفحة المصدر المذكور، بيروت

<sup>90</sup> Հովհաննիսյան Ն. Հ., Մարզպան Հ. Ա., ճշվ. աշխ., էջ 283-284:

քարը կնպաստի նաև արարական երկրների համերաշխության ամրապնդմանը<sup>91</sup>։

1945 թ. հունիսի 4-ին Կահիրեում բացվեց Լիզայի խորհրդի հիմնադիր մատաչբանը, որտեղ անդամ պետությունների մեծ մասի պատվիրակությունները գլխավորում էին վարչապետները։ Հունիսի 7-ին տեղի ունեցած 4-րդ նիստից հետո հրապարակվեց Միդիայի կողմից մերկայացված խնդրի կապակցությամբ որոշումը, որի առաջին կետում Ֆրանսիայի գործողությունները որակվում էին որպես ագրեսիվ և նշվում էր, որ վերջինս պատասխանատվություն է կրում մարդկային կորուստների և հասցված նյութական վնասի համար։ Երկրորդ կետում ստվում էր, որ ֆրանսիական զորքերի մերկայությունը Միդիայում խախտում է այդ երկրի ինքնիշխանությունն ու անկախությունը և միաժամանակ սրաշտպանում ֆրանսիական զորքերի անհասպող հեռացման վերաբերյալ Միդիայի պահանջը։ Բացի այդ՝ նշվում էր, որ Խորհուրդը վճռականորեն մերժում է Միդիայի տարածքում օտարերկրյա ուժերի մնալու պայմանների անորոշության մասին պնդումը, և որ քրիստանական պաշտոնական անձինք հավատախաղթել են, որ նրանք մտադիր են ետ քաշել իրենց գործարարներն այդ տարածքից։ Որոշման երրորդ կետը վերաբերում էր «Հատուկ զորամասերին», որոնց սպառազինությունը, զորանոցներն ու ռազմամբերքը պետք է վերադարձվեին Միդիային և Լիբանանին ու ենթարկվեին նրա հրամանատարությանը ավստրալ կառավարության տրամադրության տակ դրվելու համար։ Վերջին՝ չորրորդ կետում Լիզայի խորհուրդն իր պատրաստակամությունն էր հայտնում՝ ամեն ինչ անել Միդիայի կողմից առաջադրված խնդրին լուծում տալու համար<sup>92</sup>։

Այնուհետև ԱՊԼ-ի խորհուրդը ևս երկու նիստ գումարեց և հունիսի 11-ի վերջին նիստից հետո հրապարակված հայտարարությունում նշվում էր, որ քննարկվել են այն միջոցա-

<sup>91</sup> Կարամանուկյան Ե. Լ., Արարական Պետությունների Լիզայի դերը արարական երկրների հակահնդիպաշատական պայքարում, Երևան, 1988, էջ 52։

<sup>92</sup> Լույսն տեղում, էջ 52-53։

ուճաները, որոնք ձեռնարկվելու էին ֆրանսիական ազդեխան խափանելու և Միդիայի անկախությունն ու ինքնիշխանությունը պաշտպանելու համար: Կահիրեում ենթադրություններ կային, որ խոսքն այն միջոցների մասին էր, որոնք կկատարվելու էին, եթե Ֆրանսիան հրաժարվեր Միդիայից դուրս քերել իր զորքերը:

Այսպիսով, ԱՊՄ-ն խնդրին ցուցաբերում էր համապարփակ մոտեցում, արժարժում ոչ միայն տվյալ պահին սրբության ստացած ֆրանսիական զորամիավորումների դուրս քերման հարցը, այլ նաև՝ հերքում ուսգմական պարագաների բերումով դեռևս 1941 թ. Լեանտում զտնվող անգլիական զորամիավորումների տեղում հիմնավորվելու վերաբերյալ պնդումները: Լիզան բոլորովին էլ չարդարագրեց կամ լոռքյան շնատնեց անգլիական և ֆրանսիական զորքերի դուրս քերման հարցը, այլ բավականին աներկբայորեն արտահայտվեց դրանց հետոցման օգտին՝ շեշտելով, որ այդ կապակցությամբ համապատասխան հռվաատիացումներ են ստացվել անգլիական պաշտոնական շյգանակներից<sup>93</sup>:

Միդիայի ազգային ուժերի, ինչպես նաև համաշխարհային հանրության ճնշման ներքո Ֆրանսիան 1945 թ. հուլիսի 8-ին պաշտոնապես հայտնեց, որ համաձայն է 45 օրվա ընթացքում Միդիային ու Լիբանանին հանձնել «Հատուկ զորամասերը»: Այդ նպատակով ստեղծվեց տեխնիկական հանձնատեղով և հուլիսի 20-ին ավարտելով նախարկատրաստական բոլոր աշխատանքները՝ սկսվեց զորքերի փոխանցումը<sup>94</sup>: Այն ամբողջությամբ ավարտվեց 1945 թ. օգոստոսի 1-ին<sup>95</sup>: Այդ ժամանակվամից սկսած՝ օգոստոսի 1-ը Միդիայում նշվում է որպես Բանակի օր<sup>96</sup>:

<sup>93</sup> Նոյն տեղում, էջ 53-55:

<sup>94</sup> Հովհաննիսյան Ն. Հ., Մարզայան Հ. Մ., ճշվ. սշխ., էջ 287:

<sup>95</sup> مصطفى طلس، تاريخ الجيش العربي السوري، جلد الأول، ١٩٤٨-١٩٠١، مركز الدراسات العسكرية، صفة ١١٧.

<sup>96</sup> Zisser E., ճշվ. սշխ., էջ 3:

1945 թ. օգոստոսի 14-ին հրապարակվեց համար 190 օրենքը, որով նախատեսվում էր պաշտպանության նախարարության ստեղծումը<sup>97</sup>: Այնուհետև գինված ուժերն արդեն բաժանված էին աստիճանական և ժամդարձական ուժերի<sup>98</sup>: Քանակը հաշվվում էր ինճ հազար հոգի<sup>99</sup>, իսկ օստիճանությունը՝ 3500<sup>100</sup>: Սիրիայի բանակի կազմավորումը սիրիացիների հաղթանակն էր, որը պաշտպանում էր հարազատ հողն ու իր շահերը: Սիրիական բանակը մի «կարաս» էր, որտեղ ձուլվում էին հասարակության տարբեր շերտեր, այդ թվում էրնիկ և դավանական փոքրամասնությունների ներկայացուցիչներ:

1945 թ. դեկտեմբերի 13-ին Լոնդոնում կնքվեց Մերձավոր Արևելքի վերաբերյալ անգլո-ֆրանսիական համաձայնագիրը<sup>101</sup>: Այդ համաձայնագրում ստվում էր, որ Անգլիան ու Ֆրանսիան համաձայն են իրենց զորքերը դուրս բերել Սիրիայից ու Լիբանանից, սակայն տարիանումը այնպես պետք է լինի, որ այն Լևանտում ապահովի բավարար բանակությամբ զորքերի պահպանումը, մինչև Մշակութված ազգերի կազմակերպության որոշումը՝ այդ գոտում ընդհանուր անվտանգությունն ապահովելու վերաբերյալ: Փաստորեն, այս համաձայնագիրը ոչ թե զորքերի դուրս բերման էր վերաբերում, այլ այդ ուժերի վերախմբակործանը: Սա պայմանագիր էր Լևանտում տիրապետություն հաստատելու և Սիրիայի ազգային շահերի հաշվին անգլո-ֆրանսիական մերձեցման մասին, որը ժամանակավորապես վերականգնում էր եվրոպական երկու պետությունների միջև համագործակցությունը: Հաշվի առնելով արաբական երկրների ազգային-ազատագրական պայքարի վերելքը՝ Անգ-

<sup>97</sup> *Альон иль Исмаил Махлуф, Специальные войска Вооруженных Сил Сирийской Арабской Республики, Генеральный Штаб ВС САР, Диссертация, Дамаск, 1990, с. 20.*

<sup>98</sup> *Кутейш Ахмед Ункл, Средства массовой информации и их роль в обеспечении управления военной организацией Сирийской Арабской Республики, Диссертация, Военный Университет, Москва, 2001, с. 59.*

<sup>99</sup> *Мирский Г. Н., Третий мир: общество, власть, армия, М., 1976, с. 78.*

<sup>100</sup> *Be'eri E., 62d. azhu., էջ 355:*

<sup>101</sup> *مصان شدي، المصدر المذكور، صفحة ١٨٢.*

լիան ու Զրանսիան ցանկանում էին միավորել իրենց ուժերը և միասնական ճակատով հանդես գալ արաբ ժողովրդի դեմ<sup>102</sup>։ Միրիան, քնակամարար, շիամաձայնիվեց անգլո-ֆրանսիական զործարքի հետ, որովհետև այդ համաձայնագրում տեսնում էր Լևանտում բանակների դուրս բերման ամբողջ ժամանակով հետաձգելու փաստը։

1945 թ. դեկտեմբերի 31-ին սիրիական կառավարությունը պաշտոնապես բողոք ներկայացրեց անգլո-ֆրանսիական համաձայնագրի դեմ՝ այն գնահատելով որպես Միրիայի անկախության դեմ ուղղված մի քայլ։ Ազգային ժողովը որոշում ընդունեց ՄԱԿ-ին բողոք ներկայացնել անգլո-ֆրանսիական համաձայնագրի և Լևանտում օտար զորքեր տեղակայելու դեմ<sup>103</sup>։ 1946 թ. փետրվարին Միրիան բողոքի հուշագիր հղեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին՝ նշելով, որ Լևանտում անգլիական և ֆրանսիական զորքերի ներկայությունը սպառնում է երկրի խաղաղությանը և տարածաշրջանում անվտանգության պահպանմանը<sup>104</sup>։

Միրիայի և Լիբանանի կառավարությունները՝ համաձայն ՄԱԿ-ի կանոնադրությանը, օտար բանակների դուրս բերման հարցը դրեցին Անվտանգության խորհրդի քննարկմանը՝ պահանջելով այդ զորքերի տարհանումը Միրիայի տարածքից<sup>105</sup>։ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը սկսեց քննարկել Միրիայի կառավարության բողոքը, քանի որ Լևանտում ստեղծվել էր լարված վիճակ, որը սպառնում էր Մերձավոր Արևելքում խաղաղության պահպանմանը։ Խորհրդի միատուն մշվեց, որ Միրիան ինքնիշխան պետություն է և օտար զորքերի անկախությունն իր տարածքում հակասում է նրա ինքնիշխանությանը և ՄԱԿ-ի կանոնադրությանը։ Միրիայի ԱԳ նախարար Զարիս Ալ-Խուրին, ով դեկլարարում էր պատվիրակությունը, Անվտան-

<sup>102</sup> Հովհաննիսյան Ն. Հ., Սարգսյան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 293-294։

<sup>103</sup> علي رضا، قصة الكفاح الوطني في سورية، عسكرياً وسياسياً حتى توجاه، حلب، ١٩٧٩، صفحة ٤٩٩.

<sup>104</sup> نفس المصدر، صفحة ٤٩٩ - ٥٠٠.

<sup>105</sup> Гамбулатов М., նշվ. աշխ., էջ 12։



գության խորհրդի անդամներին հիշեցրեց, որ Անգլիայի և Ֆրանսիայի զորքերը Միդիա են մտել Վիշիի զորքերը դուրս մղելու, այլ ոչ թե նրանց փոխարինելու համար, քանի որ Անգլիան և Ֆրանսիան միշտ հայտարարել են, որ իրենց նպատակը այդ երկրներն ազատելն է<sup>106</sup>:

1946 թ. մարտի սկզբներին Փարիզում բանակցություններ սկսվեցին Անգլիայի և Ֆրանսիայի միջև: Այդ բանակցություններն ավարտվեցին մի համաձայնագրով, որը նախատեսում էր օտարերկրյա զորքերը Միդիայի տարածքից դուրս բերել 1946թ. ապրիլին: Տարիանումը կատարվելու էր առանց որևէ պայմանի, որի դիմաց չէր ենթադրվում քաղաքական, սազմական ու տնտեսական քնույթի որևէ փոխհատուցում: Դա շատ կարևոր հանգամանց էր Միդիայի համար, որովհետև Ֆրանսիան մանդատից հրաժարվելու և իր զորքերը դուրս բերելու համար ներկայացնում էր որոշ պայմաններ՝ կապված սազմական, քաղաքական և տնտեսական փոխհատուցման հետ:

Միդիայից Ֆրանսիական ու անգլիական զորքերի դուրս բերումը սկսվեց 1946 թ. ապրիլի 15-ի ստավոտյան ժամը 9-ին և վերջնականապես ավարտվեց ապրիլի 17-ին<sup>107</sup>: Այդ օրը Միդիայում համարվում է ազգային տոն<sup>108</sup>: 1946 թ. ապրիլի 17-ին տեղի ունեցավ սիրիական քանակի զորահանդես, որն ընդունեց Միդիայի նախագահ Շուքրի Ալ-Քուարիին: Իր ելույթում Շուքրի Ալ-Քուարիին ասաց, որ ավարտվել է ազգային հեղափոխությունը, և սկսվում է ստեղծագործման և կառուցման դարաշրջան<sup>109</sup>:

<sup>106</sup> طي رضا، المصدر المذكور، صفحة ٥٠٠-٥٠٣.

<sup>107</sup> لسان هادي، المصدر المذكور، صفحة ١٨٢.

<sup>108</sup> نجيب الأيماني، محاضرات عن سوريا من الإحتلال حتى الجلاء، القاهرة، ١٩٥٣، صفحة ١٨٦.

<sup>109</sup> Луконин Ю. В., Коммунисты Сирии и Ливана в борьбе за укрепление национальной независимости (1945-1947 гг.), Московский ордена Ливана и ордена Трудового Красного Знамени Государственный Университет имени М. В. Ломоносова, Диссертация, Москва, 1956, с. 336.

Միրիացիների շուրջ քառորդ դար առաջ պայքարը ֆրանսիական մանդատի վերացման և քաղաքական ինքնուրույն ու անկախ պետություն ստեղծելու համար հաջողությամբ պատվեց:

Ինչպես արաբական մյուս երկրներում, այնպես էլ Միրիայում, բանակը ոչ միայն պետական, այլ նաև քաղաքական ինստիտուտի դեր ունեցավ<sup>110</sup>:

Անկախության հռչակումից հետո Միրիայի բանակի քարձրագույն խաֆն իր մեջ ներառում էր յոթ պաշտոններ՝ շտաբի պետ (رئيس الأركان), շտաբի պետի առաջին օգնական (مساعد رئيس الأركان), շտաբի պետի երկրորդ օգնական (مساعد رئيس الأركان), Ջ-1 (անձնակազմ, սպաներ և զորքեր) (شؤون الجيش، ضباط وجنود), Ջ-2 (անվտանգություն) (مخابرات), Ջ-3 (զործողություններ և ուսուցում) (عمليات وتدريب), Ջ-4 (վարչություն) (شؤون الإدارة): Միրիայի բանակի սպայական կազմը Մայրլ Վան Դուզենը բաժանում է 4 դասի: Այն սպաները, ովքեր ծառայության են մտել մինչև 1926 թ., պատկանում են առաջին դասին, 1926-1935 թթ. ներկայացնում են երկրորդ դասը, 1935-1946 թթ. երրորդ և չորրորդ սերունդը՝ 1946 թ.-ից հետո<sup>111</sup>:

Անկախության ձեռքբերումից հետո սիրիական բանակի սպայական վերնախավը հավաքագրված էր քաղաքային բուրժուազիայի ապահովված ընտանիքներից: Առաջին հերթին դա վերաբերում էր քարձրագույն սպայական կազմին, որը ներկայացված էր «հիսուն ընտանիքներով»<sup>112</sup>:

Միրիայի բանակի սպայական կազմի ակնհայտ ընտանիքներից էր Դամասկոսի Մարդամ ընտանիքը, որը երկրին տվել է վարչապետ, ինչպես նաև մի քանի քարձրաստիճան

<sup>110</sup> Кантар Мухаммед Кассим, Совершенствование подготовки курсантов вузов к воспитательной деятельности в частях Вооруженных Сил Сирийской Арабской Республики, Диссертация, Военный Университет, Москва, 1997, с. 12.

<sup>111</sup> Sun Van Dusen M., նշվ. աշխ., էջ 43-50, 114, 375-414:

<sup>112</sup> Кушин В. Д., Сирийская Арабская Республика в ее Вооруженные Силы, Военное Издательство Министерства Озороны СССР, М., 1976, с. 81.



տեղակայւմ Ամին Նափուրին էր, իսկ հետախուզության ղեկավարը՝ Արդ Ալ-Համիդ Աս-Սամաջը:

Աֆիֆ Ալ-Քիզրին ծնվել է Դամասկոսում<sup>119</sup> և մասնակցել 1941 թ. Իրաքում Ռաշիդ Ալի Ալ-Նալլանիի ասպետանքությանը: 1950-1953 թթ. սովորել է Ֆրանսիայի ռազմական ակադեմիայում: Ֆրանսիայից վերադառնալուց հետո նա կապեր հաստատեց Միդիայի կոմունիստների հետ: 1957 թ. սկզբներին նա դարձավ քամակի կադրային կառավարման ղեկավար, այնուհետև օգոստոսին նրան շնորհվեց գեներալ-մայորի աստիճան և նշանակվեց քամակի շտաբի պետ<sup>120</sup>: Աֆիֆ Ալ-Քիզրիի ավագ եղբայրը՝ գեներալ Սալահ Ադ-Դին Ալ-Քիզրին, «Ժողովրդական դիմադրության գործերի» (قوات المقاومة الشعبية) իրամասնատարն էր, ուր ստեղծվել էր 1957 թ.-ին<sup>121</sup>: 1963 թ., երբ կազմավորվեց «Ազգային գվարդիան» (حرس القومي), «Ժողովրդական դիմադրության գործերը» և «Ազգային գվարդիան» միավորվեցին «Ժողովրդական քամակին» (جيش الشعب)<sup>122</sup>: Աֆիֆ Ալ-Քիզրիի տեղակալ Ամին Նափուրին քրիստոնյա էր, ով հասարակ զինվորից դարձել էր սպա, այնուհետև քաղաքական գործիչ: Աչքի ընկնելով զինվորական ծառայության ժամանակ՝ նրան ուղարկեցին ռազմական ակադեմիա և այն ավարտելուց հետո նա արդեն զամարտակ էր ղեկավարում<sup>123</sup>:

Հետախուզության ղեկավար գնդապետ Արդ Ալ-Համիդ Աս-Սամաջը ծնվել է 1925 թ. Համայում<sup>124</sup>, իսկ 1945 թ. ավար-

<sup>119</sup> Յեն Գ. Միրսկին հայտնում է, որ Աֆիֆ Ալ-Քիզրին ծնվել է Լիբանանում, սակայն այլ տեղեկությունների համաձայն՝ նա ծնվել է Դամասկոսում: Հնարավոր է, որ Միրսկին նկատի ունի Ալ-Քիզրիի լիբանանյան ծագում ունենալը, որովհետև նրա դստանիջը ծագումով Լիբանանի Սադրա քաղաքից է, որը գտնվում է Բեյրութից մոտ 40 կմ հեռավորության վրա՝ Միջերկրական ծովի ափին:

<sup>120</sup> . ١٩٨٩ أيار، بيروت، ص ١٠٤

<sup>121</sup> Seale P., նշվ. աշխ., էջ 316:

<sup>122</sup> Van Dusen M., նշվ. աշխ., էջ 161-162:

<sup>123</sup> Мисрская Г. Н., նշվ. աշխ., էջ 101:

<sup>124</sup> Seale P., նշվ. աշխ., էջ 245-246:

տել է Հոսնի Ռազմավան ակադեմիոսն<sup>125</sup>: 1956 թ. գնդապետ Արդ Ալ-Համիդ Աս-Մաաջի ձեռքում էր գտնվում ոչ միայն ռազմական հետախուզությունը, այլ նաև հակահետախուզությունը և ազգային անվտանգությունը, որը թույլ տվեց նրան դառնալ Սիրիայի այդ ժամանակվա ամենասպառնցիկ մարդկանցից մեկը<sup>126</sup>:

Համայից է նաև քաղաքական գործիչ Ակրամ Ալ-Հաուրանին: Նա ծնվել է 1912 թ.: Ինչպես Աֆիֆ Ալ-Բիզրին, նա նույնպես մասնակցել է 1941 թ. Իրաքում Ռաշիդ Ալի Ալ-Ղալանիի ապստամբությանը: 1949 թ. Ակրամ Ալ-Հաուրանին պաշտպանեց Հուսնի Ազ-Չաիմի փառչակարգը: Այնուհետև մեկ տարի անց՝ Ալ-Շիշակլիի ժամանակ, նա արդեն պաշտպանության մոխարարն էր: Քանի որ Ալ-Շիշակլին միայն սեփական կուսակցության գործողություններն էր թույլատրում, Ալ-Հաուրանին խզեց նրա հետ կապերը և 1952 թ. փախավ Լիբանան, իսկ հետո միացրեց իր ուժերը՝ պատրաստվելով տապալել ղեկավարին: 1954 թ., վերադառնալով Սիրիա, նա միացրեց իր կուսակցությունը «Բաասին»<sup>127</sup>: Նրա կապերն ու քաղաքակա-

<sup>125</sup> حسان زكريا، السلطان الأحمر، الطبعة الأولى لندن، ١٩٩١، صفحة ٣٠.

<sup>126</sup> فوزي شعيب، شاهد من المعارك السورية ١٩٥٥-١٩٦٧، بيروت، ٢٠٠٨، صفحة ٢٢ - ٢٩.

<sup>127</sup> Արաբական վերածննդի սոցիալիստական կուսակցությունը հիմնվել է (حزب البعث العربي الاشتراكي) Արաբական վերածննդի կուսակցության և Արաբական սոցիալիստական կուսակցության միավորման արդյունքում: Արաբական սոցիալիստական կուսակցությունը հիմնվել է 1950 թ.-ին՝ Ակրամ Ալ-Հաուրանիի կողմից, որը հակահամակրիստական և դեմոկրատական ուղղվածություն ուներ, իսկ Արաբական վերածննդի կուսակցությունը ստեղծվել է 1941 թ.-ին՝ Միշել Ալլաևի և Սաբահ Ադ-Ղիթի Ալ-Բիսարի կողմից: Սկզբում կուսակցությունը փոքրաթիվ էր: 1946 թ. հուլիսի 3-ից կուսակցությունը նրառարակում է «Ալ-Ջրիդա ալ-Բիթ», الثوری السانسة والثلاثون لتصور العدد الأول ٣ تموز ١٩٤٦، صفحة ٣.

1947 թ. սուրիյին Դամասկոսում կայացավ «Բաասին» 1-ին ազգային համագումարը, որի ժամանակ ընդունվեց կուսակցության Սահմանադրությունը և ներքին կանոնադրությունը: Այդ ժամանակ կուսակցությունը

նության մեջ ունեցած մեծ փորձը, ապայական երջող սերնդի վրա խիստ տախաճորություն գործելը Ալ-Հատրանիին ապահովում էին այսպիսի քաղաքական հաջողություն և նպաստում «Քաաախ» ազդեցության աճին: 1957 թ. Ալրամ Ալ-Հատրանին դարձավ Ազգային ժողովի մախագահ՝ քաղաքական դաշինք կնքելով Աբդ Ալ-Համիդ Աս-Սաաաջի և Ամին Նախորիի հետ<sup>128</sup>:

Գնդապետ Ալման Ալ-Մալիքիին ծնվել էր 1919 թ. և 1955 թ. Միրիայի բանակի գլխավոր շտաբի պետի օգնականն էր<sup>129</sup>: 1955 թ. ապրիլի 22-ին Միրիական Ազգային սոցիալական կուսակցության<sup>130</sup> անդամները մեղադրվեցին Ալման Ալ-Մալիքիի սպանության մեջ, ով քաասականների առաջնորդն էր սիրիա-

---

մասնաճյուղեր յոսեր արտերկրում, բացի Քեյրոսի Ամեյիկյան աս-մադաթանում գտնվող ոչ մեծ կազմակերպությունից, սակայն նրա անդամների կազմում կային հորդանանցի, լիբանանցի և իրաքցի ռասնողներ, ովքեր ավելի ուշ կազմեցին քաասականների կողմից այդ կրկնվելու: «Քաաախ» կուսակցության մասին մանրամասն տե՛ս *Այդ Առաջ Ըլաեաա, Place et omes opramamom baamamemoro nroamama Եթր* (1963-1999 ր. ), PAK HB, Движения, Москва, 1995, с. 38-68. Կուսակցության անդամներից Սաան Ալ-Տաուդին էր «Քաաախ» աշխատությունում զբաղ էր, որ Գամաակուսում կուսակցության բոլոր անդամներն ռասնողներ էին, ովքեր ձեռք էին գյողերից: Տե՛ս «سماة، ١٩٩٩، بيروت».

38

<sup>128</sup> *Մարքան Դ. Կ.*, նշվ. աշխ., էջ 105:

<sup>129</sup> *محمد رضوان الآسي، المصدر المفقود، سماة - ١٩٠٠.*

<sup>130</sup> Միրիական Ազգային սոցիալական կուսակցությունը հիմնվել է (*التحزب السوري القومي الاجتماعي*) 1932 թ. Շոյեմբերի 16-ին Լիբանանում: Կուսակցության հիմնական ծրագրային պահանջը «Մեծ Միջին» մախագծի իրականացումն էր: Կուսակցության սկզբունքներից էր՝ Միրիան սիբիայիների համար է. սիբիայիներն առանձնաաաաուկ ազգ են, ստեղծել ունիլ բանակ և այլն, տե՛ս «أبام عشقها ١٩٩٩-١٩٩٩، الاتكليات العسكرية وأسرها في أيال، سوريا، بيروت، ٢٠٠٣، سماة ٩١-٩٢.

Սկզբում այս կուսակցությունը կոչվում էր Միրիական Ազգային կուսակցություն: Անտան Սաաաջի և իր կուսակցության մասին մանրամասն տե՛ս *Յակ Antoun Sa'adeh, Leadership and Testimony, Syrian Social Nationalist Party Information Bureau, p. 7-124, Petran T., The Struggle over Lebanon, New York, 1987, p. 41-45:*

կան քանակում<sup>131</sup>: 1955 թ. մայիսի 4-ին կառավարությունը պաշտոնապես արգելեց կուսակցության գործունեությունը Սիրիայում և կուսակցության անդամներից ութը մահապատժի ենթարկվեցին, իսկ կուսակցության այն անդամները, ովքեր զինվորականներ էին, աստիճանագրվեցին և հեռացվեցին քանակից<sup>132</sup>:

Բազմաթիվ սպաներ, այդ թվում նաև ալավի, ովքեր հետագայում ազդեցիկ պաշտոններ են զբաղեցրել, արքատ ընտանիքներից էին, օրինակ՝ զենքալ-լեյտենանտ Մուհամմադ Ումրամը, Մալահ Տադիդը և այլք: Մուհամմադ Ումրամը Հադիսադին ցեղից էր, իսկ Մալահ Տադիդը՝ Լաքաթիայի Խալսիմ ցեղից: Արքատ ընտանիքից էր նաև Հալեպից Ամին Հաֆիզը: Իսկ ահա Գեյր Ազ-Ջորից Ջասիմ Ալվամը դեռ մասնակ հասակից ինքն էր իր մասին հոգ տանում: Ռազմաօդային ուժերի հրամանատար Մուհամմադ Հառան Նասիրը նույնպես ալավի էր, ով ապանվել էր 1950 թ.-ին<sup>133</sup>:

Սիրիայի ներքաղաքական գործընթացներում ալավիների ակտիվ դերակատարությունը հնարավոր դարձավ հատկապես ռազմական քննազավառում վերջիններիս լայն ներգրավվածության շնորհիվ: Անկախության ձեռքբերումից հետո ազգային քանակի ձևավորման գործընթացում աստիճանաբար ավելանում էր Սիրիայի զինված ուժերում ազգային, կրոնական փոքրամասնությունների ներգրավման ցուցանիշը: Ալավիների, ինչպես նաև այլ փոքրամասնությունների համար ռազմական ոլորտն առաջընթացի, սոցիալական վիճակի բարելավման քաջատիկ հնարավորություն էր: Անկախության հռչակումից հետո

<sup>131</sup> فوزي شعيب، المصدر المذكور، صفحة ٢٧-٢٨.

<sup>132</sup> Рудковская О. М., Формирование национальной интеллигенции Сирии во второй половине 20 века, Диссертация, МГУ им. М. В. Ломоносова, ИСАА, Москва, 2005, с. 142. Գերապետ Աջնան Ալ-Մալիքիի ազգայնության մասին մանրամասն տե՛ս: محمد معروف، المصدر المذكور، صفحة ٢١٩-٢٢٢.

<sup>133</sup> Be'eri B., նշվ. աշխ., էջ 339:

քազմաքիվ ալավի զինվորականներ մտան «Քառաս» կուսակցության մեջ<sup>124</sup>:

Անկախության ձեռքբերումից հետո սկսվեց երկրի զարգացման քավականին քարդ ու դժվար մի շրջան: Զարգացման դրական միտումների հետ միասին սրվում էր ներքաղաքական պայքարը, չէր նվազում օտարերկրյա ուժերի ազդեցությունը Միրիայի ներքին քաղաքականության վրա, ինչը համզեցնում էր ներքաղաքական անկայունության:

1948 թ. ապրիլին Միրիայում անցկացվեցին խորհրդարանական ընտրություններ, որի ժամանակ հաղթեցին Միրիայի «Ազգային» և «Ժողովրդական» կուսակցությունները: Նրանց ներկայացուցիչներից կազմվեց սիբիական կառավարությունը: Այդ ժամանակ տեղի ունեցան մաև մախազահական ընտրություններ, որոնց արդյունքում Միրիայի մախազահ կուկին ընտրվեց Շաքրի Ալ-Քուարթին<sup>125</sup>:

1948 թ. սկզբին Անգլիան նորից առաջին պլան մղեց «Համատեղ պաշտպանության» պայմանագրի զարափարը: Ի տարբերություն 1946 թ., երբ փորձ արվեց աղապիսի պայմանագիր կնքել միայն Եգիպտոսի հետ, այս անգամ խնդիր էր դրվում մտան պայմանագրեր ունենալ Արաքսական Արևելքի բոլոր երկրների հետ: Ըստ այդ պայմանագրի՝ մախատեալում էր ստեղծել համատեղ պաշտպանության խորհուրդներ, որոնցում ներկայացված էին լիներու անգլիական և տեղական սպաներ: Պայմանագիր կնքած յուրաքանչյուր արաքական երկրի քանակը, ռազմածովային ու ռազմաօդային խաբիսխները, հաղորդակցությունների համալիրները և արդյունաբերական կարևոր հիմնարկները համատեղ պաշտպանության խորհրդի վերահսկողությանն էին ենթարկվելու: Պատերազմական կամ պատերազմի վտանգի պայմաններում խորհուրդներն իրավունք էին ունենալու անգլիական զորքեր իրավիրել: Պատերազմի պայմաններում ռազմական բոլոր խաբիսխներն անգ-

<sup>124</sup> Ахмедов В. М., Сербия на рубеже столетий, власть и политика, Москва, 2003, с. 45-47.

<sup>125</sup> Հոփաննիսյան Ն., Արաքսական երկրների պատմություն, հատոր 4, Երևան, 2007, էջ 479:



իմական ռազմական հրամանատարությանն էին ենթարկվելու<sup>136</sup>։

Անգլիական զործիյների կարծում էին, որ այս անգամ զործի հաջողությանը կհնչատի մահ այն բայել վիճակը, որ տեղծվել էր Արարական Արևելքում, Պաղեստինի հարցի ծայրահեղ սրման կապակցությամբ, և արարական երկրները, գիտակցելով իրենց վատ զինված լինելը, ուղղակի առիարված կլինեին մման պայմանագիր ստորագրել։ Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ հենց 1948 թ. ապրիլին, արար-խորայելական պատերազմի մախորյակին, Լիբանանի վարչապետ Ռիպո Մոլիը Արարական լիզայի քաղաքական կոմիտեում բարձրացրեց Արարական լիզայի անդամ երկրների և Անգլիայի միջև ռազմական պայմանագրեր կնքելու հարցը։ Մակայն Արարական լիզայի քաղաքական կոմիտեն ընդատագ չգնաց անգլիական առաջարկյն և վերջինյա քաղաքականությունն այս անգամ ևս անհաջողություն կրեց<sup>137</sup>։

1948 թ. մայիսի 15-ին՝ Իսրայել պետության հռչակման հաջորդ օրը, արար-խորայելական պատերազմին Եգիպտոսի, Լիբանանի, Իրաքի և Հորդանանի հետ միասին մասնակցեց մահ Սիրիան։ Սիրիան Պաղեստին ուղարկեց 1900 հոգանոց մի բանի զնդեթից քաղկացած զորամիավորում Արդ Ալ-Վանաք Ալ-Հարիմի<sup>138</sup> հրամանատարությամբ, որը կազմված էր մախլին տեղական ուժերից և դեռևս չէր հասցրել դատմալ կանոնափոր բանակային զորամիավորում։ Պատերազմին մասնակցող սիրիական զորքը չուներ մարտական զործողությունների անհրաժեշտ փորձ ու կարողություններ։ Այդ պատերազմում Սիրիան, ինչպես մահ մասնակից արարական մյուս պետություններից պարտություն կրեցին<sup>139</sup>։ Այդ ժամանակ սիրիական բա-

<sup>136</sup> Կարամանուկյան Շ. Լ., նշվ. աշխ., էջ 79։

<sup>137</sup> Նույն տեղում, էջ 80։

<sup>138</sup> Արդ Ալ-Վանաք Ալ-Հարիմը ծնվել է Դամասկոսում։ Նա պատկանում է սիրիական սարայական կազմի առաջին դասին։ Տե՛ս Van Dusen M., նշվ. աշխ., էջ 375։

<sup>139</sup> Kyriakos A. B., *Կորուստ և Շքոտ, Կապուտ*, 1993, շ. 127. Արար-խորայելական առաջին պատերազմում արարական կազմից զոհվեցին

նակի թիվը մոտ 8500 էր, տակայն մարտական պատրաստակամությամբ միայն 5500-ն ումեր, իսկ մնացած 1070-ը հատուկ պաշտոնների էին, 1500-ը սահմաններից և 395-ը Հոսնի Ռազմական ակադեմիայում: Երկեր քրիզադեղից մեկը տեղակայված էր Հալեպում Ջաֆր Ալ-Քուրխանի հրամանատարությամբ, մյուսը Դեյր Ազ-Չորում Հոսնի Ազ-Ջաֆրի և երրորդը պաղեստինյան ռազմաճակատում՝ Արդ Ալ-Վահաբ Ալ-Հաքիմի հրամանատարությամբ<sup>140</sup>: Մինչ այդ ստեղծվել էր նաև «Փրկության բանակ» (جيش الإنقاذ), որը հայտնի է նաև որպես «Ալաբական Ազատագրության Բանակ»՝ Տախա Ալ-Հաշիմի<sup>141</sup>, Իսմայիլ Մաֆվաթի և Ֆալգի Ալ-Ջաուդիի<sup>142</sup> հրամանատարությամբ, ում տեղակալը Համդի Աբազան էր: Այդ բանակն Ալաբական երկրների լիգայի ռազմական թևն էր: 46 սպաներ և 400 զինվորներ միացան այդ բանակին<sup>143</sup>, որոնցից շատերը Ֆար-

Վառաչապոտի Սալաթյանը, Ջավադ Անզորը, Մամուն Ալ-Ռիսաբը, Բուլխան Ալ-Սիր Հառանը, Իհսան Ջում Ալ-Մազը, Արի Ան-Նազըրաբանդին, Մուհամմադ Բաբր Անին, Միրզա Ութմանը, Մոդիբան Նալաֆի Հադաբը, Հաֆիկ Ութայսին, Մուխյան Ֆուրադին, Ֆաիզ Հադիթին, Մուհամմադ Ֆաթի Ալ-Աբաֆին, Նասրալլահ Ռաիսաբ Ան-Նազդերին, Արի Ալ-Ջազաիթին, Ջամիլ Քալիբաթին, Արդ Ալ-Կադիր Հազ Յակուբը, Ֆեյսալ Նասիֆը, Մաքլիլ Ջառաֆին, Մուհամմադ Նադիր Ան-Մամմանը, Մուհամմադ Ջադիդը, Մալիկ Ալ-Ջանալաթին և այլք: Տե՛ս Van Dusen M., նշվ. աշխ., էջ 139:

<sup>140</sup> Van Dusen M., նշվ. աշխ., էջ 137-138:

<sup>141</sup> Տախա Ալ-Հաշիմին սովորել է Բաղդադի ռազմական դպրոցում, այնուհետև մտել «Ալ-Անջ» գաղտնի զինվորական կազմակերպության մեջ: Տե՛ս Sakai Keiko, Political parties and social networks in Iraq 1908-1920, Centre for Middle Eastern and Islamic Studies, University of Durham, 1994, p. 66.

<sup>142</sup> Ֆալգի Ալ-Ջաուդիին ծնվել է 1887 թ. Լիբանանի Տրիպոլի քաղաքում: Նա մասնակցել է Սիրիայի ազգային-ազատագրական շարժումներին, ինչպես նաև 1941 թ. Իրաքում Ռաշիդ Ալի Ալ-Ղալլանիի ապստամբությանը:

لحم الجندى، تاريخ الثورات السورية في عهد الانتداب الفرنسي، مطبعة الاتحاد، ١٩٦٠، ص ٤٤٣.

...٣

<sup>143</sup> Ալաբական երկրների լիգայի Ռազմական կոմիտեի սիրիական սպաներն էին Աֆիֆ Ալ-Ռիզին, Մալահ Ազ-Դին Ալ-Քիզին, Ալլամ Ազ-Դեյրին, Մուհամմադ Դիյաբը, Ֆուադ Ջադիդը, Դասամ Ջադիդը, Ադան Ալ-Մալիթին, Իադի Ալ-Մաբարաթին, Մոդիբան Նաբը, Արդ Ալ-Ղանի Խամարը, Մուհամմադ Մաֆան, Արդ Ալ-Համիդ Ան-Մաբաբը, Իհսան Հաբրանը, Ադիբ Ալ-Շիշալիկին, Մալահ Ազ-Դին Ալ-Շիշալիկին, Ջաուդաբ Ալ-

մուկի առաջին և երկրորդ գումարտակներից էին: «Արարական Ազատագրության Քամակի» երկրորդ Յարմուկ գումարտակի հրամանատարն Աղիբ Ալ-Շիշակլին էր<sup>144</sup>, իսկ Առաջին Յարմուկ գումարտակինը Մուհամմադ Մաֆան<sup>145</sup>: Հարթին գումարտակի հրամանատարը կապիտան Մադդու Աբրասն էր<sup>146</sup>: Երրորդ Յարմուկ գումարտակի հրամանատարն Արդ Ալ-Համիլ Առ-Ռալլին էր<sup>147</sup>, իսկ արավիական գումարտակի հրամանատարը՝ Լասան Ջադիդն էր<sup>148</sup>: Մյուս 85 հոգանոց խումբը Համայից «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության անդամներն էին, որոնց ղեկավարում էին Մուստաֆա Աս-Սիբաին<sup>149</sup>:

Աբասին, Հիլամ Ալ-Ազն, Մուստաֆա Ալ-Դավադիին, Իզ Ալ-Դին Հա-  
Ջարը, Հասնյն Ալ-Հարիմը, Մուստաֆա Ռամ Համրանին, Ֆարհան Ալ-Ջա-  
բաբալին, Մուհամմադ Լասիթը, Իսամ Խամրոք, Մահմուդ Առ-Ռիֆային,  
Արդ Ալ-Հար Ալ-Հախարյան, Մահմուդ Հաուրաթը, Հաուրաթ Հուրաթը,  
Ջամալ Աս-Մուլլին և այլք: Տե՛ս Van Dusen M., նշվ. աշխ., էջ 262:

<sup>144</sup> هاني الثوري، أئيب التيشكي، صاحب القلوب المثلث في سوريا، البداية والنهاية، دمشق، ١٩٩٤، ص ٢٦.

<sup>145</sup> Մուհամմադ Մաֆան ինչ էլ ազմական կերպ Ֆրանսիայում և ԱՄՆ-ում: Նա Սիբիական Ազգային սեյթաբական կուսակցության համախմբներից էր և Աղիբ Ալ-Շիշակլիի կողմից հետագից լրանակից 1952 թ. դեկտեմբերին: Նա մեկնեց Իրաք, որտեղից ղեկավարեց «Ազատ սիբիական տնօրեն»։ 1954 թ. վերադառնալով Սիբիա՝ ազգական հեղաշրջման փորձ շարժումը: 1954 թ. վերադառնալով Սիբիա՝ ազգական հեղաշրջման փորձ կատարեց, որի համար բանտարկվեց: 1955 թ. Մուհամմադ Մաֆան Իրաքի բանակի գլխավոր շտաբի պետի հետ միասին սլանավորեցին տնօրեն «Ազատ սիբիական բանակ» Սիբիայում կրկին ազգական հեղաշրջում կատարելու համար: Տե՛ս Be'eri E., նշվ. աշխ., էջ 131:

<sup>146</sup> Al-Qawuqji Fauzi, Memoirs, 1948, Part I, Journal of Palestine Studies, Vol. 1, No. 4, Summer, 1972, p. 33.

<sup>147</sup> Al-Qawuqji Fauzi, Memoirs, 1948, Part II, Journal of Palestine Studies, Vol. 2, No. 1, Autumn, 1972, p. 10.

<sup>148</sup> Parsons L., Soldiering for Arab Nationalism: Fawzi Al-Qawuqji in Palestine, Journal of Palestine Studies, Vol. XXXVI, No. 4, Summer, 2007, p. 41. Դասան Ջադիդը ծնվել է 1920 թ.: Նա սովորել է Հանսի մազմական 41. Դասան Ջադիդի խումբում: Դասան Ջադիդն արդեն 18 տարեկանում Սիբիական Ազակադիմիայում: Դասան Ջադիդն արդեն 18 տարեկանում Սիբիական Ազակադիմիայում: Դասան Ջադիդն արդեն 18 տարեկանում Սիբիական Ազակադիմիայում:

<sup>149</sup> Մուստաֆա Աս-Սիբաին ծնվել է 1915 թ. Հոնամ: 1933 թ. նա մեկնեց Եգիպտոս, սովորեց Ալ-Ալիսթում և դարձավ «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության անդամ: Տե՛ս محمد رضوان الآتاسي، المصدر المذكور، ص ٢٦١. Տե՛ս محمد رضوان الآتاسي، المصدر المذكور، ص ٢٦١.

Ջամադ Աս-Սուֆին և Արդ Առ-Ռահման Մալուխին: Այդ բանակին միացան նաև կամավորական երեք վաշտեր Իհսան Շորդոնի, Աբու Բաքար Շիշանի, ավագ լեյտենանտ Իսմայիլ Աֆանզուտի և փոխգնդապետ Ջավադ Անզորի հրամանատարությամբ, ում տեղակալը Առվադ Բազմ էր<sup>150</sup>: Ըստ Սամի Ալ-Ջունդիի՝ այդ ռազմական կոմիտեմ ուներ ընդամենը 1600 հրացան<sup>151</sup>:

Միրիական բանակում այդ ժամանակ զենքի հնացած տեսակներ էին, որոնց մնացել էին դեռևս ֆրանսիացիներից ու անգլիացիներից: Պատերազմի շեմին, եթե այլ երկրներ ունեին տանկային կորպուսներ, ապա սիրիական բանակն ուներ ընդամենը 11 բեթև տանկ և 32 գրանամեքենա<sup>152</sup>:

Միրիայի պարտությունն արաբ-խորալիական պատերազմում խիստ բացատրական հետևանքներ ունեցավ երկրի մերթադարական կյանքի վրա: Բոլորն այդ պարտության համար մեղադրում էին Միրիայի կառավարությանը: Մուհամմադ Նասիրը, Ֆաուզի Միլուն<sup>153</sup> և Աֆիֆ Ալ-Բիզրին Իսրայելի հետ զինադադարի համաձայնագիր կնքեցին 1949 թ. հուլիսի 20-ին<sup>154</sup>:

Նախագահ Շաքրի Ալ-Ջուարիին պաշտոններից հեռացրեց սիրիական բանակի շտաբի պետ զիներալ Արդալլահ Արֆաին<sup>155</sup>, նրա առաջին տեղակալ Արդ Ալ-Ահար Ալ-Հաքիմին,

<sup>150</sup> Aznes B. P., նշվ. աշխ., էջ 136:

<sup>151</sup> مامي الجدي، عرب و يهود، دار النهار للنشر، بيروت، ١٩٦٨، صفحة ٩١.

<sup>152</sup> Aznes van Housma Maxaryeh, նշվ. աշխ., էջ 21:

<sup>153</sup> Ֆաուզի Միլուն ծնվել է 1905 թ.: Անկախության հռչակումից հետո նա Ռազմական ակադեմիայի տնօրենն է եղել, այնուհետև պաշտպանության նախարարը, իսկ 1951 թ. Ֆաուզի Միլուն դաքմավ Միրիայի նախագահ: محمد رضوان الأتاسي، المصدر المذكور، صفحة ٣٩١.

<sup>154</sup> Van Dusen M., նշվ. աշխ., էջ 138:

<sup>155</sup> Միրիայի բանակի գլխավոր շտաբի պետ զիներալ Արդալլահ Արֆաին ծնվել է 1897 թ. Կամասկոսում: Նա սովորել է Մասաչուսեթսում, ապա ծառայել է օսմանյան բանակում: محمد رضوان الأتاسي، المصدر المذكور، صفحة ٣٩١.

պաշտպանության մախարաք Սեմադ Աշ-Շարաքսթին<sup>156</sup> և պայտոթյուն կրած առաջին քրիզադի բոլոր սպանելին: Նա շտաքի պետ նշանակեց գնդապետ Հուսնի Ազ-Ջաիմին:

Պատերազմը ծանր անդրադարձավ Սիրիայի քաղաքական ու տնտեսական կյանքի վրա: Վատքայացավ ժողովրդի տնտեսական վիճակը: Պատերազմի ժամանակ Սիրիայում մտցվեց ռազմական դրոթյուն: Օգտվելով այդ վիճակից՝ իշխանությունները զգալիորեն սահմանափակեցին ժողովրդավարական ազատությունները և ուժեղացրին նսկողությունը հասարակական և քաղաքական կյանքի վրա: Արշտունքում երկրում սկսվեցին քողոքի ցույցեր, որոնք ուղղված էին Սիրիայի մախազահի, կատավարության և դեկավար ողջ վերնախավի դեմ՝ երկրում առաջացնելով քաղաքական նոր ճգնաժամ<sup>157</sup>:

1949 թ. սկզբներին կատավարությունը գլխավորող Խալեդ Ալ-Ազմը<sup>158</sup> փորձեց կրճատել պաշտպանության եկամուտները և միաժամանակ դատի տվեց մի սպայի՝ նրան մեղադրելով կաշառակերության մեջ: Զինվորական վերնախավը դա ընդունեց որպես փորձ՝ բանակի վրա քայքայելու պաղեստինյան անհաջողության պատասխանատվությունը: Սիրիայի բանակի շտաքի պետ Հուսնի Ազ-Ջաիմը մախազահ Շուքրի Ալ-Քուաքլին քողոքագիր ուղարկեց:

1948 թ. արաբ-խարայելական պատերազմը ճանապարհաբեց ռազմական հեղաշրջումների համար: Գ. Սիրսկին Սիրիայում կատարված զինվորական հեղաշրջումները քննադրում է որպես «լատինամերիկյան տեսակի»: Այդ հեղաշրջում-

<sup>156</sup> Սեմադ Աշ-Շարաքսթին ծնվել է 1905 թ.: Նա սովորել է Բեյրութի մսկլի ճաշարում: Sb'u *مصطفى بناتس، الجاد الثاني، المصدر المذكور، ص 64*

<sup>157</sup> Հռչիաննիսյան և., ճշվ. աշխ., էջ 479-480:

<sup>158</sup> Խալեդ Ալ-Ազմը ծնվել է 1903 թ. Դամասկոսում: Խալեդ Ալ-Ազմի *خالد العظم، منكرات خالد العظم، المجلد الأول، بيروت، 1973*, ص 64

ներն իրականացնում էին տարբեր խմբավորումների ներկայացուցիչներ, որոնք հենվում էին զինվորականների վրա<sup>199</sup>։

Չինված ուժերի ամենաակտիվ օղակը՝ սպայական վերնախաւը, պետական համակարգի ամրաժամնի մասն էր և աստիճանաբար վերածվեց Սիրիայի ներքաղաքական կյանքի յուր զործոնի։ Սպայական վերնախաւը 1949-1954 թթ. մասնակցեց Սիրիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումներին, որոնք կատարվեցին Հուսնի Ալ-Ջալիմի, Սամի Ալ-Հիմաուդի և Ալիբ Ալ-Շիշակլիի գլխավորությամբ<sup>200</sup>։

### 1.3. Ռազմական հեղաշրջումների ֆեմոմենը Սիրիայում

Սիրիայի ներքաղաքական կյանքում քանակն առաջին անգամ համոզա եկավ 1948 թ. դեկտեմբերին, երբ երկրում արտակարգ իրավիճակ էր, և քանակային զորամիավորումները սկսեցին ճնշել ժողովրդական ելույթները, ինչը հանգեցրեց Չամիլ Մարդամի<sup>201</sup> կատախարության փլուզմանը։ 17 օր անց ձևավորվեց նոր կառավարություն՝ հրախօ Ալ-Ազմի գլխավորությամբ, ով Սիրիայի ամենահարուստ մարդկանցից մեկն էր։

1949 թ. փետրվարին Սիրիան ֆեմոնտական ոլորտում պայմանագիր կնքեց Ֆրանսիայի հետ, իսկ ավելի ուշ համա-

<sup>199</sup> Համ Մարքառի Դ. Ի., 624, 625-ը, էջ 97-100։

<sup>200</sup> انظر وليد المعلم، سوريا 1958-1968، دمشق، 1988، صفحة 108-107، انور زامل، العرب العظيمة في الشرق الأوسط، الصراع الشوري على سورية 1958-1968، جميع الحقوق محفوظة، توزيع دار مشيخة الكتاب، 1997، صفحة 22-23، سليمان العنزي، عدنان منقلي، 500 حكماء سورية، دمشق، 2009، صفحة 14-17، أحمد عبد القويوم، حصص ستين خضبة وأمار مرة، بيسان للنشر والتوزيع، 1991، صفحة 127-129، تاريخ العرب الحديث والمعاصر، الجزء الثاني، 1968-1967، صفحة 390-397.

<sup>201</sup> Չամիլ Մարդամ քեկը ծնվել է 1893 թ. Դամասկոսում և սովորել է Ֆրանսիայում։ Նա «Արաբական երիտասարդական ճյուղային» էլեմենտիստներից է (القائمة العربية الثورية) ևը ստեղծվել է 1911 թ. Փարիզում։  
سلي مريم بك، المصدر المذكور، صفحة 17-18، 55/5

մայնոքայան նկատ «Ճառիկայն» (Trans-Arabian Pipe Line) քնկերության հետ: Գրա ղնմ ակտիվորեն հակազդործություններ ձևոնարկեցին անգլիական մոնոպոլիստները: Խաչեղ Ալ-Ազմի կառավարությունը պատրաստվում էր որոշակի շփումներ հաստատել ամերիկացիների հետ: Արդեն մարտի կեսերին Սիրիան բանակցություններ սկսեց Իսրայելի հետ՝ զինադադարի համաձայնագիր կնքելու վերաբերյալ: Դամասկոսում ցույցեր սկսվեցին կառավարության այս մտադրությունների դեմ: Այդ պայմաններում բանակային վերնախավը որոշեց ռազմական հեղաշրջում կատարել<sup>162</sup>:

1949 թ. հունվարի 27-ին Ալ-Կոմենյուրա քաղաքում կաշաքավ մի քանի բանակային գնդերի հրամանատարների խորհրդակցությունը, որի ժամանակ Սիրիայի բանակի շտաբի պետ գնդապետ Հուսնի Ազ-Ջաիմը և նրա օգնականները մշակեցին հեղաշրջում իրականացնելու ծրագիրը: Նման խորհրդակցություններ տեղի ունեցան նաև մարտի 20-ին, 24-ին և 29-ին՝ կատանայում<sup>163</sup>: Մարտի 24-ի հանդիպմանը մասնակցում էին մոտ 14 սպա, որոնց մեջ էին նաև Սամի Ալ-Հիմաուին, Իբրահիմ Հուսեյնը և այլք<sup>164</sup>:

1949 թ. մարտի 30-ին հեղաշրջում կատարվեց<sup>165</sup>: Ինչպես գրում է Նազիր Ֆանասիեը իր «Հուսնի Ազ-Ջաիմի օրերը, 137 օր, որոնք ցնցեցին Սիրիան» աշխատությունում, տանկերը և գրահապատ մեքենաները շրջապատել էին շինություններն ու վտղոցները<sup>166</sup>: Բանակային գնդերը գրավեցին բոլոր կարևոր

<sup>162</sup> Рысь Э. В., Политическая борьба в Сирии в 1946-1963 гг., МГНМО МНД СССР, Диссертация, Москва, 1971, с. 51-52.

<sup>163</sup> سيد عبد العال، علم السوقي، ١.، العلاقات العسكرية في سوريا ١٩٥٤-١٩٤٩، مكتبة مدبولي، ٢٠٠٧، صفحة ٦٧.

Կատանան գտնվում էր Դամասկոսից 20 կմ հեռավորության վրա, որտեղ ռազմական մամուր կար:

<sup>164</sup> نذير قصه، أيام حسني الزعيم، ١٣٧ يوماً من سوريا، دار الإطلاع الجديدة، بيروت، ١٩٨٢، صفحة ١٨-٢٣.

مشركات الصبر عامل اربكان، الجزء الثاني، ١٩٤٦-١٩٥٠، بيروت، ١٩٨٢، صفحة ٨٠٨.

<sup>166</sup> نذير قصه، المعسكر المنكور، صفحة ٧.

կատարական հիմնարկությունները, իսկ նախագահ Հուսեյն Ալ-Քուարթին, վարչապետ Խալեդ Ալ-Ազմը, ով նաև պաշտպանության և ԱԳ մախարաթն էր և կոտավարության անդամներից հետագլխիցին զբաղեցված պաշտոններից, ձերբակալվեցին ու տեղափոխվեցին Մեզզե զինվորական հիվանդանոց: Մի քանի ժամ անց Հուսեյն Ազ-Ջաֆին զիտավորությանը բանակն իր ձեռքը վերցրեց անբողջ երկրի իշխանությունը<sup>167</sup>: Միջիայի սուրիականապետ և ազգային անվտանգության պետ նշանակվեց Ադիբ Ալ-Շիշակլին, ԱԳ մախարաթի պաշտոնը հանձնվեց Ադիբ Մուլամին<sup>168</sup>, իսկ վարչապետինը՝ Մուսսին Ալ-Բարազին<sup>169</sup> ով, ինչպես և Հուսեյն Ազ-Ջաֆինը, քրդական ժազում ունեւր<sup>170</sup>: Հուսեյն Ազ-Ջաֆինը հիմնականում հեմվում էր քրդական և չերքեզական<sup>171</sup> սպայական կազմի վրա<sup>172</sup>: Այդ ժամանակ նույնիսկ խոսակցություն էր գնում, որ կատավարությունը քրդական պետություն ստեղծելու մտադրություն ունի<sup>173</sup>: Հուսեյն Ազ-Ջաֆինը Սիրիայի նորագույն պատմության մեջ դարձավ առաջին զինվորական դիկտատորը<sup>174</sup>: Նա քանակի քիվն

<sup>167</sup> Carleton A., The Syrian Coups d'Etat of 1949, Middle East Journal, Volume 4, N. 1, J., 1950, p. 4-9.

<sup>168</sup> Ադիբ Մուլամը ծնվել է 1887 թ. Ջարալ Գրուզի եազակի ցնտամիրներին մեկում: Տե՛ս. محمد رشوان الأتاسي، المتمر المذکور، صفحة ٢١٢.

<sup>169</sup> Մուսսին Ալ-Բարազին փառապան է եղել: Նա սովորել է Զրան-ախայում: Մուսսին Ալ-Բարազին և Հուսեյն Ազ-Ջաֆինը ընկերներ էին դեռնա այն ժամանակվանից, երբ վերջինս Սիրիայի ազգային անվտանգության պետն էր, իսկ մյուսը՝ ՆԳ մախարաթը:

<sup>170</sup> Джарджис: Хасан Абдулла, Курды в общественно-политической жизни Сирии в 1918-1962 гг., Диссертация, Академия Наук СССР ИВ, Москва, 1977, с. 100-101.

<sup>171</sup> Հումի Ազ-Ջաֆինի անձնական քիկնապատեմերի ջեզառը կազմված էր չերքեզներից: Տե՛ս Կախասեւ Ա. Բ., Черкесская диаспора в Арабских странах (19-20 вв.), Научник, 1997, с. 146. Հումի Ազ-Ջաֆինի օգնականը չերքեզ սպա Իսմաս Եսրդումն էր: Տե՛ս Կախասեւ Ա. Բ., Черкесы в Сирии, Научник, 1993, с. 130.

<sup>172</sup> Tejel J., Syria's Kurds, History, Politics and Society, New York, 2009, p. 45.

<sup>173</sup> Seale P., նշվ. աշխ., էջ 60:

<sup>174</sup> بشير العولاد، الانقلاب السوري، دمشق، ١٩٤٩، صفحة ٤٥.



հասցրեց 27 հազարի, իսկ ռափկանությունը և ժանդարմերիան մտցրեց պաշտպանության նախաբարության մեջ<sup>175</sup>: Այդ ժամանակաշրջանից սկսած՝ ուժեղացավ քանակի դերը Սիրիայի քաղաքական կյանքում: Իշպես նշում է սուսսուտանցի հետազոտող Վլադիմիր Աիմեդովը. «Հափանարար ոչ մի աղաքական երկրում գինված ուժերը քաղաքական կյանքում այնպիսի գերիշխող դեր չեն ունեցել, ինչպես Սիրիայում»<sup>176</sup>:

Հուսնի Ազ-Ջաիմը պատկանում է սիրիական սպայական կազմի առաջին դասին<sup>177</sup>: Նա ծնվել է 1889 թ. Հալեպում<sup>178</sup> և քրդական ծագում ունի<sup>179</sup>: Վերջինս ծառայել էր բուրբական բանակում և ավարտել Մտամբուլի ռազմական ակադեմիան, այնուհետև ծառայության էր անցել ֆրանսիական մանդատային իշխանությունների՝ Սիրիայում ստեղծած «Հատուկ զորամասերում»: 1941 թ. ին՝ անգլիական և Ազատ Ֆրանսիայի զորքերի Սիրիա մտնելուց հետո, Հուսնի Ազ-Ջաիմը ձերբակալվեց, այնուհետև կրկին ծառայության անցավ սիրիական բանակում՝ հասնելով մինչև սիրիական բանակի շտաբի պետի պաշտոնին<sup>180</sup>:

<sup>175</sup> Elizabeth W., *The Awakening of the Syrian Army: General Husni al-Za'im's Coup and Reign 1949, Origins of the Syrian Army's Enduring Role in Syrian Politics*, Columbia University, 2011, p. 37.

<sup>176</sup> Հաս Ռ-Պ-Ա Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող պ.գ.թ. Վլադիմիր Աիմեդովի քանակող տեղեկությունների, Մոսկվա, 2011:

<sup>177</sup> Van Dusen M., 624, աշխ., էջ 375:

<sup>178</sup> .١٢ صفحة المصدر المذكور. Husni al-Za'im's Biography: Sh'u Torrey G. H., *Syrian Politics and the Military 1945-1958*, Ohio State University Press, 1964, p. 123.

<sup>179</sup> Seale P., 624, աշխ., էջ 43:

<sup>180</sup> Be'eri E., 624, աշխ., էջ 57:

Հուսնի Ազ-Ջաիմը սկզբում կողմ էր «Մեծ Սիրիա»<sup>181</sup> ծրագրին, իսկ ապրիլի կեսերին մա համոզեա եկավ այդ ծրագրի դեմ: Եւ մտերիմ հարաբերությունների մեջ էր Գամաալուսում ամերիկյան դեսպանության հետ, վարում էր քացահայտորեն ամերիկամետ արտաքին քաղաքականություն: Միաժամանակ Հուսնի Ազ-Ջաիմը սկսեց վարել Արևմտյան Գերմանիայի հետ մերձեցման, ինչպես մաև Ֆրանսիայի հետ կապերն ամրապնդելու քաղաքականություն: Երա իրագործած հեղաշրջումն իր ուղղվածությամբ ընկալվեց որպես հակաբրիտանական, որի դիրքերն ու ազդեցությունը շատ կին ուժեղացել Սիրիայում: Ֆրանսիացիների հեռանալուց հետո: Հուսնի Ազ-Ջաիմը հիմնականում զբաղված էր մերքաղաքական խնդիրներով: Տեսական կա, որ ամերիկյան հատուկ ծառայությունները ժամանակցել են այդ հեղաշրջմանը: Իշխանության գլուխ գալուց որոշ ժամանակ անց մա վալերացրեց ամերիկյան կազմակերպությունների հետ մալքամուղի մասին համաձայնագիրը և դրանով իր դեմ հանեց ոչ միայն անգլիացիներին, այլ մաև Լոնդոնի հետ ավանդույթներով կապված հաշիմյան դինաստիային, որը ղեկավարում էր թե՛ Իրաքում, թե՛ Հորդանանում<sup>182</sup>:

Հուսնի Ազ-Ջաիմի արտաքին քաղաքականության մեջ առաջնային խնդիրն արարական և այլ երկրների կողմից իր վարչակարգի ճամաչումն էր: 1949 թ. ապրիլի 18-ին Գամաալուս այցելեց ԱՊԼ-ի գլխավոր քարտուղար Արդ Առ-Ռահման Ազգամը: Եւ խստացավ, որ Եգիպտոսը և Սաուդյան Արա-

<sup>181</sup> 1945 թ. առաջ քաշվեց արաբական ալեյի սերտ ճիւղյալ իրականացման գաղափարը, որի ստեղծման գործում առաջին քայլը կլինեց անդրիտղղամանյան եմիր Աբդալլահի գլխավորությամբ «Մեծ Սիրիա» պետության ստեղծումը: Եւ իրատեսակում էր Սիրիան, Լիբանանը, Հորդանանը և Դաղեստինը միավորել մեկ պետության մեջ: «Մեծ Սիրիայում», փաստորեն, կատալիսորող լինելու էր Հորդանանում քաղալորող հաշիմյան դինաստիան, որը սերտորեն կապված էր Մեծ Բրիտանիայի հետ: Առաջ էր քաշվում մաև «Իսրեիթ մաիլի» ծրագիրը: Այդ ժամանակ խոսքն Արաբական Արևելքում հաշիմյան ուժի պետության ստեղծման, Սիրիայի հանրապետական կարգալինակի վերացման և անգլիական գերեշլյանությունն այդ շրջանում ուժեղացնելու մասին էր:

<sup>182</sup> Մուքտաբ Դ. Մ., նշվ. աշխ., էջ 98:



նի Ազ-Չախնը նրկրից վտարեց սոցիալիստ Ալլամ Ալ-Հաուրանիին:

1949 թ. հուլիսին Սիրիական Ազգային սոցիալական կուսակցությունը Լիբանանում պետական հեղաշրջման փորձ կատարեց: Հուլիսի 3-ին նրա զինված ջոկատները տարրեր վայրելու մարձակում գործեցին ոստիկանական ուժերի վրա: Կառավարությունը նրանց դեմ հանեց քանակը և ոստիկանությունը<sup>191</sup>: Սիրիական Ազգային սոցիալական կուսակցության առաջնորդ Անտուն Սաադին, ով հետապնդվում էր լիբանանյան կառավարության կողմից, քաղցվում էր Սիրիայում<sup>192</sup>: 1949 թ. հուլիսի 6-ին Հուսնի Ազ-Չախն Անտուն Սաադեին հանձնեց Լիբանանի ղեկավարությանը, որտեղ նրկու օր անց նրան դատապարտեցին և գնդակահարեցին<sup>193</sup>:

Միշել Աֆլակին քանտարկելուց հետո «Բաաս» կուսակցությունը հայտարարեց, որ անօրինական կհամարի բոլոր համաձայնագրերն ու իրավական փաստաթղթերը և, որ դրանք պետք է քննումվեն ազատ ընտրված օրենսդիր իշխանության կողմից<sup>194</sup>:

Հուսնի Ազ-Չախնը սիրիացիների համակրանքը շահելու նպատակով զանազան խոստումներ տվեց՝ քաղցնորոգումներ իրականացնելու, խոշոր հողատիրությունը սահմանափակելու, աշխատավորների շահերը պաշտպանելու և այլնի մասին: Սակայն մա ոչինչ չհասցրեց անել: Հիմնականում սիրիական

---

Ալ-Արաֆն, սակայն 1950 թ., նրբ մա ցնորվեց Սիրիայի մախազահ, ձևակմորեն կուսակցության կազմում շեր: Սիրիայի կուսակցությունների մասին մամբամասն տեխ *مجموعه على عامر، الأزمات السياسية في سورية 1946-1963*, دمشق, 1966.

<sup>191</sup> Rathmell A., Secret War in the Middle East: The covert struggle for Syria 1949-1961, Tauris Academic Studies, I.B. Tauris Publishers, London-New York, 1995, p. 47-48.

<sup>192</sup> Be'eri E., Յշվ. աշխ., էջ 58:

<sup>193</sup> Абу Гасан М. Т., Отношения ССРА с вооруженными режимами в Сирии, Ученые Записки Центра Арабских Исследований, РАН ИВ, Москва, 2003, с. 16.

<sup>194</sup> Румсь Э. В., Յշվ. աշխ., էջ 68:

սպանների՝ Իրաքի հետ միավորման կողմնակիցները (մասամբ քրիստոնեական) կործանեցին Ազ-Ջահիմն կառավարության գրավումից 137 օր անց<sup>195</sup>։

1949 թ. օգոստոսի 14-ին Մամի Ալ-Հիմաուի գլխավորությամբ զրահապատ մեքենաներով մի զորայուն Կատանայից ժամանեց Դամասկոս և բաժանվելով երեք մասի՝ շրջապատեց ամբողջ քաղաքն ու ձերբակալեց Հուսնի Ազ-Ջահիմն, Մուհսին Ալ-Բարազիին<sup>196</sup> և մայր Իբրահիմ Հուսեյնին<sup>197</sup>։ Հուսնի Ազ-Ջահիմը և Մուհսին Ալ-Բարազին մահապատժի ենթարկվեցին<sup>198</sup>։

Մամի Ալ-Հիմաուին հայտարարեց, որ բանակը հեղաշրջում կատարեց, որպեսզի իշխանությունը հանձնի քաղաքացիական ղեկավարությանը և դրանից հետո զինվորականները կվերադառնան իրենց «զորամոզները»<sup>199</sup>։

Մամի Ալ-Հիմաուին պաշտպանության մախարաբություն հրավիրեց մի խումբ քաղաքական գործիչների և Ազգային ժողովի պատգամավորների նոր կառավարության ձևավորման համար։ Օգոստոսի 15-ին պաշտոնապես հայտարարվեց Հաշիմ Ալ-Արասիի գլխավորությամբ նոր կառավարության ձևավորման մասին<sup>200</sup>, որի կազմում կարևոր պաշտոններ ստանձնեցին «Ժողովրդական» կուսակցության անդամները, որովհետև նրանք օժանդակել էին Մամի Հիմաուիին ռազմական հեղաշրջում կատարելու և իշխանության գլուխ գալու գործում։ Պաշտպանության մախարաբ նշանակվեց Արդալլահ Աբխան, Ն.Գ. մախարաբ՝ Ռուշդի Ալ-Կիլիսյան<sup>201</sup>, Ա.Գ. մախարաբ՝ Նա-

<sup>195</sup> Мирский Г. Н., նշվ. աշխ., էջ 99։

<sup>196</sup> منكرات الأمير عادل أرسكان، المصدر المذكور، صفحة 171

<sup>197</sup> Իբրահիմ Հուսեյնը ռազմական ռառիկանության և բանակային հետախուզության պետն էր։

<sup>198</sup> Հուսնի Ազ-Ջահիմն իր մահից մեկ օր աստի ասել է. «Տվեց ինձ իմնդ տարի, և ես Միրխան Եվլիյայեֆույի նման ծաղկող կղաքմեմե»։ Տե՛ս Բե'երի E., նշվ. աշխ., էջ 59։

<sup>199</sup> Padox Э. В., նշվ. աշխ., էջ 72։

<sup>200</sup> Torrey G. H., նշվ. աշխ., էջ 145։

<sup>201</sup> Be'eri E., նշվ. աշխ., էջ 62։

զիմ Ալ-Կուդսին, գյուղատնտեսության նախարար՝ Ակրամ Ալ-Հասուանին, Էլօմոմիկայի նախարար՝ Ֆայրի Ալ-Աթահին, Գի-նանցների նախարար՝ Խալեդ Ալ-Ազմը: «Բասա» կուսակցու-թյան առաջնորդ Միշել Ալիակը զբաղեցրեց կրթության և լու-սավորության նախարարի պաշտոնը<sup>202</sup>:

Մտիամնադ Սամի Հիլմի Ալ-Հինատին նույնպես պա-կանում է սիրիական ազայական կազմի առաջին դասին: Նա ծնվել է 1898 թ. Հալեպում: Սամի Ալ-Հինատին նույնպես քրդա-կան ծագում ունի<sup>203</sup>: 1916 թ. նա ծառայության է անցել բուր-քական բանակում և 1919 թ., ավարտելով Մտամրուլի ուսումնա-կան ակադեմիան, ծառայել է Ալեքսանդրեայի ոստիկանությունում: 1927 թ. ծառայության է տեղափոխվել «Հասուկ գործա-սերում», իսկ ավելի ուշ՝ Սիրիայի անկախությունից հետո, մտել է սիրիական բանակ<sup>204</sup>: 1948 թ. արար-խարայելական պատե-րազմի ժամանակ Սամի Ալ-Հինատին արդեն ուներ գեղասպետի աստիճան<sup>205</sup>: Նա բազմաթիվ սպաների, ովքեր Ազ-Չախմի ժա-նանակ հեռացվել էին բանակից, վերանկանգնեց իրենց պաշ-տոններին, որոնց մեջ էլ նաև փոխզնդապետ Ալիք Ալ-Շի-շակիին, ում հանձնվեց առաջին քրիզադի հրամանատարի պաշտոնը<sup>206</sup>:

Առաջին պետությունները, որոնք ճանաչեցին նոր վարչա-կարգը, Չեխոսլովակիան և Իսպանիան էին: Օգոստոսի 19-ին Սիրիայի նոր վարչակարգը ճանաչեց Հորդանանը, սպա՝ Սաուդյան Արաբիան և այլն:

1949 թ. սեպտեմբերի 10-ին հրապարակված ընտրական օրենքի 7-րդ հոդվածով՝ ընտրություններին կարող էին մաս-նակցել 18 տարեկանը լրացած բոլոր սիրիացիները<sup>207</sup>:

<sup>202</sup> Կրթության և գիտության նախարարի պաշտոնը միակ պաշտոնն էր, որ Միշել Ալիակը պետական համակարգում զբաղեցրեց իր ամբողջ բա-ղադրական գործունեության ընթացքում:

<sup>203</sup> Van Dusen M., 624, աշխ., էջ 375:

<sup>204</sup> Torrey G. H., 624, աշխ., էջ 143:

<sup>205</sup> Soffer G., *The Role of the Officer Class in Syrian Politics and Society*, Ph.D., 1968, p. 58.

<sup>206</sup> Seale P., 624, աշխ., էջ 77:

<sup>207</sup> *The Electoral Law of Syria, Decree No. 17., September 10, 1949.*

1949 թ. նոյեմբերի 15-ին տեղի ունեցան Մահմանադիր ժողովի ընտրություններ, որտեղ տեղերի մեծամասնությունը զբաղեցրեց «Ժողովրդական» կուսակցությունը: Իսլամական սոցիալիստական միությունը, որի առաջնորդը Մուստաֆա Աս-Միրախն էր, առաջավ յորս տեղ, իսկ «Բասա» կուսակցությունը՝ երեք<sup>208</sup>: Մահմանադիր ժողովի առաջին նիստը տեղի ունեցավ 1949 թ. դեկտեմբերի 12-ին, որտեղ «Ժողովրդական» կուսակցության ղեկավար Ռուշդի Ալ-Կիխյան ընտրվեց նիստի նախագահ, իսկ 75-ամյա Հաշիմ Ալ-Արասին՝ պետության ժամանակավոր նախագահ<sup>209</sup>:

Սամի Ալ-Հինատին չեղյալ համարեց Հուսնի Ազ-Ջաիմի կողմից աներիկյան «Ժավիլայն» նավթային ընկերության հետ կնքված պայմանագիրը՝ Միրխայի տարածքով դեպի Միջերկրական ծով նավթամուղ կառուցելու վերաբերյալ: Նա չեղյալ հայտարարեց նաև Ֆրանսիայի հետ կնքած համաձայնագիրը: Միրիական նոր կառավարությունը համոզեց եկավ ի պաշտպանություն «Մեծ Միրխա» ծրագրի: Սակայն Ալ-Հինատին և նրա համախոհները չկարողացան իրականացնել իրենց ծրագրերը: Միրխայի դրամային միասնության հակառակորդները համախոհներեցին քանակի այն տպաների հետ, ովքեր մույմպես դեմ էին այդ միասնությանը:

1949 թ. դեկտեմբերի 19-ին քանակային զորքերը՝ Ալիք Ալ-Շիշակլիի գլխավորությամբ, մտան Դամասկոս: Սամի Ալ-Հինատին, ռազմական ուսովականության պետ Մոհամմադ Մարուֆը և Մահմուդ Առ-Ռիֆային<sup>210</sup> ձերբակալվեցին<sup>211</sup>: Հետագայում, 1950 թ. հոկտեմբերի 30-ին, Սամի Ալ-Հինատին սպանվեց Մոհսին Ալ-Բարազլիի ազգականի կողմից<sup>212</sup>:

<sup>208</sup> Torrey G. H., նշվ. աշխ., էջ 153:

<sup>209</sup> Նույն տեղում, էջ 156:

<sup>210</sup> Կապիտան Մահմուդ Առ-Ռիֆային Դամասկոսից է: 1936 թ. նա ստիջիլ է Գեթնանիայում և կազմել է գեթնանիներն-արաբներն ռազմական բաշարան: Տե՛ս Be'eri E., նշվ. աշխ., էջ 61:

<sup>211</sup> Pines D. B., նշվ. աշխ., էջ 78-79:

<sup>212</sup> Be'eri E., նշվ. աշխ., էջ 63:

Աղիք Աշ-Շիշակլիմ պատկանում է սիրիական տպաչա-  
կան կազմի նրկորդ դասին: Նա ծնվել է 1909 թ. Համայում և  
նույնպես քրդական ծագում ունի<sup>213</sup>: 1930 թ. նա ծառայել է  
«Հատուկ զորամասերում», իսկ 1945 թ. մասնակցել է Սիրիայի  
անկախության համար մղված պայքարում: Այնուհետև նա  
ծառայության է անցել սիրիական բանակում և մասնակցել  
1948 թ. սրբա-խորայելական պատերազմին<sup>214</sup>: Նրիտասարդ  
տաղիցում Աշ-Շիշակլիմ Սիրիական Ազգային սոցիալական  
կուսակցության անդամ էր, տակայն հետագայում դուրս եկավ  
կուսակցությունից<sup>215</sup>: 1951 թ. մայիսին նա դարձավ սիրիական  
բանակի շտաբի պետ և անմիջապես վերադրեց այն արգել-  
մեքը, որոնք իր մախորդը սահմանել էր աներիկյան և ֆրան-  
սիական ընկերությունների համար: Աներիկյան մոնոպոլիստ-  
ները հասան մալքամուրի անցկացմանը Սիրիայի տարածքով:  
Բանակում Անգլիայի և հաշիմյան դինաստիայի կողմնակից-  
ներից պարտվեցին, իսկ Աղիք Աշ-Շիշակլիմ Սիրիայում կառա-  
վարեց ոչ թե չորս ամիս, այլ չորս տարի: Աշ-Շիշակլիի վար-  
չակարգը չունեցավ սոցիալական որևէ հենարան: Նրա թավա-  
կան քույր քայրերը սոցիալ-տնտեսական քնազավառում բարե-  
վոխումներ կատարելու ուղղությամբ հյասարավեցրին նրանց,  
ովքեր հավատում էին սոցիալական հեղափոխությանը: Ներ-  
քին քաղաքականության քնազավառում Աղիք Աշ-Շիշակլիմ  
սկզբնական շրջանում ափելի զգույշ էր: Նա միանգամից քա-  
ցահայտ զինվորական դիկտատուրա չհատուտեց և ձևակա-  
նորեն որոշ չափով վերականգնեց նախկին ազատություն-  
ները<sup>216</sup>:

1949 թ. դեկտեմբերի 20-ից 23-ը իրալեղ Ալ-Ազմը, Մամի  
Զարբարան, Ակրամ Ալ-Հաուրամին և Մուստաֆա Աս-Սիրահին  
փորձեցին կազմել նոր կառավարություն, սակայն դա նրանց  
չհաջողվեց: Կառավարությունը ղեկավարեց Նազիմ Ալ-Կուդ-  
սին, սակայն նրա դեմ դուրս եկավ բանակային վերմախավը, և

<sup>213</sup> Van Dusen M., նշվ. աշխ., էջ 380:

<sup>214</sup> Scale P., նշվ. աշխ., էջ 86:

<sup>215</sup> Torrey G. H., նշվ. աշխ., էջ 205:

<sup>216</sup> Мисекитт Г. И., նշվ. աշխ., էջ 99:



վերջինս հրաժարական տվեց: Նույն ամսվա 27-ին կազմվեց նոր կառավարություն, որը գլխավորեց Խալեդ Ալ-Ազմը: Ակրան Ալ-Հատրահին նշանակվեց ՊՆ նախարար, Արդ Ալ-Քաթի Նիզամ Ար-Քիհեղ՝ գյուղատնտեսության, Մարուֆ Ար-Դավալիբին՝ էկոնոմիկայի<sup>217</sup>, Համի Աս-Սիրահին՝ կրթության, Արդ Աս-Ռահման Ալ-Ազմը՝ ֆինանսների: 1949 թ. դեկտեմբերին Սիրիայի քառակի գլխավոր շտաբի պետ նշանակվեց գնդապետ Անվար Բաննուդը<sup>218</sup>, իսկ նրա տեղակալ՝ Ադիբ Ալ-Շիշակին<sup>219</sup>:

Նազիմ Ալ-Կուդսին Սահմանադրության պատրաստման համար «Շարվյուական» կուսակցության 33 անդամներից հանձնաժողով կազմեց: Սահմանադրության մախազիծը հրապարակվեց 1950 թ. ապրիլի 6-ին, որի երրորդ հոդվածով իսլամը համարվեց պետական կրոն<sup>220</sup>: «Մուսուլման երաշխներ» կազմակերպության առաջնորդ Մուստաֆա Աս-Սիրահին փորձեց կրոնական հարցը կապել արաբական ազգայնականության հետ: Նա հայտարարեց, որ ցանկացած փորձ, որը Սիրիան կտանի դեպի արեբիզմի, վտանգ կներկայացնի «արաբական մերկային և ապագային»: Բասասականների և մուսուլմանական կազմակերպությունների միջև ընդհարումներ տեղի ունեցան: Բացի բասասականներից Սիրիայի քրիստոնեական համայնքը նույնպես դեմ արտահայտվեց Սահմանադրության այդ հոդվածին: Գրան փոխարինեց այն, որ Սիրիայի նախա-

<sup>217</sup> Մարուֆ Ար-Դավալիբին ծնվել է 1909 թ. Հալաբում: Նա «Շարվյուական» կուսակցության անդամ էր, ինչպես նաև «Մուսուլման երաշխներ» կազմակերպության Հալիպի մասնաճյուղի առաջնորդը: Տե՛ս Teitelbaum J., The Muslim Brotherhood and the "Struggle for Syria" 1947-1958, *Between Accommodation and Ideology*, Middle Eastern Studies, Vol. 40, No. 3, May 2004, p. 148.

<sup>218</sup> Անվար Բաննուդը ծնվել է 1908 թ. Հաբեշում: Նա պատկանում է սիրիական արաբական կազմի երկրորդ դասին: Տե՛ս Van Dusen M., նշվ. աշխ., էջ 378:

<sup>219</sup> Scale P., նշվ. աշխ., էջ 91-92:

<sup>220</sup> *الإعلان للمسلمون في سوريا، لكتاب الثاني والثلاثون، مركز المسير للدراسات والبحوث،*

صطحة ٢٠٠٩، ٣٤٦.

գանց պետք է լինի մուսուլման: Աղրամ Ալ-Հատրանին և Ֆայդի Ալ-Աթասին հրաժարական տվեցին՝ հայտարարելով, որ նրանք համաձայն չեն Սահմանադրության որոշ հոդվածներին<sup>221</sup>:

1950 թ. սեպտեմբերի 5-ին ընդունվեց Սիրիայի Սահմանադրությունը, որտեղ արձանագրված էին, որ աշխատավորներն ունեն աշխատանքի, սոցիալական ապահովության, կրթության և ատոդապալանության իրավունք<sup>222</sup>: 1950 թ. սեպտեմբերի 5-ի ընդունված Սահմանադրությամբ՝ ցախագահն ընտրվելու էր գաղտնի քվեարկությամբ՝ հինգ տարի ժամկետով: Սահմանադրության մեջ գրված էր, որ սիրիացիները «արաբ ազգի մի մասն» են կազմում<sup>223</sup>: Այս հոդվածն առաջինն էր արաբական երկրների Սահմանադրությունների մեջ, սակայն ինտագրացիոն այն մտցվեց Եգիպտոսում և արաբական այլ երկրներում<sup>224</sup>:

1951 թ. օգոստոսի 28-ին Ադիբ Ալ-Շիշակլին պայմանագիր կնքեց ամերիկյան «Բակտել» ձեռնարկության հետ Էուվեյթից Սիրիայի Բանիաս քաղաք նավթամուղի շինարարության համար<sup>225</sup>:

1951 թ. նոյեմբերի 28-ին կառավարությունը ղեկավարեց Մարուֆ Ալ-Դավալիքին: Կառավարությունը հայտարարեց, որ չի ցանկանում, որպեսզի քանակը միջամտի երկրի քաղաքական կյանքին: Ադիբ Ալ-Շիշակլին չէր կարող ուշադրություն չդարձնել այս հայտարարությանը, որովհետև Հոսսեյն Ազ-Չալիմի հեղաշրջումից հետո քանակը թույլ չէր տվել իր մասին այսպես արտահայտվել:

<sup>221</sup> Torrey G. H., նշվ. աշխ., էջ 172:

<sup>222</sup> Кучин В. А., նշվ. աշխ., էջ 14:

<sup>223</sup> Конституция Государства Египетского и Среднего Востока, Москва, 1956, с. 462-477.

<sup>224</sup> Նախքան 1958 թ. եգիպտոսի ինտ միավորումը՝ Սիրիան կոչվում էր Սիրիայի Հանրապետություն, իսկ Արաբական Միացյալ Հանրապետության փլուզումից հետո՝ Սիրիայի Արաբական Հանրապետություն:

<sup>225</sup> [Исп.-Бударага Э. П., նշվ. աշխ., էջ 18:

1951 թ. մոյեմբերի 29-ին Աշ-Շիշակլիին ձեռքակալեց կառավարության որոշ անդամների, ինչպես նաև Նազիմ Ալ-Կուդսիին: Ամրապնդելով իր դիրքերը՝ գնդապետ Աղիբ Աշ-Շիշակլիին կատարեց բվով շորորդ հեղաշրջումը: Հաշիմ Ալ-Աբասին հանձնարարեց Համիդ Ալ-Ֆուջին կազմել նոր կառավարություն, սակայն հաջորդ օրը նա հրաժարական տվեց: Աշ-Շիշակլիին իր ձեռքը վերցրեց երկրի ղեկավարումը, և Միրիալուն կրկին հաստատվեց ռազմական դիկտատուրա: Մի շարք ղեկընդունելով լուծարքի ենթարկվեցին բոլոր քաղաքական կուսակցությունները և կազմակերպությունները, արգելվեց պետական ծառայողների, արհմիությունների անդամների, անգամ ուսանողների և սոցիալական այլ խավերի քաղաքական գործունեությունը: Նա պետության գլուխ կանգնեցրեց իր դրածո, գնդապետ Ֆաուզի Միլուն<sup>226</sup>:

Միրիալի աշխատավորների և ղեմնկրատական ուժերը ներքաղաքական անկայուն, սոցիալ-տնտեսական ծանր և ռազմական դիկտատուրայի պայմաններում շարունակում էին պայքարն իրենց տնտեսական ու քաղաքական իրավունքների համար: Նրանք համղես էին գալիս ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի կողմից Սերձավոր և Միջին Արևելքում ռազմական դաշինք ստեղծելու քաղաքականության դեմ: Երկրի մի շարք վայրերում տեղի էին ունենում ցույցեր և գործադուլներ, որոնց ժամանակ աշխատավորները համղես էին գալիս գործարանները փակելու դեմ՝ պահանջելով տնտեսական վիճակի բարելավում<sup>227</sup>:

1952 թ. հունիսի 8-ին ստեղծվեց Նախարարների խորհուրդ և Աղիբ Աշ-Շիշակլիին դարձավ վարչապետ: 1952 թ.

<sup>226</sup> Рысь Э. В., Изв. ашш., т. 93-98: Ֆաուզի Միլուն ծնվել է 1905 թ.: Անկախության ձեռքբերումից հետո նա Ռազմական ակադեմիայի տնօրենն է եղել, այնուհետև պաշտպանության նախարարը, իսկ 1951 թ. Ֆաուզի Միլուն դարձավ Միրիալի նախագահ: Sh'a, المصدر المذكور، صفحة ٣٩١.

<sup>227</sup> Вавилов В., Симантовский Н., Социально-экономические проблемы развивающихся стран, Сирия, Москва, 1975, с. 23-24.

հուլիսի վերջին Աշ-Շիշալեյին տեղծեց իր սեփական «Արաբական ազատագրման շարժում» (حركة التحرير العربي) կուսակցությունը<sup>228</sup>:

1952 թ. դեկտեմբերի 24-ին գլխավոր շտաբից հայտարարվեց, որ ձերբակալվել են մի խումբ սպաներ, ինչպես նաև մեղադրանքներ էին ներկայացվում Միշել Աֆլակի, Մալահ Ալ-Գին Ալ-Քիտարի և Ալբամ Ալ-Հատրանիի դեմ:

Փորձելով կամխել դեպքերի հետագա վտանգավոր զարգացումները՝ դիկտատորը 1953 թ. հուլիսին գործողության մեջ դրեց նոր Սահմանադրություն և անցկացրեց ընտրություններ: Այդիս Աշ-Շիշալեյին ընտրվեց Միքիայի նախագահ: Խալիվ Մարդամը նշանակվեց ԱԳ նախարար, Ռիֆաթ Խամբանը՝ պաշտպանության<sup>229</sup>, Նազիմ Ալ-Ջարբանին՝ առողջապահության, Աբդ Առ-Ռահման Ալ-Հունայտին՝ գյուղատնտեսության, Անվար Իբրահիմը՝ կրթության<sup>230</sup>: Մի քանի օր անց երկրում թույլատրվեց կուսակցությունների գործունեությունը՝ բացառությամբ Կոմունիստական կուսակցության: Մակայն երկրի տարրեր շրջաններում տեղի էին ունենում ցույցեր ու գործադուլներ, որոնց ժամանակ ոստիկանությունը ձերբակալում էր ուսանողներին, քաղաքական գործիչներին և այլն: Զեքրակալվածների մեջ էր նաև Ջարալ Գրուզից Մուրսան Ալ-Աբրաշի որդի Մանսուր Ալ-Աբրաշը: Նրան ազատելու փորձը բախումների առիթ հանդիսացավ տեղացիների և անվտանգության

<sup>228</sup> هاتي التحرير، أيوب الشيشلي، صاحب الانقلاب الثالث في سوريا، ابداءة وانهاية، دمشق، 1994، ص 61.

«Արաբական ազատագրման շարժում» կուսակցությունը կոչ էր անում արաբ ժողովրդին միավորվել: «Քասա» կուսակցության ղեկավար Միշել Աֆլակը համարում էր, որ այս կուսակցությունը տեղծվել էր, որպեսզի Աշ-Շիշալեյին մեծ համբավ ձեռք բերեր:

<sup>229</sup> Ռիֆաթ Խամբանը մեկն է 1903 թ. Կամասկոսում: 1953 թ. նրան շնորհվեց գեներալի աստիճան: *Siwa, المصدر المتعور، العدد الثاني، ص 117.*

<sup>230</sup> Scale P., նշվ. աշխ., էջ 128-129:

ուժերի միջև<sup>231</sup>: 1954 թ. հունվարի 27-ին կառավարությունը 10 հազարանոց զորք ուղարկեց Ջարալ Դրոս: Ջորջերի և բնակչության միջև տեղի ունեցած բախումների արդյունքում հարյուրավոր մարտիկ զոհվեցին: Այդ բախումների ժամանակ մուսլիսկ հրետանի օգտագործվեց: Մուլքան Ալ-Աբրաշը ստիպված մեկնեց Հոյդանան<sup>232</sup>: Փորձելով արդարացնել իր գործողությունները՝ Աղիբ Ալ-Շիշակլին հայտարարեց, որ Ջարալ Դրոսում մեծ քանակությամբ զենք են հայտնաբերել: Ջարալ Դրոսի դեպքերից հետո Ալ-Շիշակլին հրամայեց ձերբակալել որոշ քաղաքական գործիչների, որոնց մեջ էին Ռուշդի Ալ-Կիխյան, Սարրի Ալ-Ասալին, Ալլամ Ալ-Հաուրանին, Միչել Աֆլակը, Սալահ Ադ-Դին Ալ-Բիտարը, Իսհան Ալ-Ջարրին, Հասան Ալ-Աբրաշը և այլք, իսկ Հաշիմ Ալ-Աթասիմ տնային կալանքի ենթարկվեց: Նրանք մեղադրվում էին պետության դեմ դուրս գալու համար: 1954 թ. հունվարի 28-ին Աղիբ Ալ-Շիշակլին իրեն ռազմական մահանգապետ հայտարարեց<sup>233</sup>: Բանակի գլխավոր շտաբի պետ Շաուքար Շուքայթ<sup>234</sup> նշանակվեց ռազմական մահանգապետի տեղակալ<sup>235</sup>:

1954 թ. փետրվարի 25-ին զինված ապստամբություն տեղի ունեցավ Հալեպում: Առաջնության մի խումբ սպաներ՝ Ֆեյսալ Ալ-Աբասիի և Մուստաֆա Համդունի գլխավորությամբ, ձերբակալեցին կայսզորի հրամանատար, քրիզադային զենքային Օմար Թամիր Խանին և բանակային ստորաբաժանումները կարևոր դիրքեր զբաղեցրին<sup>236</sup>: Ջինված ապստամբու-

<sup>231</sup> Toeray G. H., նշվ. աշխ., էջ 233-234:

<sup>232</sup> Landis J., Shishakli and the Druzes: Integration and Intransigence, Wake Forest University Winston-Salem, North Carolina, June 1996, Second Conference on the Syrian Land July 18-22, 1995, p. 33-35.

<sup>233</sup> Пап-Бузарца Э. П., նշվ. աշխ., էջ 65:

<sup>234</sup> Շաուքար Շուքայթը ծնվել է 1912 թ.: Նա լիբանանցի սպա է, ով 1932 թ. սպառնել է Հոմսի Ռազմական ակադեմիան և Սիբիայի անկախացումից հետո Շաուքայթյան է անցել սիրիական քառակուս: *محمد رشوان الأتاسي، المستر المذكور، صفحة 4 و 6*

<sup>235</sup> Рубц Э. В., նշվ. աշխ., էջ 104:

<sup>236</sup> Абу Гассон М. Т., նշվ. աշխ., էջ 30:

բյան կազմակերպման մեջ մեծ դեր խաղացին նաև «Թասա» կուսակցության կողմնակից սպաները՝ Ադնան Ալ-Մալիքիի գլխավորությամբ: Այնուհետև Սիրիայի Ազգային ժողովի պատգամավորները գաղտնի միտա հրավիրեցին և ողոշեցին Ալ-Շիշակլիից հրաժարական պահանջել: Աղիբ Ալ-Շիշակլին մեկնեց Բեյրութ, իսկ մի քանի օր անց՝ Մաուդյան Արաբիա<sup>237</sup>: Գրանով ավարտվեց թվով հինգերորդ հեղաշրջումը Սիրիայում: Ի տարբերություն մախորդների՝ այն առաջադիմական բնույթ էր կրում և հաջողվեց շնորհիվ ժողովրդի, նրա հայրենասիրական ուժերի, զինվորների և առաջադիմ սպայական կազմի միասնության:

1954 թ. փետրվարի 26-ին, 1953 թ. Մահմանադրության 89-րդ հոդվածի համաձայն, Մամուն Ալ-Կուզարին<sup>238</sup> դարձավ Սիրիայի նախագահ, որը տեեց ընդամենը մեկ օր<sup>239</sup>: Նույն օրը երեկոյան Հաշիմ Ալ-Աբասիի տանը՝ Հոմսում, հավաքվեցին 150 քաղաքական գործիչներ՝ քննարկելու երկրի ներքաղաքական վիճակը: Փետրվարի 27-ին Շաուքաբ Շուքայրը համադիպում ունեցավ Հաշիմ Ալ-Աբասիի հետ, իսկ հաջորդ օրը՝ փետրվարի 28-ին, Հաշիմ Ալ-Աբասին պաշտոնապես հռչակվեց Սիրիայի նախագահ<sup>240</sup>:

1954 թ. աշնանն անցկացվեցին Ազգային ժողովի ընտրություններ: Այդ ընտրությունների ժամանակ հաղթեցին Սիրիայի անկախության պահպանման ու ամրապնդման և արևմտյան ռազմական դաշինքին չմիանալու կողմնակից բեկնածուները: Նոր կառավարությունը սկսեց երկրի ինքնիշխանության և հանրապետական կարգի ամրապնդման քաղաքականություն վարել: Մկսեցին ազատ գործել քաղաքական կուսակցությունները, քանվորները ստացան գործադրյուն կազ-

<sup>237</sup> Пир-Бузарова Э. П., *ibid.*, աշխ., էջ 66:

<sup>238</sup> Մամուն Շաֆիկ Ալ-Կուզարին ծնվել է 1914 թ. Նախակոստ: Նա քաղաքագույն կրթությունը ստացել է Բեյրութում և Լիոնում: Իրավաբանական գիտությունների դոկտոր է: Տե՛ս Рубинская О. М., *ibid.*, աշխ., էջ 117:

<sup>239</sup> Абу Габб М. Т., *ibid.*, աշխ., էջ 30:

<sup>240</sup> Рубин Э. В., *ibid.*, աշխ., էջ 106-107:

մակերպելու և իրենց միությունները ստեղծելու իրավունք<sup>241</sup>։ Աշ-Շիշակլիի կառավարության կործանումից հետո, երբ տեղի ունեցան ընտրություններ, ընդհանուր տրամադրված 142 տեղից բաստակահանները ստացան 22 տեղ՝ ավելացնելով իրենց պատգամավորների դիրքերը կառավարությունում։ Տարախորություն էր ստեղծվում, որ ձախակողմյան ազգային կուսիցիան, որի միջուկը համդիսանում էր «Բաաս» կուսակցությունը, կառուցանում էր կառավարել երկիրը։

Ընտրություններում ընտրողներն իրենց ձայները տվեցին այն թեկնածուներին, որոնք խստացել էին անցկացնել անկախ քաղաքականություն և բարենորոգումներ։ Խորհրդարանի պատգամավոր ընտրվեց Միլիայի Կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Խալեդ Բերդալը<sup>242</sup>։ Նա առաջինն էր, որ իբրև կոմունիստ ընտրվեց սիրիական խորհրդարանում՝ որպես պատգամավոր<sup>243</sup>։ Այս ընտրությունները ճանապարհ բացեցին Կոմունիստական կուսակցության համար դեպի խորհրդարան<sup>244</sup>։

«Բաասի» առաջնորդներից մեկը՝ Մալահ Ալ-Դիմ Ալ-Բիտաբը<sup>245</sup>, դարձավ Միլիայի ԱԳ մասնաբար, իսկ Խալեդ Ալ-

<sup>241</sup> Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 484։

<sup>242</sup> صا د ناءف، خا ك بااش و ناءف، بروت، ١٩٩٣، صفاة ٣٥-٣٤

Միլիայի Կոմունիստական կուսակցությունը ստեղծվել է 1924 թ., իսկ կուսակցության առաջին նախագահաց կալասել է 1925 թ. դեկտեմբերին։  
الحزب الشيوعي السوري في حيد الخمسين، انا كرك الخمسون التاسيس الحزب الشيوعي السوري ١٩٢٤  
١٩٧٤-١٩٧٤، انا كرك الخمسون، صفاة ١٠٠١

1930 թ., երբ Խալեդ Բերդալն անդամակցեց կուսակցություն, այդ ժամանակ դեռ Դամասկոսի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ուսանող էր։ 1932 թ. Յա աբդեհ Միլիայի և Լիբանանի Կոմունիստական կուսակցության ղեկավարն էր։ 1937 թ. կուսակցությունը հնարավորություն ունեցավ հրատարակելու իր սեփական «Մաուր Աշ-շաաս» թերթը, զի առաջին համարը հրատարակվեց Բեյրութում՝ 1937 թ. մայիսի 15-ին։

<sup>243</sup> Garayazov M., նշվ. աշխ., էջ 16։

<sup>244</sup> انا ك مرافس، انا ك الخا ك في الحزب الشيوعي السوري، بروت، ١٩٧٧، صفاة ٨٨

<sup>245</sup> Մալահ Ալ-Դիմ Ալ-Բիտաբը ծնվել է 1912 թ. մուսուլմանական ազդեցիկ գաղթիչ ընտանիքում։ Նա ավարտել է Դամասկոսի մանկավարժական ուսումնարանը, ապա սովորել Մոորթոնը։ Միլիա վերադառնալուց

Ազնը, ով Ազգային ժողովում դեմոկրատական քնի 38 պատգամավորի ձայն ուներ, ստանձնեց պաշտպանության նախարարի պաշտոնը:

1955 թ. օգոստոսի 18-ին Միրիայում անցկացվեցին խորհրդարանական ընտրություններ, որի արդյունքում երկրի նախագահ ընտրվեց Շուքրի Ալ-Քուաթլին: Կառավարությունը հոկտեմբերի 20-ին Եգիպտոսի, իսկ 24-ին Մատրյան Արաբիայի հետ ուղղակի պայմանագրեր ստորագրեց<sup>246</sup>: Այդ պայմանագրերի կնքումն անհրաժեշտ էր դարձել, քանի որ արևմտյան պետությունները ճնշում էին գործադրում Միրիայի վրա և պահանջում նրանից միանալ քուրդ-իրաքյան պայմանագրին, որն էլ հետագայում վերածվեց Բաղդադի դաշինքի<sup>247</sup>: Ապստամալով նրա դեմ կիրառել ուղղակի պատժամիջոցներ և այլն: Եգիպտոսը և Մատրյան Արաբիան հայտարարեցին, որ Միրիայի դեմ ագրեսիան նրանք կդիտեն որպես ագրեսիա իրենց դեմ: Միրիան իր հերթին պաշտպանեց Եգիպտոսին՝ 1956 թ. անգլո-ֆրանս-խորալեյան եռյակ ագրեսիայի ժամանակ: Նա դիվանագիտական հարաբերությունները խզեց Անգլիայի և Ֆրանսիայի հետ և իր ամբողջ զինված ուժերն ու հնարավորությունները դրեց Եգիպտոսի տրամադրության տակ:

---

հետո Ալ-Ֆիտարը որպես ֆիզիկայի ուսուցիչ է աշխատել ճույն դպրոցում, որտեղ աշխատում էր նաև Միշել Ալֆրանց:

246. *بدر بوعاقل، الصراع في سورية لتدعيم الإستقلال الوطني، ١٩٦٥-١٩٦٦، دمشق، ١٩٨٧*, صفحة ٩٩-١٠٠.

<sup>247</sup> 1955 թ. փետրվարին Բաղդադում ստորագրվեց իրաքաբորքական ուղղակի պայմանագիրը, որը և դարձավ «Վաղդադի դաշինք» կոչված ուղղակի խմբավորման հիմքը: Նույն թվականին դաշինքին միացան նաև «Պակիստանը, Իրանն ու Մեծ Բրիտանիան: «Կոմունիստական ագրեսիայի պայմաններում» դաշինքը երաշխավորում էր անդամ երկրների ուղղակի օժանդակության տրամադրումը: Միրիային, Լիբանանին և Հորդանանին «Վաղդադի դաշինքի» մեջ մեջբաշխելու Արևմտյան ճնշումներն այդ երկրներում առաջ քերեցին հասարակության թայն շերտերի շրջանում աջաբունական ազդանակներ գզացմունքների սրում: 1958 թ. հուլիսի 14-ին Իրաքում հակաունիտարական հեղափոխության հետևանքով համրապետության կոչակունքից հետո, այդ երկրից դուրս եկավ Վաղդադի դաշինքից: Sh'u Հայաստանի և Լ., Լիբանանը 1958-1975 թվականներին, Երևան, 2007, էջ 79:



Միրիան հայտարարեց ընդհանուր գորահավաք, իսկ Դամասկոսի մոտ իննգ հազար ուսանողներ իրենց պատրաստակամությամբ հայտնեցին՝ միամալ եզիպտական բամակին: Միրիական հայրենասերները պայքեցրին Միրիայի տարածքով անցնող և անզվական մավրային ընկերություններին պատկանող մավրամուղը՝ գրկելով ազրեսորներին ռազմավարական կարևոր հումքից<sup>248</sup>:

1956 թ. նոյեմբերի 23-ին Միրիայում հակակառավարական դավադրություն բացահայտվեց: Մտեղծվեց երկու կոմիտե՝ քաղաքական և ռազմական: Առաջինի մեջ մտնում էին նախկին մախարարներ և քաղաքական այլ գործիչներ, այդ թվում՝ Միրիական Ազգային սոցիալական կուսակցության անդամներ: Երկրորդ կոմիտեի մեջ էին մտնում սիրիական բարձրաստիճան սպաներ, ինչպիսիք էին Դասամ Ջադիդը, Մալահ Աշ-Շիշակլին և այլք: Դավադրության իրականացումը պլանավորվում էր երեք մասով: Նախատեսվում էր Իրաքից զենք տեղափոխել Միրիա, որն իրականացվել էր հոկտեմբերի սկզբին, սակայն անվտանգության աշխատողները մեծ քանակությամբ զենք էին բռնագրավել Ջարալ Դուզում: Դասամ Ջադիդը զինված խմբերով պետք է մտնեք Հոմս, իսկ Մալահ Աշ-Շիշակլին՝ Համա: Միրիական Ազգային սոցիալական կուսակցության անդամները զինվորական հագուստներով պետք է մտնեին Դամասկոս և գրավեին ոստիկանության շենքն ու թաղիոկայանը: Դավադրության կազմակերպիչները նախատեսել էին սպանել Խալեդ Բերդաշին, Սկրամ Ալ-Հատրանին և այլ հայտնի քաղաքական գործիչներին<sup>249</sup>:

1956 թ. վերջերին և 1957 թ. սկզբներին ուժեղացավ արևմտյան տերությունների, մասնավորապես ԱՄՆ-ի և ցրա հրահանգով գործող Թուրքիայի ճնշումը Միրիայի վրա, որը բացահայտ սպառնալիքի բնույթ էր կրում: Նրանց դուր չէր գալիս Միրիայի անկախ քաղաքական ուղղությունը և հորինը-

<sup>248</sup> Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 484-485:

<sup>249</sup> Юсeф Джармал Саадун, Социально-политическое развитие Сирии в 1954-1963 гг., Диссертация, Университет Дружбы Народов имени Патриса Лумумбы, Москва, 1984, с. 73-74.

դային Միության ու սոցիալիստական մյուս երկրների հետ համագործակցության զարգացումն ու բնօրգայնումը:

1957 թ. հունվարի 5-ին ԱՄՆ-ի նախագահ Էյզենհաուերը համդիս ելքավ ուղերծով, որտեղ շարադրված էին Մերծավոր Արևելքում ԱՄՆ-ի քաղաքական հիմնական նպատակները: Մարտի 5-ին և 7-ին ԱՄՆ-ի կոնգրեսը վերոնշյալ ուղերծի հիման վրա ընդունեց մի քանաձև, որը մարտի 9-ին ստորագրեց նախագահը: Բանաձևը, որ կոչվում էր «Միջին Արևելքի դրության մասին», հայտնի է «Էյզենհաուերի դոկտրինա» անվամբ: Կոնգրեսի քանաձևը նախագահին իրավումը էր տալիս ԱՄՆ-ի ռազմական ուժերն օգտագործել այս կամ այն երկրի «անկախությունն ու տարածքային անքողջակամությունն ապահովելու» համար<sup>250</sup>:

ԱՄՆ-ն Միջերկրական ծովի՝ սիրիական ափերի մոտ ուղարկեց իր վեցերորդ նավատորմը<sup>251</sup>: Մտամբուլում խորհրդրակցություն անցկացվեց Թուրքիայի, Իրանի և Հորդանանի հետ՝ Միդիայի դեմ ռազմական ներխուժում կազմակերպելու համար: Այդ նպատակով արագացվեց ռազմական տեխնիկայի մատակարարումը Թուրքիային, իսկ վերջինս իր զորքերը կենտրոնացրեց սիրիա-թուրքական սահմանի վրա: Դնշումն ուժեղացնելու նպատակով Իսրայելն իր հերթին սկսեց ռազմական քախումներ հրահրել սիրիաիսրայելական սահմանի վրա: Արաբական երկրներում հուժկու շարժում սկսվեց հօգուտ Միդիայի պաշտպանության<sup>252</sup>:

1957 թ. Միդիա վերադարձավ նախկին դիկտատոր Ալիք Ալ-Շիշակիին<sup>253</sup> և Հոսումն սիրիական դեսպանության ռազմական կցորդ Իբրահիմ Հոսսեյնը՝ ռազմական հեղաշրջում կատարելու նտադրությամբ: Նրանք քազմարիվ հանդիպումներ ունեցան Միդիայի քանակի սպաների հետ և առաջարկեցին

<sup>250</sup> Հարությունյան Լ., նշվ. աշխ., էջ 78-79:

<sup>251</sup> Арытсма Р., Доктpин лер ссавоссасой Сирис, Труд, спорсак, 17 апрелс 1956 г., п. 90 (10737):

<sup>252</sup> Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 488:

<sup>253</sup> Ալիք Ալ-Շիշակիին սպանվեց Բրազիլիայի Սերես քաղաքում՝ 1964 թ. սեպտեմբերի 27-ին: *Sh'ar*, 144 مصلحة المصور، هاني الخيري، المعاصر المصور، صفحة 17

մասնակցել ռազմական հեղաշրջմանը: Մի խումբ զինված սպաներ Միրիական Ազգային սոցիալական կոտակցության անդամների հետ միասին պետք է մտնեին Դամասկոս, Հոմս և այլ քաղաքներ, այնուհետև նրանք պետք է սպանեին Ալիք Ալ-Բիզրիին, Ալլամ Ալ-Հաուրանիին և հայտարարեին, որ Միրիական «կոմունիստական վտանգի» տակ է: Այդ ժամանակ ԱՄՆ-ն կգործեր «էլզեմիստների դիկտիրմայի» համաձայն<sup>254</sup>: 1957 թ. օգոստոսի 16-ին Միրիայի ԱԳ նախարար Սալահ Ալ-Բիտարը իր մոտ հրավիրեց ԱՄՆ-ի գործերի հավատարմատարին և հայտարարեց, որ սիրիական կառավարությունը պահանջում է ԱՄՆ-ի դեսպանության դիվանագետներ Ռոբերտ Մալոյին, Հովարդ Սթոմին և Ֆրանսիս Ջեստոնին հեռանալ Միրիայից<sup>255</sup>:

1957 թ. սեպտեմբերի 10-ին սովետական կառավարությունը պաշտոնապես հայտարարեց, որ երե թուրքիան ռազմական գործողություններ սկսի Միրիայի դեմ, ապա դա կարող է հասցնել շատ լուրջ հետևանքների, այդ թվում և հենց իր՝ թուրքիայի համար: Մեպտեմբերի 21-ին Լաքաբիա ժամանեցին սովետական ռազմաճակատը<sup>256</sup>: Մեպտեմբերի 11-ին Կալիբում հանդիպեցին սիրիական և եգիպտական բանակների զվեսավոր շտաբի պետերը և հայտարարվեց, որ, համաձայն սիրիա-եգիպտական ռազմական պայմանագրի, եգիպտական զորք կողարկվի Միրիա: Արդեն հոկտեմբերի 14-ին եգիպտական զորքերը և ռազմական մասերը ժամանեցին Լաքաբիա<sup>257</sup>: Իսկ հոկտեմբերի վերջին սիրիա-թուրքական սահմանին բուրբական զորքերի համակենտրոնացման հարցը քննարկվեց ԱԱԿ-ում<sup>258</sup>:

<sup>254</sup> Ксееф Джамал Сааду, 624, 625, 62 80-81:

<sup>255</sup> Gani Jassine K., Understanding and Explaining US-Syrian Relations: Conflict and Cooperation, and the Role of Ideology, Ph.D., London School of Economics and Political Science, London, November 2011, p. 122.

<sup>256</sup> Рысь Э. В., 624, 625, 62 194-195:

<sup>257</sup> Ксееф Джамал Сааду, 624, 625, 62 84:

<sup>258</sup> Рысь Э. В., 624, 625, 62 196:

Ամերիկյան կառավարության հրահրումով զորքեր կենտրոնացնելով սիրիա-բուրբակյան սահմանի վրա՝ Թուրքիան փորձեց վերհիշել օսմանյան շրջանի իր հավակնությունները Միրիայի և, առհասարակ, Լևանտի մկառնամբ:

1957 թ. հուլիս-օգոստոսին Միրիայի պաշտպանության նախարար Խալեդ Ալ-Ազմի գլխավորությամբ Մոսկվա այցելեց սիրիական պատմիչապետունը և երկու երկրների միջև ռազմական պայմանագիր կնքվեց<sup>299</sup>, իսկ 1957 թ. հոկտեմբերի 28-ին Դամասկոսում կնքվեց համաձայնագիր՝ Խորհրդային Միության և Միրիայի միջև տնտեսական ու տեխնիկական համագործակցության մասին<sup>299</sup>: 1957 թ. կնքված պայմանագրով՝ ԽՍՀՄ-ը պարտավորվեց Միրիային տնտեսական և տեխնիկական օգնություն ցուցաբերել<sup>301</sup>:

Միրիայի քանակի կյանքում նոր շրջան է սկսվում 1956 թ. սոցիալիստական երկրների հետ քարեկամական հարաբերություններ հաստատելուց հետո: Բանակը ստացավ նորագույն զենք և տեխնիկա: Խորհրդային Միությունը Միրիային տրամադրեց S-34 տեսակի տանկեր, ինքնազնաց հրամորներ ՄՈւ-100, ԲՏՈ-152, 37 միլիմետր տրամաչափի զենիքա հրետանային քնդամորներ և 122 միլիմետր տրամաչափի համրից-

<sup>299</sup> Ramet P., *The Soviet-Syrian Relationship since 1955*, Westview Press, Boulder, San Francisco & Oxford, 1990, p.18 Միրիան ռազմական պայմանագրեր կնքեց նաև՝ 1955 թ. հուլիսի 7-ին Չեխոսլովակիայի, 1957 թ. մարտի 19-ին Բուլղարիայի (Խոսայիս), 1967 թ. սեպտեմբերի 30-ին Բուլղարիայի, 1967 թ. դեկտեմբերի 20-ին Հունգարիայի, 1968 թ. մարտի 26-ին Հարավսլավիայի, 1970 թ. փետրվարի 10-ին Կոբսայի, 1980 թ. մայիսի 7-ին Գերմանիայի և 1981 թ. սեպտեմբերի 29-ին Չինաստանի հետ, տն/ս

مصطفى طلاس، الجدل الثاني، المصدر المذكور، صفحة ١٢٥

<sup>300</sup> Մարզգյան Հ. Մ., Մովսես-սիրիական տնտեսական ու տեխնիկական համագործակցությունը (1955-1970 թթ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և Ժողովուրդներ, հատոր 6-րդ, Սրբան, 1974, էջ 88:

<sup>301</sup> Махлаков Вадим, Сирия и Советский Союз, Проблемы политического взаимодействия (20-е-начало 90-х гг.), РАН ИВ, Диссертация, Москва, 1998, с. 84-85.

ներ<sup>262</sup>; Կատանայի ռազմական ստորաբաժանումներում սկսեցին ձևավորվել երկու տանկային բրիգադներ<sup>263</sup>:

1957 թ. փետրվարի վերջերին Միրիայի բանակի սպայական կազմում լարված իրավիճակ էր ստեղծվել՝ գլխավոր շտաբի պետ Թաուֆիկ Նիզամ Ալ-Գինի պատճառով: Նա մի շարք առաջադեմ սպաների Միրիայից աշխատելու էր տեղափոխում այլ երկրներ: Օրինակ, գլխավոր շտաբի երկրորդ վարչության պետ Աբդ Ալ-Համիդ Աս-Մառաբը, ով «Ճառաս» կուսակցության կողմնակիցներից էր, Կահիրեում ռազմական կցորդ նշանակվեց, սակայն նա չհամաձայնեց: Մի շարք սպաներ պահանջեցին գեներալ Թաուֆիկ Նիզամ Ալ-Գինի հրաժարականը: Երբեմն սպայական վերնախավում այնպիսի պայքար էր ընթանում, որ նույնիսկ չէր բացառվում որոշ զորքերի իրար դեմ դուրս գալը<sup>264</sup>:

1957 թ. նոյեմբերի 18-ին Միրիայի բանակի սպայական վերնախավը՝ գլխավոր շտաբի պետ Աֆիֆ Ալ-Թիզրիի գլխավորությամբ, քաղաքական և կրոնական գործիչներն ու եգիպտական 40 պատգամավորներից՝ Անվար Աս-Մադարի գլխավորությամբ, ովքեր պաշտոնական այցով գտնվում էին Միրիայում, բննադրվեցին Միրիայի և Եգիպտոսի միավորման հարցը<sup>265</sup>:

Անկախության ձեռքբերումից հետո Միրիան ապրեց բավականին բարդ ու դժվար մի շրջան: Միրիայի ռազմաքաղաքական և սոցիալ տնտեսական բուռն զործընթացներից խոր հետք բողեցին երկրի հետագա զարգացման ողջ ընթացքի վրա:

Միրիական բանակի առաջին փորձությունը եղավ 1948 թ. արաբ-իսրայելական պատերազմը, որին՝ ի թիվս արաբական մի շարք երկրների, մասնակցեց նաև Միրիան: Այդ պատերազմում արաբների կրած պարտությունն առաջին ծանր փորձու-

<sup>262</sup> Алияв иви Исмаке Махлуф, *ճշմ. աշխ.*, էջ 23:

<sup>263</sup> Мезьянов А. С., Эволюция военно-технического сотрудничества государств Ближнего Востока во второй половине 20 в., Диссертация, Москва, 2010, с. 43.

<sup>264</sup> Рысь Э. В., *ճշմ. աշխ.*, էջ 183:

<sup>265</sup> Նույն տեղում, էջ 196-197:

յունն էր Միրիայի բանակի համար և ածաջին հարվածը սիրիական ժողովրդի ազգային ու պետական նպատուրթանը: Այդ պարտությունը խիստ բացասական հետևանքներ ունեցավ Միրիայի ներքաղաքական վիճակի վրա՝ առաջ քերելով լուրջ քաղաքական ճգնաժամ: Հենց այդ ժամանակաշրջանից սկսած՝ ուժեղանում է բանակի դերը Միրիայի քաղաքական կյանքում: Սպայական վերնախավը դարձավ պետական համակարգի անբաժան մասը և աստիճանաբար վերածվեց Միրիայի քաղաքական կյանքի լուրջ գործոնի: Հաճախակի տեղի ունեցող ռազմական հեղաշրջումների պատճառով՝ Միրիայում ներքաղաքական անկայուն, սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակ ստեղծվեց: Իսկ համրահայտ իրողություն է, որ զանկացած երկրում զինվորական իշխանության հաստատումն իր հետ բերում է դիկտատուրա և քոմապետություն՝ երկիրը շեղելով քնակամոն ժողովրդավարական զարգացման շավիղից: Նման պայմաններում հենց ինքը՝ բանակը, դառնում է ներքին և արտաքին ազդեցիկ ուժերի ձեռքին մի խաղալիք, քաղաքական մեծ խաղերի գործուն մասնակից: Այդ հեղաշրջումները խոչընդոտեցին Միրիայի պետական կառավարման համակարգի քնակամոն զարգացմանը: Հետանկախության այս փուլը մշանավորվեց ներքաղաքական անկայուն և հակասական զարգացումներով, ներքին և արտաքին մարտահրավերներով, հասարակական-քաղաքական արժատական փոփոխություններով, որի մեջ անառարկելիորեն կենտրոնական դերն ու տեղն ունեցավ բանակը:

**ԲԱՆԱԿԻ ԴԵՐԸ ՄԻՐՈՒՅՈՒՄ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԵՏ  
ՄՈՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ  
(1958-1961 թթ.)**

**2.1. Նոր վերադասավորումներ սիրիական բանակում  
Արաբական Միացյալ Համրապետության  
կազմավորման ընթացքում**

1958 թ. հունվարի սկզբին սպայական վերնախավի մասնաձևնությանը՝ հատուկ խորհրդակցություն տեղի ունեցավ, որտեղ քանակային 22 ստորաբաժանման մերկայացուցիչները քննարկեցին Միդլասթի և Եգիպտոսի միավորման հարցը<sup>266</sup>։ Այդ ժամանակ Միդլասթի գլխավոր շտաբում կային զինվորական միջնակի խմբավորումներ՝ բասասական սպաներից, որոնց առաջնորդներից էին Մուստաֆա Համդունը<sup>267</sup> և Արդ Ալ-Գանի Խանուրը<sup>268</sup>։ ազգային անվտանգության պնտ Արդ Ալ-Համիդ Ասուադի աջակցությամբ, «սնկլախ» սպաներից, որոնց շարքում էին Ամին Նաֆուրին և Ահմադ Արդ Ալ-Քարիմը<sup>269</sup>, ովքեր լավ հարաբերությունների մեջ էին Խալեդ Ալ-Ազմի հետ և «հետադիմական» սպաները<sup>270</sup>։

1958 թ. հունվարի 12-ի առավոտյան սիրիական բանակի գլխավոր շտաբի պետի տեղակալ Ամին Նաֆուրին հանդիպեց պաշտպանության մասնաբար Խալեդ Ալ-Ազմի հետ և առաջ,

<sup>266</sup> Пир-Булагова Э. П., Активистамилистическая и демократическая борьба саравского народа в 1949-1958 гг., Академия Наук СССР, Институт Народов Азии, Диссертация, Москва, 1967, с. 309.

<sup>267</sup> Մուստաֆա Համդունը ծնվել է 1923 թ. Համայում։ Նա քրդական ծագում ունի։ Համդունը սովորել է Հոնտի Ռազմական ակադեմիայում և պատկանում է սիրիական սպայական կազմի շրրորդ դասին։

<sup>268</sup> Արդ Ալ-Գանի Խանուրը ծնվել է Համայում։ 1948 թ. նա քնցումվել է Հոնտի Ռազմական ակադեմիա։ Տե՛ս Van Dusen M., նշվ. աշխ., էջ 396։

<sup>269</sup> Ահմադ Արդ Ալ-Քարիմը ծնվել է 1926 թ. Հադթանում և մուսուլման պատկանում է սիրիական սպայական կազմի շրրորդ դասին։

<sup>270</sup> Калтар Мохамед Амин, նշվ. աշխ., էջ 82-83։

որ սպայական վերնախավը քննարկել է Միրիայի և Եգիպտոսի միավորման հարցը և որոշել է, որ այն պետք է լինի ամբողջական միավորում<sup>271</sup>:

1958 թ. հունվարի 12-ի երեկոյան, քանակի բարձրաստիճան սպաների խոսքը, որը քաղկացած էր 14 հոգուց, մեկնեց Կահիրե՝ Եգիպտոսի հետ միավորման համար բանակցություններ վարելու<sup>272</sup>: Եգիպտոս մեկնող սպաներն էին՝ Մուստաֆա Համդունը, Ահմադ Արդ Ալ-Քարիմը, Ահմադ Ալ-Հիմայոխին, Թուսնեհ Ալ-Մուդարալանը, Հուսեյն Հիդեյը, Արդ Ալ-Նասի Խամուրը, Մոհամմադ Ան-Նիսրը, Յասին Ֆարջանին, Աբդուլահ Ջասուսան, Ջադո Իզզ Ադ-Դինը, Մուստաֆա Ռամ Հանդասին, Ալբամ Ադ-Դեյրիսն և Ջամալ Աս-Սուֆին<sup>273</sup>: Այդ պատվիրակությունը գլխավորում էր Միրիայի քանակի գլխավոր շտաբի պետ Աֆիֆ Ալ-Բիզրին<sup>274</sup>: Որոշ քննարկումներից հետո հարկ եղավ կառավարության կողմից լիազորված պաշտոնական անձնի ներկայությունը, որովհետև այդ պատվիրակությունն ամբողջությամբ քաղկացած էր զինվորականներից<sup>275</sup>: Քիչ անց «Քուսաս» կուսակցության այ քեյ ներկայացուցիչ Մալահ Ադ-Դին Ալ-Բիտարը նույնպես միացավ Կահիրեում գտնվող զինվորական պատվիրակությանը և մասնակցեց բանակցություններին<sup>276</sup>: Զինվորական պատվիրակությունը և Մալահ Ադ-Դին Ալ-Բիտարը փորձում էին համոզել նախագահ Աբդել Նասերին, որ Միրիան գտնվում է «կոմունիստական վտանգի» տակ և

<sup>271</sup> Юсиф Джамал Сулейм, *ibid.*, աշխ., էջ 106:

<sup>272</sup> *ibid.*, المصدر المذكور، صفحة ٢٣٧.

<sup>273</sup> سليمان العنلي، هذان مقالتي، المصدر المذكور، صفحة ٩٤.

<sup>274</sup> مازن علي، سورية والعلاقات السورية المصرية من الانقلاب العسكري الثالث عام ١٩٥١ حتى قيام الحركة التصحيحية عام ١٩٧٠، بحث، جامعة دمشق، كلية الآداب والعلوم الإنسانية، قسم التاريخ، ٢٠٠٧-٢٠٠٨، صفحة ٢٠٤.

<sup>275</sup> Пар-Булагова Э. П., *ibid.*, աշխ., էջ 309:

<sup>276</sup> Кочарян Гаянэ Т. О., Партия Аравянского Социалистического Возрождения в борьбе за национальную независимость Сирии (1943-1958 гг.), Диссертация, Академия Наук Азербайджанской ССР, Институт Народов Ближнего и Среднего Востока, Баку, 1983, с. 126.



ստեղծված իրավիճակից դուրս գալու համար միակ ելքը եզիպտոսի հետ շտապ և ամբողջական միասնությունն է<sup>277</sup>: Բանակցությունների ընթացքում Գամալ Արդել Նասերը նշեց, որ միավորման պայմաններից մեկն այն է, որ դադարեցվեն կուսակցությունների գործունեությունները, և բանակը չմիջամտի երկրի քաղաքական կյանքին<sup>278</sup>: «Բաաս» կուսակցությունը համաձայնեց թողր պայմաններին<sup>279</sup>: Այս կապակցությամբ «Բաաս» կուսակցության առաջնորդ Միշել Աֆլակը նշել է, որ նրանք նույն ունեին, որ կուսակցությունն իր մեծ ներդրումը կունենար ազգային նոր կառավարման մեջ, որը նրանք ցամաքանում էին ստեղծել<sup>280</sup>:

Այնպիսի Ալ-Ռիզրին առաջարկեց դաշնային հիմունքների վրա կառուարել միավորումը, սակայն զինվորական պատվիրակության մեծամասնությունը, որոնք Աս-Սաուսի և Ալ-Ռիտարի համախոհներն էին, վճռականորեն ամբողջական միավորում պահանջեցին<sup>281</sup>: Չնայած միավորումն արտաբնական ժողովրդավարական էր, սակայն իրականում այն հաջողությամբ պսակվեց բանակի միջնորդության կամ, այսպես կոչված, «կիսաազգային հեղաշրջման» արդյունքում:

1958 թ. հունվարի 31-ին Կահիրե ժամանեց Սիրիայի կառավարական պատվիրակությունը՝ նախագահ Շուրի Ալ-Քուարիի գլխավորությամբ: Սիրիական պատվիրակությունը Ալ-Քուարա պալատում հանդիպեց եզիպտական կառավարու-

<sup>277</sup> *Пир-Булагова Э. П.*, *Взл. узла.*, էջ 310:

<sup>278</sup> *Рашицкий В. П.*, *Партия Арабского Социалистического Возрождения и национально-освободительное движение в Сирии (1940-1958 гг.)*, *Университет Дружбы Народов имени Патриса Лумумбы, Диссертация, М.*, 1983, с. 178.

<sup>279</sup> «Բաաս» կուսակցության ղեկավարությունը կարծում էր, որ Գամալ Արդել Նասերի դրած պայմանները ձևական թույլ կերպ և կուսակցությանը կշարունակի իր գործունեությունն ու կնախկնացնի իր ծրագրերը:

<sup>280</sup> *Shu' Abu Jaber Kamel S.*, *The Arab Ba'ath Socialist Party, History, Ideology, and Organization*, Syracuse University Press, New York, USA, 1966, p. 47-48:

<sup>281</sup> *إبراهيم محمد محمد إبراهيم، مقدمات الوحدة المصرية السورية 1958-1963، مطابع الهيئة المصرية العامة للكتاب، 1997، ص 227-228.*

յամ պատվիրակության հետ, որը գլխավորում էր Գամալ Արզել Նասիրը և քննարկեց վերջնական միջոցառումները՝ կատարած Միրիայի և Եգիպտոսի կազմով միացյալ համրապետություն ստեղծելու հետ<sup>282</sup>։ Բանակցությունների ավարտից հետո պաշտոնապես հրապարակվեց Արաբական Միացյալ Հանրապետության կազմավորման մասին<sup>283</sup>։ Հայտարարությունում ասվում էր, որ կողմերը նզրակացության եկան այն մասին, որ միասնությունը, որը արաբական ազգայնականության արգասիքն է, իրենից ներկայացնում է ինքնիշխանության և ազատության, խաղաղության ու համագործակցության ճանապարհ, և այդ պատճառով նրանք պետք է վճռակետությամբ, առանց տատանման, այդ միասնությունը ցանկությունների ոլորտից տեղափոխեն իրականություն։ Նրանք այդ նզրակացության եկան այն համոզմամբ, որ շատ պատճառներ կան երկու համրապետությունների միջև հաջող միություն կազմելու համար հատկապես այն քանից հետո, երբ վերջին ժամանակներում նրանց համատեղ պայքարն էլ ավելի մոտեցրեց իրենց<sup>284</sup>։

Նխառի մասնակիցները հայտարարեցին Եգիպտոսը և Միրիան մեկ համրապետությունում միավորելու անհրաժեշտության մասին<sup>285</sup>։ Հայտարարությունում ասվում էր, որ կողմերը միահամուռ համաձայնեցին ընդունել արաբական հանրապետության համար ժողովրդավարական կառավարման ձևը՝ մախսազանի գլխավորությամբ<sup>286</sup>։ Վերջինիս պետք է օգնեն նրա կողմից նշանակված մախարարները և պատաս-

<sup>282</sup> Каджая О. III., Окрашивание Огьдливской Аравской Республканкн в некоторме черты ее полнкнкк (1958-1960 гг.), Академкн Огьдствоннкх Наук при ЦК КПСС, Двссертоннк, Москва, 1961, с. 91-92.

<sup>283</sup> ميشال حطّاق، في سبيل البعث، الكتلبات السباسبية الكاملة، الجزء الثاني، صفة ٢٢٦، لندن والمبعل، المصدر المذكور، صفة ١٩١.

<sup>284</sup> بومبعل وولكلق الوءءة المصربة-السوربة ١٩٥٨-١٩٦١، المءءة الأولى، ١ شباط-٣٠ نيسان ١٩٥٨، بوروب، ١٩٥٧، صفة ١٠١.

<sup>285</sup> ١٩٥٨، ١ شباط، مصر، ١٧٥١.

<sup>286</sup> Каджая О. III., նշվ աղխս., էջ 94:

խամառվություն կրեն նախագահի առջև: Իսկ օրենսդիր իշխանությունը հանձնվելու էր միասնական Ազգային ժողովին: Նոր համրապետությունն ունենալու էր մեկ դաշ, մեկ քանակ և մեկ ժողովուրդ<sup>287</sup>:

Հետագա 30 օրերի ընթացքում անցկացվելու էր հանրաքվե՝ միասնության և պետության ղեկավարի ընտրության համար<sup>288</sup>:

1958 թ. փետրվարի 1-ին էլույթ ունենալով Եգիպտոսի հանրապետության նախագահի նստավայրի պատշգամբից՝ Միքիայի նախագահ Շուրբի Ալ-Քուարլին ասաց. «Քաղաքացի արաբներ, մենք պատմական օր ենք ապրում: Մա մեծ օր է արաբական ազգի պատմության մեջ: Մա հաղթական պայքարի և հույսերի իրականացման արդյունք է: Այս օրը մեր պայքարի արգասիքն է, որն իրականացնում է մեր ոգեշնչված վճռականությամբ, արդարությամբ և ազնվությամբ: Խորապես համոզված են, որ մեր ազգային միասնությունը կորիզ է, որ պետք է աճի, և որ սա մի քայլ է, որին հետևելու են այլ քայլեր<sup>289</sup>»:

1958 թ. փետրվարի 5-ին ԱՄՀ-ի կազմակերպման կապակցությամբ՝ Գամալիսում կայացրին և ժողովրդի առջև տեղի ունեցավ մեծ շքերթ: Շքերթից հետո տեղի ունեցավ Միքիայի Ազգային ժողովի նիստ, որտեղ նախագահ Շուրբի Ալ-Քուարլին էլույթ ունեցավ և ասաց քաշեց Գամալ Արդև Նասիրի քեկ-նաժությունը՝ նոր հանրապետության նախագահի պաշտոնում: Ազգային ժողովի նիստում հավանություն տրվեց ԱՄՀ-ի ստեղծման և նախագահի պաշտոնում առաջադրված քեկնաժուի օգտին<sup>290</sup>:

<sup>287</sup> Hitti P. K., Syria, A Short History, London, 1959, p. 258.

<sup>288</sup> عبد القادر حاتم، الجمهورية العربية المتحدة، القاهرة، ١٩٥٨، صفحة ٩٠.

<sup>289</sup> الأيام، سورية، ٦ شباط، ١٩٥٨.

<sup>290</sup> يوميات ووثائق الوحدة المصرية-السورية ١٩٥٨-١٩٦١، المصدر المذكور، صفحة ١١٨-١١٩.

1958 թ. փետրվարի 13-ին եգիպտական «Ալ-սիրամ» թերթը գրեց, որ սիրիական ղեկավարությունը միջոցառումներ է ձեռնարկում սիրիա-եգիպտական միասնության հակառակորդների դեմ<sup>291</sup>: Նույն օրը Դամասկոսում հայտարարվեց գաղտնի գործակալների ձերբակալման մասին: Միրիական մամուլի հաղորդմամբ՝ այդ լրտեսները մախառեսել էին զինված գործողություններ կատարել Միրիայի տարրեր շրջաններում, որպեսզի խափանեն փետրվարի 21-ի հանրարվելը: Ռազմական այդ գործողությունները պետք է ինքը հանդիսանային Հորդանանի և Թուրքիայի համար, որպեսզի նրանք միջամտեն Միրիայի քաղաքականությանը: Այդ ծրագիրն իրականացնելու համար ԱՄՆ-ն տրամադրել էր մեկ միլիոն դոլար և համաձայնել էր ամհրաժեշտ քանակությամբ զենք տրամադրել<sup>292</sup>:

1958 թ. փետրվարի 13-ին Միրիայի երկու հարևան պետությունները՝ Իրաքը և Հորդանանը, հայտարարեցին իրաք-հորդանանյան միավորման մասին: Այս կապակցությամբ սիրիական «ԱՅ-Մուր» թերթը գրում էր, որ Իրաքի և Հորդանանի միասնությունը կատարվում էր ոչ թե այդ երկրների ժողովուրդների, այլ այդ պետությունների ղեկավարների կամքով<sup>293</sup>:

1958 թ. փետրվարի 21-ին Միրիայի և Եգիպտոսի միավորման համար հանրարվել անցկացվեց և Գամալ Արդել Նասերն ընտրվեց ԱՄՀ-ի նախագահ<sup>294</sup>: Փետրվարի 24-ին Դամասկոս

<sup>291</sup> ۱۹۵۸، شهاب، ۱۳، ص ۱۱

<sup>292</sup> ۱۹۵۸، شهاب، ۱۵، ص ۱۱

<sup>293</sup> ۱۹۵۸، شهاب، ۱۸، ص ۱۱

<sup>294</sup> Փետրվարի 22-ին Նորիդային Միությունը ճանաչեց ԱՄՀ-ն, իսկ փետրվարի 25-ին այն արդեն ճանաչել էին 33 պետություններ, այդ թվում՝ ԱՄՆ-ն, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Թուրքիան: Միրիայի ԱԳ նախկին նախարար Մաքթի Ալ-Մաալին անգլիացի հաշտի նեսագուտուզ Պատրիկ Միլի հետ հարցազրույցի ժամանակ ասել է, որ մի անգլիացի դիվանագետ իրեն ասել է, թե արաբական միասնությունը նման է գնացքի և նրանք չեն վերածում նրել կամ կամզներին այդ գնացքն, բայց կազող են քելել նրա վրա, երբ նկատեն, որ գնացքն արագացրել է իր ընթացքը: Sb's

صبري الصلي للملك، دمشق، ۹ تشرين الثاني، ۱۹۶۰، النظر بارتياك سيل، صفحة ۱۱۶

ժամանեց Գամալ Արդել Նասերը<sup>295</sup>։ Ելույթ ունենալով ժողովրդի աջակցության հայտարարեց, որ ԱՄՆ-ի ստեղծումը սիրիացիներին և եգիպտացիներին պատմական հարթանակն է։ Արդել Նասերը մշեց մաս, որ եղբայրական համագործակցությունը կօգնի իրականացնել նրանց աջակցությամբ ծառայած տնտեսության զարգացման խնդիրները քաղաքական անկախության ամրապնդման գործում<sup>296</sup>։ Նա իր այցն օգտագործեց սիրիական քաղաքական գործիչների հետ համընդհանուր և բանակցությունների իրականացման, ԱՄՆ-ի կենտրոնական կառավարության ձևավորման համար<sup>297</sup>։

Սիրիայում Արդել Նասերի գտնվելու ժամանակ քաղաքացիական պայքարի ժամանակահատվածում հակապետական դավադրություն՝ կազմակերպված Մատույան Արաբիայի կողմից։ Մարտի 5-ին Գամալ Արդել Նասերը հայտարարեց, որ Մատույ քաղաքից կապվել է Սիրիայի գլխավոր շտաբի երկրորդ բաժնի պետ Արդ Ալ-Համիդ Աս-Մատույի հետ և առաջարկել 7 միլիոն ֆունտ ստերլինգ՝ սիրիա-եգիպտական միասնությունը խախտելու համար։ Աս-Մատույն այդ մասին հայտնել էր Արդել Նասերին և նրանց համաձայնել էին այդ գործարքին<sup>298</sup>։ Այդ գումարը փոխանցվեց Գամալու և որոշում ընդունվեց՝ այն օգտագործել Սիրիայի տնտեսության զարգացման համար<sup>299</sup>։ Տարիներ անց, երբ Գամալ Արդել Նասերը պաշտոնական այցով գտնվում էր Մատույ

---

հռանդ Ալ-Ազմը, իտակով ԱՄՆ-ի կազմավորման մեջ ԱՄՆ-ի ունեցած դերը մասին, գրում է. «Մենք չենք կարող քաղաքացիական ասել, որ աներկիցացիները կրտսերիցին Գամալ Արդել Նասերին դուրի միասնություն, որովհետև մենք չգիտենք ին ինչ էր կատարվում նրանց միջև։ Մակայն Կաշիմգ-մենը պաշտոնական և ոչ պաշտոնական շրջանները ողջունեցին այդ տնտեսական պաշտոնական և ոչ պաշտոնական շրջանները ողջունեցին այդ միավորումը»։ *مذكرات عبد الحكيم، المجلد الثالث، بيروت، ١٩٧٣، صفحة 5٦/٥*

...١١٠

<sup>295</sup> *مذكرات عبد الحكيم، المصدر المذكور، صفحة ١٧٥*

<sup>296</sup> *الأيام، ٢٦ شباط، ١٩٥٨*

<sup>297</sup> *الأيام، ٢٨ شباط، ١٩٥٨*

<sup>298</sup> *Rathmell A., արվ. աշխ., էջ 148:*

<sup>299</sup> *الجمهورية، مصر، ٦ آذار، ١٩٥٨*

յամ Արարիայում, մեղադրելով Սատղ քազավորին, թե ինչպես մա կարող էր 7 միլիոն վճարել, վերջինս պատասխանում է, որ իրականում վճարվել է ոչ թե 7, այլ 12 միլիոն<sup>300</sup>:

1958 թ. մարտի 5-ին Դամասկոսում հայտարարվեց ԱՄՆ-ի ժամանակավոր Սահմանադրությունը՝ կազմված 73 հոդվածից, որով ԱՄՆ-ն քաժանվում էր երկու շրջանի՝ Սիրիայի և Եգիպտոսի: ԱՄՆ-ի մայրաքաղաքը դարձավ Կահիրեն<sup>301</sup>:

1958 թ. մարտի 6-ին կազմվեց ԱՄՆ-ի առաջին կառավարությունը: Ստեղծվեցին գործադիր խորհուրդներ յուրաքանչյուր շրջանի համար, սակայն օրենսդիր և գործադիր իշխանությունը կենտրոնացվեց ԱՄՆ-ի նախագահի ձեռքում, որն ուներ մի քանի փոխնախագահներ՝ Արդ Ալ-Հաքիմ Ամիրը, Արդ Ալ-Լաուիֆ Բադրադին, Ակրան Ալ-Հաուրանին և Մաքրի Ալ-Ասալին<sup>302</sup>: ԱԳ նախարար նշանակվեց Մահմուդ Ֆաուզին, իսկ ՆԳ նախարար՝ Արդ Ալ-Համիդ Աս-Սաադը: Նախարարի պաշտոններ զբաղեցրեցին նաև Ամին Նաֆուրին, Մուստաֆա Համդունը, Սալահ Ալ-Բիտարը, Հասան Ջարարան և Միմադ Արդ Ալ-Քարիմը<sup>303</sup>:

1958 թ. ապրիլի 8-ին ԱՄՆ-ի նախագահի սիրիական շրջանի խորհրդական նշանակվեց 1955-1958 թթ. Սիրիայում Եգիպտոսի դեսպան զեներալ Մահմուդ Ռիյադը:

Ինչպես տեսնում ենք, սիրիական շրջանում նախարարի պաշտոններ զբաղեցրեցին բանակի չորս քարճրատիճան սպաներ՝ Աս-Սաադը, Նաֆուրին, Համդունը, Արդ Ալ-Քարիմը: Դա պայմանավորված էր նրանով, որ նրանք բոլորն էլ քազմաքիվ համախոհներ ունեին բանակում և կարող էին որոշակի վտանգ ներկայացնել, եթե մնային իրենց պաշտոններին: Զնայած այս չորս սպաները քարճրատիճան քաղաքացիական

<sup>300</sup> Primakov E. M., *Анатомия ближневосточного конфликта*, Москва, 1978, с. 246.

<sup>301</sup> Hopwood D., *Syria 1945-1986, Politics and Society*, St Antony's College, Oxford, London, Unwin Hyman, Boston Sydney Wellington, p. 41.

<sup>302</sup> Roberts D., *The Ba'ath and the Creation of Modern Syria*, Croom Helm, London & Sydney, 1987, p. 46.

<sup>303</sup> أحمد عبد الكريم، أعضاء على تجربة الوحدة، الطبعة الثانية، دمشق، ١٩٩١/١، صفحة ١٦٤.

պաշտոններ զբաղեցրին, այնուամենայնիվ, մրանք զրկվեցին ռազմական օգնություն ստանալու հնարավորությունից:

ԱՄՀ-ի ձևավորման հենց սկզբից էլ նախագահը ձեռնաձուխ եղավ երկու շրջանների զինված ուժերի միավորմանը<sup>304</sup> 1958 թ. փետրվարի 22-ին մարշալ Արդ Ալ-Հաթիմ Ամիրը<sup>305</sup> նշանակվել էր ԱՄՀ-ի ՋՌ-ի հրամանատար<sup>306</sup>, Կատարվեց միասնական հրամանատարության վերակազմավորում, որի արդյունքում յուր զխափող պաշտոններին նշանակվեցին եզիպտացի սպաներ<sup>307</sup>:

1958 թ. մարտի 15-ին հարմար 118 հրամանագրով ՋՌ-ի միավորումը վիաստացի ավարտվեց՝ ուսոկվանության, անփոսնագության ծառայության և բեղվինական ցուպանների միասնական հրամանատարության տակ միավորմանը: Արդ ժամանակ սիրիական քամակը հաշվվում էր 42 հազար հոգի<sup>308</sup>: Մարտի 12-ին սիրիական քամակի հրամանատար նշանակվեց դիվիզիոնի զեմերալ Ալիբի Ալ-Բիզրին, որին մի քանի օր անց շնորհվեց կորպուսային զեմերալի աստիճան<sup>309</sup>: Սակայն արդեն մարտի կեսերին հայտարարվեց, որ նախագահն ընդունել է զեմերալ Ալ-Բիզրիի հրաժարականը: Չմայած այն ամենին, որ պաշտոնապես ոչինչ չհայտարարվեց պաշտոնաթողության մասին, սիրիական քամակի շատ սպաներ կարծում էին, որ դա

<sup>304</sup> نفس المصدر، صفحة ٩٩-١٠٠.

<sup>305</sup> Մարշալ Արդ Ալ-Հաթիմ Ամիրը ծնվել է 1919 թ. եզիպտոսում: Տե՛ս

مصطفى طلاس، الجد الثاني، المصدر المذكور، صفحة ١١٨.

<sup>306</sup> Արդ ժամանակ զեմերալի հրամանատարությունը որչում է ընդունում կազմավորել օգոսպարիկա-դեսանուային բրիգադներ, որի կազմի մեջ մտան երկու գումադուսկներ՝ 75-րդ (եզիպտական) և 76-րդ (սիրիական):

<sup>307</sup> 1955 թ. հոկտեմբերի 20-ին Սիրիայի և եզիպտոսի միջև կնքվել էր համառոտ պաշտպանության վերաբերյալ պայմանագիր: Տե՛ս Համանեյսիայի և... Մարաշիկան երկրների պատմություն, հատոր 3, Երևան, 2006, էջ 276:

<sup>308</sup> Хрулева В. А., Сирия в составе Освободившейся Арабской Республики (1958-1961 гг.), Диссертация, Академия Наук СССР ИВ, Москва, 1971, с. 96.

<sup>309</sup> حديث مع عقيلة الزدي، مجلة ملكة الملكيت، دمشق، ٢٢ حزيران، ١٩٩١.

պայմանավորված էր Ալ-Քիզրիի աստջաղիմական հայացքների հետ, և որ այդ հարցում միջնորդել էր «Քասս» կուտակչության ղեկավարությունը<sup>310</sup>: Այս առիթով լիբանանյան «Ալ-ջարիդա» թերթը գրում էր, որ Ալ-Քիզրիի պաշտոնաթողությունը կապված է նրա և ԱՄԷ-ի գլխավոր շտաբի միջև եղած տարածայնությունների հետ՝ սիրիական շրջանում սպաների նշանակման և տեղափոխման հարցերում<sup>311</sup>: ԱՖԻՖ Ալ-Քիզրին քանակից հետացվեց և նշանակվեց քաղաքացիական պաշտոնի, որի պատճառով մա պետք է ասել, որ Կահիրեում: Դրանից հետո սիրիական սպաների եզիպտականով փոխարինելու գործընթացն ավելի բուռն շարունակվեց<sup>312</sup>:

1958 թ. մարտի 12-ին մախազահական հրամանագրով լուծարվեցին քաղաքական բոլոր կուտակչությունները, այնուհետև ընդունվեց որոշում, որն արգելում էր արհմիություններին զբաղվել քաղաքական գործունեությամբ, կազմակերպել գործադուլներ՝ առանց իշխանություններին նախապես տեղեկացնելու, իսկ գործադուլավորները կարող էին ձեռքարկվել<sup>313</sup>: Դա ծանր հարված էր Սիրիայի ժողովրդավարական ուժերի համար և այդ իմաստով կարելի է ասել, որ սիրիական ավատախիբական շրջաններին և «Քասս» կուտակչության այդ ղեկավարությանը հաջողվեց լուծել իրենց գլխավոր խնդիրներից մեկը՝ կասեցնել Սիրիայի ժողովրդավարացման հետագա ընթացքը և վերացնել արմատական սոցիալ-տնտեսական և քաղաքական վերափոխությունների հնարավոր զարգացումները երկրում: Այդ փաստն աստջացրեց աշխատավորների և աստջաղիմական բոլոր ուժերի խոր դժգոհությունը:

Միավորումից հետո եզիպտացը, փաստորեն, իր վերահսկողությունը հաստատեց սիրիական քանակի վրա: Բազ-

<sup>310</sup> Պաշտոնաթողության նախադասը Նաջիդ Ալ-Ազն ընդունվեց հետագվել էր իր պաշտոնից:

<sup>311</sup> الجريدة، لبنان، ٢٥ آذار، ١٩٥٨.

<sup>312</sup> Palmer M., The United Arab Republic. An Assessment of its Failure, Middle East Journal, Volume 20, N. 4, A., 1966, p. 56.

<sup>313</sup> بومات ووثائق لوكالة المصرية-السورية ١٩٥٨-١٩٦١، المصدر المتكور، صفحة ٢٥٣.



ճարիվ հայրենասեր սպաներ հետապնդվում կամ էլ քանակից ազատ էին ազնակվում: Որոշ սպաներ ծառայության տեղափոխվեցին Եգիպտոսի խուլ վայրերը, ոմանք էլ աստիճանագրկվեցին և նշանակվեցին երկրորդական պաշտոնների: Նրանց փոխարեն Միջրայում գտնվող զորքերի հրամանատարներ էին նշանակվում եգիպտացի սպաներ: Միջրայի բանակում կատարող դարձան եգիպտական զինվորական հրահանգիչները, ինչն էլ առաջացրեց բանակի դժգոհությունը<sup>314</sup>: Հալեպի Ռազմատրային ակադեմիան տեղափոխվեց Եգիպտոս՝ ուսուցման համակարգի միասնականացման պատրվակով, ինչը հանգեցրեց նրան, որ Ակադեմիա էին ընդունվում մեծ մասամբ եգիպտացիներ: Եթե նախկինում Հալեպի Ռազմատրային ակադեմիան ունենում էր տարեկան 20-30 օդաչու, ապա՝ Կահիրե տեղափոխվելուց հետո Ակադեմիա ընդունված 20 սպայից ավարտեցին ցմրամեջը 8-ը<sup>315</sup>:

1958 թ. ապրիլի վերջին Միջրայի տանկային զուժարտակների սպաների մեծամասնությունը ծառայության տեղափոխվեց եգիպտական շրջան, և նրանց փոխարինեցին եգիպտացի սպաները: Այս քաղաքականությունը սիրիացիների և եգիպտացիների միջև տարածաշրջանների առիթ դարձավ: Այս կապակցությամբ մարտի 14-ին լիբանանյան «Ալ-ամալ» թերթը գրեց, որ քազմաթիվ սիրիացիներ իրենց դժգոհությունն են հայտնում սիրիական շրջանում եգիպտացիների ազդեցության մեծացման պատճառով<sup>316</sup>:

Միջրայում շատերը սկսեցին վախենալ, որ ԱՄՀ-ի դեկավար օղակների քաղաքականությունը տանում է դեպի «եգիպտացման»<sup>317</sup>: Միավորումից անմիջապես հետո Միջրայի բանակային վեյմախսավը փոխարինվեց եգիպտականով, իսկ

<sup>314</sup> 1958 թ. մարտի 7-ին մարշալ Արդ Ալ-Հալեբ Ամերի հրամանով Միջրայի բանակից ազատվել էին 60 սպաներ:

<sup>315</sup> Xryzova B. A., 6շվ. աշխ., էջ 97:

<sup>316</sup> «العمل» 14 نيسان، 1958.

<sup>317</sup> Abu Jaber Kamel S., 6շվ. աշխ., էջ 63:

քարծրաստիճամ սպաների մեծ մասը տեղավորվեց քաղաքացիական պաշտոնների:

ԱՄՆ-ի սիրիական ՋՈւ-ի հրամանատար նշանակվեց գեներալ Ջամալ Ֆեյսալը<sup>318</sup>: Նա ծնվել է 1915 թ. Հոստոն: 1939 թ. ավարտել է Հոմսի Ռազմական ակադեմիան<sup>319</sup>: Ջամալ Ֆեյսալը սիրիական բանակի թիվ մեկ համաարարական դեմքն էր, որի ազդեցության տակ էր համախմբվում սիրիական սպայական կազմի ազգային արմատականների թեզ, որը սվլյալ ժամանակաշրջանում շիասցրեց ձևավորվել: Չմայած հետագայում սպայական այդ խմբավորումները, նմանակելով եզիպտականին, նույնիսկ անվանում էին «եներալըման դեկափորության փոքրիկ խորհուրդ», իրականում նրանք ոչնչով չէին նմանվում «Ազատ սպաներին»: Այնուամենայնիվ Միքիայուն նույնպես բանակը մոտավորապես նույն տարիներին, ինչպես և Եզիպտոսում, ելույթ ունեցավ գոյություն ունեցող փարսկարզի դեմ՝ որոշակի տարբերություններով<sup>320</sup>:

Եզիպտական վերմախավը, որի վրա այդ ժամանակ հենվում էր Գամալ Արզել Նասերը, նոր միավորված պետությունում միջոցներ էր տեսնում իր կասպիտակների կիբատան համար: Միքիական վերմախավը, որը վախճնում էր երկրում, և, մանավանդ, բանակում կոմունիստական կուսակցության ազդեցության աճից, ենթադրում էր, որ Եզիպտոսի հետ միավորումը թույլ կտա իրեն վերադարձնել քաղաքական տիրապետությունը երկրում: Այլ քառասականները հույս ունեին միավորման միջոցով տարածել իրենց գաղափարախոսության ազդեցությունը ամբողջ արաբական աշխարհում: Արաբական երկրների առաջադիմական ուժերը հույս ունեին, որ ԱՄՆ-ի ստեղծումը, որը նորագույն ժամանակաշրջանում Միացյալ արաբական պետության առաջին օրինակն էր, կուժեղացներ ազգային-ազատագրական պայքարը:

<sup>318</sup> Soffer G., նշվ. աշխ., էջ 98-99, صفة ٢٨١

<sup>319</sup> مصطفى طلاس، البلد الثاني، المصدر المذكور، صفة ١٦٣

<sup>320</sup> Марксизм Г. Н., նշվ. աշխ., էջ 97:

Շուտով սրվեցին հարսերություններն ԱՄՀ-ի եզիպտական ղեկավարության և «Քասս» կուսակցության միջև: «Քասս» կուսակցությունը հույս ուներ միավորման շնորհիվ դառնալ ԱՄՀ-ի առաջատար ուժը և իր գաղափարախոսությունը տարածել մաս եզիպտոսի վրա: Մակայն արդյունքում ոչ միայն աղյակն չստացվեց, այլև տեղի ունեցավ փակուղու համար սիրիացիները մեղադրեցին «Քասս» կուսակցությանը, որի հեղինակությունը որոշակիորեն ընկավ երկրում<sup>221</sup>:

Սիրիայում ստեղծված ծանր իրադրությունը չէին կարող չնկատել Կահիրեում: Գամալ Արդել Նասերը սիրիական շրջանի վրա վերահսկողությունն ուժեղացնելու, ներքաղաքական վիճակն ուսումնասիրելու և համապատասխան քայլերի դիմելու համար 1959 թ. հոկտեմբերին փոխնախագահ Արդ Ալ-Հաբիմ Ամերին ուղարկեց Գամալու: Սիրիական շրջանի Գործադիր խորհուրդն ամբողջությամբ ենթարկվեց Արդ Ալ-Հաբիմ Ամերին: Վերահսկողությունը Սիրիայի վրա ավելի ուժեղացավ:

Նախագահ Արդել Նասերը պահանջեց, որ սիրիական սպաները գերծ մնան քաղաքական գործունեությունից: Նրանք համեմատաբար ավելի քիչ վտանգ էին ներկայացնում Սիրիայի սահմաններից դուրս: Մեծ թվով երիտասարդ քառասական սպաներ տեղափոխվեցին Եգիպտոս՝ վերապատրաստման և մասնագիտացման պատճառաբանությամբ, որոնց Սիրիայում փոխարինեցին եգիպտացի սպաները: Քառասական սպաները դժգոհ էին տեղափոխումից և գտնում էին, որ Գամալ Արդել Նասերը չի վստահում իրենց: Բացի այդ՝ նրանք դեմ էին Արդել Նասերի բռնապետական քայլերին, ինչը նրանց մտածելու տեղիք էր տալիս, թե սիրիացիները դիտվում են որպես եգիպտացիների հսկողակ: Քառասական սպաները զարմացած էին, թե ինչպես «Քասս» կուսակցության ղեկավարությունը՝ Աֆլակը, Ալ-Բիտարը և Ալ-Հատրանին, թույլ տվեցին առանց որևէ

<sup>221</sup> Perlmuter A., From Obscurity to Rule, The Syrian Army and the Ba'th Party, The Political Influence of the Military, New Haven and London, Yale University Press, 1980, p. 316-317.

էրաշխիքի լուծարել կուսակցությունը և նման կերպով միա-  
փորել Միդիան ու Եգիպտոսը, ինչը բացասականորեն էր անդ-  
բարդանում բաասական սպաների վիճակի վրա:

1959 թ. ամռանը՝ սպաների Եգիպտոս տեղափոխելուց  
հետո, բաասական փոքրաթիվ սպաների կողմից ձևավորվեց  
գաղտնի մի ռազմական կազմակերպություն, որը հետագայում  
հայտնի դարձավ որպես Ռազմական կոմիտեի<sup>322</sup> (الجنة العسكرية):  
ՌԿ-ի ղեկավարությունը կազմված էր հինգ սպայից, որոնցից  
երեքն սլավի էին՝ Մուհամմադ Ռոմանը՝ Մուհարամից (Հոմս),  
Սալահ Ջադիդը՝ Դուայր Բասարդայից (Լաբարիյա) և Հաֆեզ  
Ալ-Ասադը<sup>323</sup>, Կարդասիայից (Լաբարիյա), իսկ մյուս երկուսը՝  
Արդ Ալ-Քարիմ Ալ-Ջունդին<sup>324</sup> Մալամիայից (Համա) և Սնադ  
Ալ-Միրը՝ Մասյաֆից (Համա)<sup>325</sup>, խմայիլականներ էին: Հետա-  
գայում, երբ կոմիտեի կազմն ընդլայնվեց, նրա անդամ դարձան  
նաև դրուզներ Սալիմ Հարունը<sup>326</sup> և Համադ Ուրսայդը՝ Ջաբալ

<sup>322</sup> Van Dam N., The struggle for power in Syria and the Ba'ath Party (1958-1966), *Orient*, 14. Jahrgang, Nr. 1, März, 1973, Deutsches Orient-Institut, p. 10, Batatu H., Some Observations on the Social Roots of Syria's Ruling, Military Group and the Causes for its Dominance, *Middle East Journal*, Vol. 35, No. 3, Summer, 1981, p. 343.

<sup>323</sup> Հաֆեզ Ալ-Ասադը ծնվել է 1930 թ. հոկտեմբերի 6-ին: 1947 թ. նա անդամագրվում է «Բաաս» կուսակցության գաղտնի խմբակներից մեկին: 1952 թ. Հաֆեզ Ալ-Ասադն ընդունվել է Հոմսի Ռազմական ակադեմիայի ռազմատղային Դակուտե: Այնուհետև նրան ցուցակազնեցիմ ռազմատղային ուժերի ակադեմիա, որը և ավարտեց 1955 թ.: 1964 թ. Ալ-Ասադն ազդեցիկ քրիստոսային զենկրաթի կոլում ուներ, իսկ 1968 թ. հուլիսի 1-ին՝ ռազմատղային ուժերի զենկրաթի ղեկավարում:

<sup>324</sup> Արդ Ալ-Քարիմ Ալ-Ջունդին ծնվել է 1930 թ.: Նա սովորել է Հոմսի Ռազմական ակադեմիայում և 1952 թ. միացել է «Բաաս» կուսակցությանը: Sbiu Rabinovich I., Syria under the Ba'ath 1963-1966, The Army-party symbiosis, Israel Universities Press, Jerusalem, p. 237.

<sup>325</sup> Van Dam N., The Struggle for Power in Syria, Sectarianism, Regionalism and Tribalism in Politics (1961-1980), London, 1981, p. 49, تقي الدين تقي، الصراع على السلطة في سورية، الطائفية والإقليمية والعشائرية في السياسة، ١٩٦٥-١٩٦٦، مكتبة مدبولي، القاهرة، ١٩٦٥، صفحة ٥٩.

<sup>326</sup> Սալիմ Հարունը ծնվել է 1928 թ.: Նա սովորել է Հոմսի Ռազմական ակադեմիայում, այնուհետև միացել է «Բաաս» կուսակցությանը:

Դրուզից<sup>327</sup>: ՌԿ-ի կազմում կային նաև սումնիներ, որոնցից էին Հատրանից՝ Մուսա Ազ-Ջուբին, Մուստաֆա Ալ-Հաջ Ալին և Ահմադ Մուսայրանը<sup>328</sup>, Հալեպից՝ Ամին Հաֆեզը և Հուսեյն Մուլիխը, իսկ Լաթաքիայից՝ Մուհամմադ Ռաբահ Աու-Տափը<sup>329</sup>:

ՌԿ-ն Կահիրեում մի շարք որոշումներ ընդունեց: Դրանցից մեկն այն էր, որ «Բաաս» կուսակցությունը համարվում էր գոյություն չունեցող, այդ բվում նաև Սիրիայի տարածքից դուրս գտնվող բոլոր ճյուղերը, որոնք հետևում էին ազգային դեկլարությունը: «Բաասի» կենտրոնը գտնվում էր Սիրիայում, իսկ դրան հետևում էր այն, որ այդ երկրում կուսակցության ամկումը նշանակում է ողջ կուսակցության անկումը: Ազգային դեկլարության հետագա գոյությունն այդ պատճառով դիտվում էր անիմաստ: Կուսակցությանը պետք է կրկին վերաստեղծվեր: Կուսակցության սկզբունքը հերքվեց, ինչը նշանակում էր՝ «Բաասի» առաջնորդները պետք է առանձնացվեին կուսակցությունից, քանի որ նրանք էին պատասխանատու

<sup>327</sup> Համադ Ռաբալը ծնվել է 1928 թ.: 1949 թ. նա ընդունվել է Հոսիս Բազմակամ ակադեմիա և այն ավարտել 1951 թ. լիստենանտի կոչումով:

<sup>328</sup> Ահմադ Մուսայրանը ծնվել է 1932 թ.:

<sup>329</sup> Cayton B. H., նշվ. աշխ., էջ 152-153, Drysdale A. D., նշվ. աշխ., էջ 111-112: Ալեքսանդրիոսի շքանից Օսման Խամանը, Լաթաքիայից Մուլիխան Հազդադը, Ռաստանից Մուստաֆա Տրաք Ռույնպես Ռազմական կոմիտեի անդամներ էին: Shu Seale P., Assad. The Struggle for the Middle East, University of California, Berkeley, Los Angeles, 1989, p. 499, باتريك سول، الأسد.

الصراع على الشرق الأوسط، بيروت، ٢٠٠٧، ص ١٢١.

Բազմակամ կոմիտեի մասին մանրամասն տե՛ս նաև Ma'oz M., Assad, The Sphinx of Damascus, A Political Biography, London, p. 31-32, Olson R. W., The Ba'ith and Syria, 1947 to 1982, The Evolution of Ideology, Party, and State, From The French Mandate to the Era of Hafiz al-Assad, The Kingston Press, Inc., Princeton, N.J., p. 110, Van Dam N., The Struggle for Power in Syria, Politics and Society under Assad and Ba'ith Party, I. B. Tauris Publishers, London-New York, 1997, p. 65, Batawi H., The Egyptian, Syrian, and Iraqi Revolutions: Some Observations on Their Underlying Causes and Social Character, Center for Contemporary Arab Studies, Georgetown University, Washington, 25 January, 1983, p. 10, اللواء محمد عمران، تجرئتي في الثورة، بيروت، ١٩٧٠، ص ١٨-١٩.

վտայում կրում կուսակցության լուծարման համար: ՌԿ-ն որոշեց մաս չհամագործակցել նրանց հետ, ովքեր ուղղակի կապ ունեին սիրիա-եգիպտական միասնության վարչակարգի հետ՝ քաջատությանը խիստ ամերաժեշտության ղեկավարում: ՌԿ-ի գլխավոր նպատակը Սիրիայում իշխանության գալն էր, որը պետք է քողարկվել «Ռաաս» կուսակցության անվան ներքո, մինչև նրանք կստեղծեն իրենց նոր «Ռաաս» կազմակերպությունը: Իրենց պլաններն իրականացնելու համար ՌԿ-ի սպաները պատրաստ էին դիմելու քոլոր հնարավոր միջոցների: Որոշիչ փաստ էր ազգային, կրոնական փոքրամասնությունների օգտագործումը, ինչը նրանց դարձնում էր ավելի եզրը<sup>309</sup>:

Գաղտնի ՌԿ-ի սպաների դժգոհության պատճառներից մեկը սիրիական քանակում և, ընդհանրապես, Սիրիայում եգիպտացիներին մեծարելն էր: Բաասականների դիրքորոշումը անցատման նկատմամբ բավականին զարմանք էր առաջացնում: Ալ-Բիտարը և Ալ-Հատրանին բացահայտ պաշտպանում էին բաժանվելու քաղաքականությունը: Ալ-Բիտարն այդ քայլի համար ավելի ոչ ափսոսանք հայտնեց և վերանայեց իր դիրքորոշումը: «Ռաասի» ազգային ղեկավարությունը երկու իրարամերժ հայտարարություն արեց, որոնցից մեկը պաշտպանում էր Եգիպտոսից անջատվելը, իսկ մյուսը՝ ընձառյառում: Եվ, սակայն, միայն վերջին հայտարարությունը պաշտոնապես ընդունվեց:

Գաղտնի ՌԿ-ի հարցերին նվիրված գրականությունը սակավաթիվ է: Հրեա հետազոտող Էլիեզեր Բենեթին, ուսումնասիրելով Սիրիայի սպայական վերնախավը, բավական կենսագրական ավայտներ է հաղորդում ընդհանրապես սիրիական սպաների, ինչպես մաս ՌԿ-ի սպաների մասին<sup>310</sup>:

Մեկ այլ հրեա հետազոտող Իսամար Ռաբինովիչը գրում է, որ ՌԿ-ն ոչ մի դեր չունեցավ Սիրիայի և Եգիպտոսի միավորման շրջանում<sup>311</sup>: ՌԿ-ն ստեղծվել էր ոչ քն նրա համար, որ

<sup>309</sup> Van Dam N., The struggle for power in Syria and the Ba'ath Party (1958-1966), Orient, 14, Jahrgang, Nr. 1, März, 1973, Deutsches Orient-Institut, p. 10.

<sup>310</sup> Be'eri E., Ձշվ. աշխ., էջ 338-339:

<sup>311</sup> Rabinovich I., Ձշվ. աշխ., էջ 25:

որն է դեր խաղար ԱՄՀ-ում, այլ կոմիտեի գլխավոր նպատակն ԱՄՀ-ի փլուզելը և Միրիայում իշխամության գալն էր: Հետագայում Միրիայի նախագահ դարձավ Հաֆեզ Ալ-Ասադը, ով ՌԿ-ի հիմնադիրներից էր:

Միրիայի այդ շրջանի պատմությանը նվիրված իր աշխատություններում խորհրդային հետազոտող Գ. Միրսկին, խորությամբ ներկայացնելով Միրիայի սպայական վերնախավը, տեղի ունեցած ռազմական հեղաշրջումները և քանակի դերը Միրիայի քաղաքական կյանքում, գրում է, որ Եզիպտոսի հետ Միրիայի միանալու ժամանակաշրջանում սիրիական բանակը որպես ինքնուրույն ուժ, փաստացիորեն գոյություն չուներ<sup>323</sup> և ոչինչ չի հայտնում ՌԿ-ի կազմավորման և նրա դերի մասին:

Մայրլ Վան Գուզենը, ով բազմաթիվ հանդիպումներ է ունեցել Միրիայի բանակի սպաների և քաղաքական գործիչների հետ, իր աշխատության մեջ գրում է, որ բազմաթիվ քառասական սպաների՝ Եզիպտոսի Այյուսի շրջան տեղափոխելուց հետո Ակրան Ալ-Հաուրանին գաղտնի հանդիպումներ է ունեցել նրանց հետ և ասել է, որ չկորցնեն իրենց վստահությունը Եզիպտոսի հետ միավորման նկատմամբ, որովհետև վերջիվերջո այն հաջողվելու է: «Ակրան Ալ-Հաուրանին չէր ցանկանում, - շարունակում է Մայրլ Վան Գուզենը, - որպեսզի քառասական սպաները ստեղծեն գաղտնի Ռազմական կոմիտե »<sup>324</sup>:

Հուլանդացի հայտնի հետազոտող Նիկոլաս Վան Գամը մանրամասն ներկայացնում է ՌԿ-ի կազմավորումը և հետագա գործունեությունն ու սպաների դերը Միրիայի քաղաքական կյանքում<sup>325</sup>:

<sup>323</sup> Мирский Г. И., Третий мир: общество, власть, армия, М., 1976, с. 87, Мирский Г. И., Армия и политика в странах Азии и Африки, М., 1970, с.105.

<sup>324</sup> Sèn Van Dusen M., ԶԳ աշխ., էջ 337:

<sup>325</sup> Van Dam N., The struggle for power in Syria and the Ba'th Party (1958-1966), *Oriente*, 14. Jahrgang, Nr. 1, März, 1973, Deutsches Orient-Institut, p. 10-20, Van Dam N., The Struggle for Power in Syria, Sectarianism, Regionalism and Tribalism in Politics (1961-1980), London, 1981, p. 49, Van Dam N., The Struggle for Power in Syria, Politics and Society under Asad and Ba'th Party, I.

## 2.2. Բանակի դերն Արաբական Միացյալ Հանրապետության փլուզման գործում

ԱՄՀ-ի մախազահի Գամալ Արդել Նասերը, որպեսզի ամբողջովին հսկողության տակ պահեր սիրիական բանակը, դիմեց այնպիսի միջոցի, ինչպիսիք էր սիրիական սպաների զանգվածային տեղափոխումը ծառայության եզիպտական շրջան, որտեղ նրանք չէին առանում բարձրաստիճան պատմաններ կամ գրկվում աշխատանքից: Միրիական սպաներին պաշտոնաթող էին անում՝ ուշադրություն չդարձնելով նրանց տարիքին, երբեմն տեղափոխում էին քաղաքացիական պաշտոններին<sup>336</sup>:

Եզիպտոսի հետ միավորման շրջանում սիրիական բանակից հեռացվել էր ավելի քան 1100 ավազ և 3000 կրասեր սպա, իսկ 500-ը ծառայության էր տեղափոխվել եզիպտական շրջան<sup>337</sup>: Այդ ընթացքում սիրիական բանակում ծառայելու համար Եզիպտոսից ուղարկվեց ավելի քան 2300 եզիպտացի սպա, ովքեր սիրիական բանակում ավելի շատ արտոնություններ ունեին, քան սիրիացիները: Եզիպտացի լեյտենանտն ավելի մեծ ազդեցություն և հնարավորություն ուներ, քան սիրիացի գնդապետը, քանի որ առաջինը՝ ի տարբերություն վերջինի, մուսր ուներ բանակի եզիպտական ղեկավարության մոտ: Եզիպտացի սպաներից յուրաքանչյուրը սիրիական բանակում իրեն «Գամալ Արդել Նասեր էր համարում», որն անվտանգություն առաջացրեց նրանց և սիրիական զինմասայողների միջև, և հենց դա էլ պատճառ դարձավ, որ շատ սիրիացիներ հրաժարվեցին պաշտպանել ԱՄՀ-ի վարչակարգը:

B. Tawris Publishers, London-New York, 1997, p. 62-63. *تفويضات قان دام، الممحر*

المذكور، صفحة ٥٩.

<sup>336</sup> Kyoum B. J., *նշվ. աշխ.*, էջ 82-83:

<sup>337</sup> Hinnebusch Raymond A., *Authoritarian Power and State Formation in Ba'thist Syria: Army, Party and Peasant*, Westview Press, Boulder, San Francisco & Oxford, 1990, p. 85.



Եզիպտացի սպաների կոպիտ պահվածքի պատճառով Միրիայի սպաների դժգոհությունը կրեմն քացահայտ էր: 1960 թ. օգոստոսի վերջին զինվորական քույրերի ուսանողների կողմից Կահիրեում դասադուլ տեղի ունեցավ<sup>338</sup>:

Միրիայի որոշ քաղաքներում եզիպտացի սպաները նույնիսկ խուսափում էին երևալ հասարակական վայրերում: ԱՄՀ-ի ղեկավար օդակների կատարած քաղաքականությունը տամում էր դեպի սիրիական քամակի փաստացի փլուզմանը: Հատկապես մեծ վնաս էին կրել քամակի տեխնիկական ստորաբաժանումները. օրինակ՝ ռազմաօդային ուժերից հեռացվել էին քազմաթիվ օդաչուներ և տեխնիկական մասնագետներ, որոնց մեծ մասը վերապատրաստվել էր արտերկրում, և նրանց ուսման վրա զգալի միջոցներ էին ծախսվել: Սակայն այն միայն սիրիական քամակի կադրային անձնակազմի հեռացումով չավարտվեց: ԱՄՀ-ի ղեկավարության ՋՌ-ում իրականացվող քաղաքականության հետևանքով՝ սիրիական քամակը կորցրեց մեծ քանակությամբ զինվորական զույգ և տեխնիկա, ինչը տեղափոխվեց եզիպտական շրջան<sup>339</sup>: Միաժամանակ ՋՌ-ի ղեկավարությունը եզիպտական քամակից մեծ թվով հին զինվորական տեխնիկա փաճատեց:

ԱՄՀ-ի կազմավորումից հետո առաջին (սիրիական) քամակի համար անհրաժեշտ բոլոր աշխատանքները կատարվում էին միայն եզիպտական կողմից, և սկսվեց օգտագործվել եզիպտական, այլ ոչ թե սիրիական աշխատուժը<sup>340</sup>:

1959 թ. դեկտեմբերի 30-ին մախարարներ Ակրամ Ալ-Հաուրամին, Սալահ Ալ-Դին Ալ-Բիտարը, Աբդ Ալ-Կամի Խամուրը, Մուստաֆա Համդունը, 1960 թ. հունվարի 4-ին՝ Խալիլ Քալասը, իսկ մայիսի 2-ին՝ Մեմադ Աբդ Ալ-Քարիմը և Ամին Նաֆուսին հրաժարական տվեցին: Չմայած քառասական

<sup>338</sup> . ١٩٦٠ . ٤١ ٢٨ . ٤٤٧

<sup>339</sup> Տասնյակ հազարավոր գնդացիներ, տանկեր, հրետանի, գիշերային կործանիչներ, մեծ քանակությամբ ռազմամեքեր, տարբեր նշանակության ճեքմաններ, ստգամավեր և ակամազերծիչներ:

<sup>340</sup> Բոսն Յ. Բ., ԶԿ, աշխ., էջ 275:

նախարարների հրաժարականին՝ «Ճառա» կուսակցության ղեկավարությունը Քեյրուրում հայտարարեց, որ կուսակցությունը պաշտպանում է ԱՄՆ-ի նախագահ Գամալ Արդել Նասերի քաղաքականությունը, իսկ նախարարները հրաժարական են տվել ոչ թե քաղաքական, այլ անձնական շարժառիթներով: Արդել Նասերը հայտարարեց, որ բաասական նախարարների և նրա միջև տարածայնություն է եղել այն հարցի շուրջ, որ նրանք պահանջել են ստեղծել ինչ որ «զադանի կոմիտե», որն էլ պետք է կառուխարի երկիրը<sup>341</sup>:

1960 թ. հայտարարվեց ԱՄՆ-ի կառավարության վերականգնված և եզիպտոսի ու Սիրիայի շրջաններում նախարարների նշանակման մասին: Նախագահի ղեկրետի համաձայն՝ ստեղծվեց ԱՄՆ-ի միացյալ կառավարություն, որտեղ նշանակվեցին 4 նոր նախարարներ, ովքեր Սիրիայի քանակի սպայական կազմից էին: Գնդապետ Ակրամ Դեյրիմ<sup>342</sup> նշանակվեց աշխատանքի և սոցիալական գործերի նախարար, գնդապետ Ահմադ Հունայրիմ<sup>343</sup>՝ ազգաբային քարեներդումների, Լաբաբիայի ռազմածովային ուժերի նախկին կրամանատար գնդապետ Ջամալ Աս-Սուֆիմ՝ մատակարարման, իսկ սիրիայի քաղաքական ռազմաճակատի նախկին կրամանատար Ջադո Իզզ Ալ-Դիմը՝ նախագահական հարցերով<sup>344</sup>:

1961 թ. մայիսի 24-ին Կոմունիստական կուսակցությունը 18 կետից քաղկացած նոր ծրագիր առաջադրեց: Այդ ծրագիրը, ինչպես միասնության ամրապնդման նպատակից, կրկին պահանջում էր Սիրիայի և եզիպտոսի միավորման վերանայումը, ԱՄՆ-ի երկու շրջանների միջև հարաբերությունների կարգավորումը, ժողովրդավարական ազատության վերականգնումը և քաղաքացիականների ազատ արձակումը: Ծրագիրը պահան-

<sup>341</sup> Кооп. Дхамане Саагуа, նշվ. աշխ., էջ 115-116:

<sup>342</sup> Ակրամ Դեյրիմ ծնվել է Դամասկոսում: Նա պատկանում է սիրիական տարական կազմի չորրորդ դասին: Տե՛ս Van Dusen M., նշվ. աշխ., էջ 391:

<sup>343</sup> Ահմադ Հունայրիմ ծնվել է Դեյր Ալ-Ջորում և նույնպես սրտականում է սիրիական տարական կազմի չորրորդ դասին: Տե՛ս Van Dusen M., նշվ. աշխ., էջ 391:

<sup>344</sup> Xpyessa B. A., նշվ. աշխ., էջ 246:

ջում էր պաշտպանել սիրիական տնտեսությունն օտարերկրյա կապիտալի ներթափանցումից և եգիպտական մրցակցությունից, սոցիալիստական երկրների հետ տնտեսական ու տեխնիկական համագործակցություն, աշխատավորների տնտեսական և սյակութային դրության բարելավում, կորակված համակարգում քայքայություններ, սիրիական բանակի անրապնդում, հեռացված սպաներին իրենց պաշտոններին վերականգնում:

1961 թ. օգոստոսի դեկրետով վերացվեցին եգիպտական ու սիրիական շրջանների գործադիր խորհուրդները, և ստեղծվեց ԱՄՀ-ի մեկ կենտրոնական կառավարություն: Այս իրադրությունը խիստ անհանգստացնում էր Միջին Արևելքի քաղաքական բուլդոզիստներին, որոնք եգիպտոսի հետ դաշինքը խզելու ընտրություն կատարեցին<sup>345</sup>: Այդ գործընթացն արագացավ այն բանից հետո, երբ 1961 թ. հուլիսին ընդունվեցին մի շարք դեկրետներ: Արդյունաբերողների բավականին մեծ շերտի շահերը շոշափող այդ դեկրետները խիստ բացասաբար ընդունեցին: Դրանով մոխատեսվում էր ազգայնացնել սիրիական այն ձեռնարկություններն ու ընկերությունները, որոնց քաժմեատոմսերի շուկայական արժեքը գերազանցում էր 270 միլիոն սիրիական լիրան: Միաժամանակ այդ դեկրետները որոշ չափով ընդլայնում էին բանվորների իրավունքները, մոխատեսվում էր ազգայնացված ձեռնարկությունների ստացվող շահույթի 25 տոկոսը հատկացնել բանվորներին, արգելվում էր աշխատանքից կամայական հեռացնելը, և մրանք իրենց ներկայացուցիչներն էին ունենալու արդյունաբերական ձեռնարկությունների կառավարման խորհուրդներում: Մտցվեց յոթամյա աշխատանքային օր, սահմանվեց հարկի նոր չափանիշ: Ազգայնացվեցին այնպիսի խոշոր կազմակերպություններ, ինչպիսիք էին «Հումասիյան», «Աշ-Շահրան», «Դեքսո», «Մանին»<sup>346</sup>:

Աստիճանաբար ԱՄՀ-ի դեկավար շրջանում սկսվեց կասկածամտությունը Միջին Արևելքի միջազգային Արդ Աշ-Համիդ Ա-

<sup>345</sup> Кайтар Мохамед Амин, 6շվ. աշխ., էջ 98:

<sup>346</sup> Пир-Булагова Э. П., Сирия в борьбе за упрочение национальной независимости (1945-1966 гг.), Москва, 1978, с. 146.

Սառաջի կողմից ղեկավարվող ռաիվանական համակարգի նկատմամբ, որը որոշ չափով զործում էր Կահիրեից անկախ: Այդ պատճառով եգիպտացիները սիրիական շրջանում սկսեցին կազմավորել զաղտնի «Տեղեկատվական ծառայության» մասնաճյուղը, որի կենտրոնը Կահիրեում էր՝ եգիպտական ռաիվանության ղեկավար Չաբարիա Մոհի Աղ-Դինի գլխավորությամբ: Այդ ծառայության կազմի մեջ էին մտնում այն եգիպտացի ծառայողներն ու մասնագետները, որոնք ուղարկվել էին Սիրիա՝ աշխատելու: Բացի այդ՝ վերջին շրջանում Սիրիայում իշխանության համար պայքար էր ընթանում Աս-Սառաջի և մարչալ Ամերի միջև:

Գնդապետ Արդ Ալ-Համիդ Աս-Սառաջը, թեպետ և հավատարիմ էր ԱՄԷ-ի եգիպտական ղեկավարությանը, այնուամենայնիվ, դա ամուռ էր անշահախնդրորեն: Նա հույս ուներ, որ իր հավատարմությունն այդ վարչակարգին կապահովեր նրա վերահսկողությունը սիրիական բանակի վրա, որն էլ հնարավորություն կտար զբաղեցնել մարչալ Ամերի տեղը<sup>347</sup>:

1961 թ. օգոստոսի 17-ին հայտարարվեց ԱՄԷ-ի կառավարության վերակազմավորման և Եգիպտոսի ու Սիրիայի շրջաններում նախադրմերի նշանակման մասին: Նախագահի ղեկրեռի համաձայն՝ ստեղծվեց ԱՄԷ-ի միացյալ կառավարություն, որտեղ նշանակվեց 6 նոր նախարար: Նախկին 3 փոխնախագահի փոխարեն նշանակվեց 7-ը, որոնցից երկուսը սիրիացի էին՝ Նուր Աղ-Դին Ալ-Կահուլին և Արդ Ալ-Համիդ Աս-Սառաջը<sup>348</sup>: Ինչպես 1959 թ. «Էնաս» կուսակցության ղեկավարների, այնպես էլ Աս-Սառաջի նշանակումը հատուկ նպատակ էր հետապնդում՝ Սիրիայից հեռացնել ազդեցիկ մարդկանց: Կահիրե մեկնելուց առաջ, որտեղ Աս-Սառաջն ազդեցություն չուներ, սիրիական շրջանի անվտանգության ծառայությունում նա թողեց իր համախոհ գնդապետ Սիրախին: Երբ մարչալ Ամերը փորձեց պաշտոնանկ անել Սիրախին և աստիճանափակել սիրիական անվտանգության ծառայության վազորությունները,

<sup>347</sup> Soffer G., նշվ. աշխ., էջ 101-102:

<sup>348</sup> ۱۹۶۱، ۱۷، ۱۵۹۹

Աս-Սառազն ընդոտացավ: Նա մեկնեց Դամասկոս, հավաքեց Ազգային միության ներկայացուցիչներին և փորձեց իր ձեռքը վերցնել իշխանությունը: Մակայն, օգնություն չստանալով իր կողմնակիցներից, ստիպված եղավ մահանջել:

Գամալ Արդել Նասերն այս խնդիրների պարզաբանման համար իր մոտ հրավիրեց Աս-Սառազին ու Ամերին: Հավաքի ընթացքում մախազահը պաշտպանեց Ամերին: Թեև սեպտեմբերի 23-ին հաղորդագրություն հրատարակվեց այն մասին, որ Աս-Սառազը մնում է ԱՄԸ-ի վոխմախազահ, այնուամենայնիվ, մույն ամսվա 25-ին պարզ դարձավ, որ Արդել Նասերի հետ վեճաբանությունից հետո Աս-Սառազը հրաժարական տվեց և վերադարձավ Դամասկոս<sup>349</sup>: Ամերի և Աս-Սառազի՝ իշխանության համար մղված պայքարի արդյունքում Դամասկոսի ոստիկանության համակարգը կորցրեց իր արդյունավետությունը: Միրաին հեռացվեց Ամերի կողմից, իսկ նրա վոխարեն նշանակվածը չէր կարող հույս դնել իր ենթակամերի հավատարմության վրա<sup>350</sup>:

1961 թ. աշնանը հասարակության գրեթե բոլոր շերտերը և, առանց բացառության, քաղաքական բոլոր ուժերը կտրվեցին Եգիպտոսի հետ միավորման փուլում:

Դավադրություն կազմակերպող սիրիական սպաներն այդ ժամանակահատվածում անվտանգության ծառայության գործունեությունն օգտագործեցին իրենց ելույթի պատրաստման համար: Հեղաշրջման պատճառ դարձավ այն, որ սպաները գտան Արդել Նասերի հաղորդագրությունը՝ ուղղված Ամերին: Դրանում խոսվում էր մի շարք սիրիացի սպաների հեռացման մասին, ինչն էլ առիթ դարձավ վերջինների համար:

1961 թ. սեպտեմբերի 28-ի վաղ առավոտյան ժամը հինգին քեդվինական ստորաբաժանումները՝ գնդապետ Հայդար Ալ-Կուգրարիի<sup>351</sup> հրամանատարությամբ, մտան Դամասկոս, որ-

<sup>349</sup> Rathmel A., նշվ. աշխ., էջ 159:

<sup>350</sup> Padoe D. B., նշվ. աշխ., էջ 277:

<sup>351</sup> Հայդար Ալ-Կուգրարին ծնվել է 1920 թ. Դամասկոսում: Նա Մեծան Ալ-Կուգրարիի ազգականն էր, մասայում էր Դամասկոսից 60 կիլոմետր հեռու:

տեղ Դժնյրի կայազորի գնդապետ Դահմանի զորքերի հետ համատեղ գրավեցին քաղաքի կարևորագույն հաստատությունները՝ ռազմական ոստիկանության շենքը, գլխավոր շտաբը և ռադիոկայանը: Ռազմական փոքրաթիվ բախումներ տեղի ունեցան ճարչալ Ամերի նստավայրի մոտ, որը հսկում էին 250 եզիպտացի զինվորներ<sup>352</sup>: Բախումներից հետո, որը տևեց 20 լուսն, ինչի արդյունքում եղան գոհեր և վիրավորներ, Ամերը համձմեկեց և նրան տարան գլխավոր շտաբ: Այնտեղ նա համըիպեց առաջին բանակի հրամանատար գեներալ Ջամալ Ֆեյսալին, ով առանց դիմադրության համձմեկեղ էր հենց իր բնակարանում: Դրանից քիչ անց Դամասկոս մտան ռազմական հեղաշրջման մասնակից ազդեցիկ սպաներ՝ տեղավորվելով Կատանայի ռազմական ճամբարում, որոնց մեջ էր նաև Աբդ Ալ-Քարիմ Ան-Նահիլաուի<sup>353</sup>: Ապստամբներին բանակային այլ ստորաբաժանումներից ևս հայտնեցին իրենց աջակցությունը: Այն ամենից հետո, երբ Ան-Նահիլաուի<sup>354</sup> տանկերը մտան մայրաքաղաք, սանձանային զորքերի հրամանատարությունը և կայազորները, բացի Հալեպի կայազորի հրամանատարից, մեկը մյուսի հետևից հայտնեցին հեղաշրջմանն իրենց օժանդակությունը ցույց տալու մասին: Առավոտյան լրատվամիջոցներով հայտարարվեց առաջին պաշտոնական հաղորդագրությունը, որում, սակայն, շխտովեց Եզիպտոսից առանձնանալու մասին:

Միրիացի սպաները սկսեցին բանակցություններ վարել Ամերի հետ, և վերջինս համաձայնեց քաղաքարիչ նրանց որոշ պահանջները, որոնք վերաբերում էին սիրիական բանակի

զորքերն վրա գտնվող Դժնյր կայազորում: Sh'u Mitraksh T. H., նշվ. աշխ., էջ 105:

<sup>352</sup> ساسي الجندي، المصدر المذكور، صفحة ٨٧.

<sup>353</sup> تلحي عبد القبي بزي، سورية، صراع الاستقطاب، دراسة وتحليل لأحداث تشرين الأوسط والتفكك الدواية في الأحداث السورية ١٩١٧-١٩٧٣، دمشق، ١٩٩٦، صفحة ٣١٩.

<sup>354</sup> Աբդ Ալ-Քարիմ Ան-Նահիլաուի ծնվել է 1926 թ. Դամասկոսում: 1950 թ. նա քննդոմվել է Հոմսի Ռազմական ակադեմիա: Sh'u Van Dusen M., նշվ. աշխ., էջ 404:

կազմակերպչական կառույցների փոփոխմամբ: Երբ սիրիացի սպաներն առաջ քաշեցին քաղաքական պայմաններ՝ նախատեսելով Սիրիային տալ մասնակի ինքնավարություն, նա հրաժարվեց ինքնություն լուծել այդ հարցը և խնդրեց կապ հաստատել Կահիրեի հետ: Սպաները ներկայացրին հետևյալ պահանջները՝ վերադարձնել սիրիական սպաներին եգիպտական շրջանից և Սիրիայում գտնվող եգիպտացի սպաներին հետ ուղարկել, կազմավորել առաջին բանակի մոր հրամանատարությունը՝ քաղկացած միայն սիրիացի սպաներով, սպայական կադրերի հարցով ստեղծել մայր հանձնաժողով և այլն:

Բանակցությունների ընթացքում՝ սպաներին տրված խոստումներից հետո, հրապարակվեց պաշտոնական 9-րդ հաղորդագրությունը, որտեղ հայտնվում էր, որ ՋՈւ-ն իր պահանջները ներկայացրեց մարշալ Ամերին, և նա միջոցներ է ձեռնարկել՝ ԱՄՆ-ի միասնության պահպանման համար<sup>355</sup>, որի արդյունքում իրավիճակը կարգավորվել է: Բնակչությունը եհասթավից այդ հայտարարությունից, որը պետք է ազդարարեր սպառնալուծության ավարտը: Հեղաշրջման ղեկավարները սկզբում պահանջներ չէին առաջադրում ԱՄՆ-ի կազմից Սիրիայի դուրս գալու մասին: Հաղորդագրությունը շատ արագ Արդել Նասերի կողմից, ով այնքան էլ տեղեկացված չէր հեղաշրջման բնույթից:

Ելույթ ունենալով առավոտյան ժամը 9-ին՝ Արդել Նասերը հայտարարեց, որ այն, ինչ պատահել է, ավելի փոսանգավոր է, քան 1956 թ. կատարվածը: Երեկոյան ժամը 7-ին նա հրամայեց Լաքաբիա ուղարկել օդապարիկային երկու զույգ: Ռազմական պատրաստվածության բերվեցին նաև ԱՄՆ ուղեկցության ռեզերվ, որոնք պետք է զորքերն իջեցնեին Լաքաբիա: Սակայն Հալիպի և Լաքաբիայի զորամասերի՝ ապստամբներին միանալուց հետո Արդել Նասերը հրամայեց եգիպտական զորքերին՝ վերադառնալ<sup>356</sup>:

<sup>355</sup> Пир-Булагова Э. П., 624. աշխ., էջ 148-149:

<sup>356</sup> Юсеп Джамал Салух, 624. աշխ., էջ 137:

ԱՄՀ-ի նախագահի կողմից Ամերը ծածկագրված հեռագիր ստացավ, որտեղ նրան հրամայվում էր հնարավորինս երկարաձգել քանակցությունները՝ չգնալով որևէ պարտավորեցնող գիշուրներին: Մակայն այդ հեռագիրը քաջամայտվեց, ինչը համզեցրեց Ամերի հետ քանակցությունների ավարտին: Ամերը և Ֆեյսալն ուղարկվեցին Կահիրե: Հրապարակվեց 10-րդ սլաշտոնական հատորագրությունը, որում հայտարարվում էր ԱՄՀ-ի կազմից Միրիայի դուրս գալու մասին: Գնդապետ Արդ Ալ-Համիդ Աս-Սաուսը ձերբակալվեց և խտտացավ այլևս չմիջամտել քաղաքականությանը, իսկ Հալեպի կայազորը միացավ ապստամբներին: Ռազմական հեղաշրջման մասնակիցները շտապեցին իշխանությունը ձևական փոխանցել քաղաքացիական կառավարությանը:

Պետք է նշել, որ քազմաքիվ սպաներ անկեղծորեն հավատում էին, որ կատարելով հայրենասիրական պարտքը՝ ծառայում էին հայրենիքի շահերին: Առաջին հերթին սիրիական սպայական կազմը դժգոհ էր ինքնուրույն չգործելուց, որն ուղեկցվում էր եզիպտական հրահանգիչների և խորհրդատուների ճնշմամբ:

Բանակում արդեն չկային Աֆիֆ Ալ-Բիզրին, Արդ Ալ-Համիդ Աս-Սաուսը և Ամին Նաֆուրին («Կամակուսյան խումբը»<sup>357</sup>) \* \* \* (الضباط الثوام) أو (التمشقين):

Այն քանից հետո, երբ Գամալ Արդել Նասերը հարաբերությունները խզեց «Բասսի» առաջնորդների հետ, շատ քասակական սպաներ տոխված էին թշակի անցնել: Նրանց փոխարեն հայտնվեցին այնպիսի մարդիկ, ինչպիսիք են Ալ-Կուզբարին, Արդ Ալ-Քարիմ Ան-Նահլատին և այլք: 1961 թ. սեպտեմբերի 29-ին Մամուն Ալ-Կուզբարին ընդունեց «Ալբարական

<sup>357</sup> Daoud-Agha Adnan B., *Military Elites, Military-led Social Movements and the Social Structures in Developing Countries, A Comparative Study of Egypt and Syria*, Ph.D., University of California, Berkeley, Michigan, USA, June 16, 1970, p. 393-394.

<sup>358</sup> نجاح محمد، الحركة القومية في سورية من خلال تاريخ تنظيماتها السياسية، الجزء الأول، (١٨-١٩)، صفحة ١١٩.



բարձրագույն հեղափոխական հրամանատարության<sup>399</sup> սիրիական կառավարություն ձևավորելու առաջարկը: Առավել-  
յան ժամը 11-ին կառավարության անդամների անվանացանկն  
արդեն պատրաստ էր: Սակայն քանակային հրամանատար-  
ությունը չէր պատրաստվում իշխանությունն ամբողջությամբ  
փոխանցել քաղաքացիական առաջնորդներին<sup>399</sup>:

Մամուն Ալ-Կուզբարին հայտնի է եղել հիմնականում 1953  
թ. ռազմական ղեկավարող Ադիբ Ալ-Շիշակլիի կառավարման և  
1954 թ. փետրվարին 48 ժամվա ընթացքում նախագահի պար-  
տականությունները կատարող անձ: Եթե 1954 թ. Ալ-Կուզբա-  
րին իշխանության մեջ էր գտնվում այն ժամանակ, երբ Սիրիա-  
յում ոչ մի քաղաքական կառույց ցանկություն չունի համա-  
գործակցել Շիշակլիի հետ, ապա այս դեպքում նա իշխանու-  
թյան եկավ այն պատճառով, որովհետև սիրիական ոչ մի այլ  
քաղաքական ուժ պատրաստ չէր իշխանության գլուխ գալ  
ռազմական հեղաշրջումից անմիջապես հետո և իր վրա վերց-  
նել ԱՄՆ-ի քարոզական համակարգի ողջ պատասխանատ-  
վությունը: Քաղաքական այլ ուժերին պետք էր որոշակի ան-  
ցումային ժամանակ, որի ընթացքում հնարավոր կցիներ կողմ-  
նորոշվել և իշխանության գալ, օրինակ, ընտրությունների ճա-  
նապարհով:

1961 թ. հոկտեմբերի 5-ին Չամալ Արդել Նասերը, փաս-  
տորեն, ընդունեց ԱՄՆ-ի կազմից Սիրիայի դուրս գալը՝ հայ-  
տարարելով, որ այնքան էլ կարևոր չէ, որ Սիրիան մնա ԱՄՆ-ի  
կազմում: Նա հայտարարեց, որ այդ ժամանակ համաձայն չէր  
Սիրիայի և Եգիպտոսի միավորմանը, որ պետք է սպասել հինգ  
տարի, և պետք է փորձել, սկզբից, ռազմական, տնտեսական ու  
մշակութային միավորում, այնուհետև՝ ամբողջական: Սակայն,  
երբ 1958 թ. Սիրիայի քանակի սպայական վերմախավը և քա-  
ղաքական գործիչները փորձում էին հասնել նրան, որ Սիրիա-  
յի ու Եգիպտոսի միասնությունը միակ ելքն է Սիրիայի վրկույթ-  
յան համար և ստեղծված իրավիճակից դուրս գալու համար

<sup>399</sup> Այսպես էին իրենց անվանում հեղաշրջման ապա ղեկավարները:

<sup>399</sup> Petran T., Syria, London, Ernest Benn Limited, 1972, p. 152.

պետք է շտապ և ամբողջական միասնություն, նա համաձայնեց<sup>361</sup>:

Միլիա-եգիպտական միության լուծարումն ակտիվ պաշտպանություն գտավ երկրի տարբեր քաղաքական ուժերի կողմից: 1961 թ. հոկտեմբերի 2-ին հեղաշրջման պաշտպանությանը հանդես եկան երկրի քաղաքական 18 հայտնի գործիչներ, որոնց թվում էին Խալեդ Ալ-Ազմը, Սաբրի Ալ-Ասալին. «Քաաախ» ղեկավարներ Ակրամ Ալ-Հատրանին, Սալահ Ալ-Քիտարը և այլք<sup>362</sup>: Եգիպտոսից Միլիայի անջատման պաշտպանությանը հանդես եկան մահ. Շուբրի Ալ-Քուարբին, Ֆարիս Ալ-Խուրին, Մուրան Ալ-Աբդալը և այլք: Թեպետ «Քաաա» կուսակցության ղեկավարներ Ակրամ Ալ-Հատրանին և Սալահ Ալ-Քիտարը հանդես եկան հեղաշրջման պաշտպանությանը, սակայն կուսակցությունը հոկտեմբերի 5-ի հայտարարության մեջ դատապարտեց երկրում զինվորական դիկտատուրա հաստատելու փորձը, որը թելադրված էր հետադիմական ուժերի կողմից և հետապնդում էր նրանց ամտեսական և կապիտալիստական շահերը<sup>363</sup>:

1961 թ. հոկտեմբերի 13-ին Միլիան կրկին դարձավ ՄԱԿ-ի անդամ, իսկ նույն ամսվա 28-ին՝ ԱՊՆ-ի: Հեղաշրջումից հետո՝ ներքաղաքական ըսրված իրադրության պայմաններում, կառավարությունը սկսեց նախապատրաստվել ընտրությունների՝ խոստանալով կարգավորել երկրի վիճակը և չորս ամսվա ընթացքում նստաստել սահմանադրական վարչակարգ<sup>364</sup>: Կասովարության ձևավորումից հետո Միլիայի ռազմական իշխանությունը վերածվեց քաղաքականի: Հոկտեմբերի 26-ին ՄԱՀ-ն ճանաչեց 59 պետություն, այդ թվում՝ Թունիսը, Բուրնդի-

<sup>361</sup> بیان الرئيس جمال عبد الناصر، القاهرة، ١٩٦١، صفحة ٣٩-٤١.

<sup>362</sup> قائد الحزم، المجلة الثالث، المصدر المذكور، صفحة ٢٠١-٢٠٣.

<sup>363</sup> Григорьев Г. М., Позитив Сирия в сложившемся конфликте, Ереван, 1989, с. 23.

<sup>364</sup> النهار، بيروت، ١ تشرين الأول، ١٩٦١.

րը, Մատղյան Արաբիան, Լիբիան, Եմենը, ԱՄՆ-ն, Անգլիան, Խորհրդային Միությունը և այլն<sup>365</sup>։

Սիրիայի Կոմունիստական կուսակցությունը հայտարարեց, որ ձախողվեց ոչ թե արաբական միասնության բուն գաղափարը, այլ նրա իրականացման որոշակի հակաժողովրդավարական մեթոդը։ Հայտարարության մեջ նշվում էր նաև, որ դրության կարգավորման համար պետք է ստեղծել ազգային ճակատ, որի մեջ, անկախ կուսակցական պատկանելությունից, կմտնեն ազգային բոլոր ուժերը և ազատ ընտրությունների միջոցով Սիրիայում կհաստատվի ազգային, ժողովրդավարական և հակաիմպերիալիստական իշխանություն։

Առաջին ամիսները ցույց տվեցին, որ Ալ-Կուզբարիի կառավարությունը ոչ միայն չէր ձգտում երկրի քարեղանակը, այլ՝ հակառակը, բոլոր հնարավոր միջոցներին էր դիմում, որ պահպանի այն օրենքները, որոնք գործում էին միասնության ժամանակ։ Սիրիայում պահպանվեցին քաղաքական հակամետախառնության մարմինները՝ դրանք վերանվանելով «քաղաքական քաժանճուներ», որը ներարկվում էր քաժանկի հետախուզական երկրորդ ղեկավարմանը։

Ալ-Կուզբարիի կառավարության մեջ մտան հիմնականում խոշոր արդյունաբերողներ, տնտեսագետներ և կազմաձևողներ։ Կառավարությունը խստապակ վարել այնպիսի քաղաքականություն, որը Սիրիան կձեռքբազանի բոնատիրական ղեկատնտրական միջոցառումներից, որոնք հանգեցրել էին տնտեսության անկմանը, կառավարողների և վստահված անձերի միջև անվտանգության ձևավորմանը և արաբական կապիտալի արտահոսքին։ Կառավարությունն արտաքին և միջառարական հարաբերություններում խստապակ էր վարել «դաշինքներին» չմիանալու քաղաքականություն և համազորմակցել բոլոր արաբական երկրների հետ, որպեսզի հաստատվի արաբների ամբողջական միասնությունը՝ ազատության և կազմառարության հիմքի վրա<sup>366</sup>։

<sup>365</sup> *Magyarország* Չ. II., նշվ. աշխ., էջ 151։

<sup>366</sup> ۱۹۶۶، جلد ۳۰، ص ۱۵۱



զվտավորում էր Ն.Պ. մախարաբության գլխավոր քարտուղարի օգնականը: Իրականում հանձնաժողովի գլխավոր նախատակն էր՝ մինչև ընտրությունները ոչ մի բարձրամտարկյալի ազատ չարձակել: Կառավարությունը որոշեց ընտրություններն անցկացնել սահմանադրական նիստով և հնարավորինս կարճ ժամանակահատվածում, որպեսզի առաջադեմ ուժերը հնարավորություն չունենան կազմակերպված նյութ ունենալ ընտրությունների ժամանակ:

Կառավարությունը հայտարարեց ազգային բանկի և կազմակերպությունների մասին դեկրետը չեղյալ համարելու իր ծրագրի մասին և խոստացավ վերանայել նպարային բարեփոխման մասին օրենքը՝ խոշոր հողատերերի պահանջների բարելավման համար: Այլ-Կուզբարիի դեմ դուրս եկան քաղաքական գործիչներ, որոնք իրենց դժգոհությունն էին հայտնում կուսակցական գործունեության արգելման համար: Դժգոհությունը կառավարության այս քաղաքականությունից ներքափանցեց նաև քանակ, հատկապես այն սպաների շարքեր, ովքեր մախլիխում կապված էին կուսակցությունների հետ: 1961 թ. նոյեմբերին 40 քառասական սպաներ քանակի ղեկավարությանը բողոքեցին՝ պահանջելով թույլ տալ քաղաքական կուսակցությունների գործունեությունը: Այդ ժամանակ փոփոխություններ տեղի ունեցան նաև քանակի հրամանատարական կազմում: «Չինված ուժերի բարձրագույն հեղափոխական հրամանատարությունում» ձևավորվեցին սպայական երկու խմբավորումներ: Առաջինն այն սպաներն էին, ովքեր հիմնվում էին անմիջապես գործերի վրա (գնդապետ Նահլաուի, Մանսուր, փոխգնդապետ Հինյի, Աբու Ռարու և այլն), իսկ երկրորդում ընդգրկված էին նրանք, ովքեր քանակում գրավում էին բարձրաստիճան պաշտոններ և կապված էին խոշոր բուրժուազիայի հետ (գեներալներ Մավայա, Դահման, Հուսեյն, Ասաս և այլք):

1961 թ. նոյեմբերին այս երկու խմբավորումների միջև պայքար ընթացավ քանակի ղեկավարությունը ստանձնելու համար: Օգտագործելով Արևմուտքի գեներալների հետ ունեցած իր կապերը և ստանալով նրանցից դրամական խոշոր օգ-

նություն՝ սպաների առաջին խմբավորման ղեկավար Արդ Ալ-Քարին Ան-Նահկատին «Ջինված ուժերի բարձրագույն հեղափոխական հրամանատարությունից» կարողացավ առանձնացնել Մավայային, Հուսեյնին և Դահմանին<sup>362</sup>։

Բանակում և հասարակության մեջ կատավարության դեմ դժգոհությունը կանխելու համար քանակի նոր հրամանատարությունը ստիպված եղավ զիջումների գնալ կուսակցական ղեկավարների նկատմամբ, որոնց մեծամասնությունը սպառնում էր բռնկուեղ ընտրությունները։

1961 թ. նոյեմբերին քանակային հրամանատարության նախաձեռնությամբ նիստ հրավիրվեց՝ սիրիական հայտնի քաղաքական գործիչների մասնակցությամբ։ Ալ-Կուզբարին նախապես դեմ էր նիստի հրավիրմանը, սակայն ստիպված եղավ մասնակցել՝ փախեմնալով, որ քանակի հրամանատարությունը համաձայնության կգա քաղաքական այլ գործիչների հետ և կձևավորվի մեկ այլ կատավարություն։ Բանակի հրամանատարությունը մշակեց և նիստի մասնակիցներին ներկայացրեց «Ազգային միասնության փաստաթուղթը», որը պետք է ծառայեր որպես քաղաքական ծրագիր՝ բխելով Միրիայի կուսակցությունների հետքադրություններից ու պահանջներից։ Այս փաստաթղթով քանակի հրամանատարությունը ցանկանում էր պահպանել որոշակի ներքաղաքական միասնություն, որն անհրաժեշտ էր Միրիայի ներքին և արտաքին անվտանգության պահպանման՝ ԱՄՀ-ի ղեկավար շրջանակներում իրականացվող քայքայիչ գործունեության պայմանմեջում։ Այն քաղաքական գործիչների համդեպ, ովքեր սկզբում հրաժարվում էին ստորագրել փաստաթուղթը, ճնշում էր գործադրվում՝ ընդհուպ մինչև նրանց Մալայի տնից դուրս չթողնելը, որտեղ անելի էր ունենում նիսաղ։ Այսպես ցում այդ փաստաթուղթը ստորագրեց 62 հոգի, այդ թվում՝ Ակրամ Ալ-Հատրանին, Մարրի Ալ-Ասալին, Խալեդ Ալ-Ազմը, Սաադ Ալ-Ղազին, Մամուն Ալ-Կուզբարին և այլք։

<sup>362</sup> Pisco Յ. Բ., նշվ. աշխ., էջ 285։

Համաձայնագիրը, որը ստորագրվել էր Մամուն Ալ-Կուզբարիի, մախլեին սիրիական պատգամավորների, կուսակցությունների ներկայացուցիչների և այլոց կողմից, կոչ էր անում սահմանադրական հիմքի վրա տեղծել ինքնակամ արաբական միասնություն՝ ապահովելով արաբական երկրների հավասարությունը և պահպանելով տեղական առանձնահատկությունները: Ներքին քաղաքականությանը բնագավառում համաձայնագիրը մախատեսում էր պահպանել և ընդլայնել մասնավոր սեփականությունը<sup>169</sup>:

Քանակի ճնշման ներքո Ալ-Կուզբարին ստիպված եղավ փոխել իր դիրքորոշումը քաղաքական կուսակցությունների՝ Ազգային ժողովի ընտրություններին մասնակցելու հարցի վերաբերյալ: Փաստորեն, ի տարբերություն այն դեպքերի, երբ բանակը ճնշում էր գործադրում անմիջապես կառավարության վրա նրա համար, որ ստիպի փոխել իր կարծիքը այս կամ այն հարցի շուրջ, այս անգամ բանակը կառավարության վրա ճնշում գործադրեց «ներքևից»՝ նրան կանգնեցնելով երկրմասերի ստաջ կամ գործել նոր իրավիճակին համապատասխան: Դա տեղի ունեցավ այն պատճառով, որ կառավարությունը չէր բավարարում այն սպայական վերնախավին, որը բարձր դիրք գրավեց «Ջինված ուժերի բարձրագույն հեղափոխական հրամանատարությունում»: Սակայն ստաջին սպայական խումբը չէր ցանկանում ԱՄՀ-ի դեկավարությանը հավելյալ հարցաբուրդ տալ՝ ի օգուտ նրա, որ Սիրիայում գոյություն ունի ռազմական դիկտատուրա, և այդ պատճառով ուժի ազատ գործածման փոխարեն մախրևորում էր կառավարության վրա անուղղակի ճնշման ճանապարհը:

Այսպիսով՝ 1950-ական թվականներին արաբական ժողովուրդների առջև հասնած բազում մարտահրավերները նրանց մոտ ուժեղացրեց միասնության ձգտումը: Դրա հետևանքը հանդիսացավ 1958 թ. Սիրիայի և Եգիպտոսի միավորումը մեկ միասնական ունիտար պետության մեջ: Այդ հարցում ևս սիրիական բանակն ասաց իր խոսքը: Չցանկանալով դաշնային-

<sup>169</sup> Кинтар Мохамед Амин, 624. աշխ., էջ 101-102:

Ինդերալ հիմունքների վրա կատարել եզրագրության հետ միավորումը՝ սիրիական զինվորականության մեծամասնությունը պահանջեց ամբողջական միավորում: Սիրիայի հայրենասիրական ուժերը հույս ունեին, որ ԱՄՆ-ի կազմավորումը սիրիական և եզրագրական շրջաններին լավ հնարավորություններ կտար տնտեսության, մշակույթի զարգացման համար, կնպաստեր երկու երկրների դեմոկրատացմանը, ամբողջ արաբական աշխարհում առաջընթացի սպասելիքները, հիմք կհանդիսանար Միացյալ Արաբական Հանրապետություն ստեղծելու համար: Սակայն այն ճանապարհը, որով շարժվեցին ԱՄՆ-ի ղեկավարները, միասնության առաջին փորձն անխոստափելի վախ առաջացրեց: Եղան տնտեսական և քաղաքական լուրջ դժվարություններ, որոնք հաղթահարելու համար երկար ժամանակ և ջանք էր պահանջվում, ինչին ոչ մի կերպ չէր նպաստում շուտավույր միավորումը: Դժվարությունները կայանում էին վարչակարգի տարրերության, երկու երկրների տնտեսական զարգացման տարբեր մակարդակների, քնակության կենսամակարդակի և այլնի մեջ: Սիրիայի և եզրագրության միավորումը արագ հանգեցրեց Սիրիայի տնտեսական և քաղաքական դիրքի բուլացմանը: Դրան քաղաքականապես նպաստեցին ԱՄՆ-ի ղեկավար օղակների կողմից կատարված ճնշումները՝ ընդդեմ Սիրիայի առաջադեմ ուժերի:

Արդեն 1959 թ. վերջին այդ վարչակարգից հրաժարվեց նույնիսկ «Քասա» կուսակցությունը, որը սկզբնական շրջանում հանդես էր գալիս որպես միասնության կողմնակից: Միավորումից և Արաբական Միացյալ Հանրապետության ստեղծումից հետո եզրագրուսը, փաստորեն, իր վերսահակությունը հաստատեց սիրիական բանակի վրա: Նժան քաղաքականությունը քնականարար առաջ էր բերելու ոչ միայն սիրիական բանակի, այլև սիրիական հասարակության և քաղաքական շրջանների դժգոհությունը: Այս սխալմաններում Սիրիայի ժողովուրդն իր մեջ ուժ գտավ՝ հենվելով հայրենի զինված ուժերի վրա՝ ձեռնազատվելու եզրագրական ինստիտյուցիոնի դիկտատուրայից: Ռազմական հեղաշրջման միջոցով Սիրիան դուրս եկավ Արաբական Միացյալ Հանրապետության կազմից: Աճ-



կասկած, այդ իրադարձությունը ծանր հարված էր արարական միասնության գաղափարին և, առհասարակ, արարական ազգայնականության գաղափարախոսությանը՝ պամարաբիզմին: Կարծես թե վերստին հաստատվում էր լոկո 42երգրնի այն հայտնի առույթը, որ եթե հնադավոր է Արարիայի ավազներից պարան հյուսել և այդ պարսնով կապել ինչ-որ բան, ապա հնարավոր է, ուրեմն, արարների միասնությունը:

**ԲԱՆԱԿԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱՅԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՁ  
(1961-1970 ԹԹ.)**

**3.1. Բանակի դերը Սիրիայում տեղի ունեցող ռազմական  
հեղաշրջումներում (1961-1963 թթ.)**

1961 թ. նոյեմբերի 12-ին հաստատվեց Սիրիայի ժամանակավոր Սահմանադրությունը, և երկիրը հայտարարվեց սահմանադրական ժողովրդավարական հանրապետություն: Օրենսդիր իշխանությունը հանձնվեց Սահմանադիր ժողովին, որին հանձնարարվեց ընտրել հանրապետության նախագահ և վեց անդամ ընթացքում մշակել մշտական Սահմանադրություն: Նույն Բվականի նոյեմբերի 21-ին Իզզաթ Ան-Նասր ձևավորեց նոր կառավարություն<sup>350</sup>: Սակայն քաղաքական շատ գործիչներ չէին կաշտղ մասնակցել սպառնող ընտրություններին, որովհետև նրանց մի մասը, չնայած հաստատվության պահանջին, դեռևս զամկում էր քանտեղում, իսկ մյուս մասը՝ վտարանդության մեջ: Սիրիայի Կոմունիստական կուսակցությունը հնարավորություն չուներ ընտրություններին առաջադրել իր քեկնածուներին, այդ պատճառով նա պաշտպանեց առաջադեմ հայացքներով հայտնի անկախ քեկնածուներին, որոնցից էին՝ Խալեդ Ալ-Ազմը, Աս-Սիբախն, Ամին Նաֆուրին և այլք: Զվեարկությանը զուգահեռ անցկացվում էր նաև համոզով՝ ժամանակավոր Սահմանադրության վերաբերյալ:

Սահմանադրական ժողովի գործունեության հենց սկզբից նրանում ձևավորվեցին մի քանի ուղղություններ, որոնցից ձախ քեկ ներկայացված էր սոցիալիստական դաշինքով՝ կազմված «Բասաս» կուսակցության և «անկախ» պատգամավորներից, որը գլխավորում էր Խալեդ Ալ-Ազմը: Բանակն աջակցում էր ձախ քեկին, ինչը շատ կարևոր էր: Ձախ քեկի մեջ մտնում էին

<sup>350</sup> Բուս Զ. Ե., նշվ. աշխ., էջ 287:

այնպիսի ազդեցիկ սպաներ, ինչպիսիք էին Ամին Նաֆուրին, Ահմադ Ալ-Էարիմը և այլք:

1961 թ. դեկտեմբերի 14-ին կայացան մախազահական ընտրությունները, որին հավակնում էին Նազիմ Ալ-Կուդային և Խալեդ Ալ-Ազմը: Արդյունքում Սիլհայի մախազահ ընտրվեց «Շողովրդական» կուսակցության առաջնորդ Նազիմ Ալ-Կուդային<sup>371</sup>, իսկ դեկտեմբերի 22-ին Մաարուֆ Ալ-Նավալիին ձևավորեց նոր կառավարություն: 1962 թ. հունվարի 8-ին նոր կառավարությունը Սահմանադրական ժողովի քննարկմանը ներկայացրեց իր նոր դրույթները: Արտաքին քաղաքականության բնագավառում կառավարությունը խոստանում էր վարել չեզոք քաղաքականություն և, շնայած Սիրիայի ու Եգիպտոսի միավորման անհաջող փորձին, հասնել արաբական միասնության գաղափարի իրագործմանը: Փաստորեն, սիրիական նոր կառավարության քաղաքականությունը, ինչպես ակնհայտ երևում էր նրա ծրագրային հայտարարության ներքաղաքական կյանքին վերաբերող դրույթներից, ի չիք էր դարձնում սոցիալ-տնտեսական այն նվաճումները, որոնք ձեռք էին բերվել Եգիպտոսի հետ միավորման շրջանում և լայն հնարավորություն էր բացում սիրիական բուրժուազիայի ստղև կորցրած դիրքերը վերականգնելու համար:

1962 թ. հունվարի 28-ին հրապարակվեց 1958 թ. ազրարային օրենքի փոփոխման մասին դեկրետի մախազիժը, սակայն դա բողոքի բազմաթիվ ցույցեր առաջացրեց, որոնք ճնշելու համար կառավարությունը ժողովրդի դեմ հանցեց բանակը, իսկ Սահմանադիր ժողովը փնտրվարիմ հաստատեց այդ դեկրետը: Կալվաճառներն այդ դեկրետով հնարավորություն ստացան ավելացնել իրենց տրված հողատարածությունները: Սահմանադրիչ ժողովի պատգամավորների մի մասը նույնիսկ պահանջեց ազրարային ռեֆորմի ամբողջությամբ վերացում, սակայն երկրում ծավալված ժողովրդական ելույթներից վախե-

<sup>371</sup> عثمان محمد رشاد حداد، أوزاع شامية من تاريخ سورية المعاصر ١٩٤٦-١٩٦٦، مكتبة مدبولي، القاهرة، ٢٠٠٧، صفحة ١٤٧.

ցած կառավարությունը շիանարձակվեց դիմել այդպիսի քայլի<sup>372</sup>:

Մաարուֆ Ադ-Դավալիրիի կառավարությունը 1962 թ. փետրվարին օրենք ընդունեց 1961 թ. հուլիսի դեկրետներով ազգայնացված սիրիական ընկերությունների և բանկերի ապաազգայնացման մասին: Այդ օրենքը մախկին ձեռնարկատերերին էր վերադարձնում արժեթղթերի մեծ մասը և վերականգնում նրանց իրավունքներն իրենց ձեռնարկությունների նկատմամբ: 1962 թ. մարտի սկզբներին կառավարությունը զգալի չափով թուլացրեց հսկողությունը մասնավոր կապիտալի նկատմամբ<sup>373</sup>:

Կառավարության հետադիմական քաղաքականությունն առաջացրեց մաս «Բաաս» կուսակցության ղեկավարների մտահոգությունը: 1962 թ. փետրվարին «Բաասի» համաարարական ղեկավարությունը կոչ արեց վերադառնալ ԱՄՆ-ի հետ դաշինքի: «Բաասը» գտնում էր, որ քեև միավորման ժամանակ կատարվեցին մի շարք սխալներ, սակայն դրանք բավարար հիմք չէին կարող ունենալ ԱՄՆ-ից Սիրիայի դուրս գալու համար: Այս կապակցությամբ «Բաաս» կուսակցության մասին իր աշխատությունում Աբու Ջաբեր Քամելը գրում է, որ կուսակցության ղեկավարությունը կոչ էր անում նոր միասնության, որը պետք է հիմնվեր ընդհանուր ղեկավարման, դաշնության, քաղաքական կուսակցությունների գործունեության ազատության և ավելի լայն ժողովրդավարական սկզբունքների վրա<sup>374</sup>: «Բաաս» կուսակցության այս դիրքորոշումը տարածայնություններ առաջացրեց կուսակցության ներսում, որի շատ անդամներ՝ Ալկասմ Ալ-Հաուրանիի գլխավորությամբ, համդես էին գալիս Եգիպտոսի հետ միավորման դեմ: Սակայն կառավարությունը չէր շտապում որևէ քայլի դիմել միասնության ուղ-

<sup>372</sup> Փրօֆ-Քուդադուվա Է. Պ., *Քաղաքական և սոցիալ-տնտեսական վերափոխումները Սիրիայում (1962-1970 թթ.)*, Սերձալթը և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատոր 9, Երևան, 1978, էջ 31:

<sup>373</sup> Ракс Э. В., *նշվ. աշխ.*, էջ 293:

<sup>374</sup> Abu Jabber Kamel S., *նշվ. աշխ.*, էջ 64:

դությանը, քանի որ դա չէր համապատասխանում սիրիական խոշոր բուրժուազիայի և կազմաձայնների շահերին<sup>375</sup>:

Կառավարության հետադիմական քաղաքականությունից ժողովրդի դժգոհությունը և դասակարգային պայքարի սրումը ներքավանցեց նաև բանակ: 1961 թ. սեպտեմբերի 28-ին կատարված ռազմական հեղաշրջումից հետո բանակը մարտից այն սպանելից, որոնք Սեյպուտաի հետ միավորման շրջանում քարձր պաշտոններ էին զբաղեցրել: Դա խոր դժգոհություն առաջացրեց սպայական կազմում: Ընդհանուր առմամբ, սպայական կազմն ուներ ավելի ծախսելոդյան հայացքներ, քան իշխանությունում գտնվող քաղաքական գործիչները: Այդ ժամանակ սիրիական բանակում սպայական երեք խումբ կայ՝ անկախականները, մասերական և քասսական տղաները: 1962 թ. հունվարի 21-ից 24-ը Դամասկոսում բանակցություններ սկսվեցին Իրաքի և Սիրիայի միջև համագործակցության ամրապնդման համար<sup>376</sup>, որից հետո՝ մարտի 14-ից 15-ը, հանդիպում կայացավ Սիրիայի Տախազահ Նազիմ Ալ-Կուդսիի և Իրաքի վարչապետ Արդ Ալ-Քարիմ Կասեմի միջև<sup>377</sup>:

1962 թ. մարտի 28-ին Սիրիայում տեղի ունեցավ հերթական ռազմական հեղաշրջում՝ Արդ Ալ-Քարիմ Ան-Նահլաուիի գլխավորությամբ: Սիրիական բանակի հրամանատար գեներալ Ջահր Ադ-Դինը<sup>378</sup> լուծարեց Մահմադադիր ժողովը<sup>379</sup>: Օրենսդիր ու գործադիր իշխանությունն անցավ զինվորական քարձրագույն հրամանատարությանը: Նախագահ Նազիմ Ալ-Կուդսին հարկադրված հրաժարական տվեց, իսկ Մարուֆ Ադ-Դավալիբին և այլ քաղաքական գործիչներ ձերբակալվեցին:

<sup>375</sup> Pons G. B., *op. cit.*, էջ 294:

<sup>376</sup> العباد ١٦ آذار، ١٩٦٢:

<sup>377</sup> شان محمد رشاد حداد، المصدر المذكور، صفحة ١٤٩:

<sup>378</sup> Գեներալ Արդ Ալ-Քարիմ Ջահր Ադ-Դինը ծնվել է 1918 թ. Աս-Սունյոյայի մարզում: Նա 1939 թ. ընդունվել է Հոնսի Ռազմական ակադեմիա: Sh'u. 119. صفحة المذكور، المصدر المذكور، صفحة ١٤٩:

<sup>379</sup> حسين العليم، لغة الانقلابات من ١٩٤٦ إلى ١٩٦٦، دمشق، ١٩٦٩، صفحة ٢٩٦ - ٢٩٧:

Մարտի 30-ին ՋՈւ-ի հրամանատար Ջահր Ադ-Դինը հայտարարեց, որ 1962 թ. մարտի 28-ին կատարվածը 1961 թ. սեպտեմբերի 28-ի հեղաշրջման շարունակությունն է, և քանակը կողդի Սահմանադիր ժողովի ու ղեկավարության բույ տված սխալները, և որ Միրիան սերտ հարաբերություններ է պահպանելու մյուս արաբական երկրների՝ հատկապես Եգիպտոսի և Իրաքի հետ: Նա հայտարարեց նաև, որ ինչպես Ալ-Կուդրաբիի, այնպես էլ Ադ-Դավաիբիի ղեկավարությունը քաղաքացիներին զրկում էին ազատությունից օգտվելու հնարավորությունից<sup>300</sup>: Այս հեղաշրջումը ևս երկրին իսկապես չբերեց Միրիայի տարբեր շրջաններում՝ Դամասկոսում, Հալեպում, Լաթաքիայում և այլ քաղաքներում ցույցեր տեղի ունեցան, որտեղ ցուցարարների մի մասը պահանջում էր վերադառնալ սիրիա-եգիպտական միությանը, իսկ մյուս մասը ձգտում էր ստեղծել քաղաքացիական կառավարություն և վերականգնել քանակի հրամանատարության կողմից մարտին վերացրած սահմանադրական կարգերը: Ցույցերի ընթացքում ժողովուրդը պահանջում էր քաղաքացիական ազատությունների կրաշխիք տալ, քարճրացնել աշխատավարձը և ստեղծել ազգային ժողովրդավարական կառավարություն<sup>301</sup>:

1962 թ. մարտի 31-ին Ջասիմ Ալվանի<sup>302</sup> համախոհները՝ Ռազմական կոմիտեի սպաների աջակցությամբ, գրավեցին Հալեպի ոստիոկայանը և պահանջեցին անհապաղ միանալ Եգիպտոսի հետ<sup>303</sup>: Գնդապետ Ջասիմ Ալվանը, ով Հալեպի կայսզոցի հրամանատարն էր<sup>304</sup>, հայտարարեց, որ Միրիան ԱՄՂ-ի հյուսիսային մասնաճյուղն է և կրկին միավորված է՝ մախազահ Արդել Նասների գլխավորությամբ: Այդ հայտարարությունը շարժումից հեռացրեց որոշ սպաների, որոնք դեռ դուրս եկան

<sup>300</sup> ۱۹۶۲، ۳۱، ص ۳

<sup>301</sup> Փիր-Քուդադաթա է. Պ., նշվ. աշխ., էջ 33-34:

<sup>302</sup> Գնդապետ Ջասիմ Ալվանը ծնվել է 1928 թ. Դեյր Ալ-Ջորում: Նա 1948 թ. ընդունվել է Հունի Ռազմական ակադեմիա: Տե՛ս Van Dusen, նշվ. աշխ., էջ 394:

<sup>303</sup> Van Dam N., նշվ. աշխ., էջ 10:

<sup>304</sup> Be'eri E., նշվ. աշխ., էջ 146:

Եզիպտոսի հետ միավորման շուտափույթ վերականգնմանը, ինչը և չարժան անկման պատճառներից մեկն էր<sup>365</sup>։ Այդ ժամանակ ՌԿ-ի սպաները փորձեցին համագործակցել Ամին Հաֆեզի հետ, սակայն նա բանակից ազատվեց և տեղափոխվեց Արգենտինա, որտեղ նշանակվեց ռազմական կցորդ<sup>366</sup>։

1962 թ. ապրիլի 2-ին Սիրիայի նախկին նախագահ Եուքրի Բուարժիի նախաձեռնությամբ՝ Հոմոս կայսցավ Դամասկոսի զինվորական գլխավոր հրամանատարության ներկայացուցիչների հանդիպումը Հալեպի և այլ ստորաբաժանումների հրամանատարների հետ, որի ժամանակ հեղաշրջման դիկավարները համաձայնության եկան երկրում դրությունը կարգավորելու ուղղությամբ կատարվելիք քայլերի շուրջ։ Որոշվեց բանակի սպայական վերնախսակից ստեղծել սիրիական ՁՈՒ-ի ընդհանուր հրամանատարություն, որը չէր մասնակցել ռազմական հաղաշրջմանը։ Բանակի նոր գլխավոր հրամանատարությունը պետք է կազմեր ժամանակավոր կատարարություն և Եզիպտոսի հետ միավորվելու հարցի շուրջ համբարվե անցկացնեղ։

Բարձրագույն հրամանատարությունը հաղորդագրություն հրապարակեց, որտեղ ասվում էր, որ այն հանդես է գալիս հօգուտ արարական երկրների հետ միասնության, ստաջին հերթին՝ Եզիպտոսի<sup>367</sup>։ Սակայն պարզվեց, որ բանակն ի գորտ չէ պահպանել իշխանությունը, քանի որ տարբեր սպայական խմբավորումների միջև տարաձայնություններ կային։ Հետագայում հայտնի դարձավ, որ եզիպտական դիկավարությունը մասամբ տեղեկացված էր 1962 թ. մարտի 28-ին կատարված հեղաշրջումից և Հալեպի դեպքերից, որովհետև Ջասիմ Ալվանը Բադեր Ասսադի և Մուստաֆա Հայքայի միջոցով միշտ կապի մեջ է եղել Բեյրութում Եզիպտոսի դեսպանության հետ։ Այդ

<sup>365</sup> Kaitir Mohamed Amer, 624, աշխ., էջ 105։

<sup>366</sup> ماضي الجندي، المصدر المذكور، صفحة ٨٨-٨٩.

<sup>367</sup> صوت العربي، ٣ نيسان، ١٩٦٢.

մասին Արդել Նասերին հայտնել է գեներալ Լուայ Ալ-Արասին<sup>388</sup>։

1962 թ. ապրիլի 4-ին ՋՌ-ի քարձրագույն հրամանատարության կողմից հայտարարվեց, որ երկրի բոլոր շրջանները հաստատում են իրենց վիակատար օրինապահությունը։ Բանակային ստորաբաժանումներում կարգապահություն հաստատվեց, և զորքերը վերադարձան իրենց հիմնական պարտականությունների կատարմանը՝ քարձրագույն հրամանատարությանը հնարավորություն տալով միջոցներ ձեռնարկել բանակի ամրապնդման և մրա միասնության համար<sup>389</sup>։ Ապրիլի 9-ին բանակի քարձրագույն հրամանատարությունը ստեղծեց չորս հանձնաժողով՝ օրենքի վերամայման և ֆինանսական, ամուսնական ու այլ հարցերով<sup>390</sup>։ Հաջորդ օրը ՋՌ-ի հրամանատար Չահր Ալ-Դինը, ելույթ ունենալով Դամասկոսում, հայտարարեց, որ կառավարությունը կձևավորվի առաջիկա երկուերեք օրերի ընթացքում, և որ բանակը չի միջամտի քաղաքական կյանքին ու կառավարության կազմավորումից հետո կվերադառնա իր «ստորաբաժանումները»։ Ապրիլի 14-ին գեներալ Չահր Ալ-Դինը հայտարարություն արեց, որում ասվում էր, որ գլխավոր հրամանատարությունը երկրում տիրող իրավիճակի խոր ուսումնասիրության հիման վրա որոշում է կայացրել դիմել Նազիմ Ալ-Կուդսիին՝ կրկին զբաղեցնել նախագահի պաշտոնը։ Հայտարարության հիմնական հինգ սկզբունքների իրականացմամբ զբաղվելու էր բանակը։ Առաջին հերթին նշվում էր, որ բանակը միաձայն որոշել է հեռանալ քաղաքականությունից և զբաղվել իր հիմնական խնդիրներով՝ երկրի անկախ կառավարման ապահովումից հետո։ Երկրորդ՝ բանակը նուազիք չէր միջամտել կառավարության գործերին և քաղաքականությանը, սակայն իր պարտքն էր համարում պահպանել ազգային քարձրագույն նպատակները՝ արտահայտված արաբական

<sup>388</sup> ذلك تعظم، المجلد الثالث، المصدر المذكور، صفحة 1-1.

<sup>389</sup> صوت العربي، ٦ نيسان، ١٩٦٢.

<sup>390</sup> نفس المراجع، ١٠ نيسان، ١٩٦٢.



միասնության ստեղծելու համար, առաջին հերթին՝ Եզրյալասի հետ, այն պայմանով, որ Միրիան կպահպանի իր ինքնուրույնությունը, արժանապատվությունը, և որ թույլ չեն տրվի այնպիսի սխալներ, որոնք տեղի են ունեցել նախկինում: Հայտարարությունում նշվում էր նաև, որ մոտ ապագայում կստեղծվի համընթացական, որը կնշանակի մնամ միասնության սկզբունքները, ինչից հետո կանցկացվի միասնության հարցերով ազգային հանրաքվե: Երրորդ՝ քանակային վերնախաղը կարծում էր, որ անցումային կառավարության ձևավորումը մինչև երկրում սահմանադրական կյանքի վերականգնումը հակասում է քանակի՝ կառավարմանը չմիջամտելու սկզբունքին: Չցանկանալով խախտել այդ սկզբունքը՝ քանակը որոշեց զբաղվել հայրենիքի և նրա սահմանների պաշտպանությամբ: Չորրորդ՝ քանակը լիովին գիտակցում էր, որ երկիրն իրավիճակի կայունացման կարիք ունի, միայն այդ դեպքում ժողովուրդը կարող է զբաղվել իր գործով, իսկ քանակը կամրապնդի իր ուժերը: Հինգերորդ՝ երկրում կայուն վիճակի կարելի է հասնել միայն ուժեղ սահմանադրական կառավարության կողմից:

Գլխավոր հրամանատարությունը քանակություններ սկսեց Նազիմ Ալ-Կուդսիի հետ՝ նրա սահմանադրական իրավունքները վերականգնելու վերաբերյալ: Կազմվեց նոր կառավարություն, որի մեջ քաղաքական այլ կուսակցությունների ներկայացուցիչների հետ միասին մտան «Բասա» կուսակցության անդամներ, իսկ Միրիայի քանակի հրամանատար գեներալ Ջահր Ադ-Դինը ստանձնեց նաև պաշտպանության մախարաբի պաշտոնը:

1962 թ. ապրիլի 17-ին ձևավորվեց Միրիայի ժամանակավոր կառավարությունը՝ Ահմադ Բաշիր Ալ-Ազմի գլխավորությամբ<sup>391</sup>: Բաշիր Ալ-Ազմի կառավարությունը հայտարարեց, որ հավատարիմ է արաբական միասնության սկզբունքներին, սակայն գործնականում այս կառավարությունը նույնպես մտադիր չէր մինչև վերջ չեղյալ հայտարարել Մահմանադիր ժողովի ընդունած հակաժողովայնական դեկրետները: Նա հասա-

<sup>391</sup> نلس المرجع، ۱۷ نيسان، ۱۹۶۲.

րակության 66շմամ տակ դիմեց միայն մասնակի զիջումների, օրինակ՝ 1962 թ. ապրիլի 30-ին վերացվեցին ագրարային ռեֆորմի օրենքի մեջ մուլց տարվա փետրվարի 28-ին կառավարության մտցրած փոփոխությունները:

Կառավարությունը հարց քարծրացրեց երկրի ժողովրդավարացման անհրաժեշտության, կուտակյալ կանոնադրության, ցույցերի անցկացման մասին: Մտեղծվեց հանձնաժողով՝ երկրի քաղաքական կյանքի հիմունքների մշակման և հասարակական ազատություններ տալու համար: Նախատեսվում էր նաև հանձնաժողով ստեղծել Սահմանադրության մշակման, արարական երկրների ապագա միավորման և այլ երկրների կառավարությունների հետ համապատասխան խորհրդակցություններ անցկացնելու համար<sup>392</sup>:

Որոշ քաղաքական գործիչներ պայքար սկսեցին արձակված Սահմանադիր ժողովը վերականգնելու համար: 1962 թ. հունիսի 8-ին խորհրդակցություն տեղի ունեցավ Սահմանադիր ժողովի 40 անդամների և մի շարք քաղաքական գործիչների մասնակցությամբ, որտեղ որոշվեց հրավիրել Սիբիրայի ազգային համագումար՝ ազգային բոլոր ուժերը համախմբելու և գործողության փաստաթուղթ մշակելու համար: Այնուհետև հայտնի քաղաքական գործիչների մի խումբ, որոնց թվում էր նաև Խաչեղ Ալ-Ազնը, խնդրագիր հղեցին նախագահ Նազիմ Ալ-Կուդսիին, որտեղ համոզեա էին գալիս երկրի Սահմանադրության և ընտրական օրենքի մեջ փոփոխություններ մտցնելու դեմ՝ պահանջելով Սիբիրայում վերականգնել ժողովրդավարությունը: Այսով գործունեություն ծավալեցին նաև Եգիպտոսի հետ միասնության վերականգնման կողմնակիցները, օրի արդյունքում կառավարությունը ձեռքակալեց ԱՄՀ-ի հետ միասնության կողմնակից սպաներին:

1962 թ. հունիսին, ընդունելով «Բաաս» կուտակության և ԱՄՀ-ի հետ միավորման կողմնակիցների պահանջները, կառավարությունը հայտարարեց, որ Սիբիան կողջունի ԱՄՀ-ի

<sup>392</sup> Բուս Զ. Ե., 6շվ աշխ., էջ 299:

հետ դաշնային հիմքի վրա միասնության հաստատումը<sup>393</sup>, սակայն, իրականում, ոչ մի քայլի չդիմեց այդ ուղղությամբ:

1962 թ. սեպտեմբերի 12-ին Բաշիր Ալ-Ազմը պաշտոնաթող եղավ, Ազգային ժողովի նախագահ ընտրվեց Սաիդ Դազին<sup>394</sup>, իսկ նույն ամսվա 17-ին «կարմիր միլիոնատեր» Խալեդ Ալ-Ազմը կազմեց նոր կառավարություն<sup>395</sup>, որի կազմում կար 21 նախարար, այդ թվում՝ «Բաասի» երեք անդամ, «Մուսուլման երայրների» երկու ներկայացուցիչ, ինչպես նաև «ամկախականների» և սոցիալիստների ներկայացուցիչներ Կադդուբին և Կալլասը<sup>396</sup>: Կառավարությունը խոստացավ վարել ներքին և արտաքին այնպիսի քաղաքականություն, որը կհամապատասխաներ Սիրիայի ազգային շահերին:

1962 թ. սեպտեմբերին դիվանագիտական հարաբերությունները վերականգնվեցին Ֆրանսիայի հետ, և քանակցություններ սկսվեցին երկու երկրների միջև սպարանբաշրջանառության ավելացման հարցի շուրջ<sup>397</sup>:

1962 թ. դեկտեմբերի 22-ին կառավարության հրամանագրով վերացվեց արտակարգ դրության մասին օրենքը, սակայն շուտով սրվեց միջկուսակցական սխալաբեկ կառավարության ներսում: Նախագահ Նազին Ալ-Կուդայի, Խալեդ Ալ-Ազմի, Ջահր Ադ-Դիմի և Ալլամ Ալ-Հաուրանիի մասնակցությամբ հատուկ խորհրդակցություն անցկացվեց՝ կառավարությունում ստեղծված իրավիճակը քննարկելու նպատակով:

1963 թ. սկզբներին «Բաաս» կուսակցությունը սկսեց մեծ դեր խաղալ երկրի քաղաքական կյանքում, որի ղեկավարությունն ուժեղացրեց իր ճնշումը կառավարության վրա: «Բաասի» ղեկավար Սալահ Ադ-Դիմի Ալ-Բիտարը Սիրիայում հառատովաժ վարչակարգը որակեց հեռադիմական: Կուսակցությունը կառավարությանը մեղադրում էր հատկապես 1961 թ. ազգայ-

<sup>393</sup> Abu Jaber Kamel S., նշվ. աշխ., էջ 65-66:

<sup>394</sup> صوت العرب، ١٢ أيلول، ١٩٦٢

<sup>395</sup> Be'eri E., նշվ. աշխ., էջ 148:

<sup>396</sup> انصر، ٢١ أيلول، ١٩٦٢

<sup>397</sup> Kattap Mohamed Amin, նշվ. աշխ., էջ 110:

ճացման վերաբերյալ ղեկրեամները չեղյալ հայտարարելու համար: Այդ պատճառով էլ կառավարությունը որոշեց Սիրիայում արգելել «Ալ-բասա» կուսակցության գործունեությունը, ինչպես նաև «Ալ-բասա» թերթի հրատարակումը և ձեռքսկզբել նրա խմբագիր Մալահ Ալ-Բիտարին<sup>398</sup>:

1963 թ. սկզբին «ավանդական» վարչակարգի համդեպ դժգոհությունն էլ ավելի խորացավ: Աշխուժացավ աշխատավորների գործադուլային պայքարն իրենց իրավունքների համար, գյուղացիները սկսեցին ավելի համատարեն պահանջել ագրարային ռեֆորմներ անցկացնել և այլն: Իրավացի է Գ. Միրակյան, երբ գրում է, որ Եգիպտոսի հետ միավորման շրջանում բարեփոխումների սեյմերը ցանվեցին և սկսեցին արդյունք տալ<sup>399</sup>:

1963 թ. հունվարի 3-ին սիրիական բանակի զորամասերը Գամաակոսում, Կատանայում և Կունեյտրայում՝ գեղասպան Արդ Ալ-Քարին Ան-Նահլաուիի, Մոտիք Հինդիի, Ֆահի Ռիֆաիի և Ֆախուրի Օմարի հրամանատարությամբ, Խալեդ Ալ-Ազմի ղեկավարած կառավարությունը տապալելու անհաջող փորձ կատարեցին: Հնդաշրջման կազմակերպիչները պահանջում էին Չաիր Ադ-Դիմի հրաժարականը, ինչպես նաև Ալ-բաս Ալ-Հատրանիի գործունեության արգելում Սիրիայում<sup>400</sup>: Բացի այդ՝ նրանք պահանջում էին թույլ չտալ, որ Սիրիայի Կոնցոնցիստական կուսակցության գլխավոր քարտուղար Խալեդ Քերդաշը վերադառնա Սիրիա, բանակից ազատել բոլոր ձախ թևի քարձրաստիճան տղամերին, ամբողջովին վերակառուցել սիրիական բանակը և վերանայել կառավարության քաղաքականությունն արտրական հարցում: Սպաների պահանջները չբավարարվեցին և 24 երիտասարդ սպաներ ձերբակալվեցին: Որոշ քարձրաստիճան տղամեր դիվանագիտական աշխատ-

<sup>398</sup> Նույն տեղում, էջ 66: 1962 թ. հոկտեմբերի 8-ից մինչև 1963 թ. մայրի 8-ի հնդաշրջումը «Ալ-բասա» թերթը յիբատարակվեց: S&U Abu Jaber Kasel S., Ձշվ. աշխ., էջ 195:

<sup>399</sup> Мисрская Г. Н., Ձշվ. աշխ., էջ 107:

<sup>400</sup> Имп-Египетская Э. И., Ձշվ. աշխ., էջ 172:

տանքի ուղարկվեցին՝ Արդ Ալ-Ջարիմ Ան-Նահյատին՝ Բոնն, Հինդին՝ Պրահա, Ռիֆային՝ Լոնդոն և այլն<sup>401</sup>։

1963 թ. փետրվարի 8-ին Իրաքում «Բաաս» կուսակցության աջ թևի ղեկավարները և զինվորականները հեղաշրջում կատարեցին, որի հետևանքով Կասեմի վարչակարգը տապալվեց, և երկրում իշխանությունն անցավ «Բաասի» աջ հոսանքին<sup>402</sup>։ Անցնելով իշխանության գլուխ՝ Իրաքի աջ բաասականներն առաջին իսկ օրվանից հակակոմունիստական արշավ ծավալեցին և պայքար սկսեցին առաջադիմական ուժերի դեմ<sup>403</sup>։

Իրաքում 1963 թ. փետրվարին իշխանության անցումը «Բաաս» կուսակցության ձեռքն ավելի ուժեղացրեց Միդլասթի բաասականների դիրքերը, որոնք բացահայտորեն ողջունում էին Իրաքում տեղի ունեցած հեղաշրջումը և այնտեղ հաստատված վարչակարգը։ Նույն ամսվա 17-ին իրաքյան կառավարության հրավերով Բաղդադ ժամանեց սիրիական «Բաաս» կուսակցության պատվիրակությունը՝ Մյուշել Աֆլակի ղեկավարությամբ՝ քննարկելու Իրաքի հետ Միդլասթի միավորման նախագիծը, ինչը վկայում էր նրա դիրքերի զգալի ուժեղացման մասին։ Չնայած կատարարությունը համոզեա էր գալիս ընդդեմ «Բաաս» կուսակցության, սակայն վերջինիս ճնշումն այնքան ուժեղ էր, որ ԱԳ նախարարը ստիպված էր կատարարության անունից հրապարակել մի հայտարարություն, որտեղ Միդլասթի և Իրաքի միավորման կոչ էր արվում<sup>404</sup>։ Սակայն դա չվերացրեց քաղաքական պայքարը, մի կողմից, Խալեդ Ալ-Ազմի, իսկ մյուս կողմից՝ բաասականների և յունիտնիստների (Եզիպտոսի հետ միավորման կողմնակիցներ - Հ. Ա.) միջև։ Շարունակվեց

<sup>401</sup> Ве'е'и К., 624, աշխ., էջ 149։

<sup>402</sup> Рунтлек А. В., О деятельности пракской коммунистической партии в годы правления Касема (январь-февраль 1963 г.), Арабские Страны, История, Экономика, ИВ АН СССР, Москва, 1974, с. 103.

<sup>403</sup> Չալոբյան Ն. Տ., Միդլասթիայի փոխադարձությունների պատմությունից (1963 թ.), Միքսալոթ և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատր 9-րդ, Երևան, 1978, էջ 280։

<sup>404</sup> Փիթ-Ռուդալովա Է. Պ., 624, աշխ., էջ 40-41։

կուսավարական ճգնաժամը, որը ծագեց «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության և «Բասա» կուսակցության անդամ նախարարների հրաժարականների հետևանքով:

### 3.2. Բանակի դերը Միրիայում «Բասա» կուսակցության կուսավարման շրջանում (1963-1970 թթ.)

1963 թ. փետրվարի 8-ի իրաքյան հեղաշրջումից ուղիղ մեկ ամիս անց՝ 1963 թ. մարտի 8-ին<sup>405</sup>, Միրիայում տեղի ունեցավ ռազմական հեղաշրջում<sup>406</sup>: Նախագահ Նազիմ Ալ-Կուդուսին, գեներալ Ջահր Ադ-Դիմը, Ալլամ Ալ-Հաուրանին և այլք ձերբակալվեցին, իսկ վարչապետ Խալեդ Ալ-Ազմ իր ընտանիքով ապաստան գտավ քուրդական դեսպանատանը<sup>407</sup>: Այդ ժամանակ Միրիայի գինված ուժերի թիվը մոտ 65 000 էր: Զինված ուժերը կազմված էին ցամաքային զորքերից, ռազմաօդային և փոքրաթիվ ռազմածովային ուժերից: Ուզմաօդային ուժերում կար 113 ինքնաթիռ, իսկ ռազմածովայինում՝ 123 սուրպետային ռազմամատյակ<sup>408</sup>:

1963 թ. մարտի 8-ի հեղաշրջմանը մասնակցեցին սպայական երեք խմբավորումներ: Առաջին խումբը գլխավորում էր

---

<sup>405</sup> 1963 թ. մարտի 8-ի հեղաշրջումից 43 տարի անցը նույն օրը՝ 1920 թ. մարտի 8-ին, հայտարարվեց Միրիական ազգային կոնգրեսի որոշումը Միրիայի փրանսական ու անկախ պետության ստեղծման և Ֆեյսալ թին Ալ-Հուսեյնին նրա բազմալիք իշխակվելու մասին: علي سلطان، المصدر المذكور، ص 149.

مروان حبش، البيت وثورة آذار، جميع الحقوق محفوظة للمؤلف، ٢٠١١، ص 119.

<sup>407</sup> Рыкз Э. В., նշվ աղյ., էջ 303:

<sup>408</sup> Юрченко В. П., Суряк: Проблемы Национальной Безопасности (Военная Политика и Военная Строительство в Период Правления ПАСВ 1963-2004 гг.), М., 2004, с. 35.

Զիյադ Ալ-Հարիրին<sup>409</sup>, ում հրամանով գործերը շարժվեցին դեպի մայրաքաղաք: Երկրորդ խումբը կազմված էր ՌԿ-ի քասական սպաներից՝ Սալիմ Հարունի, Ռաֆան Խամանի, Մուլեյ-ման Հադդադի, Մուստաֆա Ալ-Հաջ Ալի և այլոց գլխավորությամբ, ովքեր գտնվում էին Գամսակոստ և աջակցեցին Զիյադ Ալ-Հարիրինին: Երրորդ խումբը բաղկացած էր նասելական սպաներից՝ գլխավոր շտաբի հետախուզություն պետ զեմերալ-ելսեմամու Ռաշիդ Քուրեյնի գլխավորությամբ, ովքեր ազդեցիկ դիրք ունեին Հալեպում և Հոմսում տեղակայված գործերում<sup>410</sup>: Հեղաշրջման իրականացման ծրագիրը մշակել էին ՌԿ-ի առաջնորդներ Մուհամմադ Ռմբանը, Մալահ Ջադիդը և Արդ Ալ-Ջարիմ Ալ-Ջունդին<sup>411</sup>:

Ռաշիդ Քուրեյնին և Մուհամմադ Աս-Մուֆին<sup>412</sup>, ով պատասխանատու պաշտոն էր զբաղեցնում սիրիական քամակի գլխավոր շտաբում, վերջին պահին հեռացան դավադրությունից՝ պատճառաբանելով, թե հեղաշրջման մասին լուրերը հայտնի են դարձել կառավարությանը: Ալ-Հարիրին որոշեց ինքնուրույն գործել՝ իր ծրագրերի մասին նախօրոք տեղյակ պահելով «Բաաս» կուսակցության ղեկավարությանը և ապահովելով քասական սպաների աջակցությունը: Այդ պատճառով էլ «Բաասը» թեև անմիջական մասնակցություն չունեցավ հեղաշրջման կազմակերպման գործում, սակայն դարձավ միակ ոչ ռազմական խմբավորումը, որին կարող էր դիմել Ալ-Հարիրին՝ կառավարություն կազմելու առաջարկությամբ:

<sup>409</sup> Զիյադ Ալ-Հարիրին ծնվել է 1929 թ. Համայուն: 1947 թ. նա ցնդունվել է Հոմսի Ռազմական ակադեմիա: Sh'u, الممدر المتكور, الجند الثاني, مصطفى طلاس, صفحة 117.

<sup>410</sup> Van Dam N., նշվ. աշխ., էջ 11:

<sup>411</sup> Kattar Moxamea Asim, նշվ. աշխ., էջ 113:

<sup>412</sup> Մուհամմադ Աս-Մուֆին ծնվել է 1927 թ. Լաքադիայում: 1946 թ. նա ցնդունվել է Հոմսի Ռազմական ակադեմիա և այն ավարտել է 1948 թ. մայիսի 27-ին՝ իսլամամոտի աստիճանով: Sh'u, الممدر المتكور, الجند الثاني, مصطفى طلاس, صفحة 111.

Հեղաշրջումն իրականացրած սպաների կողմից ստեղծվեց Հեղափոխական հրամանատարության ազգային խորհուրդ, որի մեջ մտան զեներալ Ջիյադ Ալ-Հարիրին, ՌԿ-ի անդամներ Հաֆեզ Ալ-Ասադը, Մուհամմադ Ումրանը, Սալահ Ջադիդը, Արդ Ալ-Քարիմ Ալ-Ջունեյին, յունիոնիստներ Ռաշիդ Քուբեյնին և Մուհամմադ Աս-Մուֆին, «Քաաս» կուսակցության ղեկավարներ Միշել Աֆլակը, Սալահ Ալ-Քիտարը և Շիրի Ալ-Այսամին<sup>413</sup>: Օրինակի և գործադիր իշխանությունը համձնվեց Հեղափոխական հրամանատարության ազգային խորհրդին, որի նախագահ և Սիրիայի քանակի հրամանատար նշանակվեց զեներալ-լեյտենանտ Լուայ Ալ-Աբասին<sup>414</sup>:

1963 թ. մարտի 9-ին «Քաաս» կուսակցության ղեկավար Սալահ Ալ-Քիտարի գլխավորությամբ կազմվեց նոր կառավարություն, որտեղ 20 նախարարներից 10-ը «Քաաս» կուսակցության անդամներ էին<sup>415</sup>, իսկ մնացածը ներկայացնում էին «անկախականների» և յունիոնիստական կազմակերպությունների ղեկավարներին: ՆԳ նախարար նշանակվեց Ամին Հաֆեզը, ով միաժամանակ իրականացնում էր Գամաֆիսի ռազմական մահանգապետի պարտականությունները: Պաշտպանության նախարար նշանակվեց Մուհամմադ Աս-Մուֆին, գլխավոր շտաբի պետ՝ Ջիյադ Ալ-Հարիրին, իսկ ՋՌ-ի գլխավոր հրամանատար՝ Ռաշիդ Ալ-Աբասին<sup>416</sup>: Կառավարության մեջ մտան նաև Մամի Ալ-Ջունեյին, Նիհադ Ալ-Քասիմը, Մամի Մուխան, Հանի Հինդին, Ջիհադ Գահին և այլք<sup>417</sup>: Նոր կառավարությունը հայտարարեց, որ այն հանդես է գալիս հանուն արաբական միասնության և արաբական սոցիալիստական հասարակություն կառուցելու, և որ իր հիմնական խնդիրն է համարում ԱՄՀ-ի և Իրաքի հետ Սիրիայի միավորումը<sup>418</sup>:

<sup>413</sup> Louisian Bittan, *حافظ الأسد، مسيرة مثاضل، ترجمة عن الفرنسية الياس بيوي،* صفحة ٩١.

<sup>414</sup> مطاع صغدي، حزب البعث، مسأله المواد مسأله لتهابه، بيروت، ١٩٦٤، صفحة ٢٩٧.

<sup>415</sup> ناجي عبد النبي بزي، المصدر المذكور، صفحة ٢٣٦.

<sup>416</sup> هسان محمد رشاد حاد، المصدر المذكور، صفحة ١٥٥.

<sup>417</sup> Rabinovich I., *Աշխ.*, էջ 219:

<sup>418</sup> Kattar Moxamec Azma, *Աշխ.*, էջ 113-114:



«Քասախ» առջև ծառայած խնդիրներից էր քաղաքական դիրքերի ամրապնդումը, որին այն փորձեց հասնել՝ հայտարարելով, թե պատրաստ է բանակցություններ սկսել ԱԿՀ-ի և Իրաքի ղեկավարների հետ՝ արաբական միասնական պետության ստեղծման հարցում<sup>419</sup>:

Մարտի 10-ին Դամասկոս ժամանեց Իրաքի կառավարական պատվիրակությունը, որը գլխավորում էր քառասական ազգային ղեկավարներից նախարար Ալի Մաադին: Պատվիրակության կազմում էին նաև Իրաքի պաշտպանության նախարար զեմերալ Սալեհ Մահդի Ամմաշը, ԱԳ նախարար Շաբաքին և իրաքյան բանակի շտաբի պետ Թահիր Յահյան: Երկու երկրների բաասական ղեկավարների միջև տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ Ալի Մաադին հայտարարեց, որ Իրաքն աջակցություն է ցույց տալու Սիրիային և պատրաստ է իր արամադորության տակ եղած բոլոր միջոցներով օժանդակել Սիրիայի ժողովրդին ու նրա հաղթական հեղափոխությանը: Սիրիայի արաբյան խորհրդակցության ժամանակ կողմերը համաձայնության եկան արաբական հինգ երկրների՝ Սիրիայի, Եգիպտոսի, Իրաքի, Ալժիրի և Եմենի միջև ռազմական և քաղաքական համագործակցություն հաստատելու հարցում: Այդ համաձայնագրով նշված երկրների զինված ուժերը, ստանց որևէ նախազգուշացման, իրավունք ունենին միջամտելու, եթե հինգ երկրներից որևէ մեկն արտաքին հարձակման կամ երկրում առաջադիմական վարչակարգը տուպալելու դավադրության ենթարկվեր<sup>420</sup>:

Դամասկոսի խորհրդակցության ժամանակ կարևորագույն խնդիրը համարվեց արաբական երեք երկրների՝ Սիրիայի, Եգիպտոսի և Իրաքի միջև դաշնակցային միություն ստեղ-

<sup>419</sup> «Մասա» կուսակցության էինական կարգախոսներն էր «միասնություն, ազատություն, սոցիալիզմ»:

الحزب هو التنظيم الشعبي لطبقة مناضلة في سبيل أهداف الشعب وتطلعاته في الوحدة والحرية والاشتراكية. انظر حزب البعث العربي الاشتراكي، القيادة القومية، المتنازع الحزبي، ١٩٦٥، ص ٢٢.

<sup>420</sup> Շաբրմյան Ն. Տ., նշվ. աշխ., էջ 282:

ծելու հարցը: Բասասկաններն այն տեսակետին էին, որ երեք երկրներից պետք է միավորվեն պետական մեկ համակարգի մեջ: Ելնելով դրանից՝ ցրանք համաձայնության եկան միավորման հարցի շուրջ բանակցություններ սկսելու համար դիմել Եգիպտոսին:

1963 թ. մարտի 14-ին Կահիրեում բանակցություններ սկսվեցին Միրիայի, Եգիպտոսի և Իրաքի միջև: Միրիայի պատվիրակությունը գլխավորում էր Սալահ Ալ-Քիտաբը: Բանակցությունները տեղի ունեցան երեք փուլով և ավարտվեցին ապրիլի 17-ին<sup>42</sup>: Միրիայի քասսականները բանակցությունների ժամանակ փորձում էին կազմավորել այնպիսի միություն, որտեղ Արդել Նասերի ազդեցությունը տարածվեր միայն Եգիպտոսի վրա և «Բասա» կուսակցությունը կարողանար պահպանել իր տիրապետող դիրքերը: Նրանք փորձում էին համոզել հիմնելու մի այնպիսի պետություն, որտեղ յուրաքանչյուր երկիր պահպաներ իր ներքին անկախությունը, ստեղծվեր նախագահական խորհուրդ, որը ստանձնելու էր գերագույն իշխանության պարտականությունները, կազմված էր լինելու վեց անդամներից՝ յուրաքանչյուր երկրից երկու հոգի: Սակայն Եգիպտոսի ղեկավարությունը շքեղուհեց դա, որովհետև քասսականները մեծամասնություն կկազմեին և ամբողջ իշխանությունը կկենտրոնացնեին իրենց ձեռքում: Եգիպտոսը համոզեց եկավ իր պահանջներով՝ գտնելով, որ դաշնակցային պետությունը պետք է ունենա միայն մեկ ղեկավար:

1963 թ. ապրիլի 17-ին Կահիրեում ստորագրվեց համաձայնագիր՝ դաշնակցային պետություն ստեղծելու մասին, որն իրականացվելու էր առաջիկա հինգ ամիսների ընթացքում: Այդ համաձայնագրով Միրիան, Եգիպտոսը և Իրաքը կազմում էին մեկ դաշնային պետություն, որն անվանվելու էր Արաբական Միացյալ Հանրապետություն, որի մայրաքաղաքը լինելու էր Կահիրեն: Նոր պետության կենտրոնական իշխանության իրավասության մեջ մտնելու էին արտաքին քաղաքականությունը, պաշտպանությունը, ազգային անվտանգությունը և

<sup>42</sup> Kattar Moxamed Amr, ՅԶԳ, աշխ., էջ 115:

այլմ<sup>422</sup>: Պետության ղեկավար համդիսամարտ էր Ազգային ժողովի կողմից չորս տարի ժամկետով ընտրված նախագահը, որը լինելու էր նաև ԶՈՒ-ի գլխավոր հրամանատարը և պաշտպանության ազգային խորհրդի նախագահը:

Համաձայնագիրը դեռ նոր էր ստորագրվել, երբ տարածայնություններ առաջացան Միդիայի բաասականների ու Եգիպտոսի ղեկավարության միջև, որն էլ համզեցրեց ևռյակ միության ձախողմանը: Մայիսի 3-ին եգիպտական կառավարությունը որոշեց հետաձգել մայիսի 12-ի նախատեսվող բանակցությունները՝ միացյալ զինվորական հրամանատարություն ստեղծելու վերաբերյալ: Դա պատճառաբանվում էր նրանով, որ զինվորական միավորումը չէր կարող այդպիսովես լինել, եթե քաղաքական միավորումը սպառնալիքի տակ էր: Քաղաքական միավորում ասելով հասկացվում էր երեք պետություններում քաղաքական նակատների ստեղծումը, այսինքն՝ հանուն միասնության հանդես եկող յուր քաղաքական ուժերի միավորումը:

1963 թ. ապրիլին սիրիական բանակից հեռացվեցին 47 յունիոնիստ սպաներ, որոնք փոխարինվեցին ՌԿ-ի սպաներով<sup>423</sup>, իսկ մայիսի 2-ին վեց յունիոնիստ նախարարներ երաժարական տվեցին, որոնք պահանջում էին «Բաաս» կուսակցության հետ հավասար ներկայացուցիչներ ունենալ կառավարության կազմում: Մայիսի վերջին ցույցեր տեղի ունեցան Դամասկոսի մերձակայքում, որտեղ յունիոնիստները, կենտրոնացնելով զրահատանկային և հետևակային զորամիավորումներ, կառավարությունից պահանջեցին անհապաղ կենսագործել միասնության վերաբերյալ ծրագրերը և վերականգնել բանակից հեռացված սպաներին:

1963 թ. մայիսի 10-ին Սալահ Ալ-Բիտարը ստիպված երաժարական տվեց, որին փոխարինեց Մամի Ալ-Ջունդին: Կառավարության այդ քայլը կարելի է համարել որպես բաասականների մի նոր փորձ՝ մերձենալու յունիոնիստների հետ, սակայն

<sup>422</sup> Չալլոնյան Ն. Տ., 624. աշխ., էջ 284:

<sup>423</sup> Van Dam N., 624. աշխ., էջ 12:

իրականում իշխամությունը սկսեց աստիճանաբար անցնել քանակի ձևերը, որտեղ յունիոնիստներին հեռացնելուց հետո գերակշռող դիրք էին գրավում քառասականները: Մամի Ալ-Ջումեյի կառավարությունը գործեց երեք օր, և 1963 թ. մայիսի 13-ին կրկին այն գլխավորեց Մալահ Ալ-Քիտաբը<sup>424</sup>: 1963 թ. հուլիսի 1-ին «Բասսը» հայտարարեց 25 հազարամոց սեփական զինված ուժերի՝ ազգային գվարդիայի ստեղծման մասին, որի հրամանատար նշանակվեց գեղապետ Համադ Ռալայը:

1963 թ. հուլիսի 18-ին քանակից հեռացված սպանելի մի խումբ՝ կապիտան Մուհամմադ Նարահանիի գլխավորությամբ, Դամասկոսի կայազորի մի մասի աջակցությամբ փորձեց գրավել քանակի գլխավոր շտաբի շենքը և ռադիոկայանը: Մակայն հեղաշրջման այդ փորձը տապալվեց<sup>425</sup>: Հուլիսի 22-ին Արդել Նասերը հայտարարեց, որ Եգիպտոսը հրաժարվում է մասնակցելու դաշնակցային միությանը և ապրիլի 17-ի համաձայնագիրը չիրականացալ<sup>426</sup>:

Եռյակ միության ստեղծման ծրագիրը ճախողվելուց հետո քառասականները որոշեցին միասնություն ստեղծել երկու երկրների միջև: 1963 թ. ամռանը Սիրիայի և Իրաքի քառասականների միջև խորհրդակցություններ տեղի ունեցան, որոնց ժամանակ տարբեր հարցեր քննարկվեցին երկու երկրների ռազմական ուժերի վերաբերյալ<sup>427</sup>:

1963 թ. սեպտեմբերի 28-ին Սիրիայի զինվորական պատվիրակությունն Իրաքի հետ ռազմական միություն ստեղծելու համար քանակցություններ սկսեց: Հոկտեմբերի 9-ին Դամասկոսում սիրիաիրաքյան ռազմական միություն ստեղծելու մասին համաձայնագիր ստորագրվեց, որտեղ նշվում էր, որ երկու երկրներում տեղի ունեցած փետրվար-մարտյան հեղաշրջումների պատասխանատվություն են կրում ոչ միայն հեղափոխության նվաճումների պաշտպանության համար, այլև նրանց

<sup>424</sup> Пир-Булатова Э. П., *ibid.*, աշխ., էջ 185:

<sup>425</sup> *البعث*, دمشق, 19 تموز, 1963.

<sup>426</sup> *النس* 27 تموز, 1963.

<sup>427</sup> Каапар Мохамед Амин, *ibid.*, աշխ., էջ 117:



արձակելու նրա կողմնակից 30 սպայի, որոնց պաշտոններում նշանակվեցին քառասկան սպաներ: Հեղափոխական հրամանատարության ազգային խորհրդի նախագահ Լուայ Ալ-Աբասին գերադասեց չվիճել քառասկանների հետ և Ալ-Հարիրիին ազատեց պաշտոնից՝ նրա փոխարեն նշանակելով Ամին Հաֆեզին, ով դարձավ այդ ժամանակաշրջանի Միջուայի ամենաազդեցիկ մարդկանցից մեկը: Շուտով սրվեցին իսրայել-բուրջուհները Հեղափոխական հրամանատարության ազգային խորհրդի ներսում, որտեղ պայքար էր ընթանում Ամին Հաֆեզի և նրա տեղակալ Մուհամմադ Ումրանի միջև:

1963 թ. նոյեմբերի 12-ին Սալահ Ալ-Քիտաբը հրաժարական տվեց, և նոր կառավարությունը, որը քաղկացած էր մեծ մասամբ ճախ քառասկաններից, գլխավորեց Ամին Հաֆեզը: Կառավարության մեջ մտան նաև այ քառասկանների մի քանի ներկայացուցիչներ, որոնց թվում էր նաև Մուհամմադ Ումրանը: Վերջինիս և նրա կողմնակիցների, ինչպես նաև նրանց պաշտպանող ազգային գվարդիայի հրամանատար Համադ Ուրայդի վրա էր հեմվում «Քաասի» այ ղեկավարությունը՝ Միշել Աֆեակի գլխավորությամբ: Շուտով Ամին Հաֆեզի և Մուհամմադ Ումրանի միջև, բացահայտ պայքար սկսվեց<sup>400</sup>: Ամին Հաֆեզը բանտից ազատ արձակեց 74 քաղաքական գործչի, որոնց թվում էին նախկին նախագահ Նազիմ Ալ-Կուդսին, Խալիլ Ալ-Ազմը և ուրիշներ: Ամին Հաֆեզը հայտարարեց, որ «Քաաս» կուսակցության ղեկավարությունը բանակցություններ է վարում Ակրան Ալ-Հատրանիի հետ, որպեսզի Ալ-Հատրանին և իր խումբը վերադառնան կուսակցություն: Դա հանգեցրեց Մուհամմադ Ումրանի դժգոհությանը, որին պաշտպանում էր Հեղափոխական հրամանատարության ազգային խորհրդի անդամների մեծ մասը<sup>401</sup>:

1964 թ. հունվարի 24-ի նիստում «Քաասի» ղեկավարությունն առաջարկեց կուսակցությունից հեռացնել Ալ-Քիտա-

<sup>400</sup> Գիթ-Մուդադդիմա Է. Պ., նշվ. աշխ., էջ 56-57:

<sup>401</sup> Kaatir Moxanez Amn, նշվ. աշխ., էջ 123:

րին<sup>432</sup>։ Միշեւ Աֆլակը մարգային համագումար հրավիրեց, որի արդյունքում աջ թևի կողմնակիցներից ընտրվեց մարգային մոր ղեկավարություն, որի 15 անդամներից 7-ը ներակայացնում էին ՌԿ-ի սպաները։ Նրանց շարքում էին Ամին Հաֆեզը, Մուհամմադ Ումրանը, գլխավոր շտաբի պետ Սալահ Ջադիդը, տամկային քրիզադի հրամանատար Համադ Ուբայդը, ռազմաօդային ուժերի հրամանատար Հաֆեզ Ալ-Ասադը, Ռաբահ Աու-Տավիլը և Արդ Ալ-Քարիմ Ալ-Ջուհրին։ Այդ ժամանակ ՌԿ-ում կար երեք խմբավորում։ Առաջին խումբը, որի մեջ մտնում էր կոմիտեի անդամների մեծամասնությունը, գլխավորում էր Սալահ Ջադիդը, որոնք պահանջում էին սոցիալ-տնտեսական վերափոխումներ կատարել։ Երկրորդ խումբը փոքրամասնություն էր կազմում, որի առաջնորդն էր գեներալ Մուհամմադ Ումրանը։ Այդ խմբի անդամները հիմնականում սատարում էին Միշեւ Աֆլակի և Սալահ Ալ-Քիտաբի դիրքորոշումն ազգային ղեկավարությունում։ Երրորդ խումբը կազմված էր գեներալ Ամին Հաֆեզի կողմնակիցներից, որի անդամները կենտրոնական դիրքորոշում ունեին<sup>433</sup>։

1964 թ. փետրվարի 22-ին ցույցեր տեղի ունեցան Համալում, որոնք ճնշվեցին կառավարության կողմից։ Չեքրակալությունների տեղի ունեցան Համալում, Հալեպում, Լաթաքիայում, Դեյր Ազ-Ջորում և այլուր։

1964 թ. կեսերին նախագահական խորհույդ ընտրվեց, որի կազմի մեջ մտան Ամին Հաֆեզը՝ որպես նախագահ, Սալահ Ալ-Քիտաբը և Մուհամմադ Ումրանը՝ որպես տեղակալներ և «Բաաս» կուսակցության երկու ներկայացուցիչներ՝ Նուր Ադ-Դին Ալ-Աբասին և Մամսուր Ալ-Աթրաշը՝ որպես անդամներ։ Սալահ Ալ-Քիտաբը կազմեց մոր կառավարություն, որը քաղկացած էր հիմնականում քառասականներից<sup>434</sup>։

1964 թ. հոկտեմբերի 3-ին Ամին Հաֆեզը կազմեց մոր կառավարություն, իսկ Մուհամմադ Ումրանը հեռացվեց իր պաշ-

<sup>432</sup> Abu Jaber Kameel S., նշվ. աշխ., էջ 87։

<sup>433</sup> Kattar Moxameh Amm, նշվ. աշխ., էջ 125-126։

<sup>434</sup> . ١٩٦٤، ١٤ تشرين الأول، ص ٤٤

տոնից և մեղադրվեց դավադրական գործունեության մեջ, որից հետո նա նշանակվեց Մադրիդում Սիրիայի դեսպան:

1965 թ. օգոստոսին Ազգային հեղափոխական խորհրդի վերակազմավորված և ընդլայնված կազմի մեջ, քացի «Բասսսի» սպաներից, մասն նաև այլ կազմակերպությունների մերկայացուցիչներ: Ազգային հեղափոխական խորհրդի հիմնական խնդիրը դարձավ Սահմանադրության մշակումը: 1965 թ. սեպտեմբերի 1-ին Ազգային հեղափոխական խորհուրդը ընտրեց հիմնգիտզանոց նախագահական խորհուրդ՝ կազմված քառասականներից: Ետևով սրվեց պայքարը «Բասսի» ներսում: Կառավարության ձախ թևը, որին աջակցում էին «Բասսի» առաջադեմ ուժերը, անհրաժեշտ էր համարում առաջ շարժվել զարգացման ոչ կապիտալիստական ուղիով: Պայքարը «Բասսի» երկու թևերի միջև հատկապես սրվեց 1965 թ. սեպտեմբերին և ձախ թևը որոշ չափով առավելություն ունեցավ: Գններսով Ամին Հաֆեզը հեռացվեց կուսակցական գործերից և Ջու-ի հրամանատարությունից: Չախ թևի ղեկավարներից մեկը՝ Յուսուֆ Ջուեյնը, կազմեց նոր կառավարություն: Չախ թևի ներկայացուցիչներն ազդեցիկ դիրքեր գրավեցին կառավարության և «Բասսի» մարզային ղեկավարության մեջ, «Բասսի» գլխավոր քարտուղար ընտրվեց ձախ քառասական Սալահ Ջադիդը<sup>435</sup>:

1965 թ. դեկտեմբերին 20-ին Ամին Հաֆեզը, օգտվելով կուսակցության համաարարական ղեկավարության աջակցությունից, հայտարարեց «Բասսս» կուսակցության սիրիական մասի ղեկավարության լուծարման մասին<sup>436</sup>: Նրա անդամներից Ջուեյնը, Նուր Ալ-Դին Ալ-Աբասին և այլք հրաժարական ավեցին, և նոր կառավարության կազմելու գործը հանձնարարվեց Սալահ Ալ-Բիտտարին<sup>437</sup>:

<sup>435</sup> Իբր Բուդաբուլա, المصدر المذكور، صفحة ٢٢٦-٢٢٨.

<sup>436</sup> الثورة، دمشق، ٢٢ كانون الأول، ١٩٦٥.

<sup>437</sup> البعث، ٢٤ كانون الأول، ١٩٦٥.



1966 թ. հունվարի 1-ին Սալահ Ալ-Բիտարը կազմեց նոր կառավարություն, որի կազմում ընդգրկված չէին «Քաաս» կուսակցության մասկլին ղեկավարությունից, ինչպես նաև սիրիական բանակի ոչ մի սպա: Փետրվարի 15-ին հայտարարվեց Ազգային հեղափոխական խորհրդի կազմի փոփոխման մասին, որտեղից հանվեցին բանակի առաջադիմական ներկայացուցիչները և ուրիշներ: Ազգային հեղափոխական խորհուրդը, «Քաասի» մարզային ղեկավարությունը և կառավարությունը փոփոխվեցին և կազմվեցին մեծ մասամբ աջ քառասկաններից ու նրանց կողմնակիցներից<sup>428</sup>: Փաստորեն, բանակային սպաները դուրս մնացին Ազգային հեղափոխական խորհրդից, «Քաասի» մարզային ղեկավարությունից, ինչպես նաև կառավարության կազմից: Քանի որ Սիրիայի բանակի սպայական կազմի մեծ մասը բաղկացած էր ճախ քառասկաններից, ուստի Ալ-Բիտարը հարց բարձրացրեց՝ վերանայել սպայական կազմը համալրելու սկզբունքները և պատրաստվում էր հրաման տալ՝ առաջադիմ սպաների մի մեծ խումբ բանակից հեռացնելու և երկրից փոսրելու վերաբերյալ<sup>429</sup>:

Երկրում ուժեղացավ առաջադիմական ուժերի միավորման ձգտումը: «Քաասի» աջ ղեկավարությունը թերագնահատեց բանակի և «Քաասի» մարզային ղեկավարության դերը: «Քաասի» ճախ թե՛լ առաջարկեց կուսակցության համաարարական կամ մարզային համագումար անցկացնել նրկրում ստեղծված դրությունը քննարկելու համար, սակայն այդ առաջարկը մերժվեց: «Քաասի» հեղափոխական ղեկավարությունը, տեսնելով, որ ներկուսակցական վեճը հնարավոր չէ լուծել խաղաղ ճանապարհով, դիմեց բանակի օգնությանը:

1966 թ. փետրվարի 21-ին բանակից հեռացվեցին Ռե-ի սպաներ Սալիմ Հարունը, Ահմադ Մուադանը, Իզզար Տադիլը

<sup>428</sup> . ١٩٦٦ . ٥ كانون الثاني . تلس المصنر .

<sup>429</sup> . ١٩٦٦ . ٥٢٩ . الأحرار .

և այլը, որոնք Մալահ Ջադիդի համախոհներն էին<sup>440</sup>: 1966 թ. փետրվարի 23-ին զինվորական միավորումները՝ լուծարված «Բասսի» մարզային ղեկավարության անդամների հրամանատարությամբ, հեղաշրջում կատարեցին<sup>441</sup>: Միշն Ալիակը, Մալահ Ալ-Բիտարը, Մուհիթ Ռազզազը<sup>442</sup> և զեներալ Մուհամմադ Ռմրանը<sup>443</sup> տնային կալանքի ենթարկվեցին, իսկ Ամին Հաֆեզը, ով զինված դիմադրություն էր ցույց տվել հեղաշրջման ժամանակ՝ ձերբակալվեց<sup>444</sup>: Իշխանությունն անցավ «Բասսի» մարզային ժամանակավոր ղեկավարությանը, որի կազմի մեջ մտան կուսակցական ծախս, հեղափոխական դեմոկրատական քնի մերկայացուցիչները: Նրա գլխավոր քարտուղար կրկին նշանակվեց Մալահ Ջադիդը, իսկ ՍԱՀ-ի նախագահ՝ Նուր Ադ-Դին Ալ-Աբասին<sup>445</sup>: Կառավարությունը գլխավորեց Յուսուֆ Ջուեյնը<sup>446</sup>, պաշտպանության մախարաթի պաշտոնը ստանձնեց Հաֆեզ Ալ-Ասադը<sup>447</sup>, ԱԳ նախարարինը՝ Իբրահիմ Մախուսը, իսկ ՆԳ նախարար՝ Մուհամմադ Յիդ Աշ-Շաուխին<sup>448</sup>:

«Բասսի» ծախս ղեկավարությունը բանակը հռչակեց կուսակցության անբաժան մասը: Բանակին հնարավորություն տրվեց ոչ միայն պաշտպանել երկրի հեղափոխական նվա-

<sup>440</sup> Омар Махмуд Шаар, Социально-политическое развитие Сирии (1963-1970 гг.), Диссертация, Университет Дружбы Народов имени Патриса Лумумбы, Москва, 1983, с. 93-94.

<sup>441</sup> Rabinovich E., ԶԻՎ աշխ., էջ 154:

<sup>442</sup> Մուհիթ Ռազզազը ծնվել է 1919 թ. Դամասկոսում: Նա սովորել է Ամմանում և երեսուրդներում: 1946 թ. ավարտել է Կահիրեի համալսարանի բժշկական ֆակուլտետը: Մուհիթ Ռազզազը 1950 թ. անդամագրվել է «Բասսի» կուսակցությանը: Տե՛ս Բелоренко В. М., ԶԻՎ աշխ., էջ 82:

<sup>443</sup> 1967 թ. Մուհամմադ Ռեբանն արժարտվեց Լիբանան, իսկ 1972 թ. մարտի 4-ին Լիբանանի Տրիպոլի քաղաքում սպանվեց: Տե՛ս

... ١١٨ المصنر المذكور، صفحة

<sup>444</sup> Пир-Будатова Э. П., ԶԻՎ աշխ., էջ 214:

<sup>445</sup> Омар Махмуд Шаар, ԶԻՎ աշխ., էջ 94:

<sup>446</sup> Волгин О. Н., Ливанский хулаа, Серия 25 лет по пути революции, Москва, 1988, с. 16.

<sup>447</sup> Хусейн Халед, Сирия: социально-политическое развитие 1963-1993 гг., Диссертация, РАН ИВ, Москва, 1995, с. 36.

<sup>448</sup> Омар Махмуд Шаар, ԶԻՎ աշխ., էջ 95:

նումները, այլ նաև մասնակցել սոցիալական վերափոխումների իրականացմանը<sup>449</sup>։ Կառավարությունը բանակը զուեց այդ բառատականներից և առաջ քաշեց «բանակը պաշտպանության և խաղաղ շինարարության» համայն կարգախոսը։ Սլեյխայի ղեկավարությունը վարում էր արարական բոլոր առաջադիմական երկրների հետ մերձեցալու և համագործակցելու քաղաքականություն<sup>450</sup>։

1966 թ. մարտի 13-ին սիրիական պատվիրակությունը՝ Յուսուֆ Ջուեյնի ղեկավարությամբ, Կահիրեում մասնակցեց արարական պետությունների ղեկավարների խորհրդակցությանը<sup>451</sup>։

Շուտով կառավարության դեմ սկսեցին հանդես գալ «Բաասի» այդ թևի կողմնակիցները։ 1966 թ. սեպտեմբերի 6-ին կառավարությունը հայտարարեց դավադրության բացահայտման մասին, որ կազմակերպել էին Միշել Աֆլակն ու Սալահ Ալ-Քիտարը<sup>452</sup>։ Սեպտեմբերի 8-ին մեկ այլ ռազմական հեղաշրջման փորձ կատարվեց, որի կազմակերպիչը «Բաասի» մարզային ղեկավարության նախկին անդամ մայոր Սալիմ Հարունն էր<sup>453</sup>։ Սալիմ Հարունը զինված ուժերում ստեղծել էր սեփական «ռազմական գաղտնի կազմակերպություն», որի անդամների մեծ մասը դուրս տղամեր էին<sup>454</sup>։ Սիրիայի նախագահ Նուր Ադ-Դին Ալ-Աբասին, նշելով «Բաաս փեթրոլիումի» մասնակցությունն այդ դավադրություններին, քննդժեց, որ նրանց նպատակն է մամադարն քայել հետադիմության, նավթային մեծաշնորհի և ինվերսիայի գծի առջև, հարված հասցնել հեղափո-

<sup>449</sup> Berberoglu Berch, *Power and Stability in the Middle East*, London and New Jersey, 1989, p. 20.

<sup>450</sup> Կարտր Մոխամեդ Ամր, նշվ. աշխ., էջ 137-138.

<sup>451</sup> الثورة ١٠ آذار، ١٩٦٦.

<sup>452</sup> البعث، ٧ أيلول، ١٩٦٦.

<sup>453</sup> نفس المصدر، ١٠ أيلول، ١٩٦٦.

<sup>454</sup> Van Dam N., *The Struggle for Power in Syria, Sectarianism, Regionalism and Tribalism in Politics* (1961-1980), London, 1981, p. 70.

խությանը և ի շիր դարձնել նրա մվաճումներն ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականություն<sup>455</sup>:

1966 թ. սեպտեմբերին Ղաճապետում տեղի ունեցած «Փառա» կուսակցության համաարարական 9-րդ համագումարում սահմանվեցին Սիրիայի ձախրատաակամ ղեկավարության արտաքին քաղաքական գործունեության հիմնական սկզբունքներն ու ուղղությունները, որոնց հիմքում ընկած էին համագումարի ցնթացքում մշակված ազատագրական պատերազմի դրույթները: Մասնավորապես նշվում էր, որ Սիրիայում տեղի ունեցած ձախրատաականների հեղափոխությունն արարական համագզային հեղափոխության քաղկացուցիչ մասն է կազմում: Արարական միասնության հարցը կաշող է լուծվել հեղափոխական գաղափարախտատության հիմքի վրա և քողոք արարական պրոգնեշիվ ուժերի համախմբման միջոցով: Պարզեսինի ազատագրոմք ձախրատաականների արտաքին քաղաքականության առաքնահերթ խնդիրներից էր, որը պետք է լուծվեր համաարարական ազգային ազատագրական պայքարի միջոցով և դատմար համաարարական հեղափոխության հարթանակի մախապայմանը<sup>456</sup>:

1966 թ. նոյեմբերին Սիրիան և ԱՄՆ-ն կնքեցին համատեղ պաշտպանության պայմանագիր, որը մախատեսում էր համաձայնեցնել ռազմական և քաղաքական գործողությունները, նքն կողմերից որևէ մեկը հարծակման նքարկվեր: 1966 թ. ղեկտեմբերի 19-ին մեկ այլ համաձայմագիր սողորագրվեց Սիրիայի և Նորինրդային Սիտության միջև՝ տեխնիկական համագործակցության մասին<sup>457</sup>:

<sup>455</sup> Գրիգորյան Հ. Մ., Սիրիայի սգայքաք «Նրար փերթեղոն քոնփանիթ» հեղ կոնցեսիոն համաձայնագրի վերամայման համար, Սիրծակոք և Միջին Արևելյի երկրներ և ժողովուրդներ, հատոր 15-րդ. երկուն, 1989, էք 75:

<sup>456</sup> Գրիգորյան Գ. Մ., *Позняя Сирия в ближневосточном конфликте*, Ереան, 1989, ս. 59-64.

<sup>457</sup> *Важная политика стран Ближнего и Среднего Востока*, ИВ АН СССР, Москва, 1984, с. 146.

1966 թ. վերջերից իսրայելական զինված ուժերը դրվեցին մարտական վիճակի մեջ: Բանակ զորակազմեցին լրացուցիչ ուժեր: Սիրիական սահմանագլխին Իսրայելը կենտրոնացրեց խոշոր ռազմական ուժեր: «Բասսի» սիրիական մարզային դեկալարոսյան որոշմամբ՝ հիմնվեց Ժողովրդական պաշտպանության բարձրագույն կոմիտե, որը սկսեց կազմակերպել ժողովրդական աշխարհագորայինների խմբեր: Նրանց հետ ձուլվեց մախկիմում կուսակցական հիմքի վրա կազմված ազգային գվարդիան, և 1967 թ. ժարտին որոշում ընդունվեց այդ ջոկատները միավորել Ժողովրդական բանակի մեջ, որը կամոնավոր բանակի հետ միասին, ազդեսիայի դեպքում, կմասնակցեր երկրի պաշտպանությանը<sup>458</sup>: Այդ ժամանակ սիրիական բանակն ուներ 113 մարտական ինքնաթիռ, հակաօդային ուժերը բաղկացած էին հրետանուց, որոնք զինված էին 37, 57, 85 և 100 մմ տրամաչափի հրամորթներով, ռազմածովային ուժերը կազմված էին 26 ռազմամավերից՝ երկու 254-Կ, վեց 183 ռ և 16 պո 123 տեսակի ռազմամավեր ու երկու ֆրանսիական արտադրության պարեկային նավ<sup>459</sup>:

1967 թ. մայիսի 14-ին ՄԱԿ-ում Սիրիայի ներկայացուցիչը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին տեղեկացրեց սիրիական սահմանի մոտ իսրայելական զորքերի կենտրոնացման և Սիրիայի դեմ Իսրայելի կողմից պատերազմի ցացահայտ սպառնալիքի մասին: Խորհրդային Միությունը Մեքոավոր Արևելքում ստեղծված իրավիճակի մասին հայտադարձությանը համղես եկավ՝ ընդգծելով, որ պաշտպանում է արաբական երկրներին<sup>460</sup>:

1967 թ. հունիսի 5-ին՝ ժամը 13-ին, Սիրիայի ռազմաօդային ուժերը հարված հասցրին իսրայելական երեք օդակայանների 22 ինքնաթիռներին, իսկ իսրայելական ռազմաօդային ուժերը փոխարդարաբար հարվածեցին սիրիական չորս օդակայաններին: Վեց օր տևած արաբ-իսրայելական պատերազմում արաբները պարտություն կրեցին: Պատերազմի արդյուն-

<sup>458</sup> Փր-Ռուսադան Է. Պ., ճշվ. աշխ., էջ 80-81:

<sup>459</sup> Юрченко В. П., ճշվ. աշխ., էջ 36:

<sup>460</sup> Манушарян А. Л., ФРГ в ближневосточном конфликте (1960-1980-е гг.),

քում Իսրայելին հաջողվեց գրավել արարական երկրներին պատկանող ընդարձակ՝ մոտ 70 000 կմ քառ. տարածք<sup>461</sup>։ Իսրայելն ԱՄՆ-ից զավթեց Միմայ թերակղզին՝ դուրս գալով Մոնզի ջրանցքի արևելյան ափը, Շարմ Ալ-Շեյխը, Հորդանան գետի արևմտյան մասը, Միրիային պատկանող Ալ-Կուննյարան ու Գուլանի բարձունքները՝ կանգ առնելով Դամասկոսից բնթամնը 40 կմ հեռավորության վրա։ Միրիայի բանակը պատերազմի ընթացքում կորցրեց 32 ՄԻԳ-21, 23 ՄԻԳ-15 և ՄԻԳ-17, 2 ԻԼ-28 ինքնաթիռ և 3 ՄԻ-4 ուղղաթիռ<sup>462</sup>։

Արաբական երկրները, Խորհրդային Միությունը և սոցիալիստական մյուս երկրները փորձեցին օգնել սիրիական իշխանություններին՝ վերացնելու պատերազմի հետևանքները<sup>463</sup>։

Արաբ-իսրայելական կրոնյա պատերազմը որոշ բարդություններ առաջացրեց նաև Միրիայի ներքաղաքական կյանքում։ «Բաասի» ղեկավարությունը կարողացավ որոշ չափով ուժեղացնել իր ազդեցությունը։ Պատերազմից հետո Միրիան հայտնվել էր ներքաղաքական և սոցիալ-տնտեսական ծանր դրության մեջ։ «Բաաս» կուսակցությունում իրար դեմ էին պայքարում երկրի ներքին և արտաքին քաղաքականության մեջ տարբեր սկզբունքներ ու մտածելամեթոդ ունեցող քաղաքացիական և զինվորական խմբավորումները։

1967 թ. հունիսի 10-ին Խորհրդային Միությունը և սոցիալիստական մյուս երկրները խզեցին դիվանագիտական հարաբերություններն Իսրայելի հետ։ 1967 թ. նոյեմբերի 22-ին, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը միաձայն ընդունեց թիվ 242 քա-

<sup>461</sup> Редак ИАКс, Военно-историческое исследование арабо-израильских войн 1948-1982 гг., Диссертация, Министерство Обороны СССР, Ордену Красной Звезды Институт Военной Истории, Москва, 1990, с. 66-68.

<sup>462</sup> Клемент В. Н., Советско-сирийские отношения 1966-1976 гг., Диссертация, Киевский орден Ленина, Государственный Университет имени Т. Г. Шевченко, Киев, 1978, с. 65. 1967-1970 թթ. Միրիայի բանակը ստացել է 70-80 ՄԻԳ-21, 50-60 ՄԻԳ-17, շուրջ 20 ՍԻ-7 ինքնաթիռներ և 10 ՄԻ-8 ուղղաթիռ, ինչպես նաև 1969 թ. ձևավորվեց աստիճան տանկային դիվիզիան, որի մեջ մտան 5-55 տանկեր։ Տե՛ս Առան ևսա Իսմաիլ Մախրուֆ, նշվ. աշխ., էջ 25։

<sup>463</sup> Иссам Асфьян, նշվ. աշխ., էջ 36։

նաձևը, որը նախատեսում էր իսրայելական զորքերը դուրս քե-  
լել արաբական բոլոր բռնագրավված տարածքներից, Մերձա-  
վոր Արևելքում հաստատել կայուն և արդարացի խաղաղու-  
թյուն, ճանաչել տարածաշրջանի բոլոր պետությունների քաղա-  
քական անկախությունը, անվտանգ գոյությունն ու տարածքա-  
յին ամբողջականությունը, և վերջապես արաբացիորեն լուծել  
պաղեստինյի գաղթականների հարցը: 242-րդ քանաձևի ըն-  
դունման միայն վաստը քարենպաստ պայմաններ էր ստեղ-  
ծում Մերձավոր Արևելքում խաղաղություն հաստատելու հա-  
մար<sup>464</sup>: Պատերազմի արդյունքում Սիրիան խզեց դիվանագի-  
տական հարաբերություններն ԱՄՆ-ի հետ, որոնք վերա-  
կանգնվեցին միայն 1974 թ., բայց հիմնականում չփոխեցին ի-  
րենց հակամարտ կողմերը<sup>465</sup>:

1967 թ. պատերազմում պարտության և ճախրատեսական-  
ների կողմից վարվող քաղաքականության նկատմամբ անհան-  
դուրժողականության պատճառով քանակը հայտնվեց քարո-  
չական և հոգեբանական ճգնաժամի մեջ: Բանակն արտացո-  
լում էր Սիրիայում տիրող դժգոհությունն ու անվտանգության  
մթնոլորտը երկրի ճախրատեսական ղեկավարության նկատ-  
մամբ: Բանակային շրջանակն ավելի սրտի էր գնահատում  
Սիրիային սպառնացող այն վտանգը, որը բաքնված էր ժո-  
ղովրդաազատագրական պատերազմի հայեցակարգի պա-  
հանջներին համապատասխան Իսրայելի դեմ զինված պայքա-  
րի քաղաքականության շարունակման փորձում՝ միջադարա-  
կան ասպարեզում երկրի աճող մեկուսացման պայմաններում:  
Ի տարբերություն ճախ քեի ներկայացուցիչների՝ Ալ-Ասադն ու  
նրա կողմնակիցները գտնում էին, որ ժողովրդաազատագրա-  
կան պատերազմն ու անկանոն զինված խմբավորումների մի-  
ջոցով պայքարն Իսրայելի դեմ Սիրիային ոչինչ չի տա: Նրանք  
անհրաժեշտ էին համայում նախատեսյ ստեղծել ուժեղ և մար-

<sup>464</sup> Մարտյան Պ. Հ., Արաբական Արևելքի կամոմխտական կուսակցու-  
թյունների և առաջադեմական ուժերի պայքարը դեմոկրատիայի և սոցիալ-  
տնտեսական վերափոխումների համար, Երևան, 1986, էջ 18-19:

<sup>465</sup> Կարապետյան Թ., Սիրիա-ամերիկյան հարաբերությունները (1967-  
1996), Երևան, 2000, էջ 23:

տանակ բանակ, ձևոր քերել անհրաժեշտ սպառազինություն, որի միջոցով էլ հնարավոր կլիներ ազատագրել կորցրած տարածքները: Իրեն վերապահելով մերձավորարևելյան ճգնաժամի ռազմական քննության հարցերի լուծման առաջնայնությունը՝ զինվորական խմբակցությունը պահանջում էր ցուցաբերել առավել սրտի և իրատեսական մոտեցում Միրիայի միջարարական քաղաքականության խնդիրներում, բարելավել հարաբերություններն Իսրայելին դիմագրավող և արարական աշխարհում Միրիային ռազմավարական թիկունք սպանովելու ընդունակ երկրների՝ Եգիպտոսի, Հորդանանի և Իլյաքի հետ: Թանակի վերահսկողության տակ դնել թուր սիլիական զինվորական կազմավորումները, այդ թվում նաև Միրիայի տարածքից գործող պաղեստինյան հայրուկներին<sup>466</sup>:

«Թաաս» կուսակցության զինվորական քնն պահանջում էր ավելի շատ ուշադրություն դարձնել Միրիայի քանակի ամբողջական գործին: Այս և մի շարք այլ պահանջներ առաջադրվեցին 1968 թ. սեպտեմբերին տեղի ունեցած «Թաաս» կուսակցության 4-րդ մարզային համագումարի պատվիրակների քննարկմանը<sup>467</sup>:

Չախրասատկանների քաղաքականության նկատմամբ զնալով խորանում էր դժգոհությունը սիրիական բանակում, որտեղ դժգոհության հետագա անի պատճառներից մեկն էլ կապված էր արևելյան ճակատի հրամանատարություն ստեղծելու պայմանագրի իրագործման վերաբերյալ Միրիայի դեկլարության դիրքորոշման հետ:

1969 թ. հունվարին կնքված համաձայնագիրը մախատեսում էր ստեղծել նուակողմ խորհուրդ՝ Միրիայի, Իլյաքի և Հորդանանի բանակների գլխավոր շտաբի պետերի մասնակցությամբ:

<sup>466</sup> Գրիգորյան Հ. Մ., Միրիայի ճախրասատկան դեկլարացիայի դիրքորոշումը մերձավորարևելյան ճգնաժամի նկատմամբ (1967-1970 թթ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Խաղորդ 14-րդ տրեսն, 1987, էջ 58-59:

<sup>467</sup> حزب البعث العربي الاشتراكي، القيادة القومية، دراسة تاريخية تحليلية موجزة لتشكيل حزب البعث العربي الاشتراكي 1963-1971، دمشق، 1972، صفحة 109.



յամբ: Միքիայի «Բաաա» կուսակցության որոշ ղեկավարներ, ովքեր վառ հարարեությունների մեջ էին իրաքյան «Բաաաի» հետ, փորձում էին խոչընդոտել իրաքյան զորքերի մուտքը Միքիա: Հարավային Միքիայի Աս-Սուեյդա քաղաքում ստեղծվեց արևելյան ուղղմանակառի հրամանատարություն՝ իրաքյան սպայի գլխավորությամբ<sup>466</sup>:

«Բաաա» կուսակցության մարզային ղեկավարությունում գերակա դիրքեր գրավելու նպատակով՝ Մադահ Ջադիդի և Հաֆեզ Ալ-Մաադի մրցակցությունը ծայրաստիճան սրվեց հատկապես 1969 թ.-ից: Ջադիդի կողմնակիցները, ովքեր գերիշխող դիրքեր ունեին կուսակցության Լաքահայի մասնաճյուղում, փորձեցին վերացնել Ալ-Մաադի ազդեցությունը: Վերջինս հրամայեց ձերբակալել Լաքահայի մասնաճյուղի ղեկավարությանը և նրա անդամներին փոխարինեց իր կողմնակիցներով, իսկ Լաքահայի նախնազուտեղ դրվեց տնային կալանքի տակ<sup>467</sup>: 1969 թ. փետրվարի վերջին Հաֆեզ Ալ-Մաադը զորքեր մտցրեց Դամասկոս և Հալեպ, որոնք զբաղեցրին ռադիկալայանները, ինչպես նաև պաշտոնական թերթերի խմբագրությունները<sup>470</sup>: Նրանք շրջափակեցին գնդապետ Արդ Ալ-Բարիմ Ալ-Ջունդիի նստավայրը, ով այդ ժամանակ անվտանգության ղեկավարն էր: Ջինվորականներն առևանգեցին գնդապետի օգնականներին մի քանիսին, բռնագրավեցին գրասենյակին պատկանող ավտոմեքենաները, որից հետո Արդ Ալ-Բարիմ Ալ-Ջունդին ինքնասպան եղավ: Նրա մահից հետո Մադահ Ջադիդի ոչ պաշվի գինվորական կողմնակիցներ Ահմադ Մուվեդդանին և Ահմադ Ալ-Միրը չեզոքացվեցին<sup>471</sup>:

1969 թ. մայիսի 1-ին քննարկման դրվեց Միքիայի ժամանակավոր Սահմանադրության նախագիծը, որով Միքիան հռչակվում էր ժողովրդավարական, սոցիալիստական հանրա-

<sup>466</sup> Գրիգորյան Հ. Մ., նշվ. աշխ., էջ 59:

<sup>467</sup> Van Dam N., նշվ. աշխ., էջ 86:

<sup>470</sup> Ma'oz M., նշվ. աշխ., էջ 36:

<sup>471</sup> Мунир Савд Фахл. Одино черты в характерные особенности политический режимов в Ираке, Сирии, Ливане, Диссертация, Российский Университет Дружбы Народов, Москва, 1997, с. 94-95.

պետություն<sup>472</sup>։ Մայիսի 29-ին կազմվեց Սիրիայի նոր կառավարությունը, որի կազմում շնորհրդվեցին ձախարահասակներ Յուսուֆ Ջուեյնը և Իբրահիմ Մախալը։ Պաշտպանության նախարարի պաշտոնը ստանձնեց գեներալ-լեյտենանտ Հաֆեզ Ալ-Ասադը, իսկ ԱԳ նախարարինը՝ Մուհամմադ Աշալին։

1969 թ. հուլիսի 8-ին Կամասկոսում կայացավ Սիրիայի, ԱՄՀ-ի, Իրաքի և Հորդանանի ղառակների շտաբի պետերի հանդիպումը, որտեղ քննարկվեցին արևելյան և արևմտյան ռազմաճակատների և սեռատարակ արաբական պետությունների միջև սվեյի սերտ ռազմական համագործակցություն հաստատելու հարցերը<sup>473</sup>։

1969 թ. վերջերից Սալահ Ջադիդն ու նրա կողմնակիցները փորձեցին վերականգնել իրենց ազդեցությունը երկրում՝ «Աս-Սաիկա» (Կայծակ) զինված կազմակերպությունն ուղղակիորեն դնելով «Էլաասի» ղեկավարության հրամանատարության տակ, որով, փաստորեն, որոշակի հակաեջիտ էր ստեղծվում Սիրիայի զինված ուժերին<sup>474</sup>։ «Աս-Սաիկայի» անդամները կիմնակալում էին Սիրիայում ապրող պաղեստինցիներ էին։

1970 թ. հունվար-փետրվար ամիսներին Գոլանի բարձունքներում զինված ընկալումներ տեղի ունեցան։ Նույն տար-

<sup>472</sup> Савделян К. X., Арабский регион, проблемы демократии Ирак, Сирия, Египет (1960-1970-ые годы), Ереван, 2009, с. 85.

<sup>473</sup> Փր-Ռուսաստան Ե. Պ., նշվ. աշխ., էջ 93: 1970 թ. Սիրիայի ղառակի թիվը կազմում էր 111,7 հազար մարդ։ Տե՛ս՝ Евразия С. В., Чалышян А. Н., Восток и внешне-экономический потенциал стран Ближнего и Среднего Востока, информативно-аналитический справочник, РАН ИВ, Москва, 1998, с. 56. Խորհրդային Միությունը մեծ օգնություն ցույց տվեց Սիրիային ղառակի սպառազինման հարցում։ 1973 թ. արաբ-իսրայելական պատերազմի շնորհիվ Սիրիայի ղառակում արդեն կային «Է-Ջեմ» և «Լոյլա» տեսակի 12 զենքամերթիաքային զնվիզումներ, 5-62 տանկեր, տրոպիկալից ռազմամատիեր, սուզանավեր և ակամազերծիչներ, տե՛ս Առաջ ևս Խոսու Մախլուֆ, նշվ. աշխ., էջ 25: Խորհրդա-սօցիալական խաղաղությունների մասին մանրամասն տե՛ս Ma'or M., Syria under Hafiz al-Assad: New Domestic and Foreign Policies, Jerusalem, 1975, p. 19-28.

<sup>474</sup> Van Dam N., նշվ. աշխ., էջ 87-88:

վա մարտի 15-ին խորայելական գորքերը հարձակվեցին սիրիական գորքերի վարժական ճամբարի վրա<sup>475</sup>:

1970 թ. սեպտեմբերի 17-ին արյունալի զինված բախումներ տեղի ունեցան Պաղեստինի դիմադրության շարժման, Պաղեստինի ազատագրության ժողովրդական ճակատի զինված խմբավորումների և Հորդանանի գորքերի միջև, որոնց ընթացքում գոհվեցին հազարավոր մարդիկ: Այս դեպքերը պատմագրության մեջ ստացան «սև սեպտեմբեր» (الأسود) անունը: Մարտական պատրաստականության քերվեցին Սիրիայի ցամաքային և ռազմաօդային ուժերը: 1970 թ. սեպտեմբերի 20-ին Սիրիան միջամտեց այդ իրադարձություններին և պաղեստինցիներին օգնելու համար Հորդանան ուղարկվեցին «Աս-Մախլայի» խմբավորումները, իսկ նրանց ետևից Հորդանանի սահմանն անցան սիրիական զրահատանկային շարասյունները՝ Պաղեստինի ազատագրության բանակի տարբերանշաններով: Չախրասական ղեկավարության կողմից ծրագրավորված էր նաև Հորդանան ներխուժած սիրիական տանկերին օգնություն ցույց տալ օդուժի միջոցով, սակայն պաշտպանության մախարար Հաֆեզ Ալ-Ասադը, ով նաև ռազմաօդային ուժերի հրամանատարն էր, հրաժարվեց ինքնաթիռներ ուղարկել Հորդանան, որի պատճառով զրահատանկային գորքերը, կորուստներ կրելով Հորդանանի ռազմաօդային ուժերի հարձակումներից, ստիպված էին ետ վերադառնալ: Սիրիայի բանակի միջամտությունը հորդանանյան դեպքերին ձախողվեց: 1970 թ. սեպտեմբերի 24-ին սիրիական գորքերն ամբողջովին դուրս քերվեցին Հորդանանից<sup>476</sup>:

Ներկուսակցական պայքարը «Բասսի» շարքերում կրկին սրվեց: 1970 թ. հոկտեմբերի 30-ին հրավիրվեց «Բասսի» համաարարական 10-րդ արտահերթ համագումարը: Ներկուսակցական պայքարն ընթանում էր, մի կողմից, Նուր Ադ-Դին Ալ-Աբասիի և կուսակցության երկրամասային ղեկավարության անդամ, զինվորական Մալախ Ջադիդի, իսկ մյուս կողմից՝ պաշտ-

<sup>475</sup> Գրիգորյան Հ. Մ., նշվ. աշխ., էջ 64:

<sup>476</sup> Юрченко В. П., նշվ. աշխ., էջ 90-91:

պանությունն նախարար Հաֆեզ Ալ-Ասադի և նրա զինակիցների միջև<sup>477</sup>:

Հաֆեզ Ալ-Ասադը, ելույթ ունեցավ համագումարում և իր հրաժարվելը Սիրիայի օդուծի միջոցով պաղեստինցիներին օգնություն ցուցաբերելու հարցում քացատրեց այն հանգամանքով, որ Սիրիայի զործությունները ոչ միայն քարոյազրկեցին սիրիական բանակը, այլև վտանգի տակ դրեցին ամբողջ տարածաշրջանի անվտանգությունը: Ընդունված որոշումներից մեկով գրադեցրած պաշտոններից հեռացվում էին Հաֆեզ Ալ-Ասադը և Ջու-ի գլխավոր շտաբի պետ Մուստաֆա Տլասը<sup>478</sup>: Համագումարը հայտարարեց նաև, որ դեմ է արաբ-խորայկական ճգնաժամի որևէ քաղաքական կարգավորման և Իսրայելի դեմ պատերազմի կոչ արեց<sup>479</sup>:

Չախրասասականները և հատկապես նրանց կարկառուն ներկայացուցիչներ Յուսուֆ Ջուեյնն ու Իբրահիմ Մախտար գտնում էին, որ Իսրայելի դեմ հնարավոր է հաջող պայքարել միայն ժողովրդասպառազրակամ պատերազմի միջոցով<sup>480</sup>:

Նման պայմաններում նրկիքը քաղաքական ճիշտ ուղու վրա դնելու և հակաճգնաժամային իր ծրագրերն իրականացնելու համար Հաֆեզ Ալ-Ասադին ոչինչ չէր մնում անել, քան իշխանությունը Սիրիայում կենտրոնացնել իր ձեռքում:

1970 թ. նոյեմբերի 13-ին գեներալ Հաֆեզ Ալ-Ասադի գլխավորությամբ բանակն իր վերահսկողությունը հաստատեց նրկի ներքաղաքական իրավիճակի վրա<sup>481</sup>: Բանակը գրադեց-

<sup>477</sup> Մարաթյան «Գ. Հ., նշվ. աշխ., էջ 57:

<sup>478</sup> Մուստաֆա Տլասը ծնվել է 1932 թ. մայիսի 11-ին Ըստանում, որը գտնվում է Հունի մահաբադում, տե՛ս: محمد التلاوي، العصر المأثور، صفحة 131.

<sup>479</sup> Востриков С. В., Роль армии во внешней и внутренней политике Сирийской Арабской Республики (1970-1990 гг.), Диссертация, Академия Наук СССР, ИВ, Москва, 1991, с. 53.

<sup>480</sup> Григорян Г. М., նշվ. աշխ., էջ 137:

<sup>481</sup> Мирский Г. И., Проблемы социалистической ориентации в арабских странах и роль военных, Проблемы современной советской Арабистики, Ереван, 1988, с. 48.

րեց Դամասկոսի տարիակայանը և հետաառաքնկերությունը: Մինչ այդ Ալ-Ասադը բազմաթիվ սպաների տեղափոխություններ էր անցկացրել քանակում՝ բոլոր զորամասերը դնելով իր հսկողության տակ: ՄԱՀ նախագահ Նուր Ադ-Դին Ալ-Աբասին և «Բաասի» սիրիական մասնաճյուղի գլխավոր քարտուղար Մալախ Ջադիդը ձերբակալվեցին, իսկ ԱԳ նախկին նախարար Իբրահիմ Մախուր փախուստի դիմեց՝ հաստատվելով Ալժիրում: Նոյեմբերի 16-ին ստեղծվեց «Բաասի» ժամանակավոր երկրամասային ղեկավարությունը<sup>482</sup>:

Այսպիսով, Միրիայում ամարյուն հեղաշրջում կատարվեց: Այս կապակցությամբ Հաֆեզ Ալ-Ասադն ասել է, որ 1970 թ. նոյեմբերի 16-ի շարժումը փրկարար շարժում է, և որ «Ռադիկալ շարժումը» կուսակցության, հայրենիքի փրկության համար միակ ելքն է<sup>483</sup>: Այստեղից էլ այն ստացավ «Ռադիկալ շարժում» (الحركة التصحيحية) անունը<sup>484</sup>: «Ռադիկալ շարժման» հիմնական նպատակը վերադարձն էր «Բաասի» հիմնարար սկզբունքներին և գաղափարախոսությանը, որից շեղվել էր մախուրդ ճախրասական վարչակարգը<sup>485</sup>: Երկրի ժամանակավոր ղեկավար նշանակվեց Ամնադ Ալ-Խատիրը, իսկ Հաֆեզ Ալ-Ասադը դարձավ նախարարների խորհրդի նախագահ և նոյեմբերի 21-ին կազմեց նոր կառավարություն, որտեղ ներկայացված էին զրեթե բոլոր քաղաքական ուժերը: Միրիայում քաղաքական իշխանությունն անցավ Հաֆեզ Ալ-Ասադի կողմից ղեկավարվող «Բաաս» կուսակցության զինվորական թևին: Որպեսզի կարողանար ամսատան պահել իր իշխանությունը, Ալ-Ասադը վստահում էր իրեն հավատարիմ զինվորականներին, որոնց բժում էին մի շարք քարճրաստիճան սպաներ, որոնք էլ զինված ուժ-

<sup>482</sup> حسن توركماني، تاريخ الجيش العربي السوري، جلد الثالث، ١٩٧٠-٢٠٠١، مركز الدراسات الاستراتيجية، صفحة ٣١.

<sup>483</sup> Хусейн Халед, *Изд. ш.и.и.*, էջ 55:

<sup>484</sup> Саралджан П. А., Сирийская Коммунистическая партия о совпальтово-политическом характере развития страны (70-е-начало 80-х гг.), Проблемы современной советской Аравии, Ереван, 1988, с. 71.

<sup>485</sup> Torrey G. H., *Aspects of the Political Elite in Syria, Political Elites in the Middle East*, Washington, 1975, p. 160.

րում գրադեցրին բոլոր ռազմավարական կարևոր պաշտոնները:

Ինչպես նշում է Միրիայի քանակի գեղապետ Մուստաֆա Ֆաուազը, մեր իշխանությունը մեծ ուշադրություն էր դարձնում քանակաչիմության գործընթացին, քանակում տիրող քարոյա-հոգեբանական վիճակին, այն ժամանակակից զենքով ու զինամթերքով ապահովելու խնդրին<sup>446</sup>: Առայ էր քաչվում «գաղափարական քանակ» ունենալու կարգախոսը<sup>447</sup>: Քանակի զենք-թափ (فرق) բարձրագույն գինվորական աստիճան ունեցող Հաֆեզ Ալ-Ասադն ասում էր, որ Միրիայի քանակի սպան պետք է հավատարիմ լինի իր հավատամքին, սկզբունքներին, համառորեն կատարի իր պարտականությունները, որովհետև նա է ամենատեղ զենքը զինված ուժերում<sup>448</sup>:

Նոր քանակը պետք է տողորված լիներ «Բաաս» կուսակցության գաղափարախոսությանը, պաշտպաներ երկրում նրա գործունեության միջոցով արձանագրած ձեռքբերումները՝ հանդիսանալով նոր վարչակարգի և կուսակցության ամուր հեմարան: Ինչպես նշում է Բազու Յասիրը, սիրիական քանակը ամբողջությամբ պետք է ծառայի իր ազգին, որովհետև այն ազգի մի մասնիկն է<sup>449</sup>:

Միրիայի քանակն ու նրա սպայական կազմը համարվեց ալավիական համայնքի ներկայացուցիչներով: «Բաաս» կուսակցության իշխանության գալուց հետո քանակի կարևորագույն և ամենամարտունակ զորամասերը դրված էին ալավիների հրամանատարության տակ: Ջն-ի հավաքագրումը իրա-

<sup>446</sup> Mustafa Fouaz, Опыт советской спецразведки на Среднем Востоке в годы Второй мировой войны в возможности его использования в Сирийских Арабских Вооруженных Силах, Диссертация, Военный университет, Москва, 1998, с. 122.

<sup>447</sup> Востриков С. В., նշվ. աշխ., էջ 44:

<sup>448</sup> Юсеф Зейн Ал-Дия, Совершенствование процесса воспитания двацилиципроанности у курсантов ВУЗов Вооруженных Сил САР, Диссертация, Военный Университет, Москва, 1998, с. 3.

<sup>449</sup> Баду Ясир, Психологическая адаптация курсантов ВУЗов Сирийской Арабской Республики к военной службе, Диссертация, Москва, 1998, с. 143.

կանացվում էր հանրնդիսանոր զինվորական պարտականոր-  
յան հիման վրա, իսկ ժամկետային զինճառայությունը ասի-  
մանված էր 30 ամիս<sup>490</sup>: Միրիայում ոչ բոլոր զինվորներն ու  
սպաներն էին պարտավոր հանդիսանալ «Բաաս» կուսակցու-  
թյան անդամ, սակայն նրանք պետք է հավատարիմ լինեին  
«Բաասի» գաղափարախոսությանը<sup>491</sup>: ՋՌ-ի կարևորագույն  
գորագնդերի և դիվիզիաների հրամանատարները սերում էին  
ավափիական համայնքից, ովքեր շահագրգռված էին վարչա-  
կարգի պահպանմամբ, որը նրանց ապահովում էր սոցիալ-  
տնտեսական բարեկեցաստ պայմաններ և արտոնյալ դիրք հա-  
սարակությունում: Եթե չլիներ նման կազմով սիրիական բանա-  
կը, ապա դժվար թե քաղաքական իշխանությունը Միրիայում  
այդքան երկար գտնվեր ալալիների ձեռքերում<sup>492</sup>: Բանակի  
հետ մեկտեղ ատանցքային նշանակություն էր վերագրված նաև  
Միրիայի անվտանգության և հատուկ ճառայությունների հա-  
մակարգին:

1971 թ. մարտի 12-ին Հաֆեզ Ալ-Ասադը յոթ տարի ժամկե-  
տով ընտրվեց ՍԱՀ նախագահ: Նա Միրիայի ալալի առաջին  
նախագահն էր: Նրա իշխանության շրջանը տևեց շուրջ 30  
տարի՝ մինչև 2000 թ. հունիսի 10-ը: Նրան հաջորդեց որդին՝  
Բաշար Ալ-Ասադը: Հաֆեզ Ալ-Ասադի հիմնական ձեռքբերումն  
իր կառավարման ընթացքում կայունության ապահովումն էր,  
ինչն իր հերթին հնարավորություն տվեց երկրում իրականաց-  
նել բարեփոխումներ: Նրա կառավարման օրոք Միրիան ան-  
նախադեպ հեղինակություն ձեռք բերեց արաբական աշխար-  
հում:

<sup>490</sup> Современная Сирия (Справочник), АН СССР, ИВ, Москва, 1974, с. 248.

<sup>491</sup> Асад Хамдан, Формирование и развитие навыков и умений воспитательной работы у молодых офицеров Вооруженных Сил САР, Автореферат, Гуманитарная Орденсов Левина и Октябрьской Революции Краснознаменная Академия Вооруженных Сил, Москва, 1994, с. 9.

<sup>492</sup> Ахмедов В. М., Армия и Политика в Современной Сирии, Армия и Власть на Ближнем Востоке: от Авторитаризма к Демократии (сборник статей), М., 2002, с. 158.

### 3.3. Հայ ռազմական գործիչների դերը սիրիական բանակում

Սիրիայի բանակի ստեղծման և նրա հետագա կայացման գործում մեծ դեր են խաղացել մի շարք հայորդի զինվորականներ, ովքեր բարձրաստիճան պաշտոններ են զբաղեցրել և իրենց գործունեությանը նպաստել են Սիրիայի ազգային բանակի կայացմանն ու նրա շիրքերի ամրապնդմանը երկրի քաղաքական կյանքում:

Սիրիայի բանակի ստեղծման և կայացման գործում մեծ ախանջ է ունեցել զեներալ-լեյտենանտ Արամ Գարամանուկյանը<sup>493</sup>, ով պատկանում է սիրիական ազգայական կազմի երկրորդ դասին<sup>494</sup>: Սիրիայի ռազմական պատմության մեջ ունի տասերով զրվեց Արամ Գարամանուկյանի անունը<sup>495</sup>: Նա ծնվել է Այնթապում 1910 թ. մայիսի 10-ին<sup>496</sup>, մախնական ուսումը ստացել է ծննդավայրի Ադինական, այնուհետև Հալեպի Հայկազյան վարժարանում<sup>497</sup>, որն ավարտել է 1923 թ.-ին: Զորավարի զինվորական գործունեությունն ընդգրկում է մի փոքրիկայի ժամանակաշրջան, որ սկսվում է 1932 թ. և ավարտ-

<sup>493</sup> Գեներալ Արամ Գարամանուկյանի մասին ժամանակակից տեղեկություններ տես Տուրքիայի Հ. Հ. Հայրենական ճամակների ի պատի Ձոր Գարամանուկյանի, Նոր Այնթապ, քիի 44-56, Լիբանան, 1971-1973, էջ 63-69, Պատմության Ե. Պատմություն Անթեպի Հայոց, Գ. հատոր, Լոս Անջելես, Գալիֆորնիա, 1994, էջ 484-629, Նոր Այնթապ, Ի Բ. տարի, քիի 9-10 (81-82), նոր շրջան, Լիբանան 1995, էջ 93-96, Սարաձեան Գ. Ա., Այնթապի հայ սպաներ սերիական բանակին մեջ, Պատմություն Անթեպի Հայոց, Բ. հատոր, Լոս Անջելես, Գալիֆորնիա, 1995, էջ 779, Սիմոնյան Յ., Տարիներ Այնթապի Հայոց Պատմության, Մայրենի Հրատարակչատուն, Ուոքինգտոն, ԱՄՆ, 1997, էջ 138-142, Տիպենյան Ռ., Ինքնակենսագրություն, յուշեր և գործունեություն, Հալեպ, 1999, էջ 97, Զարթոնք, Պեյքոթ, 1974, էջ 3, Van Dusen, Նվ. աշխ., էջ 174:

<sup>494</sup> Van Dusen, Նվ. աշխ., էջ 378:

<sup>495</sup> Մամանյան Հ., Կարգադրույց Սիրիայում ՀՀ արտակարգ և քննարկ դեսպան Արշակ Փոլադյանի հետ, Գիտական ֆիլմ, Նամակ, 2010, (ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինտիտուտի գրադարան):

<sup>496</sup> Ըստ Արամ Գարամանուկյանի եղբորորդի պ. Գ. Ըստ Նամակ Կարամանուկյանի բանակի տեղեկությունների, Երևան, 2011:

<sup>497</sup> Գեղարջ Սուրբահայ Տարեգիրք, Ա տարի, Հալեպ, 1975, էջ 405:



վում 1958 թ.-ին: 1934 թ. նա ավարտում է Գամասկոսի զինվորական վարժարանի հրետանու բաժինը, իսկ 1935-1937 թթ. ծառայում է Բեյրութում<sup>498</sup>: Մասնագիտությունը կատարելագործելու նպատակով՝ 1938-1939 թթ. նա մեկնում է Ֆրանսիա, իսկ 1945 թ. բարձրագույն զինվորական կրթություն ստանում Փարիզի Ջինվորական բարձրագույն ակադեմիայում<sup>499</sup>: Այնտեղ նրան առաջարկվում է զինվորական աստիճանի անմիջական բարձրացումով մտալ ֆրանսիական բանակում, սակայն նա հրաժարվում է և իր պարտքը համարում վերադառնալ Միջին և մասնակցել սիրիական ազգային բանակի կազմավորմանը: Ըստ Արամ Գարամանուկյանի՝ սիլոտերում ապրող հայք պետք է իր ներդրումն ունենա տվյալ երկրի քաղաքական կյանքում՝ գամնելով, որ գաղթօջախներում ազգապահպանման հարցը կուսակցական հարցը չէ, այլ՝ համազգային խնդիր, որով պետք է զբաղվեն կրթական, զնդարվեստական, բարեգործական և այլ կազմակերպությունները: Ջորավարը որևէ կուսակցության անդամ չէր, սակայն ուներ հայ կուսակցական ազգականներ ու ընկերներ: Նույն կարծիքին էր նրա հայրը՝ Հակոբ Գարամանուկյանը, ինչպես նաև նրա երկու եղբայրներ Ասոն և Նորար Գարամանուկյանները<sup>500</sup>: 1948-1957 թթ. նա զբաղեցրել է Միջին և հրետանու գլխավոր հրամանատարի պաշտոնը:

Ջորավարը մասնակցել է 1948 թ. աշար-խորայելական պատերազմին<sup>501</sup>: Ռազմական առաջնակարգ կարևորություններ կայացնող Գոլանի բարձունքներն ամրացված էին զորավարի հաստատած թմրանոթային մարտկոցների խիտ շարքե-

<sup>498</sup> Գարամանուկյան Յ., նշվ. աշխ., էջ 60:

<sup>499</sup> مختار فوزي النعالي، اللواء آرام فخر ماتوكيان، صفحة تاسعة في سجل العسكرية السورية، أريف، مايو ٢٠٠١، صفحة ١٠-١١.

<sup>500</sup> Գարամանուկյան Յ., նշվ. աշխ., էջ 13-14:

<sup>501</sup> محمد رفعت الإمام، العلاقات العربية الأمريكية، العائلي والمناشر، كلية الآداب جامعة القاهرة، صفحة ١٧٣، ٢٠٠٩.

րով և բշմամու համար բոլորն էր անանցանելի<sup>502</sup>։ Իսրայելական քանակի հրամանատարությունը մեծ պարզևատրոմ էր խոստացել նրան, ով կապանի կամ գերի կվերցնի Արամ Գարամամուկյանին՝ վնասելով նրա հրետանային համակարգը<sup>503</sup>։ Ա. Շորվոդեանը Արամ Գարամամուկյանի մասին գրել է «Ջոր. Արամ Գարամամուկյանին և քաժանմունքին սխրագործությունները բներ առած ամբողջ ժողովուրդին հիացմունքին արժանացան»<sup>504</sup>։

Արամ Գարամամուկյանի հրամանատարության ներքո սիրիական քանակի հրետանին ավելի հզորացավ և դարձավ քանակի կարևորագույն մասը։ Սիրիական քանակի հրետանու մասին իսրայելական քանակի զինեղալճերից մեկն ասել է, որ իսրայելական քանակն անպարտելի է և նրանք չեն վախճնում արաբական զինված ուժերից՝ քացառությամբ սիրիական քանակի հրետանուց<sup>505</sup>։

1956 թ. նա ստացավ ստորաբաժանման զորավարի զինբրալ-էյտեմնաուտի (عقيد) աստիճան։ Այնուհետև 1957 թ. զինվորական կցորդ նշանակվեց Վաշինգտոնում Սիրիայի դեսպանատանը, իսկ 1961 թ. ընտրվեց Սիրիայի Ազգային ժողովի պատգամավոր և միաժամանակ Սահմանադիր ժողովի անդամ<sup>506</sup>։

1964 թ. զինեղալ Գարամամուկյանը սկսեց հաճախել Բեյրութի Ֆրանսիական համալսարանի իրավագիտական ֆակուլտետի դասընթացներին, որն ավարտեց 1968 թ.-ին՝ ստանալով

<sup>502</sup> Էպիդաֆան Ա., Գաղթականներն իսրայելական, Հադես, 1998, էջ 159։

<sup>503</sup> Ըստ Ալեքսանդր Մեշեյանի քանակոր տեղեկությունների, Գամասկոս, 2009, տե՛ս նաև الحياه العائليه للمرأة في بلاد سوريا, 2007, صفة 40։

<sup>504</sup> Տե՛ս Գաղթալ Սորիանայ Տարեգիրք, ՅՉԿ-աշխ., էջ 402։

<sup>505</sup> Գարամամուկյան Յ., ՅՉԿ-աշխ., էջ 83։

<sup>506</sup> Ըստ պ.գ.թ. Հորի Ալեկյանի քանակոր տեղեկությունների, Գամասկոս, 2010, տե՛ս նաև الحياه العربية في بلاد العرب من العائلات العربية في بلاد سوريا, لبنان, مصر, فلسطين, الأردن...), ثلاثية, 1993, صفة 67։

իրավագիտության վկայական: Ապա իր իրավագիտական ուսումը շարունակեց Սորբոնի համալսարանում և, պաշտպանելով «Օտարները և զինվորական ծառայությունը» գիտական ուսումնասիրությունը, 1972 թ. ստացավ իրավագիտության դոկտորի գիտական աստիճան: Իր ուսումնասիրության մեջ նա մի գլուխ հատկացրեց Արևելյան (Հայկական) լեզուին<sup>507</sup>: Իր կատարած զինվորական ծառայությունների համար զենեխալ-լեյտենանտ Արամ Գարամանուկյանը պարգևատրվել է բազմաթիվ շքանշաններով, այդ թվում նաև Ֆրանսիական կառավարության կողմից՝ առաջին կարգի պատվո շքանշանով<sup>508</sup>:

Հաշվի առնելով զորավարի մատուցած ծառայությունները Սյրիային և ազգոգոտ անդադարձը սիրիահայ գաղութին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը նրան պարգևատրեց Ներսես Շնորհալի շքանշանով, իսկ 1985 թ. Սեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ. Կաթողիկոսը նրան պարգևատրեց Կիլիկիո Մեծ Խաչի Ասպետի շքանշանով: Սիրիայի բանակի զենեքալ, սկյուորահայ գործիչ Արամ Գարամանուկյանն իր վաստակած բոլոր շքանշաններից համձնեց Հայաստանի պատմության թանգարանին: Զոքավարի գործը բարձր են գնահատել նաև Հայաստանում: 1998 թ. Արարատի մարզի Նոր Այնթապի թիվ 1 միջնակարգ դպրոցը հիմնովին վերանորոգվեց և անվանվեց Արամ և Հասմիկ Գարամանուկյանների անունով:

Սիրիայի բանակի ստեղծման և կայացման գործում մեծ դեր է խաղացել նաև զենեքալ-մայոր Հրանտ քեկ<sup>509</sup> (كبي) Մալոյանը<sup>510</sup>:

<sup>507</sup> Գեղարդ Սուրիահայ Տարեգիրք, Ե. գիրք, Հախպ, 1996, էջ 555:

<sup>508</sup> «مصدر المذكر، صفحة ٧٢»

<sup>509</sup> Սիրիայում քեկ տնտեսող գործածական էր մինչև 1963 թ. մարտի 8-ի «Բաաթ» կուսակցության իշխանության գալլը: Նա ռազմական և փարպեական կոչում էր, անհրաժեշտ էր հատուկ վկայական, որը Հրանտ Մալոյանն ուներ:

<sup>510</sup> Migliorino N., (Re)constructing Armenia in Lebanon and Syria, New York, 2008, p. 136, Հրանտ Մալոյանի մասին տե՛ս նաև Գեղարդ Սուրիահայ Տարեգիրք, Բ. գիրք, Հախպ, 1976-1978, էջ 495, Տարեկան տեղեկագիր Տարեգիրք, Բ. գիրք, Հախպ, 2006, էջ 59, Torrey Դամասկոսի հայ կաթողիկե բարեփոխական միության, 2006, էջ 59, Torrey

Այս պատմական հայորդին ծնվել է 1895 թ. Մուշում<sup>511</sup>: 1905-1907 թթ. սկզբնական ուսումը ստացել է Կենտրոնիկ Մխիթարյան միաբանության Մուրթ Դազարի վանքում<sup>512</sup>: 1913-1914 թթ. ընդունվել է Դուլսի իրավագիտական համալսարանը: 1914 թ. Հրանտ Մալոյանը զորակոչվեց բանակ և որպես սպա՝ 1916 թ. տեղակալի պաշտոնով ծառայեց բուրջական 53-րդ ստորաբաժնում<sup>513</sup>: Առաջին համաշխարհային պատերազմի զինադարձարի նախօրյակին՝ բուրջական բանակի նահանջելու ժամանակ, գերի վերցվեց Դարասայի արաբական գնդերի կողմից<sup>514</sup>: Ազատվելով գեղությունից՝ նա մտավ նորակազմ Հայկական լեգեոն և, աչքի ընկնելով որպես ուշիմ և մի քանի լեգեոների տիրապետող երիտասարդ, Կլիվիկայի զինվորական կառավարիչի կողմից նշանակվեց ժանդարմերիայի օգնական<sup>515</sup>: Հրանտ Մալոյանը մասնակցեց Կլիվիկայի ինքնապաշտպանության մարտերին և դրանից հետո նա տեղափոխվեց Դամասկոսի առաջին քրիզալի, այնուհետև Հալեպի երկրորդ քրիզալի հրամանատարություններ և միաժամանակ համասնդրության փոխարինեց Հալեպի ոստիկանության հրամանատարության ներքո գտնվող ժանդարմերիայի փոխգնդապետ Հասան Բահրեյին<sup>516</sup>: Միրիայի ազատագրական պայքարի

G. H., նշվ. աշխ., էջ 146, Rathmell A., նշվ. աշխ., էջ 50, *عهد الحكيم، أوزق ومذكرات*, *فخرى البارودي، ١٨٨٧-١٩٢٦، خمسون عاماً من حياة الوطن، القسم الثاني، دمشق، ١٩٩٩،* *صفحة ٢٩٨.*

<sup>511</sup> *ورقة الداخلية السورية، إدارة الهجرة والجنات، جواز سفر، صفحة ١.*

<sup>512</sup> Atamian P., *Histoire de la communauté Arménienne catholique de Damas, Beyrouth, 1964, p. 155.*

<sup>513</sup> Հսո Լարսբիայի Թիշրին համալսարանի դասախոս, Արաբական աշխարհագրագետների միության փոխնախագահ Նսդին Ծամսինի բանափոք տեղեկությունների, Դամասկոս, 2010:

<sup>514</sup> Հսո Հրանտ Մալոյանի մտերիմ Սարգիս Թեշիշյանի բանավոր վկայությունների, Դամասկոս, 2009:

<sup>515</sup> Գեղաբող Մսրիսիայ տարեգիրք, Ա տարի, նշվ. աշխ., էջ 406-407:

<sup>516</sup> *كشيشيان ١، صفحات وثائقية من جريدة (التقدم) الملبية عن الأحوال الأرمنية والعربية في الدولة العثمانية والبلاد الشامية، صفحة ١٩٩.*

ժամանակ Դամասկոսի ֆրանսիացի գինվորական կատավա-  
րիչ գեներալ Օլիվե Ռոժեն նրան առաջարկում է հայ նրխա-  
սարդների գումարտակ կազմել ֆրանսիական բանակին օգնե-  
լու համար<sup>517</sup>։ Հրանտ Մալոյանը մերժում է գեներալի իշխալ  
առաջարկը։ Հայ զորավարի այդ դիքորոշումը բարձր գնա-  
նատվեց սիրիացի ազգայնականների կողմից։ Սիրիայի անկա-  
խացումից հետո նրան հանձնվեց երկրի ներքին ապահովու-  
թյունը՝ ստանձնելով օստիկանական զորքերի ընդհանուր հրա-  
մանատարի պաշտոնը<sup>518</sup>։ 1946-1950 թթ. Հրանտ Մալոյանը Սի-  
րիայի ժանդարմերիայի գլխավոր հրամանատարն էր<sup>519</sup>։ Գե-  
ներալ-մայոր (سید) Հրանտ Մալոյանը պարգևատրվել է սիրիա-  
կան, լիբանանյան, եգիպտական, ֆրանսիական մի շարք  
շքանշաններով<sup>520</sup>։ Մեծամուն զորավարը մահացավ 83 տարե-  
կանում՝ 1978 թ. հուլիսի 24-ին<sup>521</sup>։

Սիրիական բանակում իր ուրույն տեղն ունեւր նաև զորա-  
վար Ալբեր Բիլեջյանը, ով ծնվել է 1920 թ. Համայում<sup>522</sup>։ Նա  
պատկանում է սիրիական սպայական կազմի երրորդ դա-  
սին<sup>523</sup>։ Իր ռազմական ուսումը նա ստացել է Հռոմի Ռազմական  
ակադեմիայում, այնուհետև մասնակցել է արաբ-իսրայելական  
առաջին պատերազմին<sup>524</sup>։ Մասնագիտությունը կատարելա-  
գործելու նպատակով 1957 թ. Բիլեջյանը մասնակցել է Կահի-  
րնի բարձրաստիճան սպաների դասընթացներին։ Դրանից հե-  
տո նա նշանակվել է ենթասպաների դպրոցի և պահեստային  
սպաների փորձարանի հրամանատար։ 1959 թ. ավարտել է իր  
գինվորական ծառայությունը գեներալ-լեյտենանտի աստիճա-

<sup>517</sup> Մասիս, քիվ 39, Թեյրոս, 2008, էջ 27:

<sup>518</sup> محمد رعت الإمام، صفحة ١٧٢.

<sup>519</sup> نديم شمس، دمشق، ٢٠٠٨/١١/٣٠، صفحة ١.

<sup>520</sup> Atamian P., նշվ. աշխ., էջ 156-157:

<sup>521</sup> Ըստ Դամասկոսի Հայ Կաթողիկե Տիեզերքի բազուռի եկեղեցու  
նախկին գրանցման մատյանի, Դամասկոս, 2009:

<sup>522</sup> Ըստ Ալբեր Բիլեջյանի կողմից Գարուն Ֆիլեջյանի (Մելեջյան) բա-  
նավոր տեղեկությունների, Դամասկոս 2009:

<sup>523</sup> Van Dusen, նշվ. աշխ., էջ 383:

<sup>524</sup> مصطفى طلاس، الجهاد الأول، المصدر المذكور، صفحة ٢٩٠.

նով և պարզապես լինել է սիրիական, լիբանանյան, եգիպտական և այլ շրանշաններով:

Հայազգի մյուս բարձրաստիճան սպաններից արժանի է եղևտակնը գնդապետ Ժողե՛՛՛ Բայրամյանին, ով ծնվել է 1915 թ. Հալեպում: Նախնական կրթությունը ստացել է Հալեպի Ազգային Հայկազյան վարժարանում, իսկ 1939 թ. ընդունվել է Հոմսի Ռազմական ակադեմիա՝ 1941 թ. ավարտելով նրա հրետանու քաժինը, ապա Ժողե՛՛՛ Բայրամյանը նշանակվել է հրետանու ստորաբաժանման հրամանատար և 1958 թ. ստացել գնդապետի (գեներալ) աստիճան՝ պարզապես լինելով մի շարք շրանշաններով<sup>525</sup>:

Սիրիական բանակի հայազգի սպաններից է նաև գնդապետ Վոսա՛՛՛նյապետի (Ալիբա՛՛՛) Մալաթյանը, ով պատկանում է սիրիական ազայական կազմի երրորդ դասին<sup>526</sup>: Նա ծնվել է 1920 թ. Հալեպում: Սկզբում սովորել է Հալեպի Կիլիկյան վարժարանում, այնուհետև արաբական Մուլթանիի երկրորդական վարժարանում<sup>527</sup>: Նախնական կրթությունը ստանալուց հետո նա ընդունվել է Հոմսի Ռազմական ակադեմիա: Այն ավարտելուց հետո Վոսա՛՛՛նյապետի Մալաթյանն ուղարկվում է Եգիպտոս՝ կազմի քննազտաժողով ավելի լավ մասնագիտանալու նպատակով: Նա 1947-1948 թթ. Լաբաթիայում նշանակվել է զինվորական պատասխանատու<sup>528</sup>, այնուհետև՝ մասնակցել արաբ-իսրայելական պատերազմին<sup>529</sup>: Հայազգի ռազմական գործիչն իր ենթակայության տակ գտնվող 8 զինվորականի հետ զոհվել է Կունեյայայում<sup>530</sup>:

<sup>525</sup> Գ հրապոյ Մոքիաիայ տարեկիթթ. Ա տարի, Ձշվ. աշխ., էջ 408:

<sup>526</sup> Van Dusen, Ձշվ. աշխ., էջ 385:

<sup>527</sup> Ըստ Ռոքեբու Ձեքեշյանի՝ Վոսա՛՛՛նյապետի Մալաթյանի մասին գրած նամակի:

<sup>528</sup> Ըստ Վոսա՛՛՛նյապետի Մալաթյանի քրոջ՝ Էլիզաբեթ Մալաթյանի գրած նամակի:

<sup>529</sup> مصطفى طلس، جند الأوفى، المصدر المذكور، صفحة ٢٤٩

<sup>530</sup> Ըստ Կարուժան Մալաթյանի բանավոր տեղեկությունների, Դամասկոս, 2009:

Հայազգի մյուս քարձրաստիճան սպաներից արժանի է հիշատակել փոխգնդապետ (مقدم) Գրիգոր Հիմդոյանին, ով պատկանում է սիրիական սպայական կազմի երկրորդ դասին<sup>531</sup>: Նա ծնվել է 1901 թ. Այնթապում: Երկու տարի սովորել է ծննդավայրի Նեղսեսյան, այնուհետև՝ Թերա Սամուա վարժարանում: 1921 թ. կամավորագրվել է կապի զոմարտակում, իսկ 1932 թ. ստացել է ավագ լեյտենանտի (ملازم اول) աստիճան<sup>532</sup>: Գրիգոր Հիմդոյանը մասնակցել է արաբ-խորալեական պատերազմին<sup>533</sup> և 1949 թ. ստացել է փոխգնդապետի աստիճան:

Միրիական բանակում են ծառայել նաև Անտուան և Հիքմեր Գուշակչիները: Անտուան Գուշակչին ծնվել է 1911 թ. Հալեպում: Նա 1932 թ. ընդունվել է Հոմսի Ռազմական ակադեմիա, իսկ 1949 թ. ստացել է փոխգնդապետի աստիճան: Հիքմեր Գուշակչին ծնվել է 1916 թ.: Նա մախմական ուսումը ստացել է Հալեպի Մուրթ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից վարժարանում, իսկ 1948 թ. սկսած՝ ծառայել է սիրիական բանակում՝ հասնելով մինչև փոխգնդապետի աստիճանի: Նրանք երկուսն էլ ծառայել են պարենավորման և հաշվապահական սպասարկման բնագավառում:

Միրիական բանակում իրենց կարևոր տեղն ու դերն են ունեցել նաև հայազգի սպաներ Դարադուրյան Լևոնը, Կուդշինյան Սմբատը, Մարաֆ Արշակը, Թարաջյան Նադիմը, Բազյան փաշա Վազգենը և այլք<sup>534</sup>: Միրիական բանակում է ծառայել նաև օդային պաշտպանության գեներալ Արսևանյան Ավետիսը<sup>535</sup>:

Այսպիսով՝ հայ զինվորականները, սպրելով և իրենց գործունեությունը ծավալելով Միրիայում՝ իրենց տաղամղի, ուզ-

<sup>531</sup> Van Dusen, նշվ. աշխ., էջ 378:

<sup>532</sup> Սարաֆնան Գ. Ա., նշվ. աշխ., էջ 778:

<sup>533</sup> مصطلحي طرابلس، الجزء الأول، المصدر المذكور، صفحة ٢٨٤:

<sup>534</sup> Լիբանանյան բանակում մտնողներ ծառայել են հայազգի ռազմական գործիչներ, որոնցից են՝ գեներալներ Փանոս Մանջրյանը, Նարեկ Արթուրյանը, գեղապետ Փան Օդասապյանը և այլք:

<sup>535</sup> Հսո Միրիայի բանակի գեներալ Ավետիս Արսևանյանի բանավոր տեղեկությունները, Դամասկոս, 2009:

մական հնարամտությունների և կարողությունների շնորհիվ՝ արժանացել են զինվորական բարձր աստիճանների: Նրանք ազնվաբար ծառայել են սիրիական բանակում՝ որպես երախտագիտություն այն երկրին ու ժողովրդին, որոնք զրկաբաց ընդունել ու ապաստան են տվել ցեղասպանությունից ճազապուրծ եղած հայերին: Հայ զինվորականները ծառայել են ի պաշտպանություն երկրի ազգային անկախության, նրա խաղաղության ու անվտանգության համար և միասնական ճակատով համղես զալով՝ նպաստել են հայ-արաբական, հայ-սիրիական դադարվոր բարեկամության ամրապնդմանը:





ԱՐԱՄ ԳԱՐՍՄԱՆՈՒԿՅԱՆ



ՀՐԱՆ ՄԱՆՈՅԱՆ



ԱՐԵՐ ԶԻՆԶԱՆ



ՎՈՒՄԵՆԱՊՈՒՔ ՍԱՆՔՅԱՆ

Միրիայի քանակի կազմավորումը սիրիացիների հաղթանակն էր: Միրիական քանակը մի «կարսու» էր, որտեղ ծուլվում էին հասարակության տարբեր շերտեր, այդ բվում՝ էթնիկ և դավանական փոքրամասնությունների (սլավոններ, զրուզներ, իսմայիլականներ, քրդեր, չերքեզներ, հայեր և այլք) ներկայացուցիչներ: Ազգային քանակի ձևավորման գործընթացում աստիճանաբար ավելանում էր զինված ուժերում ազգային, կրոնական փոքրամասնությունների ներգրավման ցուցանիշը: Վերջիններիս համար ռազմական ոլորտն ապահովում էր սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում և արտոնյալ դիրք հասարակության մեջ:

Անկախության ձեռքբերումից հետո սիրիական քանակի սպայական վերամոխտվող հավաքագրված էր քաղաքային քուրժուակիայի ապահովված ընտանիքներից: Առաջին հերթին դա վերաբերում էր քարձրագույն սպայական կազմին, որը ներկայացված էր «հիսուն ընտանիքներով»: Անկախության հռչակումից հետո սկսվեց երկրի զարգացման քաղաքականի բարդ ու դժվար մի շրջան: Զարգացման դրական միտումների հետ միասին սրվում էր ներքաղաքական պայքարը, չէր նվազում օտարերկրյա ուժերի ազդեցությունը Միրիայի ներքին քաղաքականության վրա, ինչը համզեցնում էր ներքաղաքական անկայունության:

1948 թ. արաբ-իսրայելական պատերազմում Միրիայի պարտությունը խիստ բացասական հետևանքներ ունեցավ երկրի ներքաղաքական կյանքի վրա: Օգտվելով այդ վիճակից՝ իշխանությունները զգալիորեն սահմանափակեցին ժողովրդավարական ազատությունները և ուժեղացրին հսկողությունը հասարակական և քաղաքական կյանքի վրա: Պատերազմից հետո վատթարացավ նաև ժողովրդի տնտեսական վիճակը: Արդյունքում, սկիզբ առան բողոքի ցույցեր՝ ուղղված Միրիայի իշխանությունների դեմ:

1948 թ. արաբ-իսրայելական պատերազմը ճանապարհ հարթեց ռազմական հեղաշրջումների համար: Այդ հեղաշրջում-

մերն իրականացնում էին տարբեր խմբավորումների ներկայացուցիչներ, որոնք հենվում էին զինվորականների վրա: 1949-1954 թթ. հաճախակի տեղի ունեցող ռազմական հեղաշրջումների պատճառով Միբիայում ներքաղաքական անկայուն, սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակ էր ստեղծվել: Այդ հեղաշրջումները խոչընդոտեցին Միբիայի պետական կառավարման համակարգի բնականոն զարգացմանը:

Միբիայի քանակի կյանքում նոր շրջան է սկսվում 1956 թ. սոցիալատական երկրների հետ բարեկամական հարաբերությունների հաստատելուց հետո: Բանակը ստացավ նորագույն զենք և տեխնիկա: Կատանայի ռազմական ստորաբաժանումներում սկսեցին ձևավորվել երկու տանկային բրիգադներ:

1958 թ. հունվարին, չցանկանալով ֆեդերալ երկունքների վրա կատարել Եգիպտոսի հետ միավորումը, Միբիայի զինվորական պատվիրակության նեծամասնությունը վճռակամորեն ամբողջական միավորում պահանջեցին: Չնայած միավորումն արտաքուստ ժողովրդավարական էր, սակայն իրականում այն հաջողությամբ պտակվեց քանակի միջնորդության կամ, այսպես կոչված, «կիսատազմական հեղաշրջման» արդյունքում:

ԱՄՀ-ի ձևավորման հենց սկզբից էլ նախագահ Գամալ Աբդել Նասերը ձեռնամուխ եղավ երկու շրջանների զինված ուժերի միավորմանը, որից հետո Եգիպտոսը փաստորեն իր վերահսկողությունը հաստատեց առաջին (սիրիական) քանակի վրա՝ զգալիորեն սահմանափակելով նրա դերը: Միավորումից անմիջապես հետո սիրիական քանակի ղեկավարությունը փոխարինվեց եգիպտականով, իսկ քարձրաստիճան սպաների մեծ մասը տեղափոխվեց քաղաքացիական պաշտոնների: Նման վերաբերմունքը սիրիական քանակի նկատմամբ Միբիայում դժգոհություն առաջացրեց:

Իր հերթին, «Բասա» կուսակցությունը հույս ունեց միավորման շնորհիվ դառնալ ԱՄՀ-ի առաջատար ուժը և իր գաղափարախոսությունը տարածել նաև Եգիպտոսում: Այս հանգամանքը ձայնողվեց, իսկ ստեղծված փակուղու համար սիրիացիները պատասխանատու համարեցին «Բասա» կուսակ-

ցությանը, որի հեղինակությունը երկրում որոշակիորեն անկում ապրեց:

Արդեն 1961 թ. հասարակության գրեթե բոլոր շերտերը, առանց բացառության մասն ազգնաբաղադրական ուժերի, կողմ էին Եգիպտոսի հետ միավորման փլուզմանը: Միրիայի հայրենասիրական ուժերը հույս ունեին, որ ԱՄՀ-ի կազմավորումը սիրիական և եգիպտական շրջանների համար լավ հմարավորություններ կստեղծեր տնտեսության առաջընթացի, մշակույթի զարգացման, կենսաստեղծ երկու երկրների հետագա ժողովրդավարացմանը, հիմք կդառնար արաբական աշխարհի հետագա միասնականությանը: Մակայն միասնության առաջին փորձն անխուսափելի վախ առաջացրեց: Ի հայտ եկան տնտեսական և քաղաքական լուրջ դժվարություններ, որոնք հաղթահարելու համար երկար ժամանակ և ջանքեր էին պահանջվում, ինչին ոչ մի կերպ չէր մպատում շտապիւյթ միավորումը: Դժվարությունները կապված էին վարչակարգի տարբերության, երկու երկրների տնտեսական զարգացման տարբեր մակարդակների, բնակչության կենսամակարդակի տարբերության և այլնի մեջ: Միրիայի և Եգիպտոսի միավորումն արագորեն համզեցրեց Միրիայի տնտեսական և քաղաքական դիրքի թուլացմանը: Դրան բավականաչափ մպատեցին սիրիական շրջանի առաջադեմ ուժերի դեմ ԱՄՀ-ի դեկավար օղակների ճնշումները: Արդյունքում, եգիպտական վարչակարգի դեմ սկսեց համդես գալ մեկ մախկինում միասնությանը կողմնակից «Բաաս» կուսակցությունը:

1962 թ. մարտի 28-ին Միրիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումից հետո բանակը որոշել էր վարել իր գործունեությունը հիմն գիմնական սկզբունքներով, որոնք ընդհանուր գծերով հետևյալն են՝

- երկրի ամկախ կառավարման ապահովումից հետո հեռանալ քաղաքականությունից և զբաղվել իր հիմնական խնդիրներով.
- չմիջամտել կառավարության գործերին և քաղաքականությանը, բոլլ շտալ այնպիսի սխալներ, որոնք տեղի էին ունեցել նախկինում՝ հետամուտ լինելով ազգային բարձրագույն նպատակների իրականացմանը.

- զբաղվել ասեմանների պահպանությամբ.
- հետամուտ լինել երկրում իրավիճակի կայունացմանը՝ ամրապնդելով սեփական ուժերը.
- կայուն իրավիճակի հասնել ուժեղ ասեմանադրական կառավարման միջոցով:

Իրարում 1963 թ. փետրվարին իշխանության անցումը «Քաաա» կուտակցությանն ավելի ուժեղացրեց Սիբիայի քաասականների դիրքերը, որոնք քացահայտորեն ողջունում էին Իրարում տեղի ունեցած հեղաշրջումը և այնտեղ հաստատված փարչակարգը: Կարելի է եզրակացնել, որ իրարյան հեղաշրջումից ուղիղ մեկ ամիս անց, 1963 թ. մարտի 8-ին Սիբիայում տեղի ունեցած հեղաշրջումից հետո, Սիբիայի ղեկավարությունը ձգտում էր իշխանությունն ամրապնդել և «Քաասի» ազդեցությունը տարածել արարական մի շարք երկրներում:

1966 թ. փետրվարին տեղի ունեցած ռազմական հեղաշրջումից հետո «Քաասի» ձախ ղեկավարությունը կարողացավ որոշ չափով ուժեղացնել իր ազդեցությունը, սակայն արարական ստաջադիական երկրներում հասարակական խոր փերափոխումները չամրապնդվեցին քաղաքական համապատասխան միջոցառումներով:

1967 թ. արար-իարայելական պատերազմից հետո Սիբիան ներքաղաքական և սոցիալ-տնտեսական ծանր իրարություն մեջ էր: Պատերազմում պարտության և ձախքասասականների քաղաքականության նկատմամբ անհանդուրժողականության պատճառով՝ բանակը հայտնվեց քարոյական և հոգեբանական ճգնաժամի մեջ: Բանակն ըստ էության արտացոլում էր երկրի ձախքասասական ղեկավարության նկատմամբ տիրող դժգոհության ու անվատահության մթնոլորտը: Բանակային շրջանակն ավելի սքափ էր գնահատում Իսրայելի կողմից Սիբիային սպասնացող վտանգը երկրի աճող մեկուսացման պայմաններում: Ի տարբերություն ձախ թևի ներկայացուցիչների՝ Հաֆեզ Ալ-Ասադն ու նրա կողմնակիցները գտնում էին, որ ժողովրդասպատազրական պատերազմն ու անկանոն զինված խմբավորումների միջոցով պայքարն Իսրայելի դեմ Սիբիային ոչինչ չէր տալու: Նրանք անհրաժեշտ էին համարում

ճախատաց ստեղծել ուժեղ և մարտունակ բանակ, ձեռք բերել անհրաժեշտ սպառազինություն, որի միջոցով էլ հնարավոր կլինենք ազատագրել կորցրած տարածքները:

1970 թ. սեպտեմբերին Պաղեստինի դիմադրության շարժման, Պաղեստինի ազատագրության ժողովրդական ճակատի զինված խմբավորումների և հորդանանյան բանակի միջև տեղի ունեցած արյունալի զինված քայտուկներից հետո մարտական պատրաստակամության բերվեցին սիրիական ցամաքային և ռազմաօդային ուժերը: Միրիան միջամտեց այդ իրադարձություններին և պաղեստինցիներին օգնելու համար Հորդանան Հորդանանի սահմանն անցան սիրիական զրահատանկային շարասյունները: Չախրասական ղեկավարությունը ծրագրել էր նաև Հորդանան ներխուժած սիրիական տանկերին օգնություն ցույց տալ օդուժի միջոցով, սակայն պաշտպանության ճախարար Հաֆեզ Ալ-Ասադը, ով նաև ռազմաօդային ուժերի հրամանատարն էր, հրաժարվեց ինքնաքիռներ ուղարկել Հորդանան, որի պատճառով զրահատանկային զորքերը, կորուստներ կրելով Հորդանանի ռազմաօդային ուժերի հարձակումներից, ստիպված էին ետ վերադառնալ: Միրիայի բանակի միջամտությունը հորդանանյան դեպքերին ձախտղվեց:

«Բաաս» կուսակցությունում իրար դեմ պայքարում էին երկրի ներքին և արտաքին քաղաքականության մեջ տարբեր սկզբունքներ և ստեղծումներ ունեցող քաղաքացիական և զինվորական խմբավորումները: Նման պայմաններում երկիրը քաղաքական ճիշտ ուղու վրա դնելու և իր հակաճգնաժամային ծրագրերն իրականացնելու համար Հաֆեզ Ալ-Ասադն իշխանությունը Միրիայում կենտրոնացրեց իր ձեռքում:

1970 թ. նոյեմբերին Հաֆեզ Ալ-Ասադի գլխավորությամբ Միրիայում հեղաշրջում կատարվեց: Վերջինիս կողմից հռչակված «Ռադիկալ շարժման» հիմնական մպատակը վերադարձն էր «Բաասի» հիմնարար սկզբունքներին և գաղափարախոսությանը, որից, ըստ նրա, շեղվել էր մախորդ ձախրաստական վարչակարգը:

## ՎԵՐՋԱՔԱՆ

1971 թ., երբ Հաֆեզ Ալ-Ասադն ընտրվեց ՍԱՀ նախագահ, զինված ուժերը հաշվվում էին 111,7 հազար հոգի (ցամաքային ուժերը՝ 100 հազար, ռազմաօդային և հակաօդային ուժերը՝ 10 հազար, ռազմածովային ուժերը՝ 1,7 հազար): Բանակն ուներ 780 տանկ, 210 ինքնաթիռ, 700 հրետամային հրանոթ, 10 ռազմանավ<sup>536</sup>: Սիրիային անհրաժեշտ էր անհապաղ ռազմատեխնիկական և մասնագիտական օգնություն՝ զինված ուժերի վերակազմավորման, ժամանակակից զենքի ապահովման և բանակի մարտունակության բարձրացման համար:

1970-ական թթ. Սիրիայի ներքին քաղաքական կյանքում տեղի ունեցած նշանակալի իրադարձություններից մեկն Ազգային առաջադիմական ճակատի ստեղծումն էր: Սիրիայի առաջադիմական ուժեր համարվող կազմակերպությունները՝ Արաբական սոցիալիստական միությունը, Սիրիայի Կոմունիստական կուսակցությունը, Սոցիալիստ յունիոնիստների կազմակերպությունը, Արաբ սոցիալիստների շարժումը Բաաս կուսակցության գլխավորությամբ Սիրիայում Բաասի հեղաշրջման տարևդարձի նախօրյակին՝ 1972 թ. մարտի 7-ին, պաշտոնապես հայտարարեցին Սիրիայի Ազգային առաջադիմական ճակատի ստեղծման մասին: ԱԱԾ ստեղծման հիմքում հիմնական շեշտը դրվում էր համազգային խնդիրների լուծման, այն է պաղեստինյան հիմնահարցի և գրավված տարածքների ազատագրման վրա: ԱԱԾ ստեղծմամբ Ալ-Ասադն առաջին հերթին ընդլայնում էր իր վարչակարգի սոցիալական հիմքերը, ամրապնդում էր իր իշխանությունն ու ներքաղաքական կայունությունը: Մարտի 9-ին հրապարակվեցին ճակատի հիմնական փաստաթղթերը՝ խարտիան և կանոնադրությունը<sup>537</sup>:

<sup>536</sup> Басзарова С. Б., Часынхан А. Н., 621, աշխ., էջ 56:

<sup>537</sup> Perthes V., The Political Economy of Syria under Asad, London-New York, 1995, p. 162-163.



1972 թ. Միրիան անդամակցեց Իսլամական կոնֆերանս կազմակերպությանը, որի հիմնադիր համագումարը տեղի էր ունեցել Ռաբատում՝ 1969 թ. սեպտեմբերի 22-ից 25-ը<sup>599</sup>:

Իր կատարման ատաջին տարիներից սկսած՝ Հաֆեզ Ալ-Ասադը մեծ ուշադրություն էր դարձնում Միրիայի բանակի հզորացմանը, վերազինմանն ու մարտունակության բարձրացմանը, քանի որ ի թիվս մի շարք գործոցների՝ չէր քաղաովում մալ Իսրայելի հետ պատերազմի հավանականությունը: 1967թ. աշտա-խրայելական երրորդ պատերազմի ժամանակ Ալ-Ասադը պարտված Միրիայի պաշտպանության մախարարն էր և ցանկանում էր ազատագրել գրավված սիրիական տարածքները: Ալ-Ասադը ցանկանում էր հզորացնել բանակը ոչ միայն հակախրայելական պայքարի և նրա հետ դազմավարական հավասարակշռությունը պահպանելու, այլև ընդհանրապես տարածաշրջանում Միրիայի դերն ու կշիռն ամրապնդելու համար: Իսրայելի դեմ համատեղ ռազմական ճակատ ստեղծելու մպատակով Ալ-Ասադը փորձեց բարելավել հարաբերություններն արաբական երկրների հետ: 1970 թ. մայեմբերին Միրիան միացավ Եգիպտոսի, Լիբիայի և Մադագնի կողմից ստորագրված Տրիպոլիի խարտիային, որը մայատեստում էր արաբական միասնական պետության ստեղծում: 1971 թ. ապրիլի 17-ին Միրիան, Եգիպտոսը և Լիբիան հայտարարեցին Արաբական Հանրապետությունների Գաշնության ստեղծման մասին: Նշվում էրկրների զինված ուժերն իրավունք ունեին միջամտելու, եթե այդ երկրներից որևէ մեկն արտաքին հարձակման կամ երկրում փառչակարգը տապալելու դավադրության ենթարկվեր<sup>600</sup>: Հարկ է նշել, որ այդ օրը պատահական չէր ընտրված, որովհետև ուր տարի առաջ մույն օրը՝ 1963 թ. ապրիլի 17-ին, Կահիրեում ստորագրվեց համաձայնագիր, ըստ

<sup>599</sup> Փաշայան Ա., Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը. մոզատակները, գործունեությունը, դիրքորոշումը դարաբաղյան հակամարտության միատամբ, Երևան, 2003, էք 38, 60:

<sup>600</sup> Van Dam N., Integration Problems of the Federation of Arab Republics, Orient, 14. Jahrgang, Nr. 3, September, 1973, Deutsches Orient-Institut, pp. 112-113.

որի, Միրիան, Իրաքը և եզիպտոսը կազմելու էին արաբական միասնական պետություն: Ստեղծելով կայուն վարչակարգ՝ նախագահը քանակը դարձրեց մի հզոր ուժ, որից կախված էր քաղաքական կառավարման ճակատագիրը: Բանակում տեղի ունեցան քաղաքիվ քարեփոխումներ, որոնց միջոցով զինված ուժերը դարձան քաղաքական արդյունավետ գործիք: Ալ-Ասադը ձգտում էր, որպեսզի զինված ուժերը հասարակության մեջ բարձր դիրք գրավեն: Հետևակն ու մեխանիզացված զորամասերը համալրվեցին մեծ քանակությամբ հակատանկային հրթիռային համակարգերով և նոնակաձիգներով: Հրետանին համալրվեց 122 մմ տրամաչափի Դ-30 տեսակի հասփիցներով, 130 մմ տրամաչափի Մ-46 տեսակի քնդամոթներով:

1972 թ. դեկտեմբերին քանակում Մալահ Ջադիդի համախոհները նրա ազգական Իզզար Ջադիդի գլխավորությամբ՝ Միրիայում ռազմական հեղաշրջման վտորդ կատարեցին, որի արդյունքում 200 մարդ ձերբակալվեց<sup>540</sup>:

1970-1973 թթ. կարևոր է քննարկել որպես Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության ամրապնդման, կառավարման համակարգի ձևավորման, օրենսդրական և իրավական համակարգի ստեղծման, երկրի ներքին և արտաքին քաղաքականության մշակման ժամանակաշրջան: Այդ շրջանը համալրվեց 1973 թ. երկրի ինքնական օրենքի՝ Մահմանադրության ընդունումով, որն ամրագրեց «Բաաս» կուսակցության գերակայությունը պետության և հասարակության մեջ՝ լայն իրավունքներ վերապահելով երկրի նախագահին, որը դարձավ մաս Միրիայի զինված ուժերի գլխավոր հրամանատարը<sup>541</sup>:

1973 թ. սկզբին Միրիայի զինված ուժերը կազմում էին 140 հազար: Միրիական զինված ուժերն իր տրամադրության տակ ունեյր 1320 տանկ, 675 քնդամոթ, 1300 ռազմական մեքենա, 275 ռազմական ինքնաթիռ, 30 ռազմանավ<sup>542</sup>: 1967 թ. պատերազ-

<sup>540</sup> Kerr M., *Hafiz Assad and the Changing Patterns of Syrian Politics*, International Journal, Vol. 28, No. 4, 1973, p. 703.

<sup>541</sup> حاتم صالح، البعث السوري، تاريخ موجز، بيروت، ٢٠١٢، ص ١١٢.

<sup>542</sup> Memmos A. C., *Ազգ. աշխ.*, էջ 56:

որի, Միրիան, Իրաքը և եզիպտոսը կազմելու էին արաբական միասնական պետություն: Ստեղծելով կայուն վարչակարգ՝ նախագահը քանակը դարձրեց մի հզոր ուժ, որից կախված էր քաղաքական կառավարման ճակատագիրը: Բանակում տեղի ունեցան քաղաքի վարչապետներ, որոնց միջոցով զինված ուժերը դարձան քաղաքական արդյունավետ գործիք: Ալ-Ասադը ձգտում էր, որպեսզի զինված ուժերը հասարակության մեջ բարձր դիրք գրավեն: Հետևակն ու մեխանիզացված զորանասերը համալրվեցին մեծ քանակությամբ հակատանկային հրթիռային համակարգերով և նոնակաձիգներով: Հրետանին համալրվեց 122 մմ տրամաչափի Դ-30 տեսակի հասփրցներով, 130 մմ տրամաչափի Մ-46 տեսակի քնդանորթներով:

1972 թ. դեկտեմբերին քանակում Մալահ Ջադիդի համախոհները նրա ազգական Իզզար Ջադիդի գլխավորությամբ՝ Միրիայում ռազմական հեղաշրջման փորձ կատարեցին, որի արդյունքում 200 մարդ ձերբակալվեց<sup>540</sup>:

1970-1973 թթ. կարևոր է քննարկել որպես Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության ամրապնդման, կառավարման համակարգի ձևավորման, օրենսդրական և իրավական համակարգի ստեղծման, երկրի ներքին և արտաքին քաղաքականության մշակման ժամանակաշրջան: Այդ շրջանը համալրվեց 1973 թ. երկրի էխմնական օրենքի՝ Մահմանադրության ընդունումով, որն ամրագրեց «Բաաս» կուսակցության գերակայությունը պետության և հասարակության մեջ՝ լայն իրավունքներ վերապահելով երկրի նախագահին, որը դարձավ նաև Միրիայի զինված ուժերի գլխավոր հրամանատարը<sup>541</sup>:

1973 թ. սկզբին Միրիայի զինված ուժերը կազմում էին 140 հազար: Միրիական զինված ուժերն իր տրամադրության տակ ունեյր 1320 տանկ, 675 քնդանորթ, 1300 ռազմական մեքենա, 275 ռազմական ինքնաթիռ, 30 ռազմանավ<sup>542</sup>: 1967 թ. պատերազ-

<sup>540</sup> Kerr M., *Hafiz Assad and the Changing Patterns of Syrian Politics*, International Journal, Vol. 28, No. 4, 1973, p. 703.

<sup>541</sup> حاتم صالح، البعث السوري، تاريخ موجز، بيروت، ٢٠١٢، ص ٧١.

<sup>542</sup> Memmos A. C., *Այլ աշխ.*, էջ 56:

Միրիային հասցրվեց ազատագրել 1967 թ. Իսրայելի կողմից գրավված որչ սիրիական տարածքներ, այդ բվում՝ Գոլանի բարձունքների վարչական կենտրոն Ալ-Կունեյտայան:

1974 թ. մայիսի 31-ին ժնկում իսրայելական կողմի հետ Միրիայի գեներալ Մուստաֆա Տայարին ստորագրեց զորքերի տարանջատման վերաբերյալ համաձայնագիր: Ըստ համաձայնագրի՝ իսրայելական զորքերը դուրս բերվեցին ոչ միայն 1973 թ. գրավված սիրիական հողերից, այլև 1967 թ. գրավված Գոլանի բարձունքների մի մասից, ինչպես նաև նրա վարչական կենտրոն Ալ-Կունեյտայայից: Նրկու կողմերին բաժանող բուֆերային գոտում հաստատվեցին ՄԱԿ-ի խաղաղաբար զորքերը:

Միրիան 1976 թ. հունվարին անմիջականորեն միջամտեց իրանական դեպքերին՝ այնտեղ ուղարկելով «Պաղեստինյան ազատագրության քանակի» Յարմուք բրիգադի մի քանի ջոկատներ: Լիբանանում իրավիճակը դուրս էր եկել քուլլատերի սահմաններից, իսկ նրկրի կառավարությունն այլևս չէր վերահսկում տեղի ունեցող իրադարձությունները: 1976 թ. մայիսի 31-ի զիշերը հունիսի 1-ի առավոտյան սիրիական քանակը մուտք գործեց Լիբանան՝ կարգուկանոն հաստատելու նպատակով: Ներխուժումից կարճ ժամանակ անց Լիբանանի մեծ մասը հայտնվեց սիրիական հսկողության տակ<sup>50</sup>:

Միրիայի ռազմական միջամտությունը իրանական հակամարտությանը խոր դժգոհություն առաջացրեց արաբական մի շարք նրկունքում: Եգիպտոսը դատապարտեց Միրիայի՝ արաբական նրկունքի հետ չհամաձայնեցրած քայլը և խզեց Դամասկոսի հետ դիվանագիտական հարաբերությունները, իսկ Իրանն իր զորքերն ուղարկեց սիրիաիրաբյան սահմանի մոտ:

1978 թ. փետրվարին Հաֆեզ Ալ-Ասադը նրկրոյլ անգամ յոթնամյա ժամկետով վերդնորվեց ՄԱՀ նախագահ:

1979-1982 թթ. Միրիան գտնվում էր քաղաքական և սոցիալ-տնտեսական դժվարին կացության մեջ: Միրիայում

<sup>50</sup> Востокон С. В., նշվ. աշխ., էջ 132:

կրկին ակտիվացել էին կրոնական-ծայրահեղական կազմակերպությունները, մասնավորապես «Մուսուլման եղբայրները», որոնց գլխաված պայքարը երկրում կառավարող թաաաական վարչակարգի դեմ յուրջ փորձություն դարձավ սիրիական դեկապարտության համար: «Մուսուլման եղբայրները» սուննի մահմեդականներ էին և առանձնահատուկ բացասական վերաբերմունք ունեին «Բաաս» կուսակցության վերնախալի, քարձրաստիճան գիեվորականների նկատմամբ, որոնք գերակշռաբար լիմեելով ալավիական համայնքի ներկայացուցիչներ, կազմակերպության հետևորդների կողմից համարվում էին ոչ մահմեդականներ և հերետիկոսներ ու ցածր խավի ներկայացուցիչներ: Իսլամական արձատականության առաջացման և զարգացման ազդակ էր համոզիանում երկրում լեզալ ընդդիմության քաղաքացիությունը, իսկ ԱԱԸ-ի ստեղծումից հետո, փաստորեն, իսլամական արձատականությունը դարձավ միակ մասսայական գաղափարախոսությունը, որի միջոցով հնարավոր էր արտահայտել դժգոհությունը իշխանությունների կառավարման նկատմամբ<sup>544</sup>:

1979-1982 թթ. Սիրիայում «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության անվան ներքո գործում էին երկը խմբակներ՝ «Ժալամական ազատագրական շարժումը»՝ Մասուդյան Արաբիայում ապրող շեյխ Աբու Դիդայի գլխավորությամբ, որի նյութական և ռազմական օժանդակությունն ապահովում էր սիրիացի Մաարուֆ Ալ-Դավալիբի, որը Մասուդյան արքունիքում գրադեցման էր խորհրդականի պաշտոն, «Մուսուլմանների գնդեր» խմբակը, որը ղեկավարում էր Մյուսև Հադիդը (կենտրոնը գտնվում էր Հոյբյանամում, իսկ 1977 թ. Հադիդի մահից հետո ղեկավարությունն անցավ Աբդ Աս-Մաքթաթ Ջալիմին) և «Ժալամական ազատագրական կուսակցությունը», որի կենտրոնը նույնպես Հոյբյանամում էր<sup>545</sup>:

<sup>544</sup> Մանուկյան Ս., Իսլամական արձատականությունը Սիրիայում: Առաջացման և ակտիվացման պատճառները, Միթափոր Արևելք, Պատմություն, քաղաքականություն, մշակույթ, հոդվածների ժողովածու, Երևան, 2002, էջ 115-117:

<sup>545</sup> Մարտչյան Պ. Հ., նշվ. աշխ., էջ 78-79:

1979 թ. Իրանում տեղի ունեցած իսլամական հեղափոխությունից հետո Սիրիայի մալսագահ Հաֆեզ Ալ-Ասադն ակնկալում էր Իրանի օգնությունը, որի կարիքը Սիրիայի պալաի ղեկավարությունը զգում էր սուննի ծայրահեղականների դեմ մղվող պայքարում: Ըստով սիրիական ղեկավարությունը համապատասխան աջակցություն ստացավ Այաթոլլահ Խոմենիից<sup>546</sup>:

1979 թ. դեկտեմբերի 22-ից 1980 թ. հունվարի 6-ը տեղի ունեցավ «Քասս» կուսակցության 7-րդ տարածաշրջանային համագումարը, որը մասնակիցների քանակով կուսակցության պատմության մեջ ամենամեծ համագումարն էր:

1980 թ. հունվարին, երբ ճգնաժամը Սիրիայում գնալով խորանում էր, Հաֆեզ Ալ-Ասադը նոր վարչապետ նշանակեց Արդ Առ-Ռատֆ Ալ-Կասսին<sup>547</sup>: Վերջինս քարծրացրեց պետական աշխատողների աշխատավարձերը, որոշ քայլեր ձեռնարկվեցին մաև կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ, սակայն անարիկչական գործողությունները երկրում չէին դադարում: Սիրիական վերնախավում խուճապ սկսվեց այն ժամանակ, երբ բացահայտվեց, որ ներսնշնանակ զենքայլ Մուհամմադ Ալ-Խուլիի ղեկավարած ռազմաօդային հետախուզությունը բացքրել էր սուննի ծայրահեղական մի գործակալի, որը նախքան իր կադանավորումը կարողացել էր «Մուսուլման եղբայրներին» հայտնել Սիրիայի պետաբնվտանգության քարծրատոհման մի շարք սպաների ավտոմեքենաների համարանիշերը: Սուննի ծայրահեղականների գործողությունները կասեցնելու և պարտիզաններին վերացնելու համար իշխանությունները դրոշեցին օգտագործել ռազմական ծանր տեխնիկայով զինված միավորումները: «Քասս» կուսակցության կողմ-

<sup>546</sup> Հովհաննիսյան Ն., Իրան. Այաթոլլահ Խոմենիի դարաշրջանը, Երևան, 2004, էջ 63:

<sup>547</sup> Արդ Առ-Ռատֆ Ալ-Կասսը ծնվել է 1932 թ. Դամասկոսում, ավարտել է Դամասկոսի համալսարանը, այնուհետև ուսումը շարունակել Սամարայում և ստացել ճարտարապետության ու քաղաքաշինության դոկտորի գիտական աստիճան, իսկ 1979 թ. նշանակվել Դամասկոսի քաղաքապետ: Sh' u Puzhkovskan O. M., Ուլվ. աշխ., էջ 117:

նակիցները, համատարած ահաբեկման մթնոլորտում, զինվելու իրավունք ձեռք բերեցին: Մարտի 9-ին զինված ուղղաթիռներ ուղարկվեցին Ջիսր Աշ-Շադուրի ուղղությամբ, որտեղ ցուցաբարձրեց հարձակվել էին կուսակցական գրասենյակների վրա: Մի քանի օր անց բանակային երրորդ 10 հազարանոց դիվիզիան և շուրջ 250 զինված մեքենաներ ուղղվեցին դեպի երկրի հյուսիս՝ Հալեպում կարգուկանոն հաստատելու նպատակով: Գեներալ Շաֆիկ Ֆայսլի տանկային դիվիզիան Հալեպում մնաց մի ամբողջ տարի՝ հսկելով գրեթե քաղաքի յուրաքանչյուր փողոցը<sup>548</sup>:

1980 թ. Սիրիայի Ժողովրդական ժողովը հաստատեց թիվ 49 օրենքը, որի համաձայն՝ մահապատիժ էր նախատեսվում «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությանը պատկանելու համար<sup>549</sup>:

1982 թ. փետրվարին Համայնոս ճնշվեց «Մուսուլման եղբայրների» բարձրացրած ապստամբությունը: Խռովարարների դեմ դուրս եկավ «պաշտպանական ջոկատը» (سرايا الدفاع), որի հրամանատարը նախագահի եղբայր Ռ-ի-խար Ալ-Ասադն էր<sup>550</sup>:

Բանակի մասնակցությունն այդ ապստամբության ճնշմանը ևս մեկ անգամ ապացուցեց, որ Սիրիայի զինված ուժերը ոչ միայն ազգային տարածքի պաշտպան են, այլ նաև կարող են օգտագործվել մերթին ընդդիմությանը ճնշելու համար:

1982 թ. իսրայելական ագրեսիան Լիբանանում կամ «արաբ-իսրայելական 5-րդ պատերազմի» ժամանակ իսրայելական և սիրիական զորքերի միջև առաջին քախտոնց տեղի ունեցավ հունիսի 7-ին Խասրահի քաղաքի մոտ: ԱՄՆ-ի միջնորդությամբ Դամասկոսին առաջարկություն արվեց իր հսկողու-

<sup>548</sup> باتريك سيل، الأسد، الصراع على الشرق الأوسط، بيروت، ٢٠٠٧، صفة ٥٢٩-٥٣١.

<sup>549</sup> عدنان سعد الدين، الإخوان المستثمون في سورية، مذكرات وتكريرات، الحكم العربي (الطوى) من عام ١٩٦٣ حتى عام ١٩٧٧، للقاهرة، ٢٠١٠، صفة ٢٦٨.

<sup>550</sup> نيفيلاس مان دام، الصراع على السلطة في سورية، الطائفية والإقليمية والمشتريه في السياسة ١٩٦١-١٩٩٥، مكتبة مدبولي، القاهرة، ١٩٩٥، صفة ١٦٧.

բյան տակ վերցնել ՊԱԿ-ի ռազմական կառույցները և քոյլ չտալ նրանց հրքիտակոծել Արևելյան Գալիլեան: Ի պատասխան Միքիայի մերժմանը՝ իսրայելական ռազմաօդային ուժերը ոչնչացրին 34 սիրիական կործանիչ: Լիբանանում ստեղծված իրավիճակի համար Եգիպտոսը մեղադրեց Միքիային, փաստարկելով, որ այդ երկրում զորքեր պահելով Դամասկոսը մեկ անգամ ևս արհեստական լարվածություն է ստեղծում այդ երկրում<sup>551</sup>:

Հաֆեզ Ալ-Ասադի վարչակարգի անձնաամուր հենարանները հետևյալ ուժային կառույցներն էին՝ զինված ուժերի հետախուզությունը, որը ղեկավարում էր Ալի Դուբան, ռազմաօդային ուժերի հետախուզությունը՝ ղեկավար Մուհամմադ Ալ-Խուլին, քաղաքացիական հետախուզությունը՝ Յուսուբ Աբսիի և նրա անվտանգության գծով տեղակալ Մուհամմադ Նասիֆի գլխավորությամբ, 10-15 հազարանոց «ժառուկ ուժերը» (القوات الخاصة), որի հրամանատարն էր գեներալ Ալի Հայդարը: Հաջորդ զորամիավորումը 10 հազարանոց նախագահական կամ հանրապետական զվարդիան էր (الحرس الجمهوري), որը ղեկավարում էր Ադման Ալ-Մախլուֆը: Մյուս զորամիավորումը «պայքարի ջոկատներ» (سرايا الصراة), որը ղեկավարվում էր Ադման Ալ-Ասադի կողմից<sup>552</sup>: Պաշտպանական ջոկատները ստեղծվել էին Հաֆեզ Ալ-Ասադի վարչակարգի անվտանգության ապահովման նպատակով:

Հաֆեզ Ալ-Ասադի 1984 թ. մարտի 11-ի հրամանագրով ստեղծվեց երեք փոխնախագահի պաշտոն, որոնք զբաղեցրին Արդ Ալ-Հալիմ Խադդամը, Ջուհայր Մաշարաֆան և Ռիֆաթ Ալ-Ասադը<sup>553</sup>:

1987 թ. հունվարին պաշտոնանկ արվեց ռազմաօդային հետախուզության ղեկավար գեներալ Մուհամմադ Ալ-Խուլին,

<sup>551</sup> Գևորգյան Գ., 1982 թ. իսրայելյան ագրեսիան Լիբանանում և Եգիպտոսի դիրքորոշումը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատոր 23-րդ, Երևան, 2004, էջ 60-62:

<sup>552</sup> باتريك سيب، الأسد، المصدر المتكور، صفحة ١٩٥-١٩٦.

<sup>553</sup> نفس المصدر، صفحة ١٩٩.



ապա Ալ-Ասադի հրամանով քանդարկվեց, իսկ փերզիարին մախազահի որդի Բասիլ Ալ-Ասադը նշանակվեց սրաշտպանական ջոկատների հրամանատար: Նույն թվականի հոկտեմբերին վարչապետ Աբդ Առ-Ռաուֆ Ալ-Կամարն փոխարինեց ժողովրդական ժողովի նախագահ Մահմուդ Ազ-Ջուբին: Պաշտպանության նախարարը Մուստաֆա Տլասն էլ, ԱԳ նախարարը Ֆարուկ Աշ-Շարան: Այդ ժամանակ Սիրիան ուներ 800 հազարանոց բանակ (ներառյալ պահեստային)<sup>554</sup>, 4100 տանկ, ռազմական ինքնաթիռներ և այլն<sup>555</sup>:

1988 թ. ռազմական կարևոր դեր ունեցող պաշտոնյաներն էին գլխավոր շտաբի պետ գեներալ Հիքմաթ Շիհարին, փոխվարչապետ և պաշտպանության նախարար Մուստաֆա Տլասը, զինվորական հետախուզության ղեկավար գեներալ Ալի Դուրան, գլխավոր շտաբի պետի տեղակալ գեներալ Ալի Ալա-նը, քանակային երրորդ դիվիզիայի հրամանատար գեներալ Շաֆիկ Ֆարադը, ՆԳ նախարարության կազմում գտնվող, սակայն անկախ գործող ընդհանուր հետախուզական ծառայության ղեկավար գեներալ Մուհամմադ Նասիֆը, քաղաքական անվտանգության ծառայության ղեկավար Ահմադ Մախլաբը, հետախուզության հայտնի գործիչներից Ադնան Ալ-Մախլուֆը և այլք:

1992 թ. մարտի 12-ին Հաֆեզ Ալ-Ասադը չորրորդ անգամ վերընտրվեց Սիրիայի նախագահ: Վարչապետ Մահմուդ Ազ-Ջուբին հունիսի 24-ին նախագահին ներկայացրեց իր կառավարության հրաժարականը, որից հետո նախագահն անմիջապես հանձնարարեց նրան ձևավորել նոր կառավարություն: Սիրիան քայլեր ձեռնարկեց ջերմ հարաբերություններ հաստատել մախլեի խորհրդային, մուսուլմանական հանրապետությունների հետ: Սիրիան ջերմ հարաբերություններ հաստատեց նաև Հայաստանի հետ<sup>556</sup>:

<sup>554</sup> Katz S., *Arab armies of the Middle East wars*, volume 2, London, 1988, p. 18.

<sup>555</sup> Levtan A., Eytan Z., *The Middle East military balance 1987-1988*, Tel Aviv University, 1988, p. 399-400.

<sup>556</sup> Սիրիան 1991 թ. ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկա-

Միրիայում քաղաքական և զինվորական իշխանությունը սերտաճած էին: Նրանք հսկայական ազդեցություն ունեին երկրի թե՛ մերքին, և թե՛ արտաքին քաղաքականության ձևավորման գործընթացի վրա: Առանց զինվորական վերահսակվի համաձայնության երկրում քաղաքական հարցերը գրեթե չէին լուծվում: 1990-ական թթ. կեսերին Միրիայի գլխավոր ուժերը հաշվվում էին շուրջ 400 հազար<sup>557</sup>:

1994 թ. Հաֆեզ Ալ-Ասադի իրական հետնորդ համարվող Բասիլ Ալ-Ասադն ավտովարից մահացավ: Դրանից հետո Բաշար Ալ-Ասադը<sup>558</sup> ծանրաբեռնվում է զինվորական և պետական տարրեր խնդիրներով: Լոնդոնից Միրիա վերադառնալուց հետո նա անցնում է տանկային գումարտակի հրամանատարության դասընթացներ և արդեն 1994 թ. նոյեմբերին նշանակվում գումարտակի հրամանատար, իսկ 1995 թ. Բաշար Ալ-Ասադին շնորհվում է մայրի աստիճան: 1996 թ. Բաշար Ալ-Ասադը մասնակցում է Բարձրագույն ռազմական ակադեմիայի հրամանատարության և գլխավոր շտաբի դասընթացներին, որը պատվոգրով ավարտում է 1997 թ. և ստանում գեղապետի աստիճան: Բաշարին աջակցում էր նրա կրտսեր եղբայրը՝

---

խորթնույն և աշխարհում երրորդ երկիրն էր, որտեղ ծառայի աննկելով մահ նախնական համայնքի տեղը՝ 1992 թ. Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին համաձայնագիր կնքվեց և Դամասկոսում բազմեց Հայաստանի դեսպանությունը, իսկ 1993 թ. Հաֆեզում գլխավոր էլակատարությունը: 1997 թ. Միրիան դևապարտություն բացեց երևանում: Դրանով երկու պետությունների միջև քաղաքական, տնտեսական և ճշակության թաղանթների հարաբերությունների զարգացման հիմք դրվեց:

<sup>557</sup> Мясур Саяз Фахаз, *Ելվ. աշխ.*, էջ 102:

<sup>558</sup> Բաշար Ալ-Ասադը ծնվել է Դամասկոսում 1965 թ. սեպտեմբերի 11-ին: Լա Հաֆեզ և Ամիրա Ալ-Ասադի երբեք զավակն է: Ի տարբերություն Բասիլի և Մահիթի, որոնք իրենց գործունեությունը սկսեցին Միրիայի զինված ուժերում, Բաշարը 1982 թ. քնդունվեց Դամասկոսի համալսարանի բժշկական ֆակուլտետը: 1988 թ. ավարտելով համալսարանը՝ Բաշար Ալ-Ասադը ստացավ բժշկի որակավորում, այնուհետև՝ զինվորական ծառայության պարտքը բանակում որպես բժիշկ կատարելուց հետո, 1992 թ. նկնեց Լոնդոն ակնաբուժության բնագավառում մասնագիտանալու համար:



յողական առաջնադասումը կախված է նրա նախագահ դասնայուց:

Փոփոխություններ տեղի ունեցան նաև հետախուզության և անվտանգության ծառայությունների ղեկավարության շրջանում: Գլխավոր հետախուզության տնօրինությունը երկար ժամանակ ղեկավարած գեներալ-մայոր Բաշիր Նաջջարին 1998թ. փոխարինեց գեներալ-մայոր Ալի Խուրին: Նաջջարը մեղադրվեց կոռուպցիայի մեջ և ձերբակալվեց: Տնօրինության ներքին ու արտաքին մասնաճյուղերի ղեկավարներ նշանակվեցին Բաշար Ալ-Ասադի մտերիմներից երիտասարդ գեներալներ Բահջար Մուլեյմանը և Ալյադ Մահմուդը: 2000 թ. փետրվարին երկար տարիներ ռազմական հետախուզությունը ղեկավարած գեներալ-մայոր Ալի Դուրային փոխարինեց գեներալ-մայոր Հասան Խալիլը:

Հաֆեզ Ալ-Ասադի՝ Սիրիայի առջև ունեցած ամենամշակակալից ծառայությունը թերևս այն էր, որ շնայած քաղաքացիական ղեկավարություններին ու փորձություններին, տարածաշրջանային հակամարտություններին ու պատերազմներին՝ նրան հաջողվեց էր ստեղծել ներքին և արտաքին մարտահրավերները դիմակայելուն ունակ, ինչպես նաև երկրի կայունությունն ու միջազգային հեղինակությունը երաշխավորող կառավարման կենտրոնացված համակարգ:

Հաֆեզ Ալ-Ասադի ստեղծած «վիստագմական» վարչակարգը և ուժային կառույցների ներգրավվածության քարձր ստորիճանը Սիրիայի քաղաքական կյանքում չափազանց կարևոր էին դարձնում քանակի և անվտանգության մարմինների աջակցության նախապայմանը որևէ նախագահի իշխանության պահպանման հարցում: Ուստի անհրաժեշտություն էր Բաշար Ալ-Ասադի անձի շուրջ զինվորականների և անվտանգության շրջանակներում համակրանքի և վստահության մրցույթով առտիճանարար ձևավորումը: Ի տարբերություն Բասիլի և Մահիրի, որոնց ամուր կապեր ունեին զինվորականության հետ, Բաշարը խորթ տարր էր այդ շրջանակների համար:

Նախագահ Ալ-Ասադը մահացավ 2000 թ. հունիսի 10-ին: Սիրիայի քանակի կյանքում, որն անցել էր անկախության հա-

մար պայքարի և ռազմական հեղաշրջումների ճանապարհով, մեր շրջան սկսվեց: Չնայած ստեղծված բարդ իրավիճակին՝ իշխանության փոխանցումը Քաշար Ալ-Ասադին բավականին սահուն կերպով իրականացավ: Հաֆեզ Ալ-Ասադի մահվան հաջորդ օրը փոխնախագահ Աբդ Ալ-Հալիմ խադդամը, օրը, Սահմանադրության համաձայն, իրականացնելու էր մախսագահի պարտականությունները մինչև մեր ընտրությունները, Քաշար Ալ-Ասադին նշանակեց զինված ուժերի գլխավոր հրամանատար՝ նրան շնորհելով բանակի գեներալի (فرق) բարձրագույն զինվորական աստիճան, օրը մինչ այդ Հաֆեզ Ալ-Ասադի մեկնաշնորհն էր: Այնուհետև Ազգային ժողովը, փոփոխություններ կատարելով Սահմանադրությունում, լիզիտիմացրեց երեսուցյուրսամյա Քաշար Ալ-Ասադի մախսագահի թեկնածու արձանագրվելը:

Բանակի բարձրաստիճան սպայական կազմը պաշտպանության մախսարսը Մուստաֆա Տլասի և գլխավոր շտաբի պետ Ալի Ալլանի գլխավորությամբ՝ իսկույն իրենց հախատարմությունը հայտնեցին Քաշար Ալ-Ասադին: «Բաաս» կուսակցության համագումարը նրան ընտրեց կուսակցության գլխավոր քարտուղար: Համաժողովի ավարտին «Բաաս» կուսակցության տարածաշրջանային ղեկավարությունը 2000 թ. հունիսի 20-ին Քաշար Ալ-Ասադին առաջադրեց մախսագահի թեկնածու: Հուլիսի 10-ին կայացավ համրաքվե և Քաշար Ալ-Ասադին իր պարտականությունների կատարմանն անցավ 2000 թ. հուլիսի 17-ին՝ Ժողովրդական ժողովում պաշտոնավարման ելույժան արարողությունից հետո<sup>560</sup>:

«Բաաս» կուսակցությունն ավելի ընդարձակեց և խորացրեց իր ներկայությունը բանակում: 2000 թ. Միլիայում կար «Բաաս» կուսակցության 27 մասնաճյուղ, 212 ենթաբաժանմունք, 1656 ակումբ, իսկ ընդհանուր առմամբ 25,066 «Բաաս» կուսակցության անդամներ զինվորականների էին<sup>561</sup>: Այդ ժա-

<sup>560</sup> .A. - ٧٩ صفحة المصدر المذكور، صفة 2007

<sup>561</sup> Rubin B., The truth about Syria, New York, Palgrave Macmillan, 2007, p.

մանակ «Քասան» ունեւ շուրջ 1,5 մլն. անդամ և շարունակում էր մնալ երկրի քաղաքական կառավարման կարևորագույն լծակը: Ձիմփորական և կուսակցական վերնախավի համար Քաշար Ալ-Ասադը փոխզիջումային դեմք էր, որն ունակ էր հավասարակշռելու իրենց իշխանական հավակնությունները և պահպանելու մախլիին քաղաքական համակարգը:

Յուզեւ իշխանության անցումը հորից որդի սահուն կատարվեց, սակայն Քաշար Ալ-Ասադի հետագա քայլերի նկատմամբ նրա մերձավորների և վարչակարգի վերնախավի դրական վերաբերմունքի տեսկանությունը որևէ կերպ երաշխավորված չէր: Այն կարգային փոփոխությունները, որոնք կատարվեցին 1990-ականներին վերջին, չէին կարող քաղաքային բվալ նոր մախազահին, քանի որ դրանք իրականացնելիս Հաֆեզ Ալ-Ասադը չէր առաջնորդվել հետագայում բարեփոխումների միտված քաղաքականության վարույթն ապահովելու, այլ՝ իշխանության շարունակությունը պահպանելու անհրաժեշտությամբ:

Բահզար Սուլեյմանի և Ասեֆ Շաուրաբի միջոցով նոր մախազահն ապահովել էր գլխավոր և ռազմական հետախուզություններն իր ազդեցության ոլորտում պահելու խնդիրը: 2002 թ. Լիբանանից ետ էր կանչվել և Քաղաքական անվտանգության ղեկավարումը ստանձնել Քաշար Ալ-Ասադի մեկ այլ զինակիցը՝ զեներալ-մայոր Դազի Քանաանը: Նրա պատասխանատվության մեջ էր մտնում վարչակարգի դեմ հնարավոր քաղաքական ընդվզումների բացահայտումը: 2004 թ. հոկտեմբերին Դազի Քանաանը նշանակվեց ՆԳ մախարաբ:

Շուտով կաղդային փոփոխություններ սկսվեցին մակ զինված ուժերում և «Քասան» կուսակցության ղեկավարության ներսում: 2002 թ. հունվարին Ալի Ալլանն ազատվեց բանակի գլխավոր շտաբի պետի պաշտոնից: Նրան փոխարինեց տեղակալը՝ գեներալ Հասան Թուրքմանին, ով Հալապի սուննիներից էր, իսկ նրա գրադեցրած պաշտոնը մինչ այդ քսանչորս տարի շարունակ հատկացված էր եղել սուննիներին: Ալի Ասադը փորձել էր ընդդիմանալ ռազմական ուժերի անձնակազմի և նրա առաջադրանքների կատարման ընթացքի վրա մախա-

գահի անունից վերահսկողություն հաստատելու Ասեֆ Շաուրաթի ցանքերին: Այլ Ասլանի պաշտոնակատարությունը բացատրվում է նաև այն հանգամանքով, որ նրա ալավի լինելը պատճառ էր դարձել, որպեսզի տունն զինվորականությունը դժգոհի հրամանատարական կազմի «ալավիականացումից»: Բաշար Ալ-Ասադը նաև հեռացրեց զինված ուժերի և անվտանգության մի քանի բարձրատիճան պաշտոնյաների, որոնց խոչընդոտ էր համարում իր օրակարգն իրականացնելու ճանապարհին: 2002 թ. մարտին նախագահի հրամանագրով մոտ երեսուն անվտանգության համակարգի բարձրատիճան սպաներ հեռացվեցին իրենց պաշտոններից կարգապահական նորմերի կոպիտ խախտումների և ծառայողական իրավասությունների շարաշահման պատրվակով<sup>562</sup>:

Ուժային կառույցներում ամենամշանակալից փոփոխությունը թերևս նրկար տարիներ «անվտանգության» պաշտպանության նախարար՝ 73 ամյա կորպուսային զենքայլ Մուստաֆա Տլասի հրաժարականն էր 2004 թ. մայիսի 11-ին, ով այդ պաշտոնում էր 1974 թ. -ից: Նրան այդ պաշտոնում փոխարինեց Հասան Թուրքմանին, իսկ գլխավոր շտաբի պետ նշանակվեց Ալի Հաթիրը<sup>563</sup>:

Անվտանգության համակարգում փոփոխություններ իրականացնելու մեկ այլ նախանշան էր Ասեֆ Շաուրաթին Սիրիայի ուղղակի հետախուզության տնօրեն Հասան Ալ-Խալիլի տեղակալ նշանակելը: Հասան Ալ-Խալիլը թոշակի անցավ 2005 թ. փետրվարին՝ ճանապարհ հարթելով Ասեֆ Շաուրաթի առաջխաղացման համար:

Թեև Բաշար Ալ-Ասադի իրականացրած կադրային քաղաքականությունն ի վերջո իշխանության լծակներից լիովին զրկեց «միմ գվարդիայի» ներկայացուցիչներին՝ այն չբերեց իշխանության համակարգի արմատական փոփոխությունների: Նրանք ավելի շատ կրում էին պետական ապարատի բարձագ-

<sup>562</sup> Ахмедов В., Современная Сирия: история, идеология, экономика, Москва, 2010, с. 133-134.

<sup>563</sup> Նայն տեղում, էջ 138-139:

ման և սերնդավիճակի, քան սկզբունքային տեղաշարժերի  
բնույթը:

Միրիայում կառավարման համակարգի արդիականաց-  
ման և ընդհանրապես քաղաքական բարեփոխումների առա-  
ջընթացի համար կարևոր խնդիր էր իշխող «Բաաս» կուսակ-  
ցության՝ երկրի քաղաքական, հասարակական և սոցիալական  
կյանքում ունեցած որոշիչ դերակատարության վերանայումը:  
«Բաասը» քանակի և ալտի վերնախավի հետ միասին կազ-  
մում էր Հաֆեզ Ալ-Ասադի կերտած իշխանության համակարգի  
գլխավոր հիմնասյուների նոյակը: Այն կարևոր գործիք էր ինչ-  
պես վարչակարգը, այնպես էլ ժողովրդական լայն զանգված-  
ները վերահսկելու համար:

2003 թ. խորհրդարանական ընտրություններում «Բաա-  
սը», ինչպես նախկինում, ծանրակշիռ հաղթանակ տարավ՝ իր  
համար սպառնովելով խորհրդարանի 250 տեղերից 167-ը: Ընտ-  
րությունների մասին օրենքը մնացել էր նույնը և այդ ընտրու-  
թյունները դեռևս անցկացվեցին հին ոճով՝ կուսակցության և  
երկրի ղեկավարության ակնհայտ միջամտությամբ և նրա ա-  
չալուրջ վերահսկողության ներքո: Այնուամենայնիվ, առաջին  
անգամ ԱԱԳ անդամ չհամոզուցող Միրիական Ազգային սո-  
ցիալական կուսակցությունը, որն արգելվել էր 1955 թ., սկսեց  
սզատ գործունեություն ծավալել երկրում և այս կուսակցու-  
թյան ներկայացուցչությունը խորհրդարանում հասավ 3-ի՝ եր-  
կուսը ԱԱԳ-ի ցուցակներով, մեկը՝ «ամկախների»<sup>564</sup>:

Բարեփոխումների կողմնակիցները մեծ հույսեր ունեին,  
որ 2005 թ. հունիսին սպառնող «Բաասի» կոնգրեսը կամրոջ-  
ջացնի կուսակցության դերի վերաբժանումը: Կոնգրեսը տեղի  
ունեցավ Լիբանանի մախկիմ վարչապետ Ռաֆիկ Հարիրիի  
սպանությունից և Լիբանանից սիրիական բանակի դուրսբերու-  
մից անմիջապես հետո:

<sup>564</sup> Մանուկյան Ս., Բաշար ալ-Ասադի կառավարման առաջին չորս տարիներին Միրիայում հասարակական և քաղաքական որոշ տեղաշար-  
ժերի մասին (2000-2004 թթ.), Մերմավոր և Միջին Արևելքի երկրներ և  
ժողովուրդներ, հասար 23-րդ, Երևան, 2004, էջ 207:



Քաշար Ալ-Ասադը հավանություն տվեց սիրիաիրացյան հիմնական նավթատար խողովակի վերաբացմանը, որը Քիրկուկի նավթահամքերից հասնում էր մինչև միջերկրածովյան Քանիաս նավահանգիստը: Դամասկոսի և Քաղզառի միջև հարաբերությունները վատթարացել էին այն քանից հետո, երբ 1980-1988 թթ. իրաք-իրանյան պատերազմի ժամանակ Սիրիան պաշտպանեց Իրանին: Այսպես, երկու երկրների միջև խզվեցին դիվանագիտական հարաբերությունները: Դրան ավելացավ 1991 թ. Սիրիայի՝ իրաքյան օկուպացիայից Քուվեյթի ազատագրման քաղաքացիական պայքարի կողմից հային մասնակցելը: Սիրիական զորախումբը մասնակցեց «Փոքրիկ անապատում» ռազմական գործողությանը: Միլիայի և Իրաքի միջև դիվանագիտական հարաբերությունները վերականգնվեցին 2003 թ. իրաքյան ճգնաժամից հետո<sup>365</sup>:

Սիրիան տիրապետող դիրք ձեռք բերեց Լիբանանում՝ միաժամանակ դառնալով նրա կայունության երաշխավորը: Լիբանանը կարևոր խաղաքարս դարձավ Սիրիայի՝ մերձավորարևելյան կարգավորման ռազմավարության համար: Այն վերածվեց Իսրայելի դեմ պայքարի գլխավոր թատերաբեմի: Դամասկոսը հնարավորություն ստացավ հարվածներ հասցնել Իսրայելին ուրիշի ձեռքերով՝ մասնավորապես «Հիզբալլահի» և այդպիսով իրենից հեռացնել հակահարվածի վտանգը: Լիբանանը նաև հսկայական եկամտունքի աղբյուր էր Սիրիայի զինվորական և քաղաքական վերնախավի համար: Սիրիայի դեկավարները հավաստիացնում էին, որ զորքերը Լիբանանից դուրս կրերվեն տարածաշրջանում խաղաղության համաձայնագրի կնքելուց հետո:

Լիբանանի հարցում Քաշար Ալ-Ասադի խնդիրն էր ամեն զնով պահպանել հարևան երկրում ազդեցության լծակները և երկարաձգել սիրիական ռազմական ներկայությունն այնտեղ: Ջորջերի դուրսբերումը, անկասկած, կրուպցնեթ Դամասկոսի

<sup>365</sup> Саллум Ф., Позитив Сирия в пракско-кувейтском конфликте 1990 г., Журнал международного права и международных отношений, п. 3, 2009, с. 43-46.

դիլքերը տարածաշրջանում և մասնավորապես արաբ-խարայե-  
լական հակամարտության կարգավորման գործընթացում: Բա-  
շար Ալ-Ասադի իշխանության գալը համընկավ Լիբանանում  
հակասիրիական տրամադրությունների խմբման սկզբնավոր-  
ման շրջանի հետ, որի համար խթան հանդիսացավ Լիբանանի  
հարավից խարայեական գործերի հեռանալը: Փաստորեն, ան-  
հայտացավ սիրիական ներկայության արդարացման գլխավոր  
փաստարկը՝ խրայեական անմիջական տպառնալիքը: Սի-  
րիական ռազմական ներկայությունից ազատվելու կոչերը հա-  
ճախակի էին դարձել հատկապես մարտինների միջավայրում:

Փորձելով արդարացնել սիրիական ներկայությունը՝ 2001  
թ. փետրվարին «Աշ-Շարկ Ալ-Աուսատիմ» տված հարցազույ-  
ցում Բաշար Ալ-Ասադն իր տեսակետը փաստարկում է, ասե-  
լով, որ սիրիական գործերը լիբանանում իրականացնում են եր-  
կու կարևոր առարկություն. վերականգնում են «քաղաքական  
խաղաղությունը»՝ համաձայն Տաիֆի<sup>566</sup> համաձայնագրում  
Դամասկոսին տրված մանդատի և արձագանքում Իսրայելի  
հետ «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» իրավիճակին<sup>567</sup>:

Լիբանանում Սիրիայի ազդեցիկ դիլքերը պահպանելու  
համար դժվարություն էր առաջացել մի կողմից՝ երկրի հարա-  
վից Իսրայելի հեռանալուց հետո սիրիական ռազմական ներ-  
կայության համար արդարացում գտնելու և ահագնացող հա-  
կասիրիական տրամադրությունները զսպելու, իսկ մյուս կող-  
մից՝ լիբանանյան կառավարությունը վերահսկողության տակ  
պահելու առումով: Դրան ավելացան միջազգային հանրության  
դժգոհությունն ու ճնշումները: Աստիճանաբար ակնհայտ էր  
դառնում Լիբանանում սիրիական ներկայության շարունակ-  
ման անհնարինությունը: Նման պայմաններում Դամասկոսի

<sup>566</sup> 1989 թ. եփետեմբերի 22-ին Տաիֆի (Սաուդյան Արաբիա) համա-  
ձայնագրի ստորագրմանը՝ Լիբանանում վերջ դրվեց քաղաքացիական  
երկարատև պատերազմին: Մանրամասն տես Հացոթյունյան Լ., նշվ.  
այնտ., էջ 260-262:

<sup>567</sup> مقابلة السيد الرئيس بشار الأسد مع صحيفة الشرق الأوسط بتاريخ ٦ شباط ٢٠٠١  
[http://www.pccsidtassad.net/index.php?option=com\\_content&view=article&id=944:6-2001&catid=293&Itemid=469](http://www.pccsidtassad.net/index.php?option=com_content&view=article&id=944:6-2001&catid=293&Itemid=469)

խնդիրն էր հնարավորինս երկարաձգել լիբանանում գտնվելու շրջանը՝ փորձելով այնպիսի հիմք առեղծել սիրիա-լիբանանյան հարաբերությունների համար, որն ազատիվելը Լիբանանի կախվածությունը նաև դուրսբերումից հետո:

Այնուամենայնիվ, Գամաալուսի իշխանությունները, ստիպված լինելով տուրք տալ Լիբանանի ներսում և միջազգային հանդուրյան կողմից ուժեղացող քողորի ալիքին և ճնշումներին, սկսեցին աստիճանաբար կրճատել գոյքերի թիվը և գուգահեռաբար իրականացնել փրատեղակայումներ, ինչը տպավորություն էր ստեղծում Լիբանանից հեռանալու մտադրությունների մասին: Ընդ որում՝ զինվորականների թվի կրճատումը փոխհատուցվում էր սիրիական հեռախուռության գործակալների թվաքանակի աճով: Միջազգային ճնշումների ներքո՝ Միրիան ստիպված էր արագացնել գոյքերի դուրսբերումը: 2005 թ. ապրիլի 26-ին Լիբանանի տարածքը քրեց վերջին սիրիացի զինվորը:

Հեռանալով լիբանանից, տակայն Միրիան ամբողջովին չկորցրեց նրա վրա ազդեցության լծակները: Միրիանն ուժերի և առաջին հերթին «Հիզբալլահի» ներկայությունը կարևոր պայման էր, որպեսզի Միրիան շարունակի օգտագործել Լիբանանը՝ որպես խաղաքարտ տարածաշրջանում իր դիրքերը պահպանելու համար: 2005 թ. մարտին, «Հիզբալլահի» առաջնորդ Հասան Նասրալլահի կազմակերպած ցույցը ի ցույց դրեց Լիբանանում Միրիայի աջակիցների շոշափելի կշիռը՝ հստակապես շիա համայնքի շրջանում: Այնուամենայնիվ, Միրիան մեղադրվեց 2005 թ. փետրվարի 14-ին Բեյրութի կենտրոնում տեղի ունեցած հզոր պայթյունի հետևանքով ահաբեկչության գոհ դարձած Ռաֆիկ Հարիրիի սպանության կազմակերպման մեջ<sup>568</sup>: Վերջինիս սպանությունը նպաստեց «Մարիների հեղափոխության» բռնկմանը, որի արդյունքում սիրիական ուժերը դուրս քերվեցին Լիբանանից:

<sup>568</sup> Landis J., *Face J.*, *The Syrian Opposition*, *The Washington Quarterly*, Vol. 30, 1, Winter 2006-07, p. 54.

2006 թ. հունիսին Իսրայելը, ի պատասխան «Հիզբալլահի» հերթական գործողությանը, պատերազմ սկսեց Լիբանանի դեմ: Միրիան անմիջական մասնակցություն չունեցավ այդ պատերազմին, սակայն ամեն կերպ քաջալերեց «Հիզբալլահի» գործողությունները և ռազմավարությունը:

Բաշար Ալ-Ասադի իշխանության գալուց հետո քաղաքացիական հասարակության շարժումը Միրիայում ծագեց որպես ժողովրդավարական քարեփոխումներ անցկացնելու ազգաբնակչության տարրեր խավերի և խմբերի նկրտումների արտահայտությունը: 2000-2007 թթ. ընթացքում այդ շարժումը զարգացման և ծափալման որոշակի փուլեր անցավ՝ աստիճանաբար վերածվելով քաղաքական ընդդիմության: Այնուամենայնիվ «Դամասկոսյան գարնանից» մինչև «Դամասկոսի հոշակագիր» իշխանությանը ներկայացվող պահանջների քաղաքականացումը: Ընդդիմությանը կարճ ժամանակահատվածում հաջողվեց լուրջ անհանգստություն առաջացնել իշխանությունների մոտ, սակայն, բոլոր դեպքերում, վերջիններիս հաջողվում էր սահմանափակել ընդդիմության ազդեցության աճը երկրի ներսում և քույր շտապ, որ այն հասնի վարչակարգի համար վտանգավոր չափերի: Մի կողմից, հասարակությունը քարեփոխումների պահանջ ուներ, սակայն, մյուս կողմից, գիտակցում էր կայունության պահպանման կարևորությունը, ինչը քույր կտար խուսափել մի իրավիճակից, որ ստեղծվել էր անկայության նվաճումից հետո, երբ ռազմական հեղաշրջումները սովորական երևույթ էին դարձել երկրի քաղաքական կյանքում:

2007 թ. մայիսի 10-ին Բաշար Ալ-Ասադի թեկնածությունն առաջադրվեց Ժողովրդական ժողովի կողմից՝ որպես նախագահի միակ թեկնածու: 2007 թ. մայիսի 27-ին պաշտոնական տվյալներով ստանալով քվեարկողների ձայների 97,62 տոկոսը՝ Բաշար Ալ-Ասադը երկրորդ անգամ դարձավ ՍԱՀ նախագահ:

2008 թ. փետրվարին Դամասկոսում ավտոմեքենայի պայթյունի հետևանքով սպանվեց «Հիզբալլահի» ազդեցիկ հրամանատար Իմադ Մուդհիան, որն ԱՄՆ կողմից համարվում

էր ամենափնտրվող ահաբեկիչներից մեկը: Մուղնիան մեղադրվում էր 1983 թ. Ռեյքուսթում ամերիկյան դեսպանության վրա կատարված հարձակման մեջ: Միրիական կողմը սպանության պատասխանատվությունը դրեց Իսրայելի վրա: Օգոստոսին Տարտուս քաղաքի շրջակայքում դիպուկահարի գնդակից սպանվեց սիրիական քանակի բրիգադի գեներալ Մուհամմադ Մուլիմանը, որը պատասխանատու էր «Հիզբալլահին» ռազմատեխնիկական մատակարարման ապահովման համար: Մեղաեմբերին Դամասկոսի արվարձաններից մեկում կրկին պայթյունի հետևանքով սպանվեցին ևս մի քանի զինվորական բարձրաստիճան սպաներ: Նշված դեպքերը որոշակիորեն խտրվեցին վստահությունը նրկրի ներքին անվտանգության, ինչպես նաև տարածաշրջանում մեծ համբավ ունեցող սիրիական անվտանգության համակարգի հեղինակության նկատմամբ:



2010 թ. վերջին և 2011 թ. սկզբին խաթարվեց արարական պետությունների ներքին կայունության երկարատև շրջանը: Արաբական աշխարհում սկսված հեղափոխական շարժումների ալիքը 2011 թ. տարածվեց նաև Միրիայում, որն այսպես կոչված «Արաբական գարնան» ծավալման հետևանքն էր:

Առաջին հակակառավարական ելույթը Միրիայում տեղի ունեցավ 2011 թ. հունվարի 26-ին, երբ Հասսաբե քաղաքի մի քնակիչ ինքնահրկիզման փորձ կատարեց: Հունվարի 26-ի դեպքը սկսվեց Թունիսի 2010 թ. դեկտեմբերի, Եգիպտոսի և Եմենի 2011 թ. հունվարի ինքնահրկիզումների սցենարների մնամ:

2011 թ. մարտի 15-ին Դարաա քաղաքում, որը գտնվում է սիրիա-հորդասանյան սահմանի մոտ, մի խումբ դպրոցականներ էին ձեռքարկալվել՝ պատերին հակակառավարական կարգախոսներ փակցնելու սլառնառով: Մարտի 18-ին Դարաա-յում տեղի ունեցավ բազմամարդ հավաք՝ ի պաշտպանություն դպրոցականների: Յուցադարձերը հավաքվել էին քաղաքապե-

տարանի շենքի դիմաց՝ պահանջելով ազատ արձակել քաղ-  
քանտարկյալներին և ամհապաղ սոցիալ-տնտեսական բարե-  
փոխումներ անցկացնել: Հենց Դարասայում առաջին անգամ  
քնդիարումներ տեղի ունեցան ցուցարարների և իրավասպան  
մարմինների ու զինված ուժերի ստորաբաժանումների միջև,  
ինչն առաջացրեց սիրիական հասարակության տարբեր շրջա-  
նակների դժգոհությունը: Այդ ժամանակ հարձակումներ եղան  
մաև «Բաաթ» կուսակցության շտաբի վրա: Անվտանգության և  
ԶՈՒ-ի ստորաբաժանումների կողմից Դարասայում, Բանիասում  
և այլ շրջաններում իրականացվեցին համապատասխան միջո-  
ցառումներ՝ զինված խմբավորումներին հայտնաբերելու և  
վնասագործելու ուղղությամբ: Արդյունքում «Բաաթի» որոշ ան-  
դամներ դադարեցրեցին իրենց անդամակցությունը «Բաաթ»  
կուսակցությանը: Որպես հերթական քողոքի նշան իրենց  
պատգամավորական մամուլատները վայր դրեցին Դարասայից  
ընտրված երկու պատգամավորներ: Հրաժարական տվեց Դա-  
րասայի մուֆթին: Խոսվարարների դեմ դուրս եկավ համապե-  
տական գվարդիան, որի հրամանատարը Բաշար Ալ-Ասադի  
եղբայր Մահիր Ալ-Ասադն էր<sup>500</sup>: Կարծես թե իրադարձություն-  
ները կրկնվում էին մույն հաջորդականությամբ, ինչպես 1982 թ.  
Համայում ճնշվեց «Մուսուլման եղբայրների» կողմից բարձ-  
րացված ապստամբությունը, որի դեմ դուրս եկավ պաշտպա-  
նական ջոկատը՝ Հաֆեզ Ալ-Ասադի եղբայր Ռիֆաթ Ալ-Ասադի  
հրամանատարությամբ:

2011 թ. մարտի 25-ին մախտագահի հրամանով բարձրաց-  
վեցին պետական աշխատողների աշխատավարձերը, վերա-  
նայվեց հարկային քաղաքականությունը: Միքիայի անկա-  
խության տոնի կուսակցությամբ Բաշար Ալ-Ասադի հրամանով  
ազատ արձակվեցին 200-250 քաղքանտարկյալներ: Բացի  
այդ՝ չեղյալ համարվեց արտակարգ դրության մասին օրնմ-

<sup>500</sup> Joseph Hoftiday, The struggle for Syria in 2011, Middle East security report 2, December 2011, [http://www.understandingwar.org/sites/default/files/St\\_ruggle\\_For\\_Syria.pdf](http://www.understandingwar.org/sites/default/files/St_ruggle_For_Syria.pdf)

քը<sup>570</sup>: Նախագահի մեկ այլ հրամանով քույակառուներին ըն-  
ձեռնվեց բժշկական ասպահովագրության հնարավորություն:  
Մարտի 30-ին Քաշար Ալ-Ասադը հանդես եկավ խորհրդարա-  
նում և խոստացավ քարեփոխումներ անցկացնել իրավապահ և  
դատական համակարգերում, ներդնել քաղաքացիական  
համակարգ, մեծացնել լրատվամիջոցների ազատությունը, կո-  
ոտայցյալայի դեմ պայքարի արդյունավետ միջոցառումներ անց-  
կացնել և այլն<sup>571</sup>:

Ապրիլի 3-ին Սիրիայում ձևավորվեց մոր կառավարու-  
թյուն, որը գլխավորեց Ադել Մաֆարը<sup>572</sup>, ով 2003-2011 թթ. գյու-  
ղատնտեսության նախարարն էր: Ապրիլի 7-ին Քաշար Ալ-Ա-  
սադի հրամանով սկսվեց 300 հազար քրդերի քաղաքացիու-  
թյուն շնորհելու գործընթացը:

Սիրիական քամակի ստորաբաժանումներն, անցնելով  
զինված խմբավորումների դեմ վճռական ռազմական գործու-  
ղությունների, մեկը մյուսի հետևից վերականգնեցին վերահս-  
կողությունն ընդդիմադիրների հիմնական իննակետերի վրա՝  
նախ վերջին շրջանում Հոմսը, ապա քուրդ-սիրիական սահմա-  
նի մերձակայքում գտնվող Իդլիբը, ինչպես նաև դրանց  
հետևած Դեյր Ազ-Զորը, Հալեպը և այլն: Հունիսի 6-ին արյու-

---

<sup>570</sup> Արտակարգ դեպրյան մասին օրենքը կառավարական հրամա-  
նագրով վերացվել էր 1962 թ. դեկտեմբերի 22-ին՝ բացառությամբ հարավ-  
արևմտյան և սահմանադրական շրջաններից, որից հետո այն գործում էր 1963  
թ.-ից:

<sup>571</sup> President Bashar Al-Assad's a Speech at the People's Assembly March 30,  
2011, [http://www.presidentassad.net/index.php?option=com\\_content&view=arti-  
cle&id=303:president-bashar-al-assad-s-a-speech-at-the-people-s-assembly-mar-  
ch-30-2011&catid=117&Itemid=496](http://www.presidentassad.net/index.php?option=com_content&view=arti-<br/>cle&id=303:president-bashar-al-assad-s-a-speech-at-the-people-s-assembly-mar-<br/>ch-30-2011&catid=117&Itemid=496)

<sup>572</sup> Ադել Մաֆարը ծնվել է 1953 թ. Դամասկոսում: 1977 թ. Դամասկոսի  
համալսարանից ստացել է գյուղատնտեսության գյուղության բակալավրի  
ատտիժան, իսկ 1987 թ. Ֆրանսիայի գյուղատնտեսության և սննդի արդյու-  
նաբերության ազգային քաղաքագրյան դպրոցից կենտոնիստիտուցիայի  
դոկտորի գիտական աստիժան: 1997-2000 թթ. եղել է Դամասկոսի հա-  
մալսարանի գյուղատնտեսության ֆակուլտետի ղեկավար, 2000-2002 թթ.  
նույն համալսարանի «Բաաս» կոոսկրության քարտուղար: 2002-2003 թթ.  
եղել է Ամնյակի հողերի ռեսուրսափրության համաարաքական կենտրոնի  
նախագահը:

նայի ընդհարումներ տեղի ունեցան Ջիսր Ալ-Շուդուրում: Քնն Քաշար Ալ-Ասադն անձամբ զափակեցեց անվտանգության ուժերի և ցուցարարների միջև բախումներում զոհվածների հարազատներին, սակայն այս երևույթը խթանեց սիրիական տարբեր թաղաքներում ևս հակակառավարական դժգոհությունների ծավալմանը:

2011 թ. Միրիայի ՁՈւ-ի թիվը 295 000 էր<sup>573</sup>: ՁՈւ-ի կարևորագույն զորազմերի և դիվիզիաների կրանամատարները սերունդ էին ալավիական համայնքից, ովքեր շահագրգռված էին փախչակարգի պահպանմամբ: Եթե չլիներ նման կազմով սիրիական բանակը, ապա դժվար թե թաղաքական իշխանությունը Միրիայում այսօրան երկար գտնվեր ալավիների ձեռքում: Ինչպես գիմվորականները, այնպես էլ երկրի հատուկ ծառայությունների համակարգի աշխատակիցները նույնպես ունեին արտոնյալ կարգավիճակ և հսկայական ազդեցություն Միրիայի հասարակական-քաղաքական կյանքում: Պատահական չէ, որ սիրիական բանակի կազմավորման 66-րդ տարեկիցի առթիվ Քաշար Ալ-Ասադը նշեց, որ նրանց գործունեությունից էր կախված եղելում հսկայիշխանական տրամադրությունների, փարվող քաղաքականության դեմ բողոքի կամ որևէ ընդդիմության, լինելը դա քաղաքական կամ կրոնական, առաջացման կանխարգելումն ու չեզոքացումը<sup>574</sup>:

2011 թ. հոկտեմբերին թուրքական իշխանությունների հովանավորությամբ Մուսարբուլում վերջնականապես ձևավորվեց «Միրիայի ազգային խորհուրդը» (المجلس الوطني السوري), որը հանդես եկավ որպես ընդդիմադիր դաշտի գործադիր և համակարգող մարմին: Այն իր մեջ ներառում էր էրմիկ և դավաճական տարրեր շերտերի, այդ թվում՝ փախարանդիության մեջ գործող սիրիական «Մուսուլման եղբայրների» մերկայացուցիչներ:

<sup>573</sup> Nerguizian A., Instability in Syria, 13.12.2011, [http://csis.org/files/publication/111213\\_SyriaMilitaryIntervention.pdf](http://csis.org/files/publication/111213_SyriaMilitaryIntervention.pdf)

<sup>574</sup> President Al-Assad's Army Day Speech 2011, [http://www.presidentassad.net/index.php?option=com\\_content&view=article&id=360:president-al-assad-s-army-day-speech-2011&catid=117&Itemid=496](http://www.presidentassad.net/index.php?option=com_content&view=article&id=360:president-al-assad-s-army-day-speech-2011&catid=117&Itemid=496)



քին և սալաֆիներին<sup>575</sup>։ Խորհուրդը դրանք Սիրիայում իրավիճակի կայունացման հիմնական մախապայման համարում էր Բաշար Ալ-Ասադի անհապաղ հրաժարականը<sup>576</sup>։ Ընդդիմության զինված թևը, որը գործում էր ամբարտ, այսպես կոչված «Ազատ սիրիական բանակն» էր (الجيش السوري الحر), որ ռազմական և ֆինանսական լայնածավալ աջակցություն էր ստանում արտաքին աշխարհի, մասնավորապես՝ հակասիրիական ուժերի կողմից, զգալիորեն համալրված էր մահ սիրիական բանակի դասավիցմերով, պահանջում էր արտաքին ռազմական միջամտություն։ «Ազատ սիրիական բանակ» դեռևս 1955 թ. Մոսկովում մատչելի Սաֆան էր պլանավորել ստեղծել Սիրիայում ռազմական հեղաշրջում կատարելու համար<sup>577</sup>։

Ինչպես նշեցինք, ԱՄՆ-ն համալրված էր սիրիական Ջոնի դասավիցմերով և հարևան երկրներից Սիրիայի տարածքներն արաբականացած գրոհայիններով, որոնց մի մասն ախաբեկչական կառույցների անդամներ էին։ ԱՄՆ-ի զինվորները հիմնականում սուննիներ էին, որի մասին էր վկայում, օրինակ, վաղ իսլամի հայտնի գործավար Խալիդ բին Ալ-Կալիդի անունը կտող բրիգադի գոյությունը։ Այդ բրիգադի մեջ էր մտնում Ֆարուկ գումարտակը, որի հրամանատարը նախկին պաշտպանության մախարար Մուսաֆա Տլասի ազգական Արդ Առ-Ռազակ Տլասն էր։ Չնավորվել էին նաև այլ գումարտակներ, ինչպես օրինակ՝ Աբու Ալ-Ֆիդայի, Օսամա բին Ջալիլի, Օմարի, Մուավիայի, Մուլեյմանի, Հարմուշի և այլն<sup>578</sup>։ ԱՄՆ-ի հրամանատարը բանակի ռազմաօդային ուժերի նախկին գնդապետ Ռիչարդ Մուսա Ալ-Ասատդն էր, նրա տեղակալը գնդապետ Մալիք Արդ Ալ-Հալիմ Ալ-Քուրդիին, շտաբի պետը՝ գնդապետ Ահմադ Հիզա-

<sup>575</sup> Սալաֆիականությունը սուննի իսլամի արմատական մեկնաբանությունն է՝ հիմնված համբավական մագաթի սկզբունքների վրա։

<sup>576</sup> Randa Slim, Meet Syria's Opposition, 11. 2. 2011, [http://middleeast.foreignpolicy.com/posts/2011/11/02/meet\\_syrias\\_opposition](http://middleeast.foreignpolicy.com/posts/2011/11/02/meet_syrias_opposition)

<sup>577</sup> Մամբուսման տնտեսայն աշխատություն, էջ 53։

<sup>578</sup> Joseph Holliday, Syria's Armed Opposition, Middle East Security Report 3, March 2012, Institute for the Study of War, [http://www.understandingwar.org/sites/default/files/Syria\\_Armed\\_Opposition.pdf](http://www.understandingwar.org/sites/default/files/Syria_Armed_Opposition.pdf)

զին: «Ազատ սիրիական բանակի» հետ զուգահեռաբար գործում էր մեկ այլ զինվորական կառույց, այսպես կոչված, «Ազատ սպաների շարժումը» (حركة الضباط الأحرار), որի հրամանատարը փոխգնդապետ Հուսեյն Հարմուչն էր<sup>579</sup>; ԱՍԲ-ին հաջողվեց որոշ ժամանակ վերահսկողության տակ վերցնել Սիրիայի առանձին շրջաններ: Առանձնապես դաժան մարտեր քննազան Սիրիայի կառավարական գործերի և «Ազատ սիրիական բանակի» միջև Հոմս քաղաքի Թաք Ամր քաղաձատում: Ապստամբներին հաջողվել էր ազդեցություն ձեռք բերել Հալապ քաղաքում՝ այն վերածելով կառավարական գործի հետ բախումների հարթակի: «Ազատ սիրիական բանակի» մեջ մեծ թիվ էին կազմում արաբական և իսլամական տարրեր երկրներից հավաքագրված վարձկանները, որոնք շարունակում էին զգայի կորուստներ կրել: Այնուամենայնիվ, իշխանությունները կորցրել էին ամբողջական վերահսկողությունը երկրի մերսում և հատկապես սահմաններին, որտեղից ընդդիմադիրներն աջակցություն էին ստանում:

2011 թ. հոկտեմբերին Ռուսաստանը և Չինաստանը կիրառեցին իրենց վետոյի իրավունքը Սիրիայի վերաբերյալ ՄԱԿ Ան քամաձևի վրա, որից հետո «The Sunday Telegraph»-ին տված հարցազրույցում Բաշար Ալ-Ասադը զգուշացրեց, որ Սիրիայում արտաքին ուժերի միջամտությունը և երկիրը մասնատելու փորձերը երկրաշարժ կառաջացնեն ողջ Մերձավոր Արևելքում՝ ի հայտ բերելով նոր Աֆղանստան<sup>580</sup>:

2011 թ. նոյեմբերին Կահիրեում տեղի ունեցած ԱՊՂ արտահերթ միաժամ որոշվեց կասեցնել Սիրիայի անդամակցությունը և խստացնել այդ երկրի դեմ տնտեսական ու քաղաքական պատժամիջոցները: Մինչ այդ Սիրիայում կազմավորվել էր «Համուն ժողովրդավարական բարեփոխումների ազգային կորդինացման կոմիտեն», որը ղեկավարում էր Հասան Արթ Ալ-Ազմը: Կոմիտեն կազմված էր տարրեր կուսակցություններից:

<sup>579</sup> Մանցամասն տե՛ս <http://www.free-syrian-army.com>

<sup>580</sup> Assad: challenge Syria at your peril, <http://www.telegraph.co.uk/news/worldnews/middleeast/syria/8857898/Assad-challenge-Syria-at-your-peril.html>

րից և անկախ քաղաքական գործիչներից, այդ բովում՝ քրոական 3 կուսակցությունից: 2011 թ. սեպտեմբերին Ազգային կոորդինացման կոմիտեմ իր նիստում հաստատեց վեց կետից բաղկացած ծրագիր, որով պահանջում էր վարչակարգի հրաժարականը, ինչպես նաև դեմ էր Սիրիայում արտաքին ռազմական միջամտությանը<sup>581</sup>:

2011 թ. նոյեմբերի 16-ին հարձակման ենթարկվեց Դամասկոսի մոտ գտնվող Հարասաա քաղաքում տեղակայված սիրիական օդուժի հետախուզության կենտրոնակայանը: Դամասկոսը հարձակումների համար մեղադրում էր ամերիկյան, իսրայելական ու թուրքական հատուկ ծառայություններին: Դեկտեմբերի 3-ին Սիրիայի Պալմիրա քաղաքի մոտ բամակի լայնամասշտաբ զորավարժությունների ժամանակ փորձարկվեցին «երկիր-երկիր» տեսակի մինչև 200 կմ հեռահարություն ունեցող երթուներ: Դեկտեմբերի 6-ին Ռեյտոթում՝ «Հիզբալլահի» կազմակերպած հանրահավաքի ժամանակ, հանրության առջև ելույթ ունեցավ շարժման գլխավոր քարտուղար Հասան Նասրալլահը՝ հայտարարելով, որ «Հիզբալլահը» սատարում է Բաշար Ալ-Ասադին<sup>582</sup>:

2011 թ. դեկտեմբերի 7-ին ամերիկյան հեռուստատալիքներից մեկին տված հարցազրույցում Բաշար Ալ-Ասադը նշել էր. «Մենք երբեք չենք ասել, թե ժողովրդավար երկիր ենք, քայքայում ենք մեկտեղ մենք այն չենք, ինչ նախկինում, մենք առաջ ենք շարժվում բարեփոխումներով: Հատկապես վերջին ամիսների ընթացքում մենք քաղական առաջընթաց ենք գրանցել: Ժողովրդավար երկիր դառնալու համար շատ ժամանակ է անհրաժեշտ, քայքայում ենք գնում ենք դրան: Այն ամենը, ինչ ես անում եմ, հիմնված է իմ ժողովրդի կամքի վրա»<sup>583</sup>:

<sup>581</sup> Исван Л., Шенкин А., Сирия в Помой, Неоконченые революции, Москва, 2012, с. 169-170.

<sup>582</sup> نصر الله: البعض لا يريد اسوية الإصلاح بل يريد نظاماً يوقع على بيض لأمركا وإسرائيل, [http://thawra.alwebda.gov.sy/\\_archive.asp?fileName=96512927020112070150](http://thawra.alwebda.gov.sy/_archive.asp?fileName=96512927020112070150)

31

<sup>583</sup> ABC's Barbara Walters' Interview With Syrian President Bashar al-Assad 7.12.2011, [http://www.presidentassad.net/index.php?option=com\\_content&view](http://www.presidentassad.net/index.php?option=com_content&view)

Միրիայում տեղի ունեցան բազմաթիվ ահաբեկչական գործողություններ, խաղաղ քնակիչների առևանգումներ ու սպառնություններ: Ահաբեկչություններ եղան Դամասկոսում, Հալեպում, Հոմսում, Համայում և այլուր, որոնց ընթացքում եղան բազմաթիվ զոհեր ու վիրավորներ:

2012 թ. հունվարի 10-ին Բաշար Ալ-Ասադը ելույթ ունեցավ Դամասկոսի համալսարանում, որտեղ նա կոչոտ քննադատության ենթարկեց միջազգային և արաբական այն ուժերին, որոնք ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության տակ ձգտում են վնասել Միրիային: Համգամաճորեն անդադառնալով սիրիական զարգացումներում ԱՊԼ բացասական դերին՝ նա նշեց, որ այդ կազմակերպությունը ոչ մի շահեկան բան չի արել արաբական երկրների համար: Այդ իմաստով՝ ԱՊԼ-ն միայն անուանով է արաբական, քանի որ Միրիային անդամությունից զրկելը նշանակում է, որ կազմակերպությունը դավաճանել է իր իսկ արաբական քնույթին, ոչնչացրել արաբական ինքնության զարգացումը: Անկումային գնահատելով արաբական աշխարհի ներկա վիճակը՝ Ալ-Ասադն ԱՊԼ-ն համարեց միջարաբական արդի հայաբերությունների արտացոլանքը<sup>344</sup>:

2012 թ. հունվարին Ռուսաստանի ԱԳ նախարար Մերգել Լավրովը հիշեցրեց, որ նրանք, ովքեր կհամարձակվեն Միրիայի դեմ ռազմական գործողություններ իրականացնել, չեն ստանա ՄԱԿ-ի մանդատը, իսկ ԱՊԼ-ն առաջարկեց Բաշար Ալ-Ասադին իշխանության վտխանցման մի ծրագիր, որը, ինչպես նաև, դիտորդական առաքելության երկարաձգման առաջարկը, Միրիայի իշխանությունները մերժեցին:

2012 թ. փետրվարին Ռուսաստանը և Չինաստանը երկրորդ անգամ թույլ չտվեցին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում բնդումել բանաձև Միրիայի դեմ: Դրանով կասեցվեց Միրիայում արտաքին ռազմական միջամտության հնարավորույթ-

<sup>344</sup> article&id=177:president-al-assad-s-abc-interview&catid=103&itemid=468

<sup>344</sup> President Al-Assad's 2012 Damascus University Speech, [http://www.presidentassad.net/index.php?option=com\\_content&view=article&id=274:president-al-assad-s-2012-damascus-university-speech&catid=118&itemid=496](http://www.presidentassad.net/index.php?option=com_content&view=article&id=274:president-al-assad-s-2012-damascus-university-speech&catid=118&itemid=496)

յունը: Համաձայն այդ բանաձևի մախազժի՝ եթե 30 օրվա ընթացքում սիրիական իշխանությունները չլին դադարեցնում երկրում շարունակվող բռնությունները, Ամվտանգության խորհուրդն իրեն իրավունք էր վերապահում պատժամիջոցներ կիրառել պաշտոնական Դամասկոսի նկատմամբ: Մոսկվայի և Պեկինի՝ Սիրիային ցուցաբերած աջակցությունը պայմանավորված էր նշված պետությունների աշխարհաքաղաքական հետաքրքրություններով: Փետրվարի 7-ին Դամասկոս ժամանեցին ՌԴ ԱԳ նախարար Մերգել Լավրովը և Արտաքին հետախուզության ծառայության տնօրեն Սիլվայիլ Ֆրադկովը: Իսկ Ֆրադկովի ներկայությունը պատմիրակությունում վկայում էր հատուկ ծառայությունների ոլորտում երկու երկրների միջև համագործակցության ակտիվացման մասին: Սիրիան համարվում է աշխարհում ռուսական ռազմամթերքի խոշոր ապատողներից մեկը, ինչպես նաև Ռուսաստանի համար Միջերկրական ծովի կարևորագույն հենակետը<sup>585</sup>:

Չինաստանի համար Մերձավոր Արևելքը ռազմավարական կարևորություն ներկայացնող տարածաշրջան է, որտեղ շոշափվում են Պեկինի ներդրումային ու էներգետիկ անվտանգությանն առնչվող շահերը: Սիրիան Մերձավոր Արևելքի առանցքային երկրներից է, ուստի ՉԺՀ-ի ներկայության ընդլայնումը Վաշինգտոնում հաճախ գնահատվում էր որպես Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի ազդեցությունը Պեկինի կողմից փորձարկելուն ուղղված քայլ: Ըստ պաշտոնական Պեկինի՝ սիրիական կառավարության բռնի իշխանափոխությունը կհանգեցնի տարածաշրջանային աղետի, ուստի անհրաժեշտ է սիրիական ճգնաժամի լուծման համար քաղաքական վերափոխման նոր մոդել փնտրել<sup>586</sup>:

2012 թ. փետրվարին հայտնի դարձավ, որ «Սիրիայի ազգային խորհուրդը» առաջնորդ էր վերընտրել Բուրիան Կալյունին: Գրեթե միաժամանակ Սիրիայում գործող ընդդիմադիր

<sup>585</sup> 2013 թ. Սիրիան Ռուսաստանից ստացավ Ա-300 զենթթակերպային համակարգեր:

<sup>586</sup> Հարությունյան Ա., Չին-սիրիական համագործակցության նոր դրսևորումներ, Ժամանակակից Եվրասիա, հատոր 1 (2), Երևան, 2012, էջ 154:

զինված կազմավորումները հայտարարեցին, որ ստեղծում են միավորող նոր կառույց՝ «Միջիայի Բարձրագույն հեղափոխական խորհուրդ», որը պետք է կողողինացնել իրենց գործադրյալները: Խորհրդի հրամանատարը զենքավ Մուստաֆա Ամար Ալ-Շեյխն է: Նույն ամսին, նպատակ ունենալով տապալելու Բաշար Ալ-Ասադի վարչակարգը, Միջիայում բնացուղ ռազմական գործողություններին անդրադարձավ «Ալ-Կախաբա» առաջնորդ Այման Ալ-Չավախիրին, ով Միջիայում ցիհադի կոչ արեց<sup>587</sup>:

2012 թ. փետրվարի 24-ին Թունիսում տեղի ունեցավ «Միջիայի բարեկամներ» խմբի 1-ին հանդիպումը, իսկ փետրվարի 26-ին Միջիայում անցկացվեց նոր Մահմանադրության նախագծի համրարվեն: Նոր Մահմանադրության 1-ին հոդվածով ՄԱՀ-ն ժողովրդավար և զերիշխան պետություն է, սիրիացիները արար ազգի մի մասն են կազմում, 2-րդ հոդվածով պետության վարչակարգը հանրապետական է և զերիշխանությունը ժողովրդինն է, 3-րդ հոդվածով նախագահի կրոնն իսլամն է, 8-րդ հոդվածի 1-ին մասով մտցվում է ռազմակուսակցական համակարգ, 4-րդ մասով ցանկացած կուսակցություն, որը հիմնված չէ էթնիկ և դավանական հիմքի վրա, կարող է մասնակցել ընտրություններին, 11-րդ հոդվածով քանակն ու ազգային հաստատության զինված ուժերը պատասխանատու են հայրենիքի և իր տարածքային անբողջականության պաշտպանության համար, որը ծառայում է իր ժողովրդին ու երկրի անվտանգությանը, 23-րդ հոդվածով կանայք իրավունք ունեն ակտիվ մասնակցություն ունենալ երկրի քաղաքական և տնտեսական կյանքում, 44-րդ հոդվածով քաղաքացիներն իրավունք ունեն խաղաղ ցույցեր կազմակերպելու, 105-րդ հոդվածով հանրապետության նախագահը քանակի և զինված ուժերի գլխավոր հրամանատարն է և այլն<sup>588</sup>:

<sup>587</sup> Tentative Jihad: Syria's Fundamentalist Opposition, Middle East Report, No. 131, 12 October, 2012, <http://www.crisisgroup.org/-/media/Files/Middle%20East%20North%20Africa/Iraq%20Syria%20Lebanon/Syria/131-tentative-jihad-syrias-fundamentalist-opposition.pdf>

<sup>588</sup> Միջիայի նոր Մահմանադրության անբողջական տեքստը տե՛ս

2012 թ. մարտին Բաշար Ալ-Ասադն ընդունեց Սիրիայի հարցով ՄԱԿ ու ԱՊՄ հատուկ ներկայացուցիչ Քոչի Անանի խաղաղության պլանը: Ապրիլի 1-ին Մտամբուլում տեղի ունեցավ «Սիրիայի բարեկամներ» խմբի 2-րդ համոզիպումը, որտեղ «Սիրիայի ազգային խորհուրդը» ճանաչվեց որպես Սիրիայի օրինական իշխանություն:

2012 թ. ապրիլի 9-ին գնդակոծվել էին թուրքական Քիլյաքաղաքի մոտ թուրք-սիրիական սահմանը հստակ և թուրքական տարածքում հայտնված սիրիացի փախստականներ: Թուրքական կողմը, միջադեպի մեջ մեղավոր համարելով սիրիական քանակին, հայտարարեց, որ Սիրիան կուպուրեն խախտել է երկու երկրների սահմանը: Թուրքիայի սահմանային տարածքի գնդակոծումը կրկնվեց ապրիլի 10-ի երեկոյան: Իր հերթին, Սիրիայի ԱԳ նախարար Վալիդ Ալ-Մուալիմը Թուրքիային մեղադրեց սահմանային գոտում Սիրիայի քաղաքացիներին ահաբեկելու, փախուստի դրդելու և փախստականների ճգնաժամ առաջ բերելու մեջ:

2012 թ. ապրիլի 19-ին Փարիզում «Սիրիայի բարեկամներ» խմբի 3-յոջ համոզիպման ժամանակ հայտարարվեց, որ Թուրքիան պատրաստվում է օգտվել ՆԱՏՕ-ի կանոնադրության 4-րդ հոդվածից, ըստ որի՝ ՆԱՏՕ-ում խորհրդակցություն է անցկացվում, եթե սպառնալիքի տակ է հայտնվում ՆԱՏՕ-ի անդամ որևէ երկրի քաղաքական և տարածքային ամբողջականությունը կամ անվտանգությունը:

2012 թ. մայիսին Սիրիայում անցկացվեցին խորհրդարանական ընտրություններ, իսկ օգոստոսին Սիրիայի նոր վարչապետ նշանակվեց նախկին առողջապահության նախարար Վալիդ Նադդ Ալ-Հալկին<sup>589</sup>:

استور الجمهورية العربية السورية.

[http://thawra.alwehda.gov.sy/\\_View\\_news2.asp?FileName=69684068920121205004249](http://thawra.alwehda.gov.sy/_View_news2.asp?FileName=69684068920121205004249)

<sup>589</sup> 2013 թ. Սիրիայի կառավարության նոր կազմը, վարչապետ Վալիդ Նադդ Ալ-Հալկի, սրտապանության նախարար գեներալ Ֆահմ Ջահմ Ալ-Ֆրեյջ, ներքին գործերի՝ գեներալ-մայոր Մոհամմադ Իքրահիմ Ալ-Ըսադ, արտաքին գործերի և սփյուռքի՝ Վալիդ Ալ-Մուալիմ, տեղական ինքնա-

2012 թ. նոյեմբերին Կատարի մայրաքաղաք Դոհայում ստեղծվեց «Միրիայի ընդդիմադիր և հեղափոխական ուժերի ազգային կոալիցիան», որի ղեկավար ընտրվեց Ահմադ Մուազ Ալ-Խատիրը, ով մինչ այդ Օմանյան մզկիթի իմամն էր: Ազգային կոալիցիան ճանաչեցին մի շարք արաբական և եվրոպական պետություններ, այդ թվում՝ Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը:

2013 թ. մարտին քրիտանական «The Sunday Times»-ին տված հարցազրույցում Բաշար Ալ-Ասադն ասաց, որ ով իսկապես ցանկանում է օգնել Միրիային, պետք է պահանջի Թուրքիայից, Կատարից և Սաուդյան Արաբիայից վերջ դնել Միրիայում ահաբեկիչների ֆինանսավորմանը: Նա նշեց, որ «Ալ-Կաիդա» ահաբեկչական կազմակերպությունը վտանգ է ներկայացնում ոչ միայն Միրիայի, այլև ամբողջ տարածաշրջանի համար և որ Միրիան երբեք քանակցություններ չի վարի ահաբեկիչների հետ: Անդրադատնալով «Հիզբալլահի», Իրանի և Ռուսաստանի աջակցությանը Միրիայի ժողովուրդին՝ քարճք գնահատեց Մուսկովայի ամփոփոխ դիրքորոշումը սիրիական ճգնաժամին: Նա ասաց, որ Միրիան, ունենալով հզոր ազգային քանակ և ռադիկալություն, սեփական հայրենիքը պաշտպանելու համար օտարերկրյա զինվորների կարիք չի զգում և որ ուշադրությունը պետք է կենտրոնացնել մի շարք երկրների՝ ինչպես Կատարի, Թուրքիայի, Սաուդյան Արաբիայի, Ֆրան-

---

կառավարման՝ Օմար Իբրահիմ Նարսուջի, ֆինանսների՝ Իսմայիլ Իսմայիլ, քաղաքագույն կրթության՝ Մուհամմադ Յեհյա Մուալլա, գրուաշրջության՝ Հարա Մուհամմադ Ան-Նասեր, նախագահական հարցերի՝ Մամուր Ֆադլուլլահ Ազզամ, կրթության՝ Հազվան Ալ-Լազ, սոցիալական Բառամ Հաննա, ստղագագստության՝ Մուադ Աբդ Աս-Մալամ ԱՆ-Նաֆի, արդարադատության՝ Նայմ Հանադ Ալ-Ահմադ, գյուղատնտեսության՝ Ահմադ Ալ-Կազդի, փագիերի՝ Մուհամմադ Աբդ Աս-Մաքթաբ Աս-Մալեք, նավթի և քիմիական պաշարների՝ Մուհեյան Ալ-Աբբաս, տեղեկատվության՝ Օմրան Ահեդ Ալ-Ջաբրի, մշակույթի՝ Լուրանա Մշալիե, էլեկտրատեղեկայի՝ Իմադ Մուհամմադ Դիբ Կամա, կադի և տեղեկատվության տեխնոլոգիայի՝ Իմադ Աբդ Ալ-Կամի Աս-Մարանի, պետական նախարար՝ Ջուզեֆ Մուեզ, պետական նախարար շքանկա միջազգային պահպանության հարցերով նախագահ Նուզիհա Ֆարահ Սարգիս: Տե՛ս <http://ana.sy/ara/article/5-sec.htm>



սիայի, Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի ունեցած դեռակատարության վրա, որոնք ուղղակի և անուղղակի Սիրիայում զինում ու աջակցում են ահաբեկիչներին<sup>990</sup>։

Այսպիսով, սիրիական բանակից հեռացած ընդդիմության համակիր զինվորականները կարողացան կազմել իրենց զորամիավորումները և անհրաժեշտ ռազմամթերք ու տեխնիկական օժանդակություն առանալով՝ Սիրիայում ռազմական հեղաշրջման անհաջող վերջ կատարեցին։ Քանի որ Սիրիայի իշխանության և քանակի սպայական վերնախավի ծիմնական կորիզն ալալիներ էին, որոնք ղեկավարում էին երկրի սուննի մեծամասնությանը, սպա բանակը չէր կարող չաատարել իշխանությանը, որովհետև սերտաճած էր նրա հետ։ Ի տարբերություն մյուս արաբական երկրների՝ սիրիական բանակի սպայական վերնախավն ու զինվորականության մեծամասնությունը հավատարիմ մնացին նախագահին։

Շրջանառության մեջ դնելով սիրիական բանակի քիմիական զինամոցի մասին թեման՝ Բաշար Ալ-Ասադի վարչական զննումն ու նրա դաշնակցներն այդ կերպ փորձեցին ի ցույց դնել իրենց ռազմական կարողությունները, տակայն արտաքին ուժերը, թեման շրջանառելով, խնդիր դրեցին մեծացնել ճնշումն Ալ-Ասադի վարչակազմի նկատմամբ և ցույց տալ աշխարհին, թե որքան վտանգավոր է այն, քանի որ խոսքը զանգվածային ոչնչացման զենքի մասին էր։

Հաշվի առնելով ՍԱՀ ռազմական ուսմունքը, որն արձատապես տարբերվում է այլ երկրների ռազմավարական հայեցակարգերից (որովհետև ունի քաջատիկ պաշտպանողական ուղղվածություն), հասարակության հակակառավարական նյութները, առաջ քաշելով քաղաքական ու սոցիալ-տնտեսական պահանջներ, չէին կարող որոշակի արդյունքների հասնել՝ առանց արտերկրի անմիջական աջակցության։ Սիրիական ընդդիմության գործողությունները վերաճել էին ներքին զինված հակամարտության՝ իշխող ալալիական-քաասական վարչա-

<sup>990</sup> President Al-Assad's Interview with The Sunday Times, <http://sana.sy/eng/21/2013/03/03/470326.htm>

կարգի և արտաքին ուժերի ռազմական հովանավորությունը կրող զինված խմբավորումների միջև: Ներաիրիական ճգնաժամը վերանել էր միջազգային հակամարտության, որի մեջ ներգրավվել էին ուժային տարրեր կենտրոններ, որոնք փորձում էին Բաշար Ալ-Ասադի փարչակարգի պահպանմամբ կամ տապալմամբ լուծել իրենց արտաքին քաղաքական խնդիրները:

Սիրիայի վրա ճնշումներ իրականացնելու հարցում ակտիվորեն համագործակցեցին ԱՄՆ-ն, տարածաշրջանային նրա դաշնակիցները՝ Թուրքիան և Պարսից Մոցի արաբական պետությունները, մասնավորապես Կատարը և Սաուդյան Արաբիան, որոնք, միջամտելով Սիրիայի ներքին գործերին, փաստացիորեն դարձան արտերկրում գործող սիրիական ընդդիմության ռազմական և քաղաքական թևերի հենակետերը: Կատարն ու Սաուդյան Արաբիան հանգուցային դերակատարություն էին ունեցել նաև եզիպտական և լիբիական գործընթացներում: Այս երկու պետությունների ներգրավվածությունը նպատակ ուներ Սիրիայում իշխանափոխության միջոցով վերջ դնելու տարածաշրջանի անեմահզոր մրցակիցներից մեկի՝ Իրանի հետ համագործակցությանը և Սիրիայում, ըստ ամենայնի, իշխանության թերելու սուննիական կրոնաքաղաքական ուժերի: Էո-Ռիադն արաբական երկրներում նոր՝ սատոլամետ փարչակարգելի ձևավորման միջոցով նպատակ ուներ տարածելու նաև իր երկրի կրոնական գաղափարախոսությունը՝ սալաֆիականությունը, ինչին ձեռնհաս չէր եղել դեռ «Մաոդ պատերազմի» տարիներին: Իսրայելը նույնպես շահագրգռված էր Իրանի և Սիրիայի միջև համագործակցության չեզոքացմամբ, քանի որ դա կհանգեցներ «Հիզբալլահի» դիրքերի թուլացմանը: Եվ վերջապես, Սիրիան դուրս կնդվեր հակաիսրայելական հակազդեցության ճամբարից, որի մաս էլիմ կազմում նաև Իրանը, «Հիզբալլահը», «Համասը»<sup>591</sup>:

<sup>591</sup> Փաշայան Ա., «Վրացական զայտունը» Սիրիայում. սպաքար իշխանության նաճար, Փամանակակից եվրասիա, հատոր 1 (2), Երևան, 2012, էջ 99:

Հարկ է նշել, որ Միրիայում ծավալված ռազմաքաղաքական զարգացումները խիստ կարևոր նշանակություն ունեն Հայաստանի համար, քանի որ Միրիայի Մերձավոր Արևելքում Հայաստանի դաշնակիցն է, ում հետ համագործակցում է ամենատարբեր ոլորտներում և Միրիայում սովորաբարվալ հայ համայնք կա<sup>302</sup>:

Հայ-սիրիական հարաբերություններն ունեն երկարամյա պատմություն. կապված են պատմական տարբեր ժամանակաշրջաններում ավանդական բարեկամությամբ և համակրանքով՝ կողք-կողքի իրար հետ անցած դժվարին ճանապարհով:

Միրիայի կողմից Հայաստանի անկախության ճանաչումը և դիվանագիտական հարաբերությունների հաստատումը դրեցին ոչ միայն երկու երկրների բարեկամական հարաբերությունների իրավական հիմքերը, այլև՝ սահմանեցին նրանց համագործակցության շրջանակները, իսկ այդ շրջանակները շատ լայն են, որոնց մեջ պետք է առանձնացնել առաջին հերթին քաղաքական հարաբերությունները, որոնք գտնվում են շատ բարձր մակարդակի վրա: Դրա մասին են վկայում Հայաստանի անկախությանը հաջողված տարիներին երկու երկրների միջև տեղի ունեցած բարձրաստիճանի դիվանագիտական փոխադասարարությունները, որոնք կանոնավոր բնույթ ստացան և աչքի ընկան իրենց արդյունավետությամբ: Անցած տարիներին գրեթե անբողոքությամբ ձևավորվեց իրավապայմանագրային դաշտը՝ ստորագրվելով միջպետական բազմաբնույթ համագործակցության զարգացնելուն ուղղված համաձայնագրեր, արձանագրություններ, փոխըմբռնման հուշագրեր, որոնց շրջանակներում գործել են կրթության և գիտության, մշակույթի, սեկտորատնտեսական, առողջապահության և այլ բնագավառներում երկկողմանի համագործակցություն:

<sup>302</sup> Միրիայի հայ համայնքի մասին ժամրամասն տե՛ս Փաշայան Ա., Հարությունյան Լ., Միրիայի հայ համայնքը. արդի կեննախնդիրներ, Երևան, 2011:

Հայ-սիրիական քարեկամական հարաբերություններին մեծապես նպաստել է ՄԱՀ-ում ՀՀ դեսպանությունը, որը միավորիչ դեր է կատարել՝ հայկական համայնքը համախմբելով Հայոց եռագույնի, Հայության գաղափարի շուրջ, իսկ սիրիահայությունն աջակցել է ՀՀ դեսպանությանը, ինչը մեծապես նպաստել է վերջինիս գործունեությանը: Ալ-Ասադների օրոք հայերը եղել են Սիրիայի օրինապահ, հասարակության և պետության կողմից գնահատված ու հարգված՝ երկրի լիիրավ քաղաքացիներ: Սակայն սիրիական ճգնաժամը մեծապես վնասում է ինչպես սիրիական պետականությանն ու ժողովրդին, այնպես էլ հայ համայնքին:

## دور الجيش في الحياة السياسية في سورية. ظاهرة الانقلابات العسكرية

### المقدمة

